



ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

**ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔՍԱՆԱՄՅԱ ՊԱՏՄԱՓՈՒԼՈՒՄ
(2003-2023)**

ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔՍԱՆԱՄՅԱ ՊԱՏՄԱՓՈՒԼՈՒՄ
(2003-2023)

ԵՐԵՎԱՆ
Քոփի Փրինթ
2023

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63
Ի 830

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:*

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Գոհար Իսկանդարյան

Իսրայելյան Ա.

Ի 830 Իրան-Ադրբեջան հարաբերությունները քսանամյա
պատմափուլում (2003-2023) / Ա. Իսրայելյան: -Եր.,
Քոփի Փրինթ, 2023, 286 էջ:

Գիրքն Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա ազդող առանցքային գործոնների ուսումնասիրության վերաբերյալ է: Աշխատանքի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 2003-2023 թթ.: Քսանամյա այդ պատմափուլն Իրան-Ադրբեջան հարաբերություններում արձանագրված վերափոխումների մի ժամանակաշրջան է, երբ երկու երկրներն աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված՝ մերթ փոխահավետ համագործակցել են, մերթ լարվածությունն այնքան է աճել, որ կողմերին մեծ դժվարությամբ է հաջողվել կառավարել իրադրությունն ու վերացնել առաջացող քաղաքական ճգնաժամը:

Մենագրությունը նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, տարածաշրջանի հարցերով փորձագետների համար:

Լուսանկարի հեղինակ՝ Սամվել Կարապետյան

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63

ISBN 978-9939-9313-0-2

© Իսրայելյան Ա., 2023

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	5
ԳԼՈՒԽ 1	
«ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԱԴԻԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ» ԵՎ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԴԻԲԵՋԱՆԻ» ՆԱՐԱՏԻՎՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ	27
ԳԼՈՒԽ 2	
ԿՐՈՆԻ ԴԵՐՆ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	80
ԳԼՈՒԽ 3	
ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅՆ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	120
ԳԼՈՒԽ 4	
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԴԵՐՆ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	156
ԳԼՈՒԽ 5	
ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	194
ԳԼՈՒԽ 6	
ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾՈՆՆ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	212
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	251

ԱՌԱՋԱԲԱՆ

Իրանի և Ադրբեջանի երեսնամյա հարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես 1918 թ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ձևավորման, այնպես էլ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում Ադրբեջանի անկախության հռչակման գործընթացներն ուղեկցվում էին այնպիսի զարգացումներով, որոնք Իրանի տարածքային ամբողջականության համար լուրջ սպառնալիքներ էին ներկայացնում: Պատմական երկու շրջափուլի ընթացքում Իրանը տարբեր հանգամանքներով պայմանավորված ի զորու չեղավ վիճարկելու Իրանի համանուն նահանգի անվամբ երկրի՝ «Ազարբայջան» անվանակոչումը: Անցնող երեք տասնամյակի ընթացքում Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում վերափոխումների մի քանի փուլ է տեղի ունեցել: Բոլոր այդ շրջափուլերի ընթացքում երկու երկրների հարաբերություններն ազդվել են առանցքային նշանակություն ունեցող գործոններով, ինչպիսիք կրոնական, թյուրքականության, անջատողականության, հայկական, Իսրայելի գործոններն են: Դրանց՝ երկկողմ հարաբերությունների վրա ազդեցությունն ու փոխադարձաբար շահարկումները ոչ միայն չեն վերացել, այլև արդի փուլում նոր դրսևորումներ են ձեռք բերել: Այդ գործոնները ոչ միայն ուրվագծում են երկու երկրների հարաբերությունների ընթացքն ու կանխորոշում դրանց հեռանկարը, այլև Իրանի ու Ադրբեջանի կողմից այդ գործոններից բխող սպառնալիքների կառավարումը կարող է ազդել տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության վրա:

Մենագրությունը գրելիս նպատակ է դրվել՝

- ըստ առանձին պատմափուլերի՝ վերլուծել 1991-2023 թթ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում տեղի ունեցած վերափոխումները,
- 2003-2023 թթ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններին օբյեկտիվ գնահատական տալու նպատակով համակողմանի ուսումնասիրել խնդրո առարկա գործոնները՝ բացահայտելու գլոբալ, տարածաշրջանային և երկկողմ մակարդակներում դրանց ազդեցությունը,
- պարզել այդ գործոնների առաջացման նախադրյալները,
- գնահատել երկկողմ հարաբերությունների վրա տարբեր շրջափուլերում դրանց ազդեցության աստիճանը,
- դիտարկել ուսումնասիրության առարկա գործոնների՝ Իրանի և Ադրբեջանի արտաքին քաղաքական առաջնահերթություններում ներառելու կողմերի նպատակադրությունները:

Աշխատանքը գրելիս խնդիր է դրվել՝

- վերլուծել և ներկայացնել Իրանի կողմից կրոնական գործոնը, իսկ Ադրբեջանի կողմից թյուրքախոս իրանցիների խնդիրները միմյանց վրա որպես ճնշման գործիք օգտագործելուն միտված գործողությունները,
- գնահատել Իրանի Ատրպատական նահանգում անջատողական գործընթացներին Ադրբեջանի մասնակցությունից բխող սպառնալիքները,
- վերլուծել և ներկայացնել Ադրբեջանի կողմից հայկական գործոնը որպես Իրանի վրա ճնշման գործիք կիրառելուն միտված գործողությունները և դրանց իրանական կողմի հակազդեցությունը,
- Նախիջևանի գործոնը դիտարկել Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում,

- Իսրայելի գործոնը դիտարկել Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում,
- Կասպից ծովի հարցը դիտարկել Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում:



Մենագրությունը գրելիս՝ որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք մեր կողմից 2009 թ. մինչ օրս իրանական մամուլն ու լրատվակայքերը, ինչպես նաև ադրբեջանական ռուսալեզու և անգլալեզու լրատվակայքերն ամենօրյա ռեժիմով մշտադիտարկելու արդյունքում հավաքված, մշակված և վերլուծված նյութերն ու գրախոսվող գիտական հոդվածների ժողովածուներում Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վերաբերյալ տպագրված մեր գիտական հոդվածները: Բացի այդ՝ օգտվել ենք Իրանի ԱԳՆ Միջազգային և քաղաքական հետազոտությունների կենտրոնի (IPIS), Իրանի հոգևոր առաջնորդի աշխատակազմի Արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդի, Իրանի խորհրդարանի Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի, Իրանի նախագահի աշխատակազմի Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի, ինչպես նաև Իրանի այլ ուղեղային կենտրոնների հրապարակած զեկույցներից, գիտական հոդվածներից, տեղեկանքներից, Իրան-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ տպագրված ռուսերեն և անգլերեն այլ աղբյուրներից՝ վերլուծական, մասամբ նաև պատմական մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության առարկա գործոնները հետազոտվել են առանձին պատմափուլերի շրջանակում, այնուհետև ստացված արդյունքը մշակել և վերլուծել ենք՝ համեմատելով տարբեր

շրջափոխվելու արձանագրված զարգացումները, ապա՝ ներկայացրել մեր եզրակացությունները:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ կատարված հետազոտություններից կարելի է առանձնացնել հետևյալները.

Հոսեյն Ահմադիի 2017 թ. Իրանում տպագրված «*Ադրբեջանի Հանրապետություն. 23-ամյա պայքար հանուն պետության ստեղծման և ազգի ձևավորման*» խորագրով հոդվածների ժողովածուում քննության են առնվել հետխորհրդային շրջանում ադրբեջանցիների ինքնության խնդիրները, պանազարիականության և համաթյուրքականության գաղափարախոսությունների տարածման նպատակով Ադրբեջանի կողմից մշակված ծրագրերը, Ադրբեջանի քաղաքականության հետևանքով Իրանի անվտանգությանը սպառնացող վտանգները, Ադրբեջանի դպրոցական դասագրքերի պատմություն առարկայի ծրագրերը, որոնցում տարածաշրջանի երկրների, մասնավորապես Իրանի պատմությունը խեղաթյուրված է ներկայացվում:

Ադրբեջանում Իրանի դեսպան (2012-2016) Մոհսեն Փաքայինի հեղինակած «*Չորս փարի Արաքսի այն կողմում. Մոհսեն Փաքայինի հուշերը*» խորագրով գրքում հեղինակը ներկայացրել է Ադրբեջանում իր կատարած դիվանագիտական աշխատանքը:

Բահրամ Ամիր-Ահմադիանի 2005 թ. հրատարակված «*Իրան-Ադրբեջան հարաբերությունները. Ազարիների կարծիքն Իրանի մասին*» վերնագրով գրքի առաջին և երկրորդ գլուխներում ներկայացվում են Ադրբեջանի պատմության համառոտ նկարագրությունն ու ադրբեջանցի պատմաբանների՝ Ադրբեջանի պատմության վերաբերյալ գնահատականները: Երրորդ գլխում ներկայացվում են Իրանի և Ադրբեջանի քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների, ինչպես

նաև երկկողմ համագործակցության ոլորտների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները: Չորրորդ գլխում ներկայացվում են Ադրբեջանի դպրոցական դասագրքերի ծրագրերի ուսումնասիրությունները: Հինգերորդ գլուխը նվիրված է Ադրբեջանի արտաքին քաղաքականության ուղղությունների ուսումնասիրությանը, վեցերորդ գլխում գնահատվում են Իրանի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները:

Կովկասի ուսումնասիրություններով զբաղվող իրանցի պատմաբան Քավե Բայաթի՝ 2022 թ. հրատարակված «*Ազարբայջանը պատմության փոթորիկներում*» վերնագրով գիրքը նվիրված է 20-րդ դարի սկզբին Հարավային Կովկասում տեղի ունեցած պատմական բուռն զարգացումների ընթացքում Առանի տարածքում Ադրբեջան անվամբ պետության ստեղծմանն ու իրանցիների՝ այդ իրողության նկատմամբ ընկալումներին:

Կովկասի ուսումնասիրություններով զբաղվող իրանցի պատմաբան Ահմադ Քազեմիի «*Պանթյուրքիզմ և պանազարիզմ*» վերնագրով գիրքն Ադրբեջանի կողմից Իրանի թյուրքախոս բնակչության նկատմամբ մշակված պետական քաղաքականությունը և դրա իրականացման եղանակները բացահայտող կարևոր աղբյուր է:

Իրանցի պատմաբան Ահմադ Քասրավին իր 1925 թ. տպագրված «*Ազարին, Արրպայականի հին լեզուն*» աշխատության մեջ պատմական փաստերի հիման վրա ներկայացնում է Իրանում թյուրքերի ներթափանցման, թյուրքերենի տարածման պատմական փուլերն ու հիմնավորում, որ մինչև մոնղոլական արշավանքներն Ատրպատականի բնակչությունը խոսում էր ազարիական բարբառով: Միայն սելջուկների արշավանքներից հետո է, որ տարածաշրջանի բնակչությունն անցնում է թյուրքախոսության, իսկ Սեֆյանների շրջանում, քանի որ պալատական

լեզուն դառնում է ատրպատականյան թյուրքերենը, այն՝ որպես պրեստիժային լեզու, լայն տարածում է ստանում տարածաշրջանի բնակչության շրջանում:

Միրմեդի Աղազադեի 2021 թ. տպագրված «*Азербайджано-иранские отношения: Предпосылки, основные направления и особенности*» վերնագրով մենագրության առաջին և երկրորդ գլուխներում ներկայացվում են 1991-2018 թթ. Իրանի և Ադրբեջանի միջև տեղի ունեցած փոխայցերի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները, ձևավորված իրավապայմանագրային դաշտը, Ադրբեջանի վերաբերյալ՝ Իրանի արտաքին քաղաքականության և Իրանի վերաբերյալ՝ Ադրբեջանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները: Երրորդ գլխում անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, Կասպից ծովի իրավական կարգավիճակին առնչվող զարգացումներին և Իրանի թյուրքախոս բնակչության խնդիրներին առնչվող հարցերին:



Հարավային Կովկասը պատմության տարբեր շրջափուլերում Իրանի համար ռազմավարական կարևոր նշանակություն է ունեցել: Իրանի գրեթե բոլոր դինաստիաների կառավարման շրջանում, մասնավորապես Սեֆյանների օրոք, Իրանի և Օսմանյան կայսրության միջև տեղի ունեցած պատերազմների ընթացքում Կովկասի նկատմամբ վերահսկողությունն առաջնահերթություն է համարվել: Սակայն, Ղաջարների կառավարման շրջանում, երբ ռուս-իրանական պատերազմների արդյունքում ստորագրվեց Թուրքմենչայի պայմանագիրը, Իրանը վերջնականապես կորցրեց Կովկասի նկատմամբ իր վերահսկողությունը:

Իրանի ժամանակակից պատմագիտությունն այդ պատմափուլն Իրանի նոր շրջանի պատմության ամենամոթալի էջն է համարում: Ռեզա Փահլավիի կառավարման շրջանում, Նախիջևանի և Թուրքիայի միջև ցամաքային կապի հաստատումից հետո, Կովկասյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունն էականորեն մեծացավ: Չնայած Նախիջևանի սահմանի հարցում 20-րդ դարի սկզբին Իրանի և Թուրքիայի միջև ձեռքբերված պայմանավորվածությունների առնչությամբ առկա գիտական վեճերին, Իրանը զիջեց Կովկասի նկատմամբ իր գերակա դիրքը, ինչը հետագա տասնամյակներին Թուրքիային հնարավորություն տվեց հաստատվելու պատմականորեն Իրանի և Ռուսաստանի ազդեցության ներքո գտնված տարածաշրջանում:

Խորհրդային Միության լուծարումից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրությունն Իրանի շահերի տեսանկյունից ինչպես մարտահրավեր էր, այնպես էլ՝ հնարավորություն: Հետխորհրդային երկրների անկախության հռչակմամբ Իրանի և ԽՍՀՄ-ի միջև գոյություն ունեցած 2700 կմ սահմանը բաժանվեց Հայաստանի, Ադրբեջանի, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Թուրքմենստանի միջև:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի շուրջ ի հայտ եկած խնդիրների լուծումն Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը դարձավ: Իրավական կարգավիճակի, ծովի հատակի բաժանման հարցում առաջացած տարածայնությունները թույլ չէին տալիս լիարժեք շահագործել նավթի և գազի հանքավայրերը: Կասպից ծովի էներգետիկ պաշարների նկատմամբ վերահսկողություն սահմանելու հարցում գերտերությունների մրցապայքարը զգալիորեն մեծացրեց հետխորհրդային երկրների դերը: Ծովի իրավական կարգա-

ված աշխարհաքաղաքական իրադրությամբ: Օրինակ, կրոնական գործոնը 1990-ական թվականներին Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա ազդեցության այլ դրսևորում էր ունենում, ներկայումս՝ այլ: Այդ ժամանակ Իրանն այլ առաջնահերթություններ ուներ, ներկայումս՝ միանգամայն այլ:

Իրանի և նրա հարևանների փոխհարաբերությունները դիտարկելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. Իրանը սահմանագատման, անվտանգության, ջրային ռեսուրսների, բնապահպանության, մշակութային ժառանգության, կրոնական և բազում այլ հարցերի հետ կապված խնդիրներ ունի գրեթե բոլոր հարևանների հետ: Մի կողմից Իրանն իր՝ որևէ հարևանի հետ հարաբերություն կառուցելիս կաշկանդվում է երրորդ հարևանի հետ իր ունեցած հարաբերություններով, մյուս կողմից՝ հարևանների մի մասը Թեհրանի հետ հարաբերությունները խորացնելիս կաշկանդվում է Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ սահմանված տնտեսական պատժամիջոցներով:

Բացի աշխարհաքաղաքական ազդեցություններից՝ Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերությունները կառուցելիս Իրանն առաջնահերթությունը տալիս է քաղաքակրթական ընդհանրություններին ու տնտեսական համագործակցությանը: Սակայն, Իրանի անարդյունավետ քաղաքականության պատճառով վերջինիս չի հաջողվել տնտեսական և մշակութային ինտեգրման միջոցով Հարավային Կովկասում կայուն ազդեցություն ապահովել:

1990-ականների սկզբին Իրանի երկարաժամկետ քաղաքականության տեսանկյունից առաջնահերթություն էր շիայական և մշակութային գործոնների հիման վրա Ադրբեջանի և Իրանի հասարակությունների խորն ինտեգրումը: Բացի կրոնական գործոնից՝ Ադրբեջանն Իրանի համար կարևոր նշանակություն ունի

նաև պայմանավորված այն իրողություններով, որ այն մերձկասպյան երկիր է, սահմանակցում է Ռուսաստանին, Հայաստանին, Վրաստանին, Նախիջևանի հետ ցամաքային կապ է հաստատում Իրանի տարածքով, Իսրայելի հետ խորացնում է ռազմաքաղաքական համագործակցությունը, Թուրքիայի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունները, Արևմուտքի հետ ունի էներգետիկ տնտեսական փոխշահավետ կապեր, բազմաէթնիկության և բազմամշակութայնության (իրանական էթնիկական տարրը զգալի է) իրողություններով Իրանի հետ ունի ընդհանրություններ և այլն:

Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների դինամիկայի գնահատումն ու տվյալ երկրի նկատմամբ քաղաքականության մշակումն առանցքային գործոնների համակողմանի ուսումնասիրություն ու վերլուծություն են պահանջում: Ընդ որում, աշխարհաքաղաքական իրադրության փոփոխման պարագայում այդ գործոնների ազդեցության աստիճանը կարող է փոխվել կամ այլ դրսևորում ստանալ:

Եթե ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդող ժամանակաշրջանում՝ մինչև 1994 թ. Հայաստանի և Ադրբեջանի միջև զինադադարի հաստատումը ու նույն տարում Կասպից ծովի էներգակիրների վերաբերյալ «դարի պայմանագրի» կնքվելը, Իրանն Ադրբեջանի նկատմամբ քաղաքականությունը մշակելիս առավելապես հաշվի էր առնում Թուրքիայի և Ռուսաստանի գործոնը, ապա դրանից հետո, մասնավորապես 2003 թ. Ադրբեջանում Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո, Ադրբեջանի և Իսրայելի, Ադրբեջանի և Արևմուտքի, Ադրբեջանի և Պարսից ծոցի արաբական միապետությունների միջև ձևավորված նոր որակի հարաբերություններով պայմանավորված՝ Ադրբեջանի դերն Իրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ ավելի կարևորվեց: Լեռ-

նային Ղարաբաղի հակամարտությունն ընդհուպ ռազմական ճանապարհով լուծելուն միտված Ադրբեջանի պրոակտիվ քաղաքականությունը շոշափում էր նաև Իրանի շահերը:

Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա ազդող առանցքային գործոնների մի մասն այդ երկրներին ուղեկցում է հետխորհրդային շրջանից, իսկ մի մասն ի հայտ է եկել, կամ ավելի կարևոր նշանակություն ձեռք բերել 2000-ականների սկզբին Թեհրանի և Բաքվի հարաբերություններում արձանագրված վերափոխումների համատեքստում:

Շիայականությանը, իրանցի թյուրքախոս ազարիների, Ատրպատականում անջատողականությանը, Հայաստանին ու իրանահայ համայնքին, Իսրայելին, Նախիջևանին, Կասպից ծովին առնչվող խնդիրներն առանցքային այն գործոններն են, որոնք աշխարհաքաղաքական տարբեր իրավիճակներում ազդեցության որոշակի աստիճանով ազդում են երկկողմ հարաբերությունների վրա՝ վճռելով դրանց հետագա ընթացքը:

Իրան-իրաքյան պատերազմի ավարտից հետո Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997) Իրանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը հռչակվեց սահմանակից երկրների հետ հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Իրանն Ադրբեջանի հետ հարաբերությունները կառուցելիս առանցքային դեր վերապահեց կրոնական գործոնին: Շիայականության հարցն առանցքային այն գործոնն է, որի հիման վրա ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Իրանը մշակեց Ադրբեջանի հետ հարաբերությունները: Կրոնական գործոնի ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա անցած երեք տասնամյակի ընթացքում տարբեր դրսևորումներ է ունեցել:

Բաքվի և Թեհրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին շրջափուլում, մասնավորապես Ադրբեջանի նախագահ Այազ Մուխամիբովի (1991-1992 թթ.) պաշտոնավարման շրջանում Իրան-Ադրբեջան հարաբերությունները բնականոն զարգացում ապրեցին, սակայն, Աբուլֆազ Էլչիբեյի՝ (1992-1993 թթ.) ղեկավարման օրոք երկկողմ հարաբերություններում արդեն փոխադարձ անվստահության մթնոլորտ էր ձևավորվել: Ա. Էլչիբեյի ղեկավարած «Ժողովրդական ճակատ» կուսակցության որդեգրած ազգայնական-համաթյուրքական գաղափարախոսության հիմքում ընկած էր, այսպես կոչված, «Հյուսիսային Ադրբեջանի» (*ներկայիս՝ Ադրբեջանի Հանրապետությունը*) և «Հարավային Ադրբեջանի» (*Իրանի Արդապարական նահանգը*) միավորումը «Մեծ Ադրբեջանի» կազմում [48, Amiri 2006, 251-252]:

Շեյդար Ալիևի նախագահության շրջանում (1993-2003) Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում դրական վերափոխումներ են տեղի ունենում: Արցախյան 1-ին պատերազմի ընթացքում Իրանի՝ Ադրբեջանին ցուցաբերած քաղաքական և ռազմական աջակցության շնորհիվ երկկողմ հարաբերություններում փոխադարձ վստահության մթնոլորտ էր ձևավորվել [95, Haghghatpour 2017]: Այդ շրջանում Իրանն Ադրբեջանում ուներ շոշափելի կրոնական ազդեցություն:

Բաքվում գործում էր Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի անվան բարեգործական հիմնադրամը, ադրբեջանցի շիա ակտիվիստների շրջանակից ձևավորվել էր «Իսլամական դիմադրության շարժումը» («Հոսեյնյուն»)¹,

¹ Իրանի հովանավորությամբ նմանատիպ կառույցներ գործում են Լիբանանում (Հեզբոլլահ), Իրաքում (Հաշդ ալ-Շաաբի), Եմենում (Անսարոլլահ), Աֆղանստանում (Ֆաթեմյուն), և այլն:

Ադրբեջանում հեռարձակվող իրանական «Սահար» հեռուստաալիքի թյուրքերեն հաղորդումների միջոցով տարածվում էին իրանական հեղափոխության գաղափարները, Իրանի կրոնական բարձրագույն դպրոցներում կրթություն ստացած ադրբեջանցի հոգևորականները վերադառնում և իրենց կրոնական գործունեությունը շարունակում էին Ադրբեջանի մզկիթներում, Ադրբեջանում տարածվում էին իրանցի բարձրաստիճան շիա հոգևորականների գրքերը, առանց խոչընդոտների գործունեություն էր ծավալում Բաքվում Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնը², Ադրբեջանցի շիա հավատացյալներին՝ Իրանի կրոնական շրջանակներին ավելի շատ ինտեգրելու նպատակով, Իրանը միակողմանիորեն Ադրբեջանի քաղաքացիների համար չէղարկում է վիզային ռեժիմը և այլն:

Իլիամ Ալիևի նախագահության շրջանից՝ (2003 թվականից սկսած), Բաքվի մշակած ներքին և արտաքին քաղաքականության օրակարգը սպասարկելու նպատակով Ադրբեջանն Իրանի կրոնական ազդեցությունը սահմանափակող համակարգային փոփոխություններ է իրականացնում, որոնք արժանանում են Ադրբեջանի շիա հավատացյալների դիմադրությանը: Իրանն էլ, օգտագործելով Ադրբեջանում ունեցած իր ռեսուրսները, փորձում է կառավարել ադրբեջանցի շիաների մասնակցությամբ ձևավորված շարժումը:

Իրանը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարի համար երկու նպատակ էր փորձում իրականացնել: Կասեցնել Բաքվի նախաձեռնությամբ Իրանի կրոնական ազդեցությունը սահմանափակող գործընթացները, որոնց հաջող ընթացքի դեպքում Իրանը կարող է դուրս մղվել Ադրբեջանից: Արդյուն-

քում, այնտեղ կրոնական տեսանկյունից իր ազդեցությունը կմեծացնի Թուրքիան, իսկ ռազմավարական տեսանկյունից՝ Իսրայելը: Եվ երկրորդ, Իրանը փորձում էր Ադրբեջանի իրանամետ շիայական խմբավորումների հետ ակտիվ աշխատանքով Ադրբեջանի հասարակության շրջանում տարածել Իսլամական հեղափոխության գաղափարները և այդ երկրում իրանական մոդելի կրոնական պետություն ստեղծել:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Իրանը փորձեց պատմական, մշակութային և կրոնական ընդհանրություններն օգտագործելով՝ իր ներկայությունն ապահովել Ադրբեջանում, սակայն, ինչպես 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնպես էլ 1991 թ. Ադրբեջանի Հանրապետության քաղաքական վերնախավի որոշումների կայացման վրա նշանակալի ազդեցություն էր գործել «թյուրքականության» գործոնը: Նորանկախ Ադրբեջանը, որդեգրելով ընդգծված թուրքամետ դիրքորոշում և որպես զարգացման ուղի ընտրելով կառավարման «աշխարհիկ-թուրքական մոդելը», փաստացի մերժեց իսլամական կառավարման «իրանական մոդելը»՝ այն համարելով սպառնալիք՝ ուղղված իր պետական շահերի դեմ [113, Karimzadeh, 2011, p. 266]:

Հեյդար Ալիևի նախագահության շրջանում թյուրքականության գործոնն այնպես հետևողական չէր օգտագործվում, ինչպես Էլչիբեյի կառավարման շրջանում էր, սակայն, հենց Հեյդար Ալիևի նախաձեռնությամբ էր, որ դեռ Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին Նախիջևան-Իրան սահմանին տեղի ունեցած զարգացումներից³ հետո դեկտեմբերի 31-ը հռչակվեց աշխարհի ազարիների միասնության օր:

³ Իրանի սահմանին հավաքված ադրբեջանցիները ցանկություն էին հայտնել անցնել սահմանը և միավորվել իրանցիների հետ: Այդ դեպքերի մանրամասները ներկայացված են Նախիջևանին վերաբերող գլխում:

² 2023-ի սկզբից Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափոխի ընթացքում այն դադարեցրել է իր գործունեությունը:

Իլիամ Ալիևի կառավարման շրջանում Իրանի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականության մեջ կարևոր նշանակություն տրվեց Իրանի թյուրքախոս բնակչության նկատմամբ տարվող աշխատանքներին: Այդ շրջափուլում ադրբեջանցիների ինքնության ամրապնդման գործընթացը փորձ է արվում դնել ինստիտուցիոնալ մակարդակի վրա: Այդ գործընթացների արդյունքում առաջացան այնպիսի իրողություններ, որոնք ներկայումս ընկալվում են որպես Ադրբեջանի մասնակցություն՝ Իրանում անջատողականության գործընթացներին: Մասնավորապես Ադրբեջանի վերնախավի և քաղաքացիական հասարակության շրջանում արմատացել է այն համոզմունքը, որ Իրանի հյուսիսային նահանգները «Մեծ Ադրբեջանի» մի մասն են, իսկ իրանցի թյուրքախոսները՝ ադրբեջանցիների հայրենակիցները:

Արտերկրում բնակվող ադրբեջանցիներին, այսպես կոչված, «ադրբեջանական սփյուռքին» և Իրանի թյուրքախոս բնակչությանը միավորելու նպատակով Բաքվի կողմից ստեղծվեցին պետական և հասարակական մի շարք կազմակերպություններ:

Թյուրքականության գործոնի ազդեցության աստիճանը գնահատելու թերևս լավագույն ցուցիչը ներկայումս Իրան-Ադրբեջան հարաբերություններում տեղի ունեցող աննախադեպ զարգացումներն են, երբ Ադրբեջանի նախագահն արդեն բացահայտ շահարկում է Իրանի, այսպես կոչված, «40 միլիոն ադրբեջանցիների» հարցը⁴, իսկ ադրբեջանական պատմագիտությունը կասկածի տակ է դնում Իրանի տարածքային ամբողջականությունը՝ այդ երկրի տարածքի զգալի մասը ներկայացնելով որպես «ադրբեջանական»: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո

⁴ Ուշագրավ է, որ 2010-ական թթ. շրջանառվում էր 25 միլիոն թիվը: Փաստորեն, 10 տարվա ընթացքում, ըստ Ադրբեջանի քարոզչական համակարգի՝ Իրանի թյուրքախոս բնակչության թիվը 15 միլիոնով ավելացել է:

Բաքուն «Մեծ Ադրբեջանի» վերաբերյալ նարատիվը հարստացրեց մեկ այլ կեղծ պնդմամբ: «Արևմտյան Ադրբեջանի»⁵ վերաբերյալ անհիմն շահարկումներից զատ պաշտոնական Բաքուն Հայաստանի և Իրանի տարածքների նկատմամբ հավակնություններն առարկայնացնելու նպատակով շահառուների մասնակցությամբ համապատասխան կառույցներ ձևավորեց:

Իրանի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականության մշակման գործում կարևոր դեր է վերապահված հայկական գործոնին: Ադրբեջանը թյուրքախոս բնակչության շրջանում պանազարիական գաղափարախոսության հիման վրա երկարաժամկետ հեռանկարի համար մշակված քաղաքականությունն իրացնելիս Իրանի ուշադրությունն իր այդ գործողություններից շեղելու, Իրանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաև Իրանի գործողությունները սահմանափակելու նպատակով շահարկում է հայկական գործոնը, որն առնչվում է ինչպես Հայաստան-Իրան հարաբերություններին, այնպես էլ իրանահայության իրավունքներին: Միևնույն ժամանակ հայկական գործոնն Իրանում համաթյուրքական գաղափարախոսության տարածումը սահմանափակելուն միտված գործողությունների կարևոր մի բաղադրիչ է: Եթե մինչև 2020 թ. պատերազմը վերոնշյալ իրողություններով, ինչպես նաև թյուրքախոս իրանցիների նկատմամբ Իրանի պետական քաղաքականության առաջնահերթություններով պայմանավորված՝ Թեհրանի կողմից հայկական գործոնի դերն առանձնապես չէր կարևորվում, ապա հետպատերազմական շրջանում Ադրբեջանի որդեգրած ակնհայտ ագրեսիվ քաղաքականության պատճառով Իրանը վերանայեց իր մոտեցումները:

⁵ Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ պատմական և իրավական որևէ հիմք չունեցող կեղծ պնդում, որը շրջանառության մեջ է դրվել դեռ խորհրդային շրջանում:

Իսրայելի հարցն առանցքային այն գործոններից է, որը կարևորություն է ձեռք բերել համեմատաբար ավելի ուշ փուլում, սակայն, ներկայումս այն առանցքային դեր ունի ոչ միայն Իրան-Ադրբեջան հարաբերությունների, այլև Ադրբեջանի արտաքին քաղաքականության մշակման վրա ազդող կարևոր գործոններից մեկն է: Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա Իսրայելի գործոնի ազդեցությունը կարելի է գնահատել առնվազն երեք պատմափուլի համատեքստում:

Ա) 2009-2015 թթ., երբ Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները, տարբեր գործոններով պայմանավորված, չափազանց լարված էին, և բավականին մեծ էր Իրանի վրա Իսրայելի ու Միացյալ Նահանգների կողմից ռազմական հարձակման ռիսկը, Ադրբեջանի տարածքը դիտարկվում էր որպես հնարավոր հարձակման ամենահարմար հարթակներից մեկը: Դրա պատճառով Իսրայելի գործոնով պայմանավորված՝ Բաքվի և Թեհրանի հարաբերություններում փոխադարձ անվստահության մթնոլորտ էր ձևավորվել: Այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ Իրանն իշխանության ամենաբարձր մակարդակով դատապարտում էր Իսրայելի և Ադրբեջանի համագործակցությունը, իսկ Բաքուն ամեն կերպ փորձում էր Իսրայելի հետ ստվերային համագործակցություն ծավալել: Իրանի կտրուկ դիրքորոշումն էր Ադրբեջանին կաշկանդում դեսպանություն բացել Իսրայելում:

Բ) 2015-2020 թթ. ընթացքում Իսրայելի գործոնի ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա զգալիորեն նվազում է: 2015 թ. ստորագրված միջուկային համաձայնությամբ, ինչպես նաև Իրանի նախագահ Հասան Ռոհանիի (2013-2021) կառավարության հարևանության քաղաքականության առաջնահերթություններով պայմանավորված՝ Իրան-Ադրբեջան

հարաբերություններում դրական վերափոխումներ են տեղի ունենում: Քանի որ միջուկային ծրագրի հետ կապված՝ առանցքային հարցերի շուրջ Իրանի և Արևմուտքի մոտեցումները համընկնում էին, և Իրանի ու Միացյալ Նահանգների միջև ուղիղ բանակցություններ էին տեղի ունենում, նշված գործընթացների ֆոնին Իրանի վրա ռազմական հարձակման հարցը ժամանակավորապես դուրս էր եկել օրակարգից: Ինչն իր հերթին թուլացրել էր Իսրայելի ակտիվությունն Ադրբեջանում, և Իսրայելն ԱՄՆ-ի նոր մերձավորարևելյան քաղաքականության պատճառով կաշկանդված էր լինելու Իրանի դեմ բացահայտ գործողություններ իրականացնել: Խոսքն, իհարկե, չի վերաբերում հրապարակային հայտարարություններին:

Գ) Իսրայելի գործոնի շոշափելի ակտիվացում է նկատվում 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Պատերազմի արդյունքներով պայմանավորված՝ Ադրբեջանը ոչ միայն նախկինի պես չէր կաշկանդվում Իսրայելի հետ ռազմական համագործակցության ընդլայնմամբ, այլև Իսրայելում դեսպանություն բացելու քաղաքական որոշում կայացրեց: Պատերազմի արդյունքներով Լեռնային Ղարաբաղի՝ Իրանի սահմանակից տարածքների՝ Ադրբեջանի կողմից գրավումից հետո, Իսրայելը հնարավորություն ստացավ տեղակայվելու Իրանի անմիջական սահմաններին: Իսրայելի համար «Octopus» դոկտրինով նախատեսված՝ Իրանի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու բավարար պայմաններ ձևավորվեցին: [217, jpost.com]

Իրանի փորձագիտական շրջանակների մոտ առկա է այն ընկալումը, որ 2020 թ. հետո Ադրբեջանում Իսրայելի ակտիվությունն ու այդ ֆոնին Բաքվի որդեգրած բացահայտ հակաիրանական քաղաքականությունը, դա Ադրբեջանի պարտավորու-

թյունն է՝ փոխհատուցելու Իսրայելի կողմից 44-օրյա պատերազմում Ադրբեջանին ցուցաբերված աջակցությանը:

Երկարաժամկետ հեռանկարում Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների ընթացքի վրա ազդող գործոններից են Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցն ու ծովի ապառազմականացումը: 2018 թ. Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայի ստորագրումը մեծ հաշվով չբավարարեց Իրանի ակնկալիքները: Իրանը, որն ամենակարճ ցամաքային սահմանն ունի Կասպից ծովում, կարևոր երկրնտրանքի առջև է կանգնել՝ խորհրդարանում վավերացնել՝ կոնվենցիան, թե՛ սպասել և ժամանակ ձգել՝ հասկանալու, թե ինչպիսի աշխարհակարգ է ձևավորվելու և գերտերություններն ինչպիսի՞ համամասնությամբ են վերահսկողություն սահմանելու Կասպից ծովի նավթի և գազի պաշարների, դրանց արդյունահանման գործընթացի ու տարանցման երթուղիների վրա: Իրանին հատկապես մտահոգում է այն փաստը, որ 44-օրյա պատերազմից հետո Կասպից ծովի ռազմականացման վտանգը մեծանում է: Պատերազմից հետո առաջին անգամ ոչ մերձկասպյան երկրի՝ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի մասնակցությամբ զորավարժություն անցկացվեց:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում Նախիջևանի դերն էականորեն աճեց: Իրանը տարածաշրջանային տնտեսական-էներգետիկ նախագծերից դուրս չմնալու նպատակով հանդես եկավ մի շարք նախաձեռնություններով՝ ընդգծելով Նախիջևանի տարանցիկ հնարավորություններն օգտագործելու անհրաժեշտությունը: Եթե մինչ այդ երկրամասի աշխարհագրական դիրքն Իրանի և Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների համատեքստում էր կարևո-

րում, ապա հետպատերազմական շրջանում Նախիջևանի տարանցիկ նշանակությունն էապես մեծացավ: Այն փաստացի կարող է դառնալ Չինաստանը Եվրոպային կապող տրանսպորտային միջազգային տարանցիկ ճանապարհներից մեկի՝ «Միջին միջանցքի», կարևոր հանգույցներից մեկը: Այդ առումով, Իրանը տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներից դուրս չմնալու նպատակով փորձում է աշխուժացնել Ադրբեջանի հետ համագործակցությունը: Իրանը Նախիջևանի հարցում երկու խնդիր է փորձում լուծել՝ ա) չկարգնել Նախիջևանն Ադրբեջանին կապող երկրի իր մենաշնորհը, բ) որպես այսպես կոչված «Ջանգեզուրի միջանցքին» այլընտրանք Իրանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև ցամաքային կապ ապահովել, միևնույն ժամանակ Իրանի տարածքով Ադրբեջանից Նախիջևանին անհրաժեշտ էներգակիրներ փոխանցելու համար գրավիչ պայմաններ ապահովել:

Թեև Ադրբեջանի նկատմամբ Իրանի ազդեցության լծակներն ավելի մեծ են, և դրանք կիրառելու դեպքում Բաքվի կրած կորուստներն անհամեմատ մեծ կլինեն, այդուհանդերձ տարեց-տարի Իրանի շուրջ ստեղծված անվտանգային բարդ միջավայրով պայմանավորված՝ Թեհրանի հնարավորություններն աստիճանաբար սահմանափակվում են: Օրինակ, կրոնական գործոնը, որը 1990-ականների սկզբին Իրանի ձեռքին Ադրբեջանի նկատմամբ ճնշում գործադրելու ազդեցիկ գործիք էր, Ադրբեջանի կողմից իրականացված համակարգային բնույթի որոշումների կայացմամբ այն ներկայումս զգալիորեն թուլացել է:

Քանի որ նախատեսում ենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Իրանի դիրքորոշման առնչությամբ համապարփակ հետազոտություն իրականացնել, այս աշխատության շրջանակում նպատակահարմար չենք գտել անդրա-

դառնալ Ղարաբաղյան հակամարտության գործոնին: Արցախի հարցի շահարկման որոշ դրվագների անդրադարձ է կատարվել կրոնական և հայկական գործոնների ուսումնասիրությանը նվիրված գլուխներում:

ԼՂ հակամարտության՝ Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա ունեցած ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է համապարփակ ուսումնասիրել վերջին 30 տարվա գործընթացները: Մասնավորապես 1994-2023 թթ. ընթացքում ԼՂ հակամարտության լուծման հարցում Իրանն ի՞նչ դիրքորոշում է ունեցել, անցնող տասնամյակների ընթացքում ԼՂ-ում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունների, սահմանային բախումների, 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի, 2020 թ. հուլիսյան ռազմագործողությունների, 2020 թ. 44-օրյա պատերազմի հարցում որո՞նք են եղել Իրանի պաշտոնական մոտեցումները, Թեհրանն ինչպե՞ս է արձագանքել ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ 2021 թ. մայիսյան և 2022 թ. սեպտեմբերյան ագրեսիաներին, Թեհրանն ի՞նչ նախաձեռնություններով է հանդես եկել, ԼՂ հակամարտության հարցն ի՞նչ ազդեցություն է ունեցել Իրանի տարածաշրջանային քաղաքականության վրա, և այլն:

ԳԼՈՒԽ 1

«ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԱԴԻԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ» ԵՎ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԴԻԲԵԶԱՆԻ» ՆԱՐԱՏԻՎՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՆ-ԱԴԻԲԵԶԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ ԶԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

«Ալիների՝ իշխանության գալուց հետո Ադրբեջանը սկսել է վարել հակակրոնական քաղաքականություն՝ թույլ չտալով, որպեսզի բնակչության շրջանում ամրապնդվի իսլամական-շիական ինքնությունը: Վերջին փարիներին Ադրբեջանում առաջացել է պանազարիական գաղափարախոսություն, որի նպատակը «Մեծ Ադրբեջան» սրբեղծելն է, որի մեջ ընդգրկված են նաև Իրանի թյուրքախոս նահանգները: Իրանի Իսլամական Հանրապետության պետական բոլոր կառույցները պետք է լուրջ ընդունեն և կանխարեսեն Ադրբեջանում ընթացող բոլոր զարգացումները, որպեսզի որևէ սցենարի իրագործման պարագայում Իրանի ազգային շահերն արդարացիորեն պաշտպանելու համար իշխանությունները պատրաստ լինեն համարժեք գործողություններ իրականացնելու»,- այդ մասին արձանագրվել է Իրանի խորհրդարանի Հետազոտությունների կենտրոնի հրապարակած զեկույցում [Իրանի խորհրդարանի պաշտոնական կայք, 2013]:

Իրանի նախագահ Հասան Ռոհանին (2013-2021) նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակ, գնահատելով Ադրբեջանից սպասվող վտանգները, հայտարարել էր, որ Ադրբեջանն Իրանի համար վերածվել է անվտանգության սպառնալիքի [43, *Irdiplomacy.ir* 2013]:

Վերոնշյալ արձանագրումները բավականին հստակ ներկայացնում են Իրան-Ադրբեջան հարաբերությունների էությունը՝ ընդգծելով, որ Ադրբեջանի անկախացումից ընդամենը երկու

տասնամյակ անց Ադրբեջանի վերնախավի հետևողական, համակարգված քաղաքականության արդյունքում այդ երկրի հասարակության շրջանում արմատացել է այն համոզմունքը, որ Իրանի հյուսիսային նահանգները դրանք «Մեծ Ադրբեջանի» մի մասն են, թյուրքախոս իրանցիները՝ ադրբեջանցիների հայրենակիցները, իսկ իրանցի դասական Նիզամի Գանջավին, Սեֆյան Շահ Իսմայիլը, Նադիր շահը, իրանական ավանդական մարզախաղերը, երաժշտական գործիքները, տոները, դրանք բոլորը պատկանում են «Ադրբեջանի պատմությանը» և «ադրբեջանական մշակույթին»։ [243, *Tehran Times*, 2023]

Հեյդար Ալիևի նախագահության շրջանում (1993-2003) ձևավորված պանազարիական գաղափարախոսության⁶ հիման վրա Իլիամ Ալիևի նախագահության շրջանում (2003 թվականից սկսած) ադրբեջանցիների ինքնության ամրապնդման, Ադրբեջանի պատմության ստեղծման գործընթացը դրվել է ինստիտուցիոնալ մակարդակի վրա։ Իսկ դա ենթադրում էր Իրանի Ատրպատական նահանգում⁷ անջատողականության դրսևորում-

⁶ Պանազարիական գաղափարախոսությունը երբեմն ասոցացվում է թյուրքական ազգայնականության հետ։

⁷ Մեծամասամբ թյուրքալեզուներով բնակեցված Արևելյան Ատրպատական, Արևմտյան Ատրպատական, Արդաբիլ, Ղազվին և Ջանջան նահանգները։ Պարսկերեն, անգլերեն ռուսերեն լեզուներում Ատրպատական նահանգը գրվում և արտասանվում է «Ազարբայջան» կամ «Ազերբայջան» ձևերով։ Փահլավիների կառավարման շրջանում 1937 թ. Իրանում ընդունված վարչական բաժանման մասին օրենքի համաձայն՝ երկիրը բաժանվում էր հինգ նահանգի։ Ատրպատական նահանգն ընդգրկվեց «Հյուսիս-արևմտյան» նահանգի կազմում։ Մեկ տարի անց տեղի ունեցած օրենքի փոփոխության համաձայն՝ երկիրը բաժանվեց տասը նահանգի։ Նահանգները նոր օրենքով համարակալվում էին։ Արևելյան Ատրպատական և Արևմտյան Ատրպատական նահանգները համապատասխանաբար դարձան Երրորդ և չորրորդ նահանգներ։ Թալիշի շրջանն Արևելյան Ատրպատականից անջատվեց և միացվեց Գիլան նահանգին։ 1946 թ. ընդունված վարչական նոր բաժանմամբ՝ Արևելյան Ատրպատական և Արևմտյան Ատրպատական նահանգները միավորվեցին մեկ՝ Ատրպատական

ներում Բաքվի ունեցած ուղղակի և անուղղակի մասնակցություն, Իրանի թյուրքախոս ազարիների խնդիրների շահարկում, իրանական մշակութային արժեքների սեփականաշնորհում և պատմական իրադարձությունների խեղաթյուրում։

Անշուշտ, Ադրբեջանի նման վարքագիծն արդյունք է նաև Իրանի Իսլամական Հանրապետության վարած պասիվ և Բաքվի հարուցած մարտահրավերներին անադեկվատ քաղաքականության։ Ադրբեջանի նկրտումներին, երբ Իրանն արձագանքում է «Ղարաբաղն իսլամական տարածք է», կամ «Գանջավին իսլամական գրող է» որևէ ազդեցություն չթողնող թեզերի շրջանառությամբ, դրանց ի պատասխան՝ Բաքուն ամենաբարձր մակարդակով այսօր Իրանի պետականության խորհրդանիշերից մեկը՝ Թավրիզը, Ադրբեջանի մաս է համարում՝ շրջանառելով «Թավրիզն Ադրբեջան է» թեզը⁸։

Իրանի ժամանակակից պատմագիտական ուսումնասիրություններում Իրանի հյուսիսային նահանգներում, մասնավորապես Ատրպատականում, անջատողականությանն առնչվող հան-

նահանգի մեջ՝ Թավրիզ կենտրոնով։ 12 տարի անց, սակայն, այս երկու նահանգները կրկին բաժանվում են։ 1993 թ. ընդունված նոր օրենքի համաձայն՝ ձևավորվում է Արդաբիլ նահանգը՝ անջատվելով Արևելյան Ատրպատական նահանգից։ 2010-ական թվականներին Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած հերթական լարվածության ընթացքում Իրանի թյուրքախոս նահանգներից ընտրված պատգամավորները հանդես էին գալիս Արևելյան Ատրպատականի հյուսիսային հատվածներում «Հյուսիսային Ատրպատական» կամ «Արասբարան» անվամբ նահանգ ձևավորելու մասին նախաձեռնություններով։ 2023 թ. հունիսին նմանատիպ մի առաջարկություն դրվեց շրջանառության մեջ, ըստ որի՝ նախատեսվում էր ներկայիս Արևելյան Ատրպատական նահանգը մասնատել՝ ձևավորելով Սահանդ նահանգ՝ Մարաղե կենտրոնով։ Այդ դեպքում Թավրիզը քաղաքը, որի նկատմամբ Ադրբեջանը նկրտումներ ունի, դուրս կմնա «Ազարբայջան» անվամբ նահանգի կազմից։

⁸ 2022 թ. ապրիլին Շուշիում անցկացված «Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի» 5-րդ համագումարի խոսնակը հայտարարել էր, թե «6-րդ հանդիպումը Թավրիզում կամ Երևանում են անցկացնելու»։

գամանքները կապվում են 20-րդ դարի սկզբին Իրանում և նրա շուրջը տեղի ունեցած զարգացումների⁹ հետևանքով Իրանի ինքնիշխանության կորստի վտանգները չեզոքացնելու նպատակով սկիզբ առած դեմոկրատական շարժումների հետ:

Սահմանադրական շարժումից հետո Իրանն ի զորու չեղավ ամրապնդել երկրի անկախությունը և 20-րդ դար մուտք գործեց այնպիսի թույլ դիմադրողականությամբ, որն ունակ չէր դիմագրավելու տարածաշրջանի մրցակից պետությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի սպառնալիքներին: Հետպատերազմական շրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում Իրանի ինքնիշխանությունը պահպանելու նպատակով ձևավորված շարժումների, մասնավորապես Քույսեք Խանի առաջնորդությամբ Գիլանում սկիզբ առած «Ջանգալիների» և Ատրպատականում ձևավորված Շեյխ Մոհամմադ Խիաբանիի առաջնորդած շարժման վերաբերյալ առկա են հակասական գնահատականներ: Իրանական պատմագիտությունը Խիաբանիի գործունեությունը որակում է որպես Իրանի տարածքային ամբողջականությունն արտաքին սպառնալիքներից պաշտպանելուն ուղղված քայլ [127, *Mohammad Pour 2015, pp. 99-134*], իսկ Իրանի թյուրքախոս անջատողական շրջանակները, այդ թվում՝ ադրբեջանական քարոզչությունը, այն ներկայացնում են որպես «Հարավային Ադրբեջանում»¹⁰ ազգային ազատագրական յուրօրինակ պայքար: [45, *Ahmadi 2015, p. 378*]

⁹ Ղաջարական Իրանի կառավարման վերջին շրջանում տարածքային կորուստներ, 1907 թ. Իրանի տարածքն ազդեցության գոտիների բաժանում Յարական Ռուսաստանի և Անգլիայի միջև, 1-ին համաշխարհային պատերազմին Իրանի մասնակցության (*ներքաշման*) հետևանքով երկրի տնտեսության թուլացում, ենթակառուցվածքների ոչնչացում, երկրի դիմադրողականության թուլացում:
¹⁰ Դեռ հետխորհրդային շրջանում Ադրբեջանի կողմից ստեղծված կեղծ նարատիվի համաձայն՝ գոյություն ունի պատմական Ադրբեջան, որն իբր Թուրքմենստանի պայմանագրով բաժանվել է երկու մասի: Ներկայիս Ադրբեջանն ան-

Ներքին և արտաքին բազում մարտահրավերների առջև կանգնած Ղաջարական Իրանը չունեւր անհրաժեշտ կարողություն, որպեսզի պատշաճ արձագանքեր Իրանի համանուն նահանգի անվամբ նոր պետության ձևավորմանը, որն ակնհայտորեն սպառնալիք էր՝ ուղղված Իրանի տարածքային ամբողջականությանը: [206, *Elling 2013, p. 29*]: Ավելին, Ղաջարական Իրանը Հարավային Կովկասի նորանկախ երեք պետությունների, այդ թվում՝ Ադրբեջանի հետ դիվանագիտական կապեր էր հաստատել և ակտիվ շփումների մեջ էր: Իրանում Ադրբեջանի դեսպան էր նշանակվել ծագումով Նախիջևանից Ադելխան Զիադխանովը: [211, *Millikimlik 2021*] Ներքին հիմնախնդիրներով, արտաքին մարտահրավերներով, ինչպես նաև Փարիզի վեհաժողովից ունեցած ակնկալիքներով պայմանավորված՝ Իրանը պաշտոնապես չէր ճանաչել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախությունը: [25, *Տոնոյան 2022, էջ 270*]

Իրանի մտավորական, գիտական, ինչպես նաև ազգայնական շրջանակները [6, *Էնայաթոլլա 2003, էջ 35*] մտահոգություն էին հայտնել Արաքսի հյուսիսում պետական նոր կազմավորման ստեղծման առնչությամբ [34, *Btabaki 2002, p. 29*]: Պատմական հիմնավորումներով [84, *Rasulzadeh 1922, p. 11*] նրանք «Ադրբեջանը» համարում էին տարածք, որը դարերով գտնվել է Իրանի վերահսկողության ներքո: Այն, որ Ղաջարների կառավարման շրջանում հնարավոր չէր կանխել Հարավային Կովկասում նոր ձևավորվող պետության՝ Ադրբեջանի անվանակոչումը, ընդունելի հիմնավորում էր, սակայն, այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո էլ Իրանը պետական մակարդակով Ադրբեջանի

վանվում է Հյուսիսային, իսկ Իրանցի թյուրքախոսներով բնակեցված տարածքները՝ «Հարավային Ադրբեջան»:

անվան հարցում որևէ առարկություն չներկայացրեց, իրանցի պատմաբաններից շատերի համար անընդունելի էր:

Բացի Ադրբեջանի Հանրապետության կողմից պատմական կեղծ տվյալների հիման վրա գրված գրքերից՝ վստահելի պատմական որևէ աղբյուրում ներկայիս Ադրբեջանի տարածքը չի հիշատակվում «Ադրբեջան» ձևով:

Ազարբայջանը (*Ադրպատական, Ադրբեջան*) Իրանի պատմական գավառներից մեկի անվանումն է, որ գտնվում է Իրանի հյուսիս-արևմուտքում: Ատրպատականը զբաղեցրել է ներկայիս Իրանի Արևելյան Ատրպատական, Արևմտյան Ատրպատական, Արդաբիլ, Ջանջան, Ղազվին և Գոլեսթան նահանգների տարածքը: «Ազարբայջանը» պարսկական «Ադարբայգան», «Ադարբայգան» արաբականացված ձևն է, որն իր հերթին սերում է միջին պարսկերեն Ատուրպատական ձևից: Ազերբայջան բառը՝ իրանական Ազարբայջան տերմինի թյուրքացված ձևը, որպես Ադրբեջանի անվանում ամենևին էլ հինավուրց պատմություն չունի: Այն առաջին անգամ կիրառվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին Նուրի Փաշայի գլխավորությամբ թուրքական զորքերի կողմից Բաքու քաղաքի պաշարման ժամանակ: Այդ գործողությունը նպատակ էր հետապնդում նորաստեղծ հանրապետությունը միավորելու Իրանի թյուրքախոս բնակչություն ունեցող «Ազարբայջան» գավառի հետ: [2, *Ասափրյան 1989, էջ 4*]

Ինչպես Իրանի Ազարբայջանի, այնպես էլ նույնանուն Ադրբեջանի Հանրապետության բնակչությունները խոսում են թյուրքական լեզվաընտանիքին պատկանող բարբառներով, սակայն, այդ երկու շրջանների ժողովուրդների էթնիկական և պատմամշակութային ձևավորման ընթացել է բոլորովին տարբեր ճանապարհներով: Ատրպատականցիները կազմավորվել են իրանական, իսկ Ադրբեջանի թյուրքախոս բնակչությունը՝ աղ-

վանական ենթաշերտի վրա՝ թուրքական էթնիկական տարրի բացահայտ գերակշռումով [*նույն տեղում*]:

Թյուրքերենն Ատրպատականում արմատավորվել է միայն վերջին դարերի ընթացքում՝ սկսած Սեֆյան հարստության ժամանակաշրջանից: Խոսակցական մակարդակում այն գրեթե համատարած բնույթ ունի. բոլորը՝ ընդհուպ մինչև Թեհրանին հյուսիսից հարող Ղազվին նահանգի բնակիչները, տիրապետում են այդ լեզվին և կարողանում հաղորդակցվել դրանով: Թյուրքերենի գործառնական բնույթը, սակայն, սահմանափակվում է ներընտանեկան և փողոցային շփման ոլորտներով [1, *Ասափրյան Գ., Առաքելովա Վ., 2015, էջ 19-23*]:

Ատրպատականի թյուրքացումից առաջ նրա բնակչությունը խոսում էր ազարի բարբառով: Ըստ 10-12-րդ դարերի արաբ հեղինակների՝ տեղի բնակչությունը խոսում էր ազարի բարբառով: 9-րդ դարի արաբ պատմիչ Յահյա Ջաբիր ալ-Բալադիհուրին իր «Ֆուրուհ ալ-Բուլդան» գրքում հստակ նշում է, թե որն է «Ազարբայջանի», այսինքն՝ Իրանի ներկայիս Ատրպատական նահանգի սահմանը: Հեղինակը նշում է, որ Հայաստանը գտնվում է Ազարբայջանի (*Իրանի Ազարբայջանը*) և Առանի (*ներկայիս՝ Ադրբեջանի տարածքը*) միջև: Ըստ հեղինակի՝ Մարանդ, Ուրմիա, Թավրիզ քաղաքները գտնվում են Ազարբայջանի կազմում:

9-րդ դարի մեկ այլ արաբ հեղինակ Ահմադ իբն Աբու Յադուբը «Ալ-Բուլդան» գրքում որպես Ազարբայջանի քաղաքներ նշում է Ուրմիան, Թավրիզը, Մարանդը, Մուղանը և այլն: Այդ աղբյուրում, սակայն, Արաքսից հյուսիս ընկած շրջանների բնակավայրերը չեն հիշատակվում որպես Ադրբեջանի քաղաքներ: [49, *Amir-Ahmādiān 2005, p. 16*]

«Բրիտանիկա» հեղինակավոր հանրագիտարանում էլ նշվում է, որ Իրանական Ատրպատականը սահմանակից է թալիշների երկրին: Այսինքն՝ «Ադրբեջանի» ու «ադրբեջանցիների» մասին որևէ հիշատակություն այդ աղբյուրում արձանագրված չէ: Ավելին՝ Ատրպատականի բնակիչների թվում նշվում է թյուրքերի, հայերի, պարսիկների ու քրդերի գոյության մասին, բայց ոչ ադրբեջանցիների: [21, Նահապետյան 2014, էջ 66]

Ադրբեջանի անվանման ու նրա զբաղեցրած տարածքի վերաբերյալ 1924 թ. Բաքվի համալսարանի արևելյան ֆակուլտետում ունեցած դասախոսության ընթացքում ուշագրավ արձանագրում է կատարել ռուս հայտնի արևելագետ Վասիլի Բարտոլդը: Ի պատասխան ուսանողներից մեկի այն հարցին, թե «Ադրբեջան ասելով հաճախ հասկանում ենք պարսկական Ադրբեջանը՝ Արաքսից այն կողմ, Թավրիզ գլխավոր կենտրոնով: Արդյոք իրավունք ունե՞նք այդ կապակցությամբ կոչվելու Ադրբեջան, թե՞ սա Շիրվանն է», - ակադեմիկոս Բարտոլդը հետևյալ պատասխանն է տվել.

«Շիրվանը երբեք չի ընդգրկել ներկայիս Ադրբեջանի ամբողջ տարածքը: Շիրվանը ոչ մեծ մի շրջան է՝ Շամախի գլխավոր կենտրոնով, իսկ այնպիսի քաղաք, ինչպիսին Գանջան է, երբեք Շիրվանի կազմի մեջ չի եղել: Եվ եթե անհրաժեշտ լիներ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունն ամբողջովին ներառող որևէ եզր հորինել, ապա ավելի շուտ պետք էր ընտրել «Առան» տեղանունը: Սակայն, «Ադրբեջան» տերմինը գերադասվել է այն պատճառով, որ երբ ստեղծվում էր ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը, ենթադրվում էր, որ իրանական և այս Ադրբեջանը կազմելու են մի ամբողջականություն, քանզի ժողովրդագրական տեսանկյունից դրանք մեծ նմանություն ունեն իրար: Այդ պատճառով էլ ընդունվեց «Ադրբեջան» անվանումը: Բայց, հիմա,

երբ այդ տեղանունն օգտագործվում է երկու իմաստով որպես իրանական Ադրբեջան, և համանուն հանրապետություն, ապա կարելի է շփոթվել և հարցնել, թե խոսակիցը ո՞ր Ադրբեջանն արդյոք նկատի ունի. Իրանական՝ Ադրբեջանը, թե՞ այս Ադրբեջանը»: [16, Իրան Նամե 1995, էջ 21]

20-րդ դարի իրանցի պատմաբան Ահմադ Քասրավին իր «Ազարի, Ադրպատականի հին լեզուն» գրքում, վկայակոչելով 11-րդ դարի արաբ պատմիչների ու ճանապարհորդների վկայությունները, նշում է, որ Ազարբայջանում առավելապես տարածված էր պարսկերենի բարբառներից մեկը՝ ազարին: Այդ շրջանում որևէ վկայություն չկար, որ ինչպես Ազարբայջանում, այնպես էլ Առանում խոսվող լեզուն թյուրքերենն է¹¹:

Թյուրքեր ապրել են նաև Սասանյանների օրոք, սակայն, նրանց թիվն այնքան շատ չի եղել, որ նրանք ազդեն Իրանի լեզվական պատկերի փոփոխման վրա: [148, Qareqāšlāqi 2007, 100]:

Իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն 1293 թ. Թավրիզ կատարած իր այցի ժամանակ, տեղեկություններ հաղորդելով

¹¹ Արշակունիների, այնուհետև Սասանյանների օրոք թյուրքերը մոտեցել էին Իրանի սահմաններին և թագավորություն հիմնել: Թյուրքերի ընդլայնման դեմ Սամանյաններն ավելի կազմակերպված էին պայքարում: Թուրքական ցեղերի ոտնձգություններից Իրանի սահմանները պաշտպանելու նպատակով նրանք կենտրոնացրել էին շուրջ 300 հազար հեծելազոր ու հետևակ: Սելջուկների տիրապետության ընթացքում Իրանում պետական կառավարումն իրականացվում էր իրանական ավանդույթների համաձայն, ընդունվում են պարսկական անուններ, գրագրության լեզուն պարսկերենն էր: Մոնղոլների կառավարման շրջանում էլ այդ նույն ավանդույթները շարունակվում են: Ղաջարները, լինելով թյուրքացված մոնղոլներ, ոչ միայն ձևավորում են Իրանի ժամանակակից սահմանները, այլև վերականգնում և պաշտոնապես կիրառում «Իրան» պետության ինքնանվանումը: Չնայած ընդունված է ասել, թե Իրան անունն առաջին անգամ գործածության մեջ է դրվել Ռեզա Փահլավիի կառավարման շրջանում:

տարածաշրջանի էթնիկական կազմի վերաբերյալ, թուրքերի մասին որևէ հիշատակում չի անում:

Մինչ թուրքերենի տարածումը, Ատրպատական նահանգում տարածված է եղել ազարի բարբառը, որը գիտական գրականության մեջ հաճախ բնորոշվել է որպես «հարավթաթական» կամ «հարավային թաթերեն» բարբառներ, սակայն պատմականորեն առավել տրամաբանական և հիմնավորված է «նոր ազարիական» եզրը, քանզի դրանք թալիշերենի հետ միասին ժառանգներն են Ատրպատականի տարածքում դեռևս իսլամական միջնադարից հիմնականում բարբառային բանաստեղծական պատառիկների՝ «ֆահլավիյաթների» ձևով վկայված իրանական ազարի լեզվի: [23, *Ոսկանյան 2014*, էջ, 270]

Ատրպատականում թյուրքերենը լայն տարածում է ստանում Սեֆյան պետության կառավարման շրջանում: Ազարիական բարբառը մինչ այդ արդեն դուրս էր մղվել խոսակցական լեզվից, և պալատական լեզուն դարձել էր թյուրքերենը: Ի տարբերություն սելջուկների ու մոնղոլների՝ Սեֆյաններն իրանական ծագում ունեին: Նրանք սերում էին Արդաբիլից և խոսում տեղական ազարիական բարբառով: Շեյխ Սաֆին բանաստեղծություններ էր գրում իր մայրենի լեզվով, ազարի բարբառով: [24, *Ոսկանյան 2014*] Սեֆյանները «թուրք», կամ «ադրբեջանցի» չէին, ինչպես պնդում է ադրբեջանական պատմագիտությունը: [296, *Media.az 2022*] Պարզապես Սեֆյանների շրջանում է, որ ազարի բարբառը դուրս է մղվում քաղաքներից ու գյուղերից, ու լայն տարածում ստանում թյուրքերենը: Պալատում, ինչպես Թավրիզում, Ղազվինում ու Սպահանում տարածված էր թյուրքերենը: Պաշտոնների ու կոչումների անունները ևս թյուրքերեն էին: Սեֆյան պետության հիմնադիր Իսմայիլ I-ը, սակայն, ունենալով իրանական ծագում, ստեղծագործում էր թյուրքերենով: [115, *Kasravi 1946*, p. 17]:

Իրանի բնակչությունը միատարր չէ, այն բաղկացած է էթնիկական և դավանական տարբեր խմբերից: Ընդ որում՝ այդ էթնիկական խմբերի մեծ մասի կազմավորումը տեղի է ունեցել Իրանի տարածքում: Իրանի բնակչության կազմի վերաբերյալ օբյեկտիվ և հիմնավորված գնահատական տալու համար անհրաժեշտ է խնդիրը դիտարկել մի քանի հարթության մեջ:

Առաջինը՝ կրոնական գործոնն է: Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունն ազգային փոքրամասնություններ չի ճանաչում: Իրանի սահմանադրությամբ երկրի բնակչությունը բաժանվում է մուսուլմանների և ոչ մուսուլմանների՝ կրոնական փոքրամասնությունների: Սա ունի իր պատմական պատճառները: Իսլամի ընդունումից հետո Սեֆյանների կառավարման շրջանում շիիզմն ընդունվեց որպես պետական կրոն՝ դառնալով իրանական ժողովուրդներին միավորելու կարևոր գործոններից մեկն ու հետագա դարերում նշանակալի ազդեցություն ունենալով իրանցիների ինքնության ձևավորման գործում:

Երկրորդ: Իրանցիների՝ որպես ազգի (մելաթ) ձևավորումը տեղի է ունեցել 20-րդ դարի սկզբին: Այն սահմանադրական շարժման կարևոր ձեռքբերումներից էր: Փահլավիների կառավարման շրջանում իրանականության գաղափարախոսության շրջանակում Իրանի տարածքում պատմականորեն բնակվող իրանական ժողովուրդներն ու էթնիկական խմբերը միավորվեցին պարսկերենի շուրջը:

Երրորդ գործոնը լեզվականն է: Իրանի բնակչությունը երեք խմբի է բաժանվում՝ իրանախոսների, թյուրքախոսների և սեմախոսների: Իրանի թյուրքախոս բնակչությունը բնակվում է Արևելյան Ատրպատական, Արևմտյան Ատրպատական և Արդաբիլ նահանգներում: Իհարկե, բացի վերոնշյալ նահանգներից՝ թյուր-

քախոսներ են բնակվում նաև Ջանջանում, Ղազվինում, ինչպես նաև մայրաքաղաք Թեհրանում:

Ինչպես բուն Ատրպատականում, այնպես էլ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում բնակչությունը խոսում է միմյանց մոտ թյուրքական բարբառներով: Այդուհանդերձ, երկու տարածքների ժողովուրդների էթնիկական և պատմամշակութային կազմավորումն ընթացել է տարբեր ճանապարհներով: Ատրպատականցիները ձևավորվել են իրանական կայուն ենթաշերտի վրա, որն ունի մշակութային խորն ավանդույթներ ու պատմական արմատներ, այնինչ՝ Առանի թյուրքալեզու բնակչության ձևավորման գործընթացում գերակշիռ դեր է խաղացել թյուրքական էթնիկական տարրը: Ատրպատականի թյուրքալեզու բնակչությունը մարդաբանական առումով, հոգևոր կերտվածքով, մշակութային ավանդույթներով և ազգագրական այլ չափանիշներով տարբերվում է այսրկովկասյան թյուրքերից: [16, Իրան Նամե 1995, էջ 21]



ԻՍՍՀՄ-ի լուծարումից հետո Իրանը նպատակ ուներ կրոնական և մշակութային ընդհանրություններն օգտագործելով՝ Ադրբեջանի հետ խորն ինտեգրում ունենալ: Սակայն, ինչպես 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնպես էլ 1991 թ. Ադրբեջանի Հանրապետության քաղաքական էլիտան երկարաժամկետ հեռանկարում երկրի զարգացման ռազմավարական տեսլական համարում էր թյուրքականության գաղափարախոսության վրա աշխարհիկ պետության հիմնումը: Նորանկախ Ադրբեջանը, որպես զարգացման ուղի ընտրեց կառավարման «աշխարհիկ-թյուրքական մոդելը», գործնա-

կանում մերժեց իսլամական կառավարման «իրանական մոդելը»՝ այն համարելով որպես սպառնալիք ուղղված իր պետական շահերին [113, Karimzādeh 2011, p. 266]:

«Թյուրքականության» գաղափարներով ոգևորված՝ «ժող-ճակատի» համակիրների մասնակցությամբ 1989 թ-ի դեկտեմբերին Նախիջևանի և Իրանի սահմանին արձանագրվել էին մի քանի լուրջ միջադեպեր, որոնք ուղղակիորեն սպառնում էին Իրանի տարածքային ամբողջականությանը: [5, *Բայբուրդյան 2003, էջ 10*]: Ինչպես 20-րդ դարի սկզբին Ատրպատականում տեղի ունեցած քաղաքական զարգացումները, այնպես էլ խորհրդային կառավարման ու հետխորհրդային շրջաններում տեղի ունեցած իրադարձություններն ադրբեջանական աղբյուրներն այլ կերպ են մեկնաբանում, իրանականները՝ այլ:

Իրանցի պատմաբան-հետազոտող Ահմադ Քազեմին «Պանթյուրքիզմ և պանազարիզմ» գրքում 1989 թվականի դեկտեմբերին տեղի ունեցածի վերաբերյալ հետևյալ գնահատականն է տալիս. «Նախիջևանի ուղղությունից մի խումբ ադրբեջանցիներ, քանդելով սահմանին տեղադրված փշալարերը, փորձել էին Արաքս գետին անցնելով մուտք գործել Իրանի տարածք: Ադրբեջանցիները ցանկանում էին միավորվել Իրանին, սակայն, խորհրդային ուժերը բռնության կիրառմամբ նրանց հետ են պահել: Հետագա տարիներին այդ իրողությունը կարևոր նշանակություն ունեցավ «պանազարիական» գաղափարախոսության ձևավորման և զարգացման գործում» [112, Kāzemi 2006, p. 65]:

Իրանական «Սահար» հեռուստաընկերության 1989 թ-ի արխիվային տեսանյութերում երևում է, թե ադրբեջանցիներն ինչպես են Իմամ Խոմեյնիի և Ալի Խամենեյիի նկարները ձեռքերին պարզած՝ Արաքս գետն անցնելով, մուտք գործում Իրանի տարածք [181, ISNA 2022]:

1990 թ-ի դեկտեմբերի 16-ին Նախիջևանի խորհրդարանը դեկտեմբերի 31-ը հռչակում է «աշխարհի ազարիների» օր: Իլիամ Ալիևի նախագահության շրջանում վերարժևորվեց այդ օրը՝ դառնալով պանազարիական գաղափարախոսությունը բնորոշող խորհրդանիշ: Ադրբեջանի նախագահն ամեն տարի դեկտեմբերի 31-ին արտերկրում բնակվող ադրբեջանցիներին ուղերձ է հղում, որում ներառվում են այն թեզերը, որոնք հաջորդ տարի պետք է ուղենիշ դառնան ադրբեջանական քարոզչամեքենայի համար: Աշխարհի ադրբեջանցիներին Ադրբեջանի նախագահի հղած ուղերձի հիմնական թիրախն Իրանի Արևմտյան Ատրպատական, Արևելյան Ատրպատական և Արդաբիլ նահանգների թյուրքախոս բնակչությունն է, ինչպես նաև Իրանի թյուրքախոս բնակչության այն հատվածը, որը տարբեր դրդապատճառներով հեռացել է Իրանից՝ քաղաքական ապաստան ստանալով Թուրքիայում, Ադրբեջանում և Եվրոպայում:

Ադրբեջանն այդ հարցում բավական ճկուն է գործում: Իրանի ներքին գործերին միջամտելու մեղադրանքից խուսափելու նպատակով Բաքուն հրապարակային հայտարարություններում իրանցի թյուրքախոսներին համարում է Իրանի քաղաքացի, միևնույն ժամանակ, սակայն, ընդգծում, որ «Հարավային Ադրբեջանի» քաղաքացիները, որոնք տարբեր պատճառներով լքել են երկիրը, դառնում են պանազարիական գաղափարախոսության շահառուներ:

Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետության ձևավորումից ի վեր Ատրպատականի և Իրանի թյուրքախոս բնակչության ինքնությանն [256, *Аветикян 2014, стр. 3-10*] առնչվող հարցերը շահարկվել են խորհրդային Ադրբեջանի, ապա նաև Ադրբեջանական Հանրապետության կողմից, և, չարժանանալով Իրանի համարժեք գնահատականին և արձագանքին, այսօր

արդեն Ատրպատականում անջատողականության դրսևորումներն ընկալվում են որպես «Իրանի միլիոնավոր ադրբեջանցիների» լեգիտիմ իրավունքի իրացում:

Տարիներ շարունակ Ադրբեջանն ու Թուրքիան, Իրանի թյուրքախոս բնակչության մայրենի լեզվի հարցը շահարկելով, յուրաքանչյուր պատեհ առիթն օգտագործում են՝ բարձրաձայնելով, թե Իրանում բնակվող «25 միլիոն ադրբեջանցիները» (*նկատի ունենալով թյուրքախոս բնակչությանը*) զրկված են իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքից [298, *Echo.az, 2012*]: Այս առնչությամբ մի ուշագրավ փաստ կարելի է արձանագրել, որը վկայում է ադրբեջանական քարոզչական թեզերի հիմնազուրկ լինելու մասին: Եթե 2010-ական թվականներին ադրբեջանական քարոզչությունն իրանցի թյուրքախոսների իրավունքները շահարկելիս օգտագործում էր «25 միլիոն ադրբեջանցի» ձևակերպումը [310, *Axar.az 2023*], ապա 2023 թ. Ադրբեջանի նախագահն արդեն խոսում է «50 միլիոն ադրբեջանցիների» մասին, որոնցից ըստ Ալիևի՝ միայն 10 միլիոնն է բնակվում Ադրբեջանում [295, *Apa.az 2022*]:

Տեսականորեն, եթե ընդունենք, որ Իրանի Արևմտյան Ատրպատական նահանգի 4 միլիոն, Արևելյան Ատրպատականի 4.5 միլիոն և Արդաբիլ նահանգի 2 միլիոն բնակչության 100 տոկոսը թյուրքախոս ազարի է (*իրականում, այդ նահանգներում բնակվում են քրդեր, հայեր, ասորիներ*), նույնիսկ եթե Իրանի այլ նահանգների թյուրքախոս բնակիչներին էլ ավելացնենք, ապա միջին հաշվով նրանց թիվը կկազմի 12-15 միլիոն: Հետևաբար, այսպես կոչված «Հարավային Ադրբեջանում» 40 միլիոն ադրբեջանցիների բնակվելու մասին պնդումներն անհիմն են:

Մի իրողության վրա արժե ուշադրություն դարձնել: Շատ դեպքերում ատրպատականցիները պնդում են, որ իրանական

ինքնություն ունեն, սակայն, շփման ընթացքում, դիցուք, այլագ-
գիներին ներկայանալիս իրենց «թուրք» են անվանում, սակայն,
նկատի ունենալով ոչ թե պատկանելիությունը «թուրք» էթնոսին,
այլ թյուրքախոս լինելու հանգամանքը [242, Tapper 1988, pp.
234-238]:

Այլ է այն թյուրքախոսների հարցը, որոնք մեծ թիվ են կազ-
մում մայրաքաղաք Թեհրանում: Սակայն, դրանց՝ ծագումով,
այսպես կոչված, ադրբեջանցի լինելու մասին պնդումներին էլ
միանշանակ չի կարելի մոտենալ: Խնդիրն այն է, որ մարդն ինչ-
որ հանգամանքների բերումով կարող է դառնալ թյուրքախոս՝
արդյունքում համարվելով «ադրբեջանցի»: Հետևաբար, Բաքվի
կողմից շրջանառվող «Իրանի 40 միլիոն ադրբեջանցիներ» նա-
րատիվի տրամաբանությամբ՝ նրանք պիտի համարվեն «ադրբե-
ջանցի»:

Այդ համատեքստում կարևոր է արձանագրել, որ Իրանի
հասարակության զգալի հատվածը, այդ թվում՝ պաշտոնյաները,
Իրանի թյուրքախոս ազգրիների մասին խոսելիս նկատի ունե-
նալով նրանց թյուրքախոս, այլ ոչ թե թուրք լինելու հանգաման-
քը, այդուհանդերձ, նրանց «թորք» (թուրք) են անվանում, իսկ լե-
զուն՝ «թորքի» (թյուրքերեն): Այդ իրավիճակն անորոշություն է
առաջացնում, առավել ևս, որ պաշտոնյաների կողմից արված
նման ձևակերպումներն արագ տարածվում են մամուլում: Իրան-
ցի պաշտոնյաների կողմից նմանատիպ դրսևորումների կարելի
է հանդիպել հատկապես նախընտրական շրջանում, երբ փորձ է
արվում սիրաշահել Իրանի թյուրքախոս բնակչությանը:

Այդ առնչությամբ Իրանում վերջին տարիներին «Արրպա-
տականը թուրք չէ, թյուրքախոս է» [Azarbaijan tork nist,
torkzaban ast] խորագրով նախագծեր են իրականացվում, որի
շրջանակներում հրատարակվել են գրքեր, կազմակերպվել՝ գի-

տաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ: Դրանց նպատակն է
հասարակության լայն շրջանակներին իրազեկել, որ Ատրպա-
տականն իրանական տարածք է, իսկ տեղի բնակչությունը՝
իրանցիներ են, որոնք խոսում են ատրպատականյան թյուրքերե-
նով, այլ ոչ թե թուրքերենով: [89, Firuzi 1999, p. 124] Այդ շարժ-
մանն իրենց աջակցությունն են հայտնել նաև Իրանի խորհրդա-
րանի թյուրքախոս մի շարք պատգամավորներ:

Ինչ վերաբերում է Իրանի թյուրքախոս բնակչությանը
«թուրք», կամ «ադրբեջանցի» համարելու թյուրքախոս անջատո-
ղականների ներկայացրած հիմնավորումներին, ապա նրանց
պնդումն այն է, որ Իրանի Ատրպատական նահանգի բնակիչնե-
րը, որոնք պարսկերենում կոչվում են «ազարիներ», խոսում են
թյուրքերենով, հետևաբար՝ թուրք են: Այսինքն՝ այս տրամաբա-
նությամբ լեզուն համարվում է ինքնության տարբերակում:

Իրանցի ազգագրագետ Էհսան Հուշմանդը, մերժելով այդ
թեզը, ընդգծում է այն հանգամանքը, որ Իրանում 500-ից ավելի
լեզու և խոսվածք գոյություն ունի, հետևաբար, ըստ այդ մոտեց-
ման՝ պետք է արձանագրել, որ Իրանում 500-ից ավելի ազգու-
թյուն է բնակվում [100, Hušmand 2023, p. 3]:

Է. Հուշմանդն իր հետազոտություններից մեկում հիմնավո-
րում է, թե ինչպես է իրանցիների շրջանում մի քանի սերունդ հե-
տո լեզվի փոփոխություն տեղի ունենում: Օրինակ, իրանցին, որը
ծնվել է Թեհրանում, սակայն, աշխատանքի բերումով ապրում և
աշխատում է Թավրիզում, մի քանի տասնամյակ անց հնարա-
վոր է անցնի թյուրքախոսության: Նրա ժառանգի, որը ծնվել է
Թավրիզում, ինքնության վրա մեծ ազդեցություն կունենա թյուր-
քականությունը: Կարող է լինել նաև հակառակ գործընթացը:
Մարդը, որը ծնվել և մեծացել է թյուրքախոսության միջավայ-
րում՝ Թավրիզում, Թեհրան հիմնական բնակչության վերադառ-

նախ, կշարունակի խոսել թյուրքերեն, սակայն, նրա զավակը, որը ծնված կլինի Թեհրանում, կհեռանա թյուրքականությունից՝ դրսևորվելով իրանականության միջավայրում:

Իրանի թյուրքախոս բնակչությանը կարելի է բաժանել երեք հատվածի՝

- Թյուրքախոսներ, որոնք իրենց համարում են իրանցի և դեմ են անջատողականությանը (*դրանք մեծամասնություն են կազմում*),
- Թյուրքախոս պատգամավորներ և մտավորականներ, որոնց քայլերը թեև ուղղված չեն Իրանի Իսլամական Հանրապետության համակարգի փլուզմանը, սակայն, որոշ դեպքերում նրանց գործունեությունն այնպիսի դրսևորումներ է ստանում, որոնցում անջատողականության տարրեր են պարունակում,
- Փոքրաթիվ, սակայն նշանակալի ազդեցություն ունեցող խմբավորումներ, որոնք ստանում են Թուրքիայի և Ադրբեջանի ուղղակի աջակցությունը:

Նրանք գործում են Իրանի կենտրոնական իշխանությունների դեմ, որոնց հիմնական նպատակն Իրանի Ատրպատական նահանգում անջատողական գործունեություն ծավալելն է: Վերջին տարիներին նշված խմբերն անջատողականությանը զուգահեռ նաև զբաղված են հակահայկական գործունեությամբ:

Բաքվի և Թեհրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին շրջափուլում, մասնավորապես Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի (1991-1992) պաշտոնավարման շրջանում, Բաքվի և Թեհրանի հարաբերությունները բնականոն զարգացում ապրեցին, սակայն, Աբուլֆազ Էլչիբեյի՝ (1992-1993) ղեկավարման օրոք երկկողմ հարաբերություններում արդեն ձևավորվել էր փոխադարձ անվստահության մթնոլորտ:

Ա. Էլչիբեյի ղեկավարած «Ժողովրդական ճակատ» կուսակցության որդեգրած ազգայնական-պանթյուրքիստական¹² գաղափարախոսության հիմքում ընկած էր այսպես կոչված «Հյուսիսային Ադրբեջանի» և «Հարավային Ադրբեջանի» (*Իրանի Ատրպատական նահանգը*) միավորումը՝ «Մեծ Ադրբեջանի» կազմում [48, Amiri 2006, pp. 251-252]: Այս համատեքստում 1993 թ. Ադրբեջանի նախագահը, բացահայտ կասկածի տակ դնելով Իրանի տարածքային ամբողջականությունը, համոզմունք էր հայտնել, որ քրդերը, բելուջները, արաբները, ֆարսերն ու թուրքերն Իրանի տարածքում իրենց անկախ պետությունները պետք է ձևավորեն:

«Անհրաժեշտ է պայքարել պարսկական շովինիզմի դեմ, հանուն Իրանում ապրող բազմաչարչար ադրբեջանական ժողովրդի և երկու կիսված «Ադրբեջանների» վերջնական միավորման», - հայտարարում էր Էլչիբեյը [16, Իրան Նամե 1995]: Ի դեպ, հայերին, ռուսներին և պարսիկներին (իրանցիներին) թիրախավորելու քաղաքականությունն աստիճանաբար դարձավ Ադրբեջանի ազգայնական գործիչների քաղաքական հայտարարությունների կարևոր շեշտադրումներից մեկը [156, Namasha.com 2019]: Այսօր այդ մոտեցումը դարձել է արտաքին թշնամու կերպարի շուրջ Ադրբեջանում ապրող էթնիկական բոլոր խմբերին մեկ ընդհանուր ազգի՝ «ադրբեջանցու» շուրջ համախմբելու Ադրբեջանի պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Պայմանականորեն 1991-1993 թթ. կարելի է համարել «թյուրքականության» գաղափարախոսության ձևավորմանը

¹² Իրանում այդպես են բնորոշվում Իրանի թյուրքախոս նահանգներում գործող այն խմբերը, որոնք գործում են Ադրբեջանի և Թուրքիայի վերահսկողությամբ և նրանց շրջանում առկա են անջատողական տրամադրություններ:

միտված Ադրբեջանի պետական քաղաքականության իրացման շրջան, 1993-2003 թթ. թյուրքականության տարածման, իսկ արդեն 2003-2020 թթ. այն դարձել էր Իրանի վրա ճնշում գործադրելու, Իրանում հայկական գործոնին հակազդելու գործիքներից մեկը:

Հեյդար Ալիևը (1993-2003), թեև իր նախագահության առաջին շրջանում վերանայեց իր նախորդի հակաիրանական քաղաքականությունը, սակայն, նրա պաշտոնավարման վերջին տարիներին պաշտոնական Բաքուն թեև հրապարակային չէր շահարկում իրանցի թյուրքախոս բնակչության լեզվի հարցը, սակայն, ոչ միայն զերծ չմնաց Ատրպատականի անջատողականներից անջակցելուց, այլև Ադրբեջանն իշխանության ամենաբարձր մակարդակով հովանավորում էր Իրանի թյուրքախոս նահագներից սերող անջատողականներին, ինչպիսիք Մահմուդ Ալի Չեհրեզանին ու Փիրուզ Դիլենչին են [316, Camah.org 1999]: Ադրբեջանի նոր իշխանությունները Թուրքիայի աջակցությամբ ձեռնամուխ եղան Իրանում թյուրքական-ազգայնական վերահսկելի խմբավորումների ձևավորմանը, որոնց գործողությունները համակարգում էր Թեհրանում Ադրբեջանի դեսպանությունը [45, Ahmadi 2015, p. 332]:

Իլիամ Ալիևի նախագահության առաջին տասնամյակում (2003-2013) ադրբեջանցիների՝ որպես տարածաշրջանի «տեղաբնիկ» և «բազմադարյա» պատմություն ունեցող ժողովրդի ինքնագիտակցությունը բարձրացնելուն ուղղված հատուկ պանազարիական գաղափարախոսության հիման վրա քաղաքականություն մշակվեց, որի առաջնային նպատակները հայտարարվեցին Իրանի պատմական-քաղաքակրթական ազդեցությունից դուրս ադրբեջանական «ուրույն» պատմություն ստեղծելն ու ադրբեջանական ինքնությունը թուրքերի հետ չնույնացնելը: Այս

մոտեցումն առնվազն պահպանվեց մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը: Դրանից հետո, բազմաթիվ գործոններով պայմանավորված, Ադրբեջանում Թուրքիայի ազդեցության շեշտակի աճից հետո թուրք-ադրբեջանական խոսույթում կրկին սկսեց շրջանառվել «մեկ ազգ, երկու պետություն» թեզը [264, Trend.az 2023]:

Ի. Ալիևի նախագահության առաջին տասնամյակն Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների թերևս ամենաբարդ ժամանակաշրջաններից էր [203, Cornell 2011, pp. 333-336]: Իրանի նկատմամբ միջազգային խիստ ճնշումների ու սպառնալիքների ֆոնին Ադրբեջանի տարածքը դիտարկվում էր որպես Իրանի վրա ռազմական հարձակման հարթակ: Իսրայելի ազդեցությունը բավական մեծացել էր Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում՝ դառնալով Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության՝ Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ անվստահության պատճառ: Ադրբեջանի իշխանություններն էլ իրենց հերթին երկրի ներքին կայունությունն ապահովելու, իշխանությունն ամրապնդելու, քաղաքական կյանքում կրոնի ունեցած դերակատարությունը նվազեցնելու, և այդ համատեքստում Ադրբեջանի իսլամական կուսակցության ղեկավար կազմի վրա Իրանի ազդեցությունը թուլացնելու նպատակով խստորեն վերահսկում և սահմանափակում էին շիայական խմբերի գործունեությունը, ինչն էլ հարուցում էր Իրանի խիստ մտահոգությունն ու արժանանում՝ համապատասխան հակազդեցության:

Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացող լարվածության պայմաններում, (այդպես էր 2010-ական թվականներին, երբ Իրանի ուշադրության կենտրոնում էին գտնվում Ադրբեջանի շիա հոգևորականների խնդիրները, այդպես էր 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ Իրանը դեմ էր ար-

տրահայտվում Ադրբեջանի՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրությունը փոխելուն միտված ագրեսիվ գործողություններին), Բաքուն, ի թիվս այլ գործոնների՝ անջատողականության հարցն օգտագործում էր որպես ճնշման գործիք՝ ընդդեմ Թեհրանի:

2000-ական թվականներից սկսած Ադրբեջանի իշխանությունները Իրանի տարածքում կամ դրանից դուրս գործող կազմակերպություններին ու անջատողական խմբավորումներին սկսեցին ավելի համակարգված աջակցություն ցուցաբերել: Դրանք մինչ օրս ինչպես տարածաշրջանում, այնպես էլ միջազգային հարթակներում զբաղված են տարածաշրջանի բնիկ ժողովուրդների պատմությունը խեղաթյուրելու Բաքվի քաղաքականության լեգիտիմացմամբ:

Բաքվի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ նաև ձևավորվեցին հետևյալ կազմակերպությունները՝

- «Արտերկրում ապրող ադրբեջանցիների հետ համագործակցության պետական կոմիտե»,
- «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրես» [77, *Arannews.com 2011*],
- «Հարավային Ադրբեջանի ազգային վերածնունդ շարժում» (GAMON) [265, *Iran.ru 2010*],
- «Հարավային Ադրբեջանի ազգային ազատագրության ճակատ» (GAMAC),
- «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրես» (ԱԱԿ),
- «Gunaz.tv» մեդիա հոլդինգ և այլն:

Վերոնշյալ կառույցների հիմնական առաքելությունն է, Իրանի կենտրոնական իշխանությունների ու թյուրքախոս բնակչության միջև լեզվի կիրառման հարցով հակասություններ առաջացնելով, ընդհանրապես ատրպականցիներին՝ իրանցիներից

անկախ առանձին ժողովուրդ դիտարկելու նպատակադրությամբ, այսպես կոչված պատմական Ադրբեջանն անջատել Իրանից:

Որքան էլ Ադրբեջանի իշխանությունները հայտարարում էին, թե նշված կազմակերպությունների գործունեության հետ Բաքուն կապ չունի, Ադրբեջանի կողմից իրականացված գործընթացներն այլ իրողության մասին են վկայում՝ հաստատելով Իրանում անջատողականությանն Ադրբեջանի մասնակցության փաստը [144, *Arannews.com 2012*]:

Երկարաժամկետ հեռանկարի այդ նպատակն իրականացնելու համար «պանազարիական» գաղափարախոսությունն ամրակայվեց նաև Ադրբեջանի Հանրապետության գիտակրթական քաղաքականության մեջ: Մասնավորապես այդ երկրի դպրոցական դասագրքերում Իրանի հյուսիսային թյուրքախոս, այդ թվում և՛ քրդաբնակ նահանգները, ներկայացվում են որպես «Մեծ Ադրբեջանի» մաս [46, *Ahmadi 2011, p. 54-56*]:

Իլիամ Ալիևի նախագահության շրջանում հայր Ալիևի սկսած «Ադրբեջանի պատմության» ստեղծման գործընթացն [98, *Heydar Aliiev*] ավելի համակարգված բնույթ ստացավ՝ դրվելով ինստիտուցիոնալ հիմքերի վրա: Մասնավորապես Ադրբեջանի դպրոցական դասագրքերի պատմության ծրագիրը վերանայվեց, իսկ Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի առջև խնդիր դրվեց՝ ստեղծելու Ադրբեջանի նոր պատմությունը [321, *Azariha.org 2016*]: Այդ գործընթացի արդյունքում ոչ միայն աղավաղվեց տարածաշրջանի երկրների և տեղաբնիկ ժողովուրդների պատմությունը, այլև Ադրբեջանը գիտական մակարդակով տարածքային պահանջներ ներկայացրեց հարավային հարևան Իրանի Իսլամական Հանրապետությանը, իսկ 44-օրյա պատերազմից հետո՝ նաև Հայաստանի Հանրապետությանը:

Ադրբեջանի դպրոցական դասագրքերում Իրանը համարվում է «ագրեսոր», իսկ քարտեզներում Իրանի հյուսիսային նահանգները՝ ներկայացվում որպես «Հարավային Ադրբեջան»: Հետևաբար՝ «ադրբեջանական» պատմական հողերն «ագրեսորից» ազատագրելն ու «Մեծ Ադրբեջանի» սահմաններում «Հյուսիսային Ադրբեջանի» (*ժամանակակից Ադրբեջանական Հանրապետությունը*) և «Հարավային Ադրբեջանի» միավորումը հոչակվում է որպես ազգային նպատակ [45, *Ahmadi 1990, pp. 162-163*]:

Ադրբեջանի այդ քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված ադրբեջանական մամուլում և գիտական գրականության մեջ լայնորեն շրջանառվում է «պարսկական շովինիզմի» մասին թեզը, ըստ որի՝ «*Ռեզա շահի կառավարման շրջանից ի վեր մինչ օրս ոչ պարսկախոս ժողովուրդները՝ այդ թվում ադրբեջանցիները (Իրանի թյուրքախոս ատրապատականցիները), խտրական վերաբերմունքի են արժանանում Իրանում*» [322, *Yusifli 2009, pp. 3-41*]: Դրանով փորձ է արվում քարոզչական դաշտում լեգիտիմացնել արդեն իսկ գիտական մակարդակում Ադրբեջանի պատմության և մշակույթի վերաբերյալ պատրաստված թեզերը, որոնք մամուլում շրջանառվելուց կարճ ժամանակ անց իրենց տեղն են գտնում ադրբեջանցի քաղաքական գործիչների քաղաքական խոսույթում՝ մեծ ազդեցություն գործելով հասարակական կարծիքի վրա [317, *Dia.az 2013*]: Ադրբեջանի ձեռնարկած վերոնշյալ գործընթացները վերլուծելով՝ կարող ենք եզրակացնել, որ Իրանում անջատողական գործընթացներին Ադրբեջանի առնչությունն առաջին հերթին այդ գործողությունների արդյունքում է ի հայտ գալիս [109, *Radiofarda.com 2006*]:

Իրանի Ատրպատական նահանգի թյուրքախոս բնակչության խնդիրների շահարկումն ու «Հարավային Ադրբեջանի»

անջատումը լեգիտիմացնելու և Ատրպատականի մշակութային ժառանգությունն «ադրբեջանական» ներկայացնելու նպատակով Ադրբեջանը նպատակաուղղված քաղաքականություն է մշակել և վերջին տարիներին համալիր գործողություններ մշակել:

Ադրբեջանի՝ պատմությունը խեղաթյուրելու գործողությունները երեք ուղղությամբ են իրականացվել:

Ա. Գրքերի հրատարակում, որոնք գրում են օտարազգի հետազոտողներն Ադրբեջանի պատվերով. Այդ գրքերի շարքում կարելի է առանձնացնել Գրեմ Ուլիսոնի հեղինակած «Իլիամ. նախագահի դիմանկարը» գիրքը:

Բ. Գրքերի հրատարակում, որոնք գրում են Ադրբեջանական Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաները. Այստեղ կարելի է առանձնացնել Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհդիևի (1995-2019)¹³ հեղինակած գրքերը:

Գ. Գրքերի հրատարակում, որոնք պատրաստվում են հանրակրթական դպրոցների աշակերտների համար: Այս շարքում առանձնացվում է «Աթա Յուրդու» (*Պապերի հայրենիք*) բազմահատորյակը:

Առանց գիտական հիմնավորման գրված դասագրքերում զետեղված են աննախադեպ ծավալի հակաիրանական բովանդակությամբ նյութեր: Դրանցում Իրանն ու իրանցիներն ադրբեջանցի երիտասարդների մոտ ձևավորում են արնախումի և մարդասպանի ընկալում:

¹³ Մեհդիևն Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևի մերձավորներից է, որը նշանակալի ազդեցություն է ունեցել իշխանությունն Իլիամ Ալիևին փոխանցելու գործում: Նա, բացի քաղաքական գործունեությունից, համակարգել է Ադրբեջանի պատմությունը գրելու, հարևան երկրների նկատմամբ տարածքային ու մշակութային պահանջներ ներկայացնելու քաղաքականությունը:

2013 թ. Ադրբեջանն Իրանի մշակութային-պատմական արժեքների դեմ մի նոր արշավ սկսեց: Ադրբեջանի մշակույթի նախարարության որոշմամբ՝ պարսից դասական գրականության մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Նիզամի Գանջավիի, գերեզմանի պատերին ամրացված պարսկերեն բանաստեղծությունների զարդաքանդակները քանդվեցին՝ դրանք փոխարինվելով թյուրքերեն տարբերակով: Ադրբեջանի այդ քայլն արժանացավ Իրանի ԱԳ և մշակույթի նախարարությունների խիստ քննադատությանը [110, Kar va kargar 2013]:

2015 թ. լույս է տեսել Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհդիևի հեղինակած «Նադիր շահ Աֆշար, դիվանագիտական գրույցներ» վերնագրով գիրքը: Ադրբեջանի ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Յաղուբ Մահմուդովը, ընդգծելով այդ գրքի կարևորությունը, հետևյալ շեշտադրումն էր արել. «Որոշ ուժեր փորձում են Ադրբեջանի պատմական դեմքերին պիտակ կայցնել. Պեղք է նկատի ունենանք, որ Ադրբեջանի թագավորներն իշխել են ներկայիս Իրանում ու նրան հարակից տարածքներում: Նադիր շահ Աֆշարը թյուրքական միասնության գաղափարներով կարևոր ներդրում է ունեցել Ադրբեջանի պետական կառավարման համակարգում» [277, Azertag.az 2015]:

Իրանցի պատմաբան, փիլիսոփա, «իրանաիրականության» գաղափարախոսության հիմնադիր Սեյյեդ Ջավադ Թաբաթաբային, դատապարտելով Բաքվի կողմից իրանական պատմությունը կեղծելու գործընթացը, մասնավորապես նշել էր. «Որոշ երկրներ ստեղծվել են շար կարճ ժամանակահատված առաջ, նրանք նույնիսկ պատմություն չունեն, սակայն, ցավոք յուրացրել են իրանական մշակույթն ու պատմությունը: Նույնիսկ Ադրբեջան պետության անունը չի պատկանում ադրբեջանցիներ-

րին: ԽՍՀՄ-ի լուծարումից հետո ընդամենը 20 տարի է անցել, որ ստեղծվել է Ադրբեջանական Հանրապետությունը, սակայն քարոզչության մեջ այդ երկիրը ներկայացվում է որպես հին պարուշանների երկիր» [93, Parsianjoman.org 2022]:

Ադրբեջանը բացի իրանցի բանաստեղծ Նիզամի Գանջավիին, Նադիր շահին ու իրանցի պատմական այլ դեմքերին «ադրբեջանցի» ներկայացնելուց, յուրացնում է նաև իրանական մշակութային արժեքները, ինչպիսիք են՝ թառ երաժշտական գործիքը, ճոկան (Polo) մարզախաղը, «Յալդայի գիշերվա» (Շաբ-է Յալդա) տոնը» և այլն:

Ամեն անգամ, երբ Իրան-Ադրբեջան հարաբերություններում լարվածություն է առաջանում, Իրանի վրա որպես ճնշման գործիք է օգտագործվում անջատողականության գործոնը: Այդ առումով հատկապես ակտիվ աշխատանք են անում ադրբեջանցի խորհրդարանականները: Ադրբեջանի խորհրդարանում ժամանակ առ ժամանակ շրջանառության մեջ է դրվում օրենքի նախագիծ, որով նախատեսվում էր երկիրը վերանվանել [269, Inews.az 2022] «Հյուսիսային Ադրբեջան», այն պատճառաբանությամբ, թե «Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ադրբեջանը կիսվել է երկու մասի, իսկ «Հարավային Ադրբեջանը» մնացել է Արաքսի մյուս կողմում՝ Իրանի տարածքում» [302, Azertag.az 2023]:

Վերջին տասնամյակի ընթացքում Իրանի և Ադրբեջանի միջև քարոզչական պատերազմն ուշագրավ զարգացումներ է ունեցել: Մինչև լարվածության առաջացումը կողմերն այնքան իրարամերժ հայտարարություններ են անում, որ դժվար է լինում գնահատել, թե խնդիրն ինչից է ծագում: Ուսումնասիրելով 20-ամյա պատմությունը, կարելի է հետևյալ օրինաչափությունն արձանագրել: Թե՛ Ադրբեջանը, և թե՛ երկկողմ հարաբերություններ-

րում ի հայտ եկած ցանկացած տարածայնության ժամանակ անմիջապես սկսում են օգտագործել քարոզչական զինանոցը: Այդպես էր 2010-ական թվականներին, այդպես էր՝ 2020-ից հետո: Օրինակ, 2021 թ., երբ Իրանն Ադրբեջանի սահմանին անցկացրած զորավարժությամբ պատասխանեց մինչ այդ Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի համատեղ անցկացրած զորավարժություններին ու Հայաստանի և Իրանի ցամաքային սահմանի անխափան կապի ապահովմանն ուղղված սպառնալիքներին, Ադրբեջանն Իրանի անցկացրած զորավարժությունը որակեց որպես սադրանք՝ այդպես հիմնավորելով Իրանի դեմ ձեռնարկած իր հետագա գործողությունները:

Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր, «Ազգային ճակատ» կուսակցության ղեկավար Գուդրաթ Գասանգուլիևը Հայաստան-Իրան սահմանի նկատմամբ 2022 թ. իրականացրած հերթական սադրանքից հետո, երբ Իրանը զորավարժություններ անցկացրեց Ադրբեջանի սահմանին, Բաքուն դա ներկայացրեց որպես հակաադրբեջանական գործողություն: Գասանգուլիևն Իրանին նախազգուշացրել էր, որ *«եթե Իրանը շարունակի իր հակաադրբեջանական քաղաքականությունը, ապա հնարավոր է՝ Իրանը բաժանվի հինգ մասի: Ադրբեջանցի խորհրդարանականն ընդգծել էր, որ Ադրբեջանը պետք է զբաղվի այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի» մի քանի միլիոն ադրբեջանցիների իրավունքներով»* [308, *Regnum.ru* 2022]:

Իրանի թյուրքախոս բնակչության ուղղությամբ Ադրբեջանի պետական քաղաքականության մեջ կարևոր օղակ է համարվում 2005 թ. ձևավորված Ադրբեջանից դուրս բնակվող ադրբեջանցիների հարցերով պետական կոմիտեն: Իլիամ Ալիևի նախագահության շրջանում կոմիտեի բյուջեն զգալիորեն մեծացավ՝ կազմելով շուրջ 6 միլիոն դոլար: Կոմիտեի նախաձեռնությամբ ավելի

քան 300 կազմակերպություն է ստեղծվել, որոնք աշխարհի տարբեր մայրաքաղաքներում ակտիվորեն զբաղվում են լոբբիստական աշխատանքներով՝ սպասարկելով Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգը: Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հարցերով պետական կոմիտեի տվյալներով՝ Ռուսաստանում ապրում է 2 միլիոն, Ուկրաինայում՝ 500 հազար, Գերմանիայում՝ 400 հազար, Ֆրանսիայում՝ 500 հազար, Միացյալ Նահանգներում՝ 1.5 միլիոն, Ուզբեկստանում 60 հազար [112, *Kazemi* 2007, p. 77] ադրբեջանցի: Ադրբեջանի նախագահը, 2006 թ., ընտրվելով ԱԱԿ-ի համակարգող խորհրդի նախագահ, փաստացի Բաքվի հակաիրանական քաղաքականության իրականացման գործառույթը վերցրեց իր անմիջական վերահսկողության ներքո [306, *Azertag.az* 2022]:

Արտերկրում բնակվող ադրբեջանցիների պետական կոմիտեի ձևավորումից հետո Ադրբեջանը սկսեց ավելի համակարգված գործել: Այդ կառույցի հիմնական նպատակը թեև Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգի սպասարկումն է, սակայն, երկարաժամկետ հեռանկարի համար այդ կառույցի առաջնահերթություններից մեկն Իրանում բնակվող թյուրքախոս բնակչության հետ աշխատանքն է:

2010 թվականից սկսած՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունները հասան լարվածության գագաթնակետին: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության համակարգմամբ Լեռնային Ղարաբաղի հակամարտության բնույթը փոխելու, դրան կրոնական երանգավորում տալու նպատակով ակտիվ քարոզչություն էր տարվում: Այդ առումով Ադրբեջանն Իրանի դիրքորոշման վրա ազդելու, Հայաստան-Իրան հարաբերություններում ռազմավարական նշանակության նախագծերի իրականացումը խափանելու, Իրանի գործելու հնա-

րավորությունները սահմանափակելու, ինչպես նաև այսպես կոչված մեծ Ադրբեջան» ձևավորելուն ուղղված երկարաժամկետ հեռանկարի իր ծրագրերն իրականացնելու նպատակով Իրանի «ադրբեջանցիների» հարցի շահարկումն ընտրվեց որպես Իրանի վրա ճնշում գործադրելու ազդեցիկ գործիք:

Վերջին երկու տասնամյակի Իրանի և Ադրբեջանի հարաբերություններն ուսումնասիրելիս և երկկողմ հարաբերություններում լարվածության առաջացումը գնահատելիս նկատում ենք, որ Բաքվի և Թեհրանի հարաբերություններում հատկապես քարոզչական պատերազմն ինտենսիվանում է այն դեպքում, երբ Իրանն ու Հայաստանը կարևոր նախագծի շուրջ բանակցում են, կամ էլ Թեհրանը չի սատարում Ադրբեջանի՝ Հայաստանի նկատմամբ իրականացվող ագրեսիվ քաղաքականությունը:

Իհարկե, սա երկկողմ հարաբերությունների լարվածության առաջացման հիմնական պատճառը չէ, սակայն, նշանակալի ազդեցություն ունենում է: Արտերկրից հեռարձակվող հեռուստաալիքների, ռադիոյի, տարատեսակ կայքերի ու սոցիալական ցանցերի միջոցով ատրպատականցիների շրջանում «թյուրքականության» ակտիվ քարոզչություն էր իրականացվում, և Իրանում թյուրքախոսներին առնչվող յուրաքանչյուր միջադեպ Բաքվի կողմից անարձագանք չէր մնում:

2006 թ. մայիսի 12-ին Իրանի հեղինակավոր և ամենաշատ տպաքանակ ունեցող պարբերականներից մեկը՝ «Իրան» օրաթերթը, մի ծաղրանկար էր հրապարակել, որը թյուրքախոս ատրպատականցիներն ընկալել էին որպես վիրավորանք՝ ուղղված իրենց էթնիկական պատկանելիությանը [62, *bbc.com* 2006]: Այս առնչությամբ ամեն տարի մայիսին Իրանի թյուրքախոս նահանգներում բողոքի ցույցեր են կազմակերպվում, որոնք

քարոզչական դաշտում աջակցություն են ստանում նաև Ադրբեջանից [301, *Interfax.az* 2012]:

Նման մի միջադեպ էլ արձանագրվել էր 2015 թ. նոյեմբերին, երբ Իրանի պետական հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներից մեկի ժամանակ ատրպատականցիների արժանապատվությունը վիրավորող դրվագներ էին ցուցադրվել, ինչը ոչ միայն հարուցել էր Իրանի թյուրքախոս բնակչության, այլև Իրանի Մեջլիսի՝ Ատրպատականից ընտրված պատգամավորների զայրույթն ու հանգեցրել բազմահազարանոց ցույցերի [186, *ISNA* 2015]: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորներն ու ադրբեջանական առաջատար լրատվամիջոցներն ակտիվորեն արձագանքել էին միջադեպին՝ իրենց հրապարակումներում առկա ձևակերպումներով ավելի սրելով իրավիճակը [276, *Haqqin.az* 2022]: Բաքվի նման գործողություններն Իրանում հատկապես անվտանգության համար պատասխանատու ուժերի մոտ այն ընկալումն էր ձևավորել, որ անջատողական խմբավորումների միջոցով Ադրբեջանը նպատակ ունի մասնատել Իրանը, և այդ մտահոգությունից ելնելով էլ պաշտոնական Թեհրանը պարբերաբար իր բողոքն էր ներկայացնում Ադրբեջանին: Իրանական կողմի գործողությունները վերլուծելիս նկատվում է, որ շատ հաճախ Թեհրանը Բաքվի հակաիրանական գործողություններին հիմնականում արձագանքում է այն դեպքում, երբ դիվանագիտական ջանքերի շնորհիվ հնարավոր չի լինում կառավարել քարոզչական պատերազմը: Այդ դեպքում իրանական կողմը կարող է քարոզչական այնպիսի պատասխան տալ, որը մի տևական ժամանակ կարող է կասեցնել Ադրբեջանի քարոզչական հարձակումները: Մասնավորապես Ադրբեջանի համար բավականին զգայուն թեմա է Ալիևների ծագման հետ կապված հարցը: Ուշագրավ է, որ Իրանը հենց

Ատրպատականի մտավորականների ջանքերի շնորհիվ ստեղծված փաստավավերագրական նյութերը հրապարակելով՝ կասկածի տակ է դնում Ալիևների՝ այսպես կոչված ադրբեջանցի լինելու հանգամանքը՝ պնդելով, որ նրանք քրդական ծագում ունեն [187, *Vatan Yoli* 2023]:

Ասիմետրիկ պատասխան երբեմն կարող է տրվել Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից: Մասնավորապես Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափուլերից մեկի ընթացքում 2011 թ. Իրանի ԶՈւ ԳՇ պետ Սեյյեդ Հասան Ֆիրուզաբադին (1989-2016) Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին հղած խիստ նախազգուշացման մեջ, կասկածի տակ դնելով «Ադրբեջան» անվամբ պետության գոյությունը, Արաքսի հյուսիսում գտնվող պետական կազմավորումը՝ «Առան», իսկ այնտեղ բնակվող ժողովրդին՝ իրանցի էր անվանել [102, *ISNA* 2011]:

Բացի նմանատիպ նախազգուշացումներից՝ Իրանը տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգները չեզոքացնելուն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ է ձեռնարկում: Դրանք տեղի են ունեցել ինչպես 90-ականների սկզբին՝ Արցախյան հակամարտության ժամանակ, այնպես էլ մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում: 1993 թ. Իրանն Արևելյան Ատրպատական (East Azerbaijan) նահանգի ցամաքային սահմանն Ադրբեջանական Հանրապետության հետ փոքրացնելու [15, *Majlis.ir* 2013] նպատակով վարչատարածքային բաժանում էր կատարել, ինչի արդյունքում ձևավորվել էր ներկայիս Արդաբիլ նահանգը [237, *Sadri* 2009, pp. 64-65]: Իսկ 2010-ական թվականներին Իրանի թյուրքախոս նահանգներից ընտրված պատգամավորները հանդես էին գալիս Արևելյան Ատրպատականի հյուսիսային հատվածներում «Հյուսիսային

Ատրպատական» կամ «Արասբարան» անվամբ նահանգ ձևավորելու մասին նախաձեռնություններով [183, *Aharannews.ir* 2017]: 2023 թ. առաջացած լարվածության ժամանակ էլ Իրանում հանրային քննարկման դրվեց մի նոր նախագիծ, որը նախատեսում էր ներկայիս Արևելյան Ատրպատական նահանգը մասնատել՝ ձևավորելով Սահանդ նահանգ՝ Մարաղե կենտրոնով [146, *Farsnews.ir* 2023]: Այդ դեպքում Թավրիզ քաղաքը, որի նկատմամբ Ադրբեջանը նկրտումներ ունի, դուրս կմնա «Ազարբայջան» անվամբ նահանգի կազմից:

2013 թ. նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Հասան Ռոհանիի կառավարությունն էթնիկական խմբերի ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն առնչվող ոլորտներում շոշափելի բարեփոխումներ իրականացրեց [231, *President.ir* 2016], որոնց շրջանակներում Իրանի կառավարությունը Թավրիզի համալսարանում «թյուրքերեն լեզու և գրականություն» առարկան դասավանդելու մասին որոշում ընդունեց: 2015 թ. մայիսին Հասան Ռոհանիի մասնակցությամբ Թավրիզում բացվեց «Ատրպատականի արվեստի և մշակույթի հիմնադրամի» շենքը: Բացի այդ՝ Իրանի հեռուստառադիոընկերության կայացրած որոշման համաձայն՝ 2015 թ. մայիսից իրանական «Սահար» հեռուստաալիքը սկսվեց հեռարձակվել նաև ատրպատականյան թյուրքերենով, որը հասկանալի է նաև Ադրբեջանի Հանրապետության բնակչության շրջանում:

Ադրբեջանը, նկատելով թյուրքականության գործոնի շահարկման արդյունավետությունը, Իրանի հետ ունեցած լարված հարաբերությունների ընթացքում որպես ճնշման գործիք օգտագործելիս այդ գործընթացում ներգրավեց նաև երրորդ կողմին՝ երկակի խաղ խաղալով: Բաքուն մի կողմից ԱՄՆ-ին և Իսրայելին [149, *Qolipur* 2003, pp. 170-174] փորձում էր ցույց տալ, որ

մեծ հնարավորություն ունի՝ ազդելու Իրանի վրա, իսկ մյուս կողմից՝ անջատողականության հարցն Իրանի հետ բանակցություններում օգտագործում էր որպես սակարկման առարկա՝ փորձելով թյուրքական գործոնի շահարկման դիմաց՝ այլ ոլորտում Իրանից զիջումներ կորզել [239, Shaffer 2010, p. 472]:

Պետք է նշել է, որ Ադրբեջանի կողմից որպես Իրանի «սպառնալիքների» դեմ պայքարող երկիր դիրքավորվելը, մշտապես ստացել է երրորդ կողմի՝ մասնավորապես Իսրայելի ու Թուրքիայի, Իսրայելի և Միացյալ Նահանգների աջակցությունը [229, Olson 2007, p. 67]: Ադրբեջանը նշված երկրներից յուրաքանչյուրի հետ տվյալ իրադրությունում իր քաղաքական օրակարգը սպասարկելու նպատակով փոխշահավետ համագործակցություն է ծավալել: Մասնավորապես Միացյալ Նահանգների և Իսրայելի համար չափազանց կարևոր նշանակություն է ունեցել Ադրբեջանի՝ որպես Իրանի սպառնալիքների դեմ պայքարող երկիր դիրքավորվելը: Ադրբեջանն իր այդ ծառայության դիմաց քաղաքական ու ռազմական նշանակալի աջակցություն է ստացել ինչպես 2010-ական թվականների սկզբին, այնպես էլ 2020 թ. հետո:

Իրանի անջատողական գործընթացներում Ադրբեջանի ունեցած ազդեցության մասին են վկայում ամերիկացի կոնգրեսականների և փորձագետների [198, Nytimes.com 2014] նախաձեռնությունները, որոնք արժանանում էին Բաքվի բացահայտ և քողարկված աջակցությանը:

ԱՄՆ կոնգրեսական Դ. Ռոհրաբաքերը 2012 թ. պետքարտուղար Հ. Քլինթոնին հղած նամակում առաջարկում էր իրանցի թյուրքախոսներին օգնել անկախություն ձեռք բերելու գործում [233, Paia.org 2012]: Ընդ որում, ամերիկացի կոնգրեսականը հատկապես ընդգծում էր Ադրբեջանի դերակատարությունը, որի

օրենսդիրները պարբերաբար բարձրաձայնում էին «Հյուսիսային Ադրբեջանը» և «Հարավային Ադրբեջանը» միավորելու մասին [252, Meclis.gov.az 2012]:

Բացի վերոնշյալ նախաձեռնությունից՝ կոնգրեսական Ռոհրաբաքերը 2013 թ. ԱՄՆ Կոնգրեսին էր ներկայացրել մի նախագիծ, որը նախատեսում էր Իրանի թյուրքախոս ատրպատականցիներով և բելուջներով բնակեցված նահանգներում ամերիկյան ազդեցությունը մեծացնելու և արևմտյան արժեքները քարոզելու նպատակով ռադիո և հեռուստատեսություն հեռարձակել [234, Congress.gov 2013]: Թերևս նման նախաձեռնության հիմնավորումն այն էր, որ Ադրբեջանի անուղղակի աջակցությամբ դեռ 2005 թվականից արդյունավետ գործում էր «Gunaz TV» հեռուստաալիքը, որը մինչ օրս կարևոր դերակատարություն ունի Իրանի անջատողական գործընթացներում [40, Tabnak.ir 2013]:

Իսկ որպես առարկայական արդյունք՝ կարելի է նշել Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) տնօրենի խորհրդական, ամերիկացի վերլուծաբան Բրենդա Շաֆերի գործունեությունը, որի ուշադրության կենտրոնում են հայտնվում ոչ միայն Իրանի թյուրքախոս ատրպատականցիների ինքնությանն առնչվող հարցերը, այլև նա Իրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովի (2009-2016) հետ համատեղ՝ «Անջապողական շարժումներն Ադրպայականում» թեմայով, երկու հատորով գիրք է հրատարակել, որը մեծ ազդեցություն է թողել Ատրպատականի թյուրքախոս բնակչության ինքնագիտակցության վրա [126, Mardomsalari 2019]:

Շաֆերը բավական ակտիվ քարոզչությամբ էր զբաղվում 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում՝ Twitter-ի իր միկրոբլոգի միջոցով տարածելով Բաքվի քարոզչական թեզերը: Հետպատերազմական շրջանում Բ. Շաֆերն իր գործընկերների հետ

հաճախակի էր հայտնվում Իրան-Ադրբեջան սահմանին՝ Խոդաֆարինի պատմական կամուրջի հատվածում [41, Mashregnews.ir 2022]:

Ինչ վերաբերում է Ատրպատականում անջատողական շարժումներին Թուրքիայի մասնակցությանը, ապա այդ երկիրը նշանակալի աջակցություն է ցուցաբերել և շարունակում է ցուցաբերել Ադրբեջանին: Եթե Ադրբեջանը հիմնականում կենտրոնացած է Արևելյան Ատրպատական նահագում և նրա կենտրոն Թավրիզում գործող անջատողականների գործողությունների համակարգմամբ, ապա Թուրքիայի թիրախում սահմանակից Արևմտյան Ատրպատական նահանգն է:

Քրդերի և թյուրքախոս ատրպատականցիների շրջանում առկա անջատողականության դրսևորումները, արտաքին ուժերի (մասնավորապես՝ Թուրքիա, Իսրայել, Սաուդյան Արաբիա, Իրաք)՝ Արևմտյան Ատրպատական նահանգի գործերին միջամտելու հնարավորությունները, Իրանի անվտանգության ուժերի և ժամանակ առ ժամանակ նահանգ ներթափանցող խմբավորումների միջև արձանագրվող զինված բախումները, ինչպես նաև հայերի ու ասորիների ներկայությունն այն կարևոր գործոններն են, որոնք մշտապես գտնվում են Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության և բարձրաստիճան հոգևորականների ուշադրության կենտրոնում:

Արևմտյան Ատրպատականն Իրանի միակ նահանգն է, որը սահմանակցում է երկու պետության (Թուրքիա, Իրաք) և երկու ինքնավար երկրամասի (Նախիջևան և Իրաքյան Քրդստան): 2016 թ. մարդահամարի տվյալներով՝ նահանգի բնակչության թիվը կազմում է 3 մլն 260 հազար: Մեծամասնությունը կազմում են քրդերն ու թյուրքախոսները: Նահանգի որոշ գյուղերում ապրում են նաև հայեր ու ասորիներ:

Ատրպատականի հարցում Թուրքիայի գործողություններն ավելի են բարդացնում իրավիճակը՝ Իրանին ստիպելով զգայուն տարածաշրջանում անվտանգությունն ապահովելու նպատակով երկու ճակատով աշխատել: Թուրքիայի գործողությունները դրսևորվում են ինչպես Իրանի հասցեին սպառնալից հայտարարություններով, այնպես էլ Իրանից հեռացած պանթյուրքիստանջատողականներին աջակցություն ցուցաբերելով:

Թուրքիայի ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն 2020 թ. հունիսի 6-ին հայտարարել էր, թե Իրանի Արևմտյան Ատրպատական նահանգում 100-ից ավելի PKK-ի անդամ ահաբեկիչներ կան: Սոյլուն ակնարկել էր, որ եթե իրանական կողմը չվնասազերծի դրանց, ապա Թուրքիան կարող է ռազմագործողություններ անել Իրանի տարածքում [318, aa.com.tr 2020]: Այդ առնչությամբ ուշագրավ հայտարարություն է արել «Անկարայի Իրանի ուսումնասիրությունների կենտրոնի» (İRAM) տնօրեն Հաքքի Ուլդուրը՝ ընդգծելով, որ Թուրքիան պատրաստ է Իրանի տարածքում PKK-ի զինյալների դեմ ռազմագործողություններ իրականացնել¹⁴:

¹⁴ «PKK»-ի զինյալների՝ Իրանի տարածքում գտնվելու առնչությամբ Թուրքիայի նախագրուշացման ֆոնին Իրան-Թուրքիա սահմանին զինված մի քանի միջադեպ էր տեղի ունեցել: Արևմտյան Ատրպատականից արձակված կրակից սպանվել էր թուրք զինծառայող Ռեջեփ Դուրաքը: Թուրք զինվորները «PKK»-ի զինյալներին ոչնչացնելու նպատակով անցել էին Իրանի սահման, ինչից հետո էլ իրանցի սահմանապահների կողմից կրակ էր բացվել: 2020 թ. հոկտեմբերի 10-ին և 2021 թ. նոյեմբերի 13-ին քրդական «PKK»-ի հետ փոխկապակցված «Քրդստանի ազատ կյանք» կուսակցության (PJAK) խմբավորման (Իրանը համարում է ահաբեկչական) դեմ պայքարում Արևմտյան Ատրպատական նահանգի ԻԻՀ սահմանապահ ծառայության հինգ զինվոր է սպանվել, 2021 թ. փետրվարին 16-ին Թուրքիայի ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն Թուրքիայի խորհրդարանում ունեցած ելույթում կրկին հայտարարել էր, որ Իրանում և Իրաքում «PKK»-ի 5000 անդամ կա:

Թուրքիայի՝ Իրանի թյուրքախոս անջատողականներին ցուցաբերվող աջակցության վերաբերյալ նոր տեղեկություններ ի հայտ եկան 2020 թ. պատերազմից հետո, երբ Անկարան և Բաքուն սկսեցին ավելի անկաշկանդ խոսել տարածաշրջանի քարտեզը վերաձևելու իրենց հեռահար նպատակների մասին: Տևական ժամանակ է, ինչ «Հարավային Ադրբեջանի անցումային խորհրդարանի» անդամները բնակվում են Թուրքիայում: Մինչ 2020 թ. 44-օրյա պատերազմը նրանք խուսափում էին հրապարակային գործունեությունից: Սակայն, պատերազմից հետո այդ անցումային խորհրդարանի պատվիրակությունն արտագնա նիստերից մեկն անցկացրեց Բաքվում: Նիստի ընթացքում նրանք հանդիպել էին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին՝ վերջինիս անվանելով նաև «Հարավային Ադրբեջանի» նախագահ [92, *Arannews.ir* 2022]:

Էթնիկական խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող իրանցի հայտնի հետազոտող Էհսան Հուշմանդի պնդմամբ՝ Իրանի Ատրպատական նահանգի թյուրքախոս-անջատողականներից շատերը կապեր ունեն Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) հետ փոխկապակցված կառույցների՝ «Անկարայի Իրանի ուսումնասիրությունների կենտրոնի» (IRAM) և Անկարայում գործող «Թավրիզի ուսումնասիրությունների ինստիտուտի» հետ: Օրինակ, վերջինիս նախաձեռնությամբ 2018 թ. մշակվել և հրապարակվել է Իրանի Ֆեդերատիվ Հանրապետության սահմանադրության նախագիծը [166, *Shargh* 2023, p. 2]:

2022 թ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած հերթական լարվածության ընթացքում «Հարավային Ադրբեջանի» անցումային կառավարության կազմկոմիտեի անդամներն այցելեցին [270, *Media.az* 2022] Ադրբեջան՝ հանդի-

պում ունենալով այդ երկրի հասարակական-քաղաքական շրջանակների հետ:

«Թյուրքականություն» իր ազդեցությունն է գործել ոչ միայն Թավրիզում, Ուրմիայում և թյուրքախոս այլ քաղաքներում բնակվող հասարակ քաղաքացիների, այլև Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Բացի Ադրբեջանի կողմից հարցի շահարկումից՝ Իրանը շատ հաճախ տեղի էր տալիս ադրբեջանական կողմի ճնշումներին, ինչը ոչ միայն չմեղմեց Ատրպատականում անջատողականության սպառնալիքը, այլև հարուցեց նոր ռիսկեր:

Մասնավորապես 2016 թ. հունիսին Թավրիզի «Tractor Sazi» ֆուտբոլային ակումբը ՀՀ ֆուտբոլի ազգային հավաքականի պաշտպան Վարազդատ Հարոյանի հետ երկու տարվա պայմանագիր էր կնքել, սակայն, կարճ ժամանակ անց ակումբի ղեկավար Մոսթաֆա Աջորլուն հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ հրաժարվում է հայազգի ֆուտբոլիստի հետ գործարքից: Նա իր որոշումը բացատրել էր նրանով, թե «եկել է Թավրիզ, որպեսզի միավորի թյուրքախոս ազգրիներին, իսկ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստի հետ գործարքը կարող է սպառնալ Իրանի թյուրքախոս բնակչության միասնությանը» [133, *ISNA* 2016]:

Եթե Արևմտյան Ատրպատականում քրդերը կազմում են մեծամասնություն, ապա Ուրմիա քաղաքի մեծամասնությունը թյուրքախոսներ են: Ուրմիայի ավագանու անդամների 20-30 տոկոսը կազմում են քրդերը, մնացյալը՝ ատրպատականցիները: Գրեթե նույն ցուցանիշն արձանագրվում է խորհրդարանական ընտրությունների արդյունքում: Ուրմիայից ընտրված քուրդ պատգամավորների թիվը 30 տոկոս է կազմում: Իրանի սուննի քրդերի մեծամասնությունն ապրում է Քրդստան և Քերմանշահ

Նահանգներում: Չնայած Իրանի քրդերի մեծամասնությունն ապրում է Արևմտյան Ատրպատական նահանգից դուրս՝ քուրդ ազգայնականների օջախը գտնվում է Մահաբադում (*Արևմտյան Ատրպատական*): Արևմտյան Ատրպատականում սուննի քրդերը նահանգում ղեկավար պաշտոնների չեն նշանակվում (*շահրեստ-տանների, շրջանների ղեկավարներ*): Եթե նախկինում նահանգապետի պաշտոնին նշանակվում էին շիա ատրպատականցիներ (*երբեմն ծնունդով այլ նահանգից*), ապա 2016 թ. նահանգապետի (Մոհամմադ Մեհդի Շահրիարի) պաշտոնում շիա քուրդ է նշանակվել՝ ծնունդով Սեմնան նահանգից: Սակայն, ֆարմանդարներ (*անվտանգության հարցերի պատասխանատու*) են նշանակվում բացառապես շիա ատրպատականցիները: 160 պետական պաշտոններից միայն 5-ն է բաժին ընկել սուննի քրդերին: Մահաբադ, Բուքան, Սարդաշտ, Փիրանշահր և Օշնավիե շրջանների ղեկավարները քուրդ են եղել: Արևմտյան Ատրպատականի թյուրքախոս անջատողականները համարում են, որ Իրանի կենտրոնական իշխանությունները «քրդացնում» են նահանգը, այնինչ՝ քրդերի ներգաղթն ու նրանց կողմից նահանգում բնակարանների և հողատարածքների ձեռքբերման գործընթացն արդեն մի քանի տարի է, ինչ տեղի է ունենում: Արևմտյան Ատրպատական նահանգը «բազմամշակութային նահանգ է»: Իրանի կենտրոնական իշխանությունները նրա կառավարումը փորձում են իրականացնել մասնակցային ձևով՝ էթնիկական բոլոր խմբերի կողմից: Սակայն, պանթյուրքիստները քրդերին ու հայերին դիտում են որպես թշնամիներ: Նահանգի ղեկավարության քաղաքականությունը ևս իր ազդեցությունն է ունենում: Օրինակ, Ղոբբան Ալի Սաադաթի (2012-2016) պաշտոնավարման տարիներին նահանգապետի տեղակալներն ազգայնական էին, և այդ ընթացքում նահանգում մի շարք տեղանուն-

ներ փոխվեցին թյուրքերենի, Սալմաստի «Ֆիրդուսու» անվան հրապարակն էլ վերանվանվեց «Իսլամական հեղափոխության», և այլն:

Նահանգը կառավարելու տեսանկյունից Իրանի կենտրոնական իշխանությունները նպատակահարմար են համարում, որ նահանգապետը լինի շիա քուրդ, որը մի կողմից կբավարարի քրդերի պահանջները, իսկ մյուս կողմից՝ ատրպատականցիների: Նահանգին սպառնում է ինչպես անջատողականության, այնպես էլ ահաբեկչության վտանգը:

Արևմտյան Ատրպատական նահանգը քաղաքական, տնտեսական, անվտանգության, մշակույթի, զբոսաշրջության և գյուղատնտեսության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի: Նահանգում առաջացող անկայունությունը կարող է ուղիղ ազդեցություն ունենալ Իրանի ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Իրանի թյուրքախոսների շրջանում Ադրբեջանի իրականացրած հետևողական աշխատանքի արդյունքում Բաքվին հաջողվել է ձևավորել ազդեցության գործակալների մի մեծ բանակ, որը հարկ եղած ժամանակ համակարգված ձևով սպասարկում է Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգը:

Թյուրքախոսության գործոնն այն ազդեցիկ լծակն է, որի միջոցով Ադրբեջանին հաջողվում է ճնշում գործադրել Իրանի վրա՝ գործնականում ստիպելով Հայաստանի հետ հարաբերություններում զգուշավորություն ցուցաբերել: Թյուրքախոսների հարցում Իրանի զգուշավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստացի համաթյուրքական գաղափարախոսությունը ներթափանցել է Իրանի պետական կառավարման համակարգ:

Ադրբեջանի կողմից շահարկվում էր նաև Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների՝ թյուրքախոս և ծագումով Ատրպատականից լինելու հանգամանքը. շատ հաճախ նրանց հայտարարություններն ու գործողությունները ադրբեջանական քարոզչությունը ներկայացնում էր միանգամայն այլ տեսանկյունից [266, *Haqqin.az* 2022]:

Իրանում պանթյուրք-անջատողականների ազդեցությունն այն աստիճան է մեծացել, որ վարչական շրջանների պաշտոնյաները երբեմն այնպիսի որոշումներ են կայացնում, որոնք համահունչ են լինում անջատողականների քայլերին: Օրինակ, վերջին տարիներին Սալմաստում ապամոնտաժվել է Ֆիրդուսու արձանը, փողոցների պարսկերեն անունները փոխվել են թյուրքական անունների և այլն [131, *IRNA* 2014]:

2021 թ., երբ Ուրմիայի քաղաքապետը ձերբակալվեց [175, *IRNA* 2021], դրան հետևած ընտրական գործընթացների ժամանակ թյուրքախոս որոշ գործիչներ ընթացող քաղաքական գործընթացներին փորձում էին էթնիկական երանգավորում տալ՝ մեծացնելով քրդերի ու թյուրքախոսների միջև միջէթնիկական բախումների հավանականությունը: Օրինակ, Ուրմիայի քաղաքապետի թեկնածուների՝ ավագանու անդամների հետ հանդիպման ընթացքում ուշագրավ միջադեպ էր արձանագրվել: Ավագանու անդամներից երկուսը թեկնածուներից պահանջել են իրենց ծրագրերը ներկայացնել ատրպատականյան թյուրքերենով, այն դեպքում, երբ ավագանու անդամների մեծամասնությունը քրդեր են, իսկ Իրանի պաշտոնական լեզուն՝ պարսկերենը:

Ինչպես 2016 թ. քառօրյա, այնպես էլ 2020 թ. 44-օրյա պատերազմների ընթացքում Իրանի թյուրքախոս բնակչության շրջանում գործող պանթյուրքիստական խմբերի գործունեությունը ցույց տվեց, որ ճգնաժամային իրավիճակներում նրանց հա-

ջողվում է ազդել Իրանի կենտրոնական իշխանությունների քաղաքականության վրա: Նման իրավիճակներում Իրանի հոգևոր-քաղաքական վերնախավն իր առջև խնդիր էր դնում Իրանի թյուրքախոս նահանգները հնարավոր ապակայունացումից զերծ պահելու նպատակով խուսափել թյուրքախոսների հետ առճակատումից՝ հնարավորինս բացառելով թուրք-ադրբեջանական քարոզչական աջակցությունն Իրանի թյուրքախոսներին:

Որպես այդպիսի դրսևորում կարելի է նշել 2016 և 2020 թթ. պատերազմների ընթացքում Իրանի հյուսիսային թյուրքախոս նահանգներում՝ Արևմտյան Ատրպատականում, Արևելյան Ատրպատականում, Արդաբիլում և Ջանջանում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների տարածած համատեղ հայտարարությունը, որում իրանցի հոգևորականներն իրենց անվերապահ աջակցությունն էին հայտնել Ադրբեջանին՝ ընդգծելով, որ վերջինիս՝ «օկուպացված» տարածքներն ազատագրելուն ուղղված գործողություններն օրինական են [135, *IRNA* 2020]: Իրանի Մեջլիսի՝ թյուրքախոս շրջաններից ընտրված պատգամավորները ևս նմանատիպ համատեղ հայտարարություն էին տարածել՝ կրկին իրենց աջակցությունը հայտնելով Ադրբեջանին [117, *Radiofarda.com* 2020]:

2020 թ. Արցախի դեմ լայնածավալ պատերազմը նախաձեռնելիս Ադրբեջանը կարևոր դերակատարում էր վերապահել Իրանում թյուրքախոսների շրջանում ձևավորած ազդեցության գործակալների ցանցին, որը դեռ 2020 թ. սկզբին սպասարկում էր ադրբեջանական քարոզչության պատրաստած օրակարգը՝ Հայաստան-Իսրայել հարաբերությունների առնչությամբ անհիմն մեղադրելով Հայաստանին: Այդ խմբավորումները թուլացնելով Հայաստանի դիրքերը՝ ակամա նպաստեցին նաև Հարավային Կովկասում Իրանի դիրքերի թուլացմանը:

Արցախյան 2-րդ պատերազմից հետո Իրանի նկատմամբ Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունը ցույց տվեց, որ Թեհրանի այդպիսի մոտեցումը խնդրահարույց է այն տեսանկյունից, որ երբ Թուրքիային ու Ադրբեջանին վերաբերող որևէ խնդիր է առաջանում, արձագանքում են միայն թյուրքախոս նահանգների հոգևորականները: Դա սպասարկում է Իրանում դաշնային կառավարում իրականացնելու նպատակով ձևավորված օրակարգերը՝ կասկածի տակ դնելով Իրանի տարածքային ամբողջականությունը: Ավելին, թյուրքախոս նահանգների հոգևորականների ու պատգամավորների «ադրբեջանամետ» երևալու փորձերը ոչ միայն պատշաճ «գնահատանքի» չարժանացան Բաքվի կողմից, այլև Ադրբեջանն ամենաբարձր մակարդակով սկսեց շահարկել Իրանում բնակվող թյուրքախոս ազարիների խնդիրները:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների 30-ամյա պատմությունն ուսումնասիրելիս Բաքվի կողմից Իրանի թյուրքախոս ատրպատականցիները հատկապես թիրախավորվում են այն ժամանակ, երբ Իրանի ու Ադրբեջանի հարաբերություններում լարվածություն է առաջանում, կամ Իրանի ու Հայաստանի հարաբերություններում կարևոր մի իրադարձություն պետք է տեղի ունենա: Այդ համատեքստում Բաքվի համար Իրանի վրա ճնշում գործադրելու տեսանկյունից իրանցի թյուրքախոս ազարիների հարցի շահարկումն ամենաարդյունավետ գործիքներից մեկն է դառնում: Այդպես էր 1990-ականների սկզբին, այդպես էր 2010-ական թվականներին, այդպես էր 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո:

Տարածաշրջանում հաստատված աշխարհաքաղաքական իրադրությունը, Իրանի ու Ադրբեջանի ներքին կայունությունը, այդ երկրների արտաքին քաղաքական առաջնահերթությունները

ընդ մեծ նշանակություն են ունենում, թե օրինակ, Իրանի թյուրքախոս բնակչության հարցը Բաքվի կողմից ինչ մակարդակով, ինչպիսի պարբերականությամբ ու հետևողականությամբ է շահարկվում, և բնականաբար, Իրանն էլ ինչպես և ինչ միջոցներով է դրան արձագանքում: Եթե կողմերը խնդիր են դնում պարզապես կարճաժամկետ ճնշման միջոցով բավարարվել քարոզչական պայքարով, ապա հարցի շահարկումն էական ազդեցություն չի ունենում երկկողմ հարաբերությունների վրա: Սակայն, երբ աշխարհաքաղաքական այնպիսի իրավիճակ է ձևավորվում, երբ Իրանի ու Ադրբեջանի միջև առկա է շահերի բախում, ապա հարցի շահարկումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ: Այդպիսի իրավիճակ ձևավորվեց 44-օրյա պատերազմից հետո, երբ Ադրբեջանը փաստացի Իսրայելի դրոմամբ, կամ օգնությամբ Իրանն աշխարհաքաղաքական մեկուսացման մեջ գցելու քաղաքականություն որդեգրեց՝ հեռահար նպատակ ունենալով, այսպես կոչված, «Մեծ Ադրբեջանի» անջատված հատվածների՝ «Հարավային Ադրբեջանի», «Արևմտյան Ադրբեջանի»¹⁵, և ներկայիս Ադրբեջանական Հանրապետության միավորմամբ ձևավորվելիք տարածքում ներառել, այսպես կոչված, 50 միլիոն ադրբեջանցիներին:

¹⁵ Ադրբեջանը, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի» հետ կապված նախագծերի մասին առաջին անգամ բարձրաձայնեց 2020 թ. մայիսին: Ադրբեջանցի լրագրող, «Asiya-fakt» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր և Թուրքիայի «Կայսերի» համալսարանի պրոֆեսոր ներկայացող Ղաֆար Չախմաղլին (Մեհդին) 2020 թ. մայիսի 11-ին հայտարարել էր, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի Հանրապետություն» կամ «Իրավանի Հանրապետություն» ձևավորելու նախաձեռնության մասին: 2022 թ. սեպտեմբերին Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի հերթական ագրեսիայի օրերին Անկարայում բացվել էր, այսպես կոչված, «Սևան-Չանգեզուրյան թյուրքական հանրապետության» ներկայացուցչությունը:

1990-ականներից ի վեր առաջին անգամ 2022-ին Ադրբեջանի ղեկավարն ուղիղ միջամտեց Իրանի ներքին գործերին՝ շահարկելով իրանցի թյուրքախոս բնակչության խնդիրները: Հատկանշական է, որ Իրանի տարածքային ամբողջականության դեմ Ադրբեջանի գործողությունները տեղի էին ունենում 2022 թ. սեպտեմբերից Իրանի տարբեր քաղաքներում սկիզբ առած բողոքի ցույցերի ֆոնին, երբ բավականին մեծացել էր Իրանի քրդերով, թյուրքախոս ատրպատականցիներով և բելուջներով բնակեցված նահանգներում անջատողականության վտանգը¹⁶:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 2022 թ. նոյեմբերին Սամարղանդում կայացած Թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկրների ղեկավարների 9-րդ գագաթնաժողովի ընթացքում հայտարարել է, որ Ադրբեջանից դուրս բնակվող «40 միլիոն ադրբեջանցիների» իրավունքները չեն պաշտպանվում՝ ակնարկելով Իրանի թյուրքախոս ատրպատականցիներին [227, *Apa.az* 2023]: 2023 թ. մարտի 16-ին Անկարայում տեղի ունեցած Թյուրքախոս պետությունների կազմակերպության ղեկավարների արտահերթ հանդիպման ժամանակ ունեցած ելույթում Ադրբեջանի նախագահն Իրանի թյուրքախոս բնակչությանը ներկայացրել էր որպես «ադրբեջանցիներ»՝ ընդգծելով, որ աշխարհում «50 միլիոն ադրբեջանցի է բնակվում, որից միայն 10 միլիոնն է անկախ Ադրբեջանի Հանրապետությունում բնակվում» [295, *Apa.az* 2023]:

Ի. Ալիևը, խոսելով Իրանի թյուրքախոս բնակչության լեզվի ուսուցման և նրանց իրավունքների պաշտպանության մասին, շահարկում էր նաև իրանահայերի հարցը [279, *Haqqin.az* 2022]

¹⁶ Սկզբնական փուլում ցուցարարների հիմնական պահանջը վերաբերում էր «հեջաբին», սակայն, կարճ ժամանակ անց Իրանի Ատրպատական, Քրդստան, Սիստան և Բելուջիստան նահանգներում հնչեցին անջատողական բնույթի կոչեր:

նշելով, որ «Իրանում փոքրաթիվ հայ համայնքը հայկական դպրոցներ ունի, սակայն, միլիոնավոր ադրբեջանցիներ զրկված են ադրբեջանական դպրոց ունենալու հնարավորությունից»:

Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշուքուր Փաշազադեն էլ, ձայնակցելով Իլհամ Ալիևին, հայտարարում էր, որ «Իրանում 40 միլիոն ադրբեջանցի է բնակվում, որոնք պարսիկների ռեժիմի ձեռքին գերի են» [267, *Minval.az* 2023]:

Երբ Իրանը հրապարակային հայտարարություններով ու գործողություններով (2020-ից հետո Իրանն Ադրբեջանի սահմանին երկու զորավարժություն է անցկացրել, առաջինը 2021 թ. սեպտեմբերի 30-ին, իսկ 2-րդը՝ 2022 թ. հոկտեմբերին) ընդգծեց Հայաստանի և Իրանի ցամաքային սահմանի հաշվին, այսպես կոչված, «Ձանգեզուրի միջանցքի» բացման անթույլատրելիությունը, պաշտոնական Բաքուն «Հարավային Ադրբեջանի» վերաբերյալ նախկինում մշակված ծրագրերը վերաթարմացրեց: Եթե մինչ այդ, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանի» հարցն այնպես էր շահարկվում, որպեսզի այն ներկայացվեր առանձին լրատվամիջոցների, կամ անհատների գործունեություն, ապա 2020 թվականից հետո Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած աննախադեպ լարվածությունից հետո Ադրբեջանի լրատվամիջոցները գրեթե ամենօրյա ռեժիմով սկսեցին շահարկել Ատրպատականի հարցը: Գործարկվեց «Հարավային Ադրբեջանի ձայնը» հաղորդաշարը: Ադրբեջանական ԶԼՄ-ներին զուգահեռ «Հարավային Ադրբեջանի»՝ Իրանից անջատվելու անհրաժեշտության մասին էին խոսում ադրբեջանցի պաշտոնյաներ, պատգամավորներ, քաղաքական գործիչներ և այլն:

Ադրբեջանի «Ազգային ճակատ» կուսակցության ղեկավար Գուդրաթ Գասանգուլիևը, Իրանի կողմից «կարմիր գծերի» սահմանումը և Հայաստանի տարածքային ամբողջականությունը պաշտպանող հայտարարությունը որակելով որպես հակա-ադրբեջանական քաղաքականություն, Իրանին անջատողականության վտանգով էր սպառնում՝ կարծիք հայտնելով, որ հնարավոր է՝ Իրանը բաժանվի 5 մասի: Ադրբեջանցի պատգամավորն իշխանություններից պահանջում էր բարձրացնել Իրանի «ադրբեջանցիների» հարցը [311, *Yenisabah.az* 2022]:

Քարոզչական դաշտում Ադրբեջանն Արցախի վերաբերյալ օգտագործած նարատիվներն օգտագործում էր նաև Իրանի վերաբերյալ: Ադրբեջանցի պաշտոնյաների կողմից հատկապես թիրախավորվում էր Իրանի համար պատմության ընթացքում ռազմավարական կարևոր նշանակություն ձեռք բերած Թավրիզ քաղաքը:

2022 թ. Ադրբեջանի Ազգային անկախության կուսակցության առաջին նախագահ Էյթեբար Մահմուդովը հայտարարել էր, որ Թավրիզը պատկանում է Ադրբեջանին:

Ինչպես Իրանում թյուրքալսոսների հարցերի շահարկման, այնպես էլ Ատրպատական նահանգի նկատմամբ նկրտումների ժամանակ Ադրբեջանի նախագահի ցանկացած հայտարարություն Ադրբեջանի հասարակական-քաղաքական, և գիտական շրջանակների կողմից անարձագանք չի մնում: Դա վկայում է պետական երկարաժամկետ քաղաքականության մասին, որտեղ յուրաքանչյուրին վերապահված է իր դերը:

2022 թ. նոյեմբերին Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած հերթական լարվածության ընթացքում, երբ Իլիամ Ալիևն Իրանի թյուրքալսոս ատրպատականցիներին անվանեց ադրբեջանցիների «հայրենակիցներ» և ընդգծեց նրանց

իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, փաստացի կարելի է արձանագրել, որ Բաքուն երկարաժամկետ հեռանկարում նպատակ ունի Արաքսից հյուսիսում և հարավում բնակվող ադրբեջանցիների միավորման գործընթաց սկսել: Իսկ մինչ այդ քարոզչական հարթությունում փորձ է անում նման գործընթացի համար բավարար նախադրյալներ ստեղծել: Այդ համատեքստում ադրբեջանցի պատգամավոր Գուդրաթ Գասանգուլիևը խորհրդարանում ունեցած ելույթում առաջարկել էր երկիրը վերանվանել Հյուսիսային Ադրբեջան: Նրա հիմնավորմամբ՝ այդպիսի իրողություն կա երկու տարբեր մասերի բաժանված տարածքներում բնակվող ժողովուրդների պարագայում: Ադրբեջանցի պատգամավորը նշել էր, որ այդ նախաձեռնությունը կոզևորի «Հարավային Ադրբեջանում» բնակվող իրենց «հայրենակիցներին» [275, *Apa.az* 2022]: Ադրբեջանի «Թուրան» կուսակցության ղեկավար Ջահանդար Բեյտոլուն 2022 թ. դեկտեմբերին հայտարարել էր, որ Իրանի մասնատումը դարձել է Ադրբեջանի առաջնահերթություններից մեկը: Նա նույնիսկ ակնարկել էր Իրանի դեմ պատերազմ սկսելու մասին [179, *Azariha.org* 2022]: 2023 թ-ի հունվարին Ադրբեջանի խորհրդարանի փոխնախագահ Ֆազիլ Մուստաֆան էլ, կարծես թե չբացառելով Իրանի վրա ռազմական հարձակման հավանականությունը, հետևյալ գրառումն է արել. «*Մենք պետք է Իսրայելին խնդրենք, որ Թավրիզին չհարվածի, այն մեզ բարեկարգ վիճակում է անհրաժեշտ*» [319, *Azar.az* 2023]: Ի դեպ, Մուստաֆայի նկատմամբ 2023 թ. ապրիլին զինված հարձակում իրականացվեց: Որոշ ժամանակ անց Ադրբեջանն ակնարկեց, որ ադրբեջանցի պատգամավորի վրա կատարված հարձակման մեջ մասնակցություն ունի Իրանը:

Այն, որ Ադրբեջանը երկարաժամկետ հեռանկարի համար նկրտումներ ունի Թավրիզի նկատմամբ, վկայում է Թեհրանում

Ադրբեջանի դեսպան Ալի Ալիզադեի գործունեությունը: Վերջինս 2022 թ. նոյեմբերի 6-ին Twitter-ի իր էջում լուսանկար էր հրապարակել՝ գրելով. «Թավրիզի գիշերներն էլ գեղեցիկ են»: [194, Alizada 2022] Այդ գրառմանն ի պատասխան՝ Ադրբեջանում Իրանի դեսպան Աբբաս Մուսավին էլ Ադրբեջանի Լահիջ բնակավայրում բնակվող կովկասյան պարսկերենով (թաթերեն) խոսող մի բնակչի մասին տեսանյութ էր հրապարակել, որում վերջինս խոսում է Իրանի Մազանդարան նահանգի մասին: Իրանի և Ադրբեջանի դեսպանների թվիթերյան «փոխհրաձգությունները» տեղի էին ունենում Ադրբեջանի կողմից Իրանի տարածքների նկատմամբ նկրտումների ֆոնին:

Ինչպես միշտ, Ադրբեջանի քաղաքական իշխանությունների նմանատիպ հայտարարություններին հետևում էին այդ երկրի գիտական շրջանակների մեկնաբանությունները, որոնք փորձում էին, այսպես կոչված, «գիտական» մակարդակով վավերացնել դրանք:

Մասնավորապես Ադրբեջանի ԳԱԱ նախագահ Իսա Գաբիբբեյլին Ի. Ալիևի հերթական հայտարարությունից հետո համոզմունք էր հայտնել, որ Իրանը թյուրքական պետություն է: Ըստ նրա՝ «դարեր շարունակ Իրան անվամբ պետությունում ադրբեջանական-թյուրքական դինաստիաներ են իշխել, սակայն, 20-րդ դարի սկզբին Իրանում իշխանությունը զավթում են պարսիկ շոփնիստները» [296, Media.az 2022]:

Ադրբեջանի խորհրդարանի փոխնախագահ Վահիդ Ահմադովը, խոսելով Իրանի թյուրքախոսների իրավունքների մասին, ընդգծել է, որ Իրանի 40 միլիոն ադրբեջանցիները պետք է ոտքի կանգնեն և պայքարեն իրենց իրավունքների համար [188, Demokrat.az 2023]: Նա բացահայտ ընդգծել է, որ Ադրբեջանը Թեհրանում իր դիվանագիտական ներկայացուցչության գործունեության դադարեցումից հետո Թավրիզում գլխավոր հյուպա-

տոսության աշխատանքները չկասեցնելով՝ ուղերձ է հղում Թավրիզի թյուրքախոսներին, որ, Բաքուն մնալով Թավրիզում, ցանկանում է պաշտպանել նրանց: Փաստացի այնպիսի իրադրություն կարող է ստեղծվել, որ Ադրբեջանն իրեն իրավունք վերապահի իր հայրենակիցներին աջակցելու նպատակով ավելի առարկայական միջամտություն ցուցաբերել:

Վերը քննարկված հարցերն ի մի բերելով և վերլուծելով դրանց հետ կապված զարգացումները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Ադրբեջանի կողմից իրանցի թյուրքախոս բնակիչների հարցի շահարկման սպառնալիքը զգալիորեն աճել է: Հատկապես 44-օրյա պատերազմից հետո Իրանի առնվազն մտավորականության և փորձագիտական շրջանակների մոտ առաջացել է այն գիտակցումը, որ Ադրբեջանի իշխանությունների՝ պատմությունը կեղծելու, նպատակաուղղված հակաիրանական քաղաքականություն վարելու արդյունքում այդ երկրում մեծանում է մի սերունդ, որն Իրանին ու իրանցիներին ընդունում է որպես հակառակորդների:

Ատրպատականում տեղի ունեցած զարգացումներով պայմանավորված «թյուրքականության» գործոնի սպառնալիքը զգալիորեն աճել է՝ ներթափանցելով նաև Իրանի պետական կառավարման համակարգի ստորին օղակներ: Այդ իրողությունն Իրանի կենտրոնական իշխանություններին թույլ չի տալիս թյուրքախոսների հարցում ավելի համարձակ որոշումներ կայացնել:

Ինչպես Ադրբեջանի կողմից Իրանի թյուրքախոս ատրպատականցիների խնդիրների շահարկմանը, այնպես էլ Իրանում գործող պանթյուրքիստ անջատողական խմբերի հարուցած սպառնալիքները կառավարելու և դրանց հակազդելու հարցում Իրանում չկա համակարգված մոտեցում, չկա տեսլական, թե երկարաժամկետ հեռանկարում Իրանն ինչպես է տեսնում այդ

հարցերի լուծումը: Իրանը խնդրին մոտենում է տարերայնորեն՝ ավելի շատ վերացնելով հետևանքները, քան կանխելով սպառնալիքները:

44-օրյա պատերազմին նախորդած և դրան հաջորդած շրջափուլերում Իրանի թյուրքախոս նահանգներից ընտրված պատգամավորների դրսևորած վարքագիծը գնահատելիս խիստ զգուշավորությամբ կարելի է համոզմունք հայտնել, որ համաթյուրքականությունը որոշակի ազդեցություն ունեցել է նրանց գործողությունների վրա: Ըստ ամենայնի՝ Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը խորհրդարանական հաջորդ ընտրությունների ժամանակ այդ իրողությունը հաշվի կառնի:

Իլիամ Ալիևի նախագահության շրջանում ինստիտուցիոնալ մակարդակում սկիզբ է դրվել ադրբեջանցիների ինքնության ամրապնդման գործընթացը, որն էլ իր հերթին հանգեցրել է այնպիսի իրողությունների, որոնք ընկալվում և համարվում են մասնակցություն Իրանում անջատողականության գործընթացին:

Իլիամ Ալիևի նախագահության շրջանում ինչպես Ադրբեջանի էլիտայի, այնպես էլ քաղաքացիական հասարակության շրջանում արմատացել է այն համոզմունքը, որ Իրանի հյուսիսային նահանգները «Մեծ Ադրբեջանի» մի մասն են, իսկ իրանցի թյուրքախոս ատրպատականցիները՝ ադրբեջանցիների հայրենակիցները, որոնք ապրում են ադրբեջանցիների ընդհանուր հայրենիքի մի հատվածում [213, baymedia.az 2019]: 44-օրյա պատերազմում Ադրբեջանի արձանագրած հաջողություններից ոգևորված՝ Բաքվում կա այնպիսի ընկալում, որ «Թավրիզն Ադրբեջան է» բանաձևի կիրառմամբ՝ հնարավոր կլինի Իրանի Ատրպատական նահանգում անջատողական գործընթացներ

նախաձեռնելով, իրագործել, այսպես կոչված, «Ձանգեզուրի միջանցքի» բացման հետ կապված ծրագրերը:

Իլիամ Ալիևի նախագահության երկրորդ շրջանում Իրանում անջատողականության գործընթացին մասնակցելու ԱՀ քաղաքականությունը աստիճանաբար վերանայվեց: Գնալով կատարելագործվեցին Բաքվի գործունեության մեթոդները: Ներկայումս Ադրբեջանը նախընտրում է աշխատել անջատողական նոր ուժերի հետ, որոնք այդքան էլ հայտնի չեն, և Թեհրանի կողմից չեն ընկալվում որպես Ադրբեջանի աջակցությամբ գործող անջատողական ուժեր կամ առնվազն դժվար է դրանց հետ Բաքվի կապն ապացուցել:

Իրանում իսլամական համակարգի տրամաբանությունից բխող սահմանափակումներով և սոցիալ-տնտեսական ծանր իրադրությամբ պայմանավորված՝ Իրանի թյուրքախոս բնակչության մի հատվածի համար, որն այնքան էլ ծանոթ չէ պատմությանը կամ քաղաքական գործընթացներին, աշխարհիկ Ադրբեջանը գնալով ավելի գրավիչ է դառնում:

Ադրբեջանն Իրանի անջատողականների վրա ազդեցությունը մեծացնում է նաև փափուկ ուժի կիրառմամբ: Ադրբեջանի քաղաքացիները, ընդգրկվելով Թավրիզի «Traktorsazi» ֆուտբոլային ակումբ, մարզական հարթակն օգտագործում են տեղի թյուրքախոսների շրջանում անջատողական տրամադրությունների ձևավորմանն ու նրանց շրջանում նաև հակահայկական դիրքորոշման ձևավորմանը: Տեղի է ունենում նաև հակառակ գործընթացը, երբ Բաքուն, ֆինանսապես շահագրգռելով իրանցի հայտնի մարզիկներին, նրանց ընդգրկում է Ադրբեջանի ազգային հավաքականի կազմում:

ԳԼՈՒԽ 2
ԿՐՈՆԻ ԴԵՐՆ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորհրդային Միության լուծարումից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ քաղաքականությունը մշակելիս որպես առաջնահերթություն էր դիտարկում կրոնական գործոնը: Իրանն ակնկալում էր, որ շիայական համերաշխության գաղափարը, ինչպես նաև Ադրբեջանի բնակչության մի զգալի հատվածի (*թալիշներ, կովկասյան պարսիկներ*) և իրանցիների մշակութային-կրոնական ընդհանրություններն Իրանին հնարավորություն կտան հաստատուն տեղ զբաղեցնելու նորանկախ հանրապետությունում: Եթե ոչ կարճաժամկետ, ապա երկարաժամկետ հեռանկարի համար Իրանը դիտարկում էր 1978-1979 թթ. տեղի ունեցած իսլամական հեղափոխությունն Ադրբեջան արտահանելու հնարավորությունը: Դեռ հեղափոխության ընթացքում ԽՍՀՄ-ի քաղաքական ղեկավարության շրջանում մտահոգություններ էին առաջացել՝ կապված այն հանգամանքի հետ, որ Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի գաղափարներն արդեն տարածվում էին Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում և Կենտրոնական Ասիայի մուսուլմանական հանրապետություններում [19, *Հովհաննիսյան 2004, էջ 111*]:

Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջնորդվում էր այն սկզբունքով, որ պաշտպանելով իսլամի, իմա՝ շիաների իրավունքները, այդ կերպ պաշտպանում է նաև Իրանի պետական շահերը [173, *Tavakoli 2012, p. 258*]:

Ըստ Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի՝ «Հեղափոխության արտահանումը մի ծրագիր է, որը

պետք է իրականացվեր հեղափոխության գաղափարակիրների միջոցով՝ այլ հասարակություններում տարածելով իրենց տեսակետներն ու գաղափարները, որոնց վերջնական նպատակն իսլամի դեմ գործող անարդար իշխող համակարգերի լուծարումն է»: [120, *Khamenei.ir 2007*] Ադրբեջանի նկատմամբ Իրանի կրոնական քաղաքականության հիմքում ընկած էր հենց այդ սկզբունքը:

Ադրբեջանը, որի բնակչության մի մասն իրանական ծագում ունի, իսկ մեծամասնությունն իսլամի շիայական ուղղության հետևորդ է, ԽՍՀՄ-ի լուծարումից հետո հետխորհրդային պետություններում, այդ թվում՝ Ադրբեջանում սկիզբ առած կրոնական զարթոնքի պայմաններում, Իրանի հոգևոր վերնախավի ու գաղափարախոսների համար կարևոր նշանակություն ձեռք բերեց: Այն Իրանի համար լավ հնարավորություն էր՝ իրագործելու Իսլամական հեղափոխությունն արտահանելու իր ծրագիրը¹⁷:

Ադրբեջանի դեպքում Իրանն իսլամական հեղափոխության արտահանումը մշակելիս որպես արդյունք դիտարկում էր ոչ թե տվյալ պահին իշխող վարչակարգի տապալումն ու իսլամական կարգերի հաստատումը, այլ հարցը դիտում էր երկարաժամկետ հեռանկարի տեսանկյունից:

Հետհեղափոխական շրջանում Իրանի բարձրաստիճան հոգևորականները (մարջա-է թաղլիդ), որոնք «ֆաթվա»¹⁸ արձակելու լիազորություն ունեին, օրակարգային կարևոր հարցերի

¹⁷ ԻԻՀ Սահմանադրության համաձայն՝ Իրանն իսլամական հեղափոխությունն իր սահմաններից դուրս արտահանելու համար անհրաժեշտ պայմաններ է ստեղծում՝ միևնույն ժամանակ աջակցելով ժողովրդական և իսլամական շարժումներին, որպեսզի, դրանց հետ հարաբերությունները զարգացնելով, ճանապարհ գտնի՝ ստեղծելու միասնական համաշխարհային իսլամական ումման (ազգ):

¹⁸ Մուսուլման բարձրաստիճան հոգևորականների վճիռ-հրաման:

շարքում դիտարկում էին Իսլամական հեղափոխության արտահանման հնարավորությունը:

Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամիի կառավարման տարիներին (1997-2005) քաղաքակրթությունների երկխոսություն հայեցակարգի ընդունումն ինչ-որ առումով կարող էր սպասարկել իսլամական հեղափոխության արտահանման օրակարգը: Այն ենթադրում էր մուսուլմանական երկրների հետ իսլամական ընդհանրության գործոնը փոխարինել մշակութային գործոնով: [4, *Բայբուրդյան 2006, էջ 35-37*] Տաջիկստանի հետ Իրանի մշակութային կապերի ընդլայնման գործում կարևոր դերակատարություն են ունեցել պարսկերենն ու պարսից գրականությունը [305, *Санаи 2017, стр. 232*], իրանական-իսլամական մշակույթը, որն իր ազդեցությունն է ունեցել նաև Կենտրոնական Ասիայի մյուս ժողովուրդների մշակույթների վրա: Ադրբեջանցիների ու տաջիկների հետ իրանցիների ունեցած մշակութային, կրոնական, լեզվական ընդհանրությունները, Ադրբեջանում և Տաջիկստանում ձևավորված իսլամական կուսակցությունների ակտիվ գործունեությունը, այդ երկրներում Իրանի կողմից Իմամ Խոմեյնիի անվան բարեգործական հիմնադրամների և Իրանի դեսպանություններին կից մշակույթի կենտրոնների ձևավորումն Իրանի համար որոշակի ակնկալիքներ էին առաջացնում, ըստ որոնց՝ կրոնական գործոնի շնորհիվ հնարավոր է նշանակալի արդյունք ունենալ: Սակայն, ո՛չ Ադրբեջանում, և ո՛չ էլ Տաջիկստանում [12, *Իսրայելյան 2019, էջ 268-283*] Իրանին չհաջողվեց տեղի իսլամական կուսակցությունների հետ շարունակական համագործակցությամբ հասնել ցանկալի արդյունքների:

Երբ իսլամական գործոնով պայմանավորված Թուրքիայի հեղինակությունը Մերձավոր Արևելքում շեշտակի աճել էր և Թուրքիան «իսլամական աշխարհի» առաջնորդը դառնալու հա-

վակնություններ էր ցուցաբերում, Իրանի հոգևոր բարձրագույն դասի ազդեցիկ հոգևորականներից մեկը, Փորձագետների խորհրդի¹⁹ փոխնախագահ այաթոլլահ Մահմուդ Հաշեմի Շահ-ռուդին 2011 թ. հեղափոխության արտահանման գործում Իրանի արձանագրած արդյունքներին հետևյալ գնահատականն է տվել, - «Իրանը, որն իսլամական հեղափոխության ռազմավարության և գաղափարախոսության դերակատարներից մեկն է, առայժմ հետ է մնում տարածաշրջանի որոշ երկրներից: Իրանի նպատակն այլևս այն չէ, որ իսլամական հեղափոխության գաղափարախոսությունը սահմանափակվի միայն Իրանի աշխարհագրական սահմաններում, այլ Իմամ Խոմեյնիի հիմնական նպատակն այն էր, որպեսզի իսլամը վերածնվի և իշխի ամբողջ աշխարհում» [55, *Farsnews.ir 2011*]:

Իրանը խորհրդային գաղափարախոսության ազդեցությամբ պայմանավորված Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի առանձնահատկությունը հաշվի առնելով՝ հեղափոխության արտահանումը փորձում էր իրականացնել հեղափոխության գաղափարների ու ուղերձների խաղաղ տարածմամբ²⁰:

¹⁹ Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր Իմամ Խոմեյնիի մահից հետո երկրի առաջնորդը նշանակվում է Փորձագետների խորհրդի կողմից: Գործող հոգևոր առաջնորդի մահվանից կամ նրա պաշտոնանկությունից հետո սույն ժողովի անդամ բարձրաստիճան հոգևորականները խորհրդակցություններ են անցկացնում հոգևոր առաջնորդի բոլոր թեկնածուների հետ, և այն թեկնածուն, որը համապատասխանում է Սահմանադրության 5-րդ և 109-րդ հոդվածների պահանջներին, ճանաչվում է որպես իսլամի և սոցիալ-քաղաքական հարցերով ամենագիտակ մարդ և Փորձագետների խորհրդի կողմից ընտրվում երկրի առաջնորդ:

²⁰ Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգը հաստատվել է 1992 թ., ըստ որի՝ իսլամական հեղափոխության հոչակած սկզբունքների համաձայն՝ պետք է ակտիվ մշակութային երկխոսության մեջ մտնել տարբեր ազգերի ու ժողովուրդների հետ, նպաստել իրանական մշակույթի և պարսկերենի տարածմանը, սերտ կապեր հաստատել արտասահմանում գտնվող մշակութային կենտրոնների հետ:

մշակութային դիվանագիտության միջոցով [51, *Arjmand 2012, p. 102*]:

ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիներին Իրանը Խորհրդային Ադրբեջանի նկատմամբ զգուշավոր քաղաքականություն էր վարում՝ այն «համաձայնեցնելով» Մոսկվայի հետ: Իրանի և Խորհրդային Ադրբեջանի միջև կրոնական կապերի հաստատման առաջին փորձը տեղի էր ունեցել Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի՝ (1989-1997) Ադրբեջան կատարած այցի ընթացքում, երբ Իրանի նախագահը Բաքվի կենտրոնական մզկիթում ուրբաթօրյա աղոթք էր անցկացրել: Ռաֆսանջանիի այցից կարճ ժամանակ անց Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալահշուքուր Փաշազադեն և վարչության միջազգային կապերի պատասխանատու Հաջի Սաբեր Հոսեյնզադեն այցելել էին Իրան: Այդ պատվիրակությունն ադրբեջանցի իսլամական գործիչների առաջին պատվիրակությունն էր, որն իսլամական հեղափոխությունից հետո այցելել էր Իրան [116, *Keyhanfar 1993, p. 26*]:

Անկախության հռչակումից հետո, քանի որ Ադրբեջանն ընտրել էր Թուրքիայի հետ խոր ինտեգրվելու ճանապարհով աշխարհիկ պետություն ստեղծելու ուղին, հետևաբար, Իրանի կրոնական քաղաքականությունն Ադրբեջանի իշխող վերնախավի կողմից ոչ միայն չէր ողջունվում, այլև դրան հակազդելուն ուղղված քայլեր էին իրականացվում:

1990-ականների սկզբին՝ իրանական հեղափոխությունն Ադրբեջան արտահանելու արդյունավետությունը գնահատելու դրսևորում կարելի է համարել Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալահշուքուր Փաշազադեի հայտնած մտահոգությունը, ըստ որի՝ «*ադրբեջանցի շիաների վրա Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը որոշակի ազդեցություն է ունեցել*» [116, նույն տեղում]:

1991 թ. Ադրբեջանում ստեղծվել էին իսլամական գաղափարախոսությունը կրող մի շարք կազմակերպություններ, սակայն, դրանցից միայն Ադրբեջանի իսլամական կուսակցությունն էր (ԱԻԿ), որն Ալիաքրամ Ալիևի առաջնորդությամբ իր ուրույն դիրքը զբաղեցրեց Ադրբեջանի կուսակցական համակարգում: Ի դեպ, ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Տաջիկստանում հաստատված աշխարհիկ իշխանություններին ընդդիմադիր ուժերն իսլամական կուսակցություններն էին, քանի որ Խորհրդային գաղափարախոսությամբ ղեկավարները դրանց գործունեությունը համարում էին սպառնալիք՝ ուղղված իշխանական համակարգի դեմ:

Այդ տարիներին Ադրբեջանում մեծ տարածում ստացավ իսլամական գաղափարախոսությունը: Յոթանասուն տարի անց այդ երկրի հասարակությունը կրկին բաժանվեց երկու մասի՝ համաթյուրքական և իսլամական գաղափարախոսությունների համակիրների: ԱԻԿ-ի հռչակած շատ գաղափարները, մասնավորապես Իսրայելի նկատմամբ որդեգրած վերաբերմունքը ողջունվում էր Իրանի կողմից [309, *Юнусов 2004, сmp. 388*]: ԱԻԿ-ի քարոզած գաղափարների տարածումը, կուսակցության վրա իրանական աճող ազդեցությունն ու նրա հակաարևմտյան դիրքորոշումը հետպատերազմական շրջանում իշխանության դիրքերի ամրապնդման տեսանկյունից որոշակի խնդիրներ էր առաջացնում Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունների համար:

1996 թ. ԱԻԿ-ի գործունեությունը դադարեցվեց, իսկ նրա ղեկավար կազմի և այլ ազդեցիկ անդամների մի մասը ձերբակալվեց, ոմանք էլ՝ արտաքսվեցին երկրից [128, *Mohammadzadeh 2011, p. 671*]:

ԱԻԿ-ի գործունեության դադարեցմամբ Ադրբեջանում կրոնական գործիչների ակտիվությունը չմարեց: Ընդհակառակը,

Ադրբեջանում ընդդիմադիր կուսակցությունների ոչ արդյունավետ գործունեության, կամ դրանց բացակայության պայմաններում իսլամական գործիչների ազդեցությունն Ադրբեջանի հասարակության վրա զգալիորեն մեծացավ: Ադրբեջանում ընդդիմադիր ուժերի գործունեության նկատմամբ սահմանված խիստ վերահսկողության պայմաններում, միակ հարթակը, որտեղ իշխանություններից դժգոհ քաղաքացիները կարող էին բարձրաձայնել իրենց մտահոգությունների մասին՝ կրոնական կառույցներն են:

Բացի ներքաղաքական գործոնից՝ ադրբեջանցի շիաների ազդեցության մեծացումն առնչվում էր տարածաշրջանում Իսրայելի հետապնդած շահերին: Ադրբեջանի ընդդիմադիր շիա գործիչների՝ այդ երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցությունն Իսրայելի համար ընկալվում էր Իրանի դիրքերի ամրապնդում [145, *Arannews.com* 2020]: Իսրայելի մտահոգությունը հիմնված էր այն հանգամանքի վրա, որ Ադրբեջանի ընդդիմադիր շիայական գործիչների մի մասը կրոնական կրթություն էր ստացել Իրանում և սկզբունքորեն դեմ էր Իսրայելի ու Ադրբեջանի հարաբերությունների խորացմանը [71, *Mashreghnews.ir* 2017]: Ըստ այդմ՝ Իրանի հասարակական-քաղաքական շրջանակներում առկա էր (է) այն համոզումը [235, *Rajabi* 2022, pp. 53-75], որ Ադրբեջանի՝ շիայական խմբերի գործունեությունը սահմանափակող քաղաքականությունը, ինչպես նաև Իրանում անջատողականության դրսևորումներում Բաքվի մասնակցությունը, խրախուսվում են Իսրայելի կողմից [105, *Anaj.ir* 2020]:

Վերոնշյալ գործոնները հաշվի առնելով՝ Ադրբեջանի իշխանությունները երկրի ընդդիմադիր շիայական գործիչների նկատմամբ [203, *Cornell* 2011, pp. 279-280] տարատեսակ մեղա-

դրանքներ սկսեցին ներկայացնել, որոնցից ամենակիրառելին դա Իրանի օգտին լրտեսություն կատարելու մեղադրանքն էր [134, *Arannews.com* 2021]: Այն, որ Ադրբեջանի ազդեցիկ շիայական գործիչների մեծ մասը, այդ թվում՝ ԱՀԿ ղեկավար Մոհսեն Սամադովը, ազատագրված է դատապարտվել Իրանի օգտին լրտեսություն կատարելու մեղադրանքով, հիմնավորում է վերևում ներկայացված դիտարկումը: Ի դեպ, Սամադովը 12 տարվա բանտարկությունից ազատվել է 2023 թ. հունվարին: [158, *Farsnews.ir* 2022]:

Իրանը, ներկայանալով որպես մուսուլմանական ժողովուրդների՝ սիոնիզմի դեմ պայքարի առաջամարտիկ, իրանցի հոգևորականների քարոզներում ադրբեջանցիների շիաներից փորձում էր կերտել «Հոսեյններ»²¹ [63, *ISNA* 2016]: Իրանի այդ քաղաքականությունը, բնականաբար արժանանում էր Ադրբեջանի իշխանությունների կոշտ հակազդեցությանը: [45, *Ahmadi* 2015, p. 332]:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա կրոնական գործոնի ազդեցությունն առավել շոշափելի դրսևորումներ է ստացել 2005-1015 թթ.: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ նոր իշխանության եկած Իլիամ Ալիևը զբաղված էր իր իշխանությանը սպառնացող ամենաազդեցիկ ուժերից մեկի՝ իրանամետ շիայական գործիչներին թուլացնելու և երկրում կրոնականացումը կանխելուն ուղղված լայնամասշտաբ գործողություններով: Ադրբեջանի իշխանություններն այդ քաղաքականությունը շարունակում են մինչ օրս: 2020-ից հետո այն ավելի կոշտացավ, ու անցանկալի անձանց նկատմամբ Իրանի հետ համագործակցելու մեջ մեղադրանքները շեշտակի ավելացան: Իրան-Ադրբեջան

²¹ Հոսեյնը Մոհամմադ մարգարեի թոռը և Ալիի որդին էր: Նա շիաների 2-րդ իմամն էր:

հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափուլի ընթացքում Ադրբեջանում ընդամենը մեկ տարվա ընթացքում Իրանի անվտանգության ուժերի հետ կապ ունենալու և Ադրբեջանում խափանարար գործողություններ իրականացնելու մեղադրանքով շուրջ չորս տասնյակի հասնող մարդ էր ձերբակալվել: [307, Haqqin.az 2023]:

Իրանի շուրջ ձևավորված անվտանգային բարդ իրադրության պայմաններում Ադրբեջանի տարածքը համարվում էր Իրանի վրա ռազմական հարձակում գործելու հարթակներից մեկը: Որպես մտահոգության աղբյուր էին հանդիսանում Իսրայելի և Ադրբեջանի ռազմավարական բնույթի հարաբերությունները, Ադրբեջանի կողմից Իսրայելից այնպիսի զինատեսակների գնումը, որոնք Ադրբեջանի ռազմածովային ուժերը պետք է օգտագործեին: Այսինքն՝ մի կողմից Իսրայելի կողմից ռազմականացվում էր Կասպից ծովը, իսկ մյուս կողմից մեծ էր հավանականությունը, որ Իսրայելից ձեռք բերած ծովային սպառազինությունն Ադրբեջանը կարող է գործածել Իրանի դեմ: Հատկապես 2010-2013 թթ. միջուկային ծրագրի հարցում ունեցած մտահոգություններով պայմանավորված՝ Արևմուտքն Իրանի նկատմամբ ճնշումներն ուժեղացնում էր: Միևնույն ժամանակ մեծանում էր նաև ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի միջուկային խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու սպառնալիքը, ինչի հետևանքով Թեհրանի դիրքերը զգալիորեն թուլացել էին, և երկիրը հայտնվել էր միջազգային մեկուսացման մեջ: Իսկ Ադրբեջանը, օգտվելով աշխարհաքաղաքական իրադրությունից, դիրքավորվելով որպես հակաիրանական ուժ, մի կողմից փորձում էր Լեռնային Ղարաբաղի հարցում Իսրայելի և Միացյալ Նահանգների աջակցությունը ստանալ, իսկ մյուս կողմից՝ առավելագույնս թուլացնել Իրանի կրոնական ազդեցությունը երկրում:

2010-ական թվականների սկզբին Ադրբեջանում իսլամական խմբերի ակտիվացումը համընկավ Իրանի ու Ադրբեջանի հարաբերությունների հերթական լարված շրջափուլի հետ: Կրոնական գործիչների գործունեությունը սահմանափակելու, հասարակության շրջանում կրոնականացման տարածումը կանխելու, ինչպես նաև Իրանի ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով Ադրբեջանում ինստիտուցիոնալ բնույթի մի շարք որոշումներ ընդունվեցին [47, Ameri 2011, p. 63]:

Մասնավորապես Իրանի կրոնական բարձրագույն դպրոցներում, հատկապես Ղոմի սեմինարիայում կրթություն ստացած ադրբեջանցի շիա հոգևորականներին օրենքով արգելվեց Ադրբեջանի մզկիթներում հոգևոր ծառայություն իրականացնել, իրանցի բարձրաստիճան հոգևորականների (մարջա-է թաղ-իդ²²) աշխատությունների վաճառքն ու տարածումն արգելվեց, դպրոցներում «հեջաբ»²³ հագնելն արգելվելու մասին որոշում ընդունվեց, դադարեցվեց Ադրբեջանի իսլամական կուսակցության գործունեությունը, խոչընդոտվում, իսկ հաճախ արգելվում էր շիայական տոների ու սգո ծեսերի արարողությունը, մզկիթներում արգելվեց «ազանի»²⁴ կանչը և այլն:

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պաշտոնավարման շրջանում (2005-2013 թթ.) նախորդ նախագահ Խաթամիի օրոք ընդունված «քաղաքակրթությունների երկխոսության» մասին հայեցակարգն այլևս համահունչ չէր առաջացած մարտահրավերները դիմագրավելու նպատակով մշակված արտաքին քաղաքական նոր կուրսին: Ադրբեջանցիների վրա ունեցած կրոնական ազդեցությունը մեծացնելու նպատակով Իրանն

²² Հոգևորականներ, որոնք ֆաթվա՝ վճիռ արձակելու իրավունք ունեն և մուսուլմանների շրջանում ունեն իրենց հետևորդները:

²³ Իսլամական հանդերձանք:

²⁴ Մուսուլմանական աղոթական:

Ադրբեջանի քաղաքացիների համար 2010 թ. միակողմանիորեն վերացրեց վիզային ռեժիմը՝ նույնն ակնկալելով նաև Բաքվից: Ի դեպ, Ադրբեջանը մինչ օրս (*նույնիսկ այն շրջափուլերում, երբ Իրանն ու Ադրբեջանը ռազմավարական բնույթի համագործակցություն էին ծավալում*) խուսափում է Իրանի քաղաքացիների համար ևս վիզային ռեժիմը չեղարկել:

Թեհրանն իր այդ քաղաքականությամբ խրախուսում էր, որպեսզի ավելի շատ ադրբեջանցի շիաներ ուխտագնացություն կատարելու նպատակով այցելեին Իրանում գտնվող շիայական սրբավայրեր: Իրանի կրոնական կյանքին հնտեգրելու նպատակով հեղափոխությանը հաջորդած տարիներին Թեհրանի ֆինանսական աջակցությամբ բազմաթիվ ադրբեջանցի շիաներ ուխտագնացության համար այցելում էին Մաշհադ՝ շիաների 8-րդ իմամի՝ Ռեզայի դամբարան: Իրանի ակտիվ նախաձեռնությամբ նախիջևանցիների այցը Մաշհադ դյուրացնելու նպատակով 2015 թ. գործարկվեց Նախիջևան-Մաշհադ երկաթգիծը [160, *Psrai.ir* 2015]:

Ադրբեջանի շիաների վրա Իրանի ազդեցության հարցի շահարկումը կարելի է Ադրբեջանի տարածքում Իրանի և Իսրայելի միջև անուղղակի պատերազմի դրսևորումներից մեկը համարել: Իսրայելն Ադրբեջանի իրանամետ շիա գործիչների ազդեցության թուլացումը դիտում է որպես Ադրբեջանում Իրանի ազդեցության թուլացում: Այդ նպատակին ուղղված Իսրայելի՝ Ադրբեջանին ցուցաբերվող աջակցություններն ու այդ երկրների միջև ձևավորված ռազմական համագործակցությունը [247, *Globalpost.com* 2012] նկատի ունենալով Իրանի հասարակական-քաղաքական շրջանակների մոտ այն ընկալումներն էին ձևավորվել, որ Ադրբեջանն իր գործողություններով նույնանում է Իրանի Իսլամական Հանրապետության թշնամիների հետ [45,

Ahmadi 2015, p. 332]: Ընդ որում, այդ ընկալումը կար ինչպես 2010-ական, այնպես էլ առկա էր 2020-ականներին: Նշված ժամանակաշրջանում Ադրբեջանի նկատմամբ Իրանի վարած կրոնական քաղաքականության առանձնահատկությունն այն էր, որ Բաքվի՝ շիա գործիչների նկատմամբ բռնաճնշումներին Թեհրանն արձագանքում էր ռազմաքաղաքական և հոգևոր բարձրագույն իշխանությունների մակարդակով: Իրանին հատկապես զայրացնում էր այն փաստը, որ Ադրբեջանի համալսարաններում սովորող իրանցի ուսանողուհիները ևս բախվեցին «հեջաբի» խնդրին. ուսանողական տոմս տրամադրելու համար նրանցից ևս պահանջում էին նկարվել առանց «հեջաբի»: Գրեթե ամենօրյա ռեժիմով իրանական մամուլն անդրադառնում էր Ադրբեջանում շիաների իրավունքների խախտումների դեպքերին, մզկիթների քանդմանը, կրոնական ծեսերի արգելմանը, «հեջաբ» հագնելու արգելքի հարցով բողոքի ցույցերին, կրոնական գործիչների ձերբակալություններին և այլն:

Հատկապես Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման երկրորդ շրջանում Բաքվի՝ շիայական խմբերի գործունեությունը սահմանափակող քաղաքականության ցանկացած դրսևորում արժանանում էր Թեհրանի կոշտ արձագանքին: Ադրբեջանում շիայական տոների առթիվ կազմակերպված միջոցառումները շատ հաճախ վերածվում էին բողոքի ցույցերի, որոնց ժամանակ քաղաքացիները բացի կրոնականից, բարձրացնում էին սոցիալական բնույթի հարցեր: Յուրաքանչյուր բողոքի ցույց ավարտվում էր տասնյակ ցուցարարների ձերբակալություններով: [291, *Panorama.am* 2012] Մասնավորապես 2010 թ., երբ Ադրբեջանի կառավարությունը դպրոցներում աշակերտուհիներին «հեջաբ» հագնելն արգելող որոշում կայացրեց, Իրանն Ադրբեջանի իշխանություններին ուղղված քննադատությանը զուգահեռ ուղերձներ

էր հղում Ադրբեջանի իշխանություններից դժգոհ շիա հավատացյալներին՝ կոչ անելով պայքարել իրենց կրոնական իրավունքների համար: Սա կարելի է դիտարկել Իսլամական հեղափոխության արտահանման հայեցակարգի շրջանակում իրականացվող գործողություն, որը «շիա հավատացյալների պայքարի միջոցով անարդար իշխող համակարգերի փլուզում էր նախատեսում»:

Ադրբեջանը՝ որպես Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ (ԻՀԿ), օգտվելով այդ կարգավիճակից, միջազգային հարթակներում իսլամական երկրների աջակցությունն օգտագործում էր իր քաղաքական օրակարգը սպասարկելու նպատակով: Ադրբեջանը մի կողմից այդ կառույցում Իրանին մեղադրում էր, այսպես կոչված, «իսլամական աշխարհի» նկատմամբ երկակի քաղաքականություն վարելու մեջ, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ Ադրբեջանի նկատմամբ Իրանի վարած կրոնական քաղաքականության առաջնահերթություններից մեկն էլ Ադրբեջանի վրա Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի ունեցած կրոնական ազդեցության թուլացումն է, Բաքուն Անկարայից ու Էր Ռիադից քաղաքական աջակցություն ստանալու դիմաց շատ հաճախ սուննիների և վահաբիների նկատմամբ ավելի բարեհաճ քաղաքականություն էր վարում՝ սահմանափակելով իրանամետ շիաների իրավունքները:

Հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ձևավորված աշխարհաքաղաքական նոր իրադրությունում, երբ տարածաշրջանում Թուրքիայի դերը զգալիորեն մեծացավ, կրոնական տեսանկյունից ևս Իրանի դիրքերը թուլացան, փոխարենը՝ գերակա դիրք զբաղեցրին սուննիական Թուրքիան և վահաբիական Սաուդյան Արաբիան:

Պարսից ծոցի արաբական միապետությունները, մասնավորապես Սաուդյան Արաբիան ու Քուվեյթը, Ադրբեջանում Իրանի

կրոնաքարոզչական գործունեությունը սահմանափակելու նպատակով անցնող տարիների ընթացքում ֆինանսական զգալի աջակցություն են ցուցաբերել Ադրբեջանի գիտական հաստատություններին ու այլ կենտրոններին, որոնց միջոցով էլ Ադրբեջանում տարածվում է վահաբիական գաղափարախոսությունը: Ադրբեջանի իշխանություններին հղած իրանցի պաշտոնյաների քննադատական հայտարարություններում՝ ի թիվս բազում խնդիրների, արժարժվել է նաև վահաբիզմի հարցը:

Իրանի ԱԳՆ մամուլի քարտուղար Հոսեյն Ջաբերի Անսարին, 2016 թ-ի փետրվարին, անդրադառնալով Ադրբեջանի ազգային անվտանգության նախարար Էլդար Մահմուդովի՝ վահաբիների հետ ունեցած սերտ համագործակցությանը, հայտարարել էր, որ Իրանը պաշտոնապես հետաքննում է այդ հարցը՝ պարզելու թե որքանով է ադրբեջանցի նախարարի գործունեությունը սպառնացել Իրանի ազգային շահերին [33, IRNA 2015]:

Իրանցի հոգևորականներն էլ իրենց ուրբաթօրյա աղոթքներում Ադրբեջանի իշխանություններից բացատրություն էին պահանջում, թե ինչու են վահաբիներն Ադրբեջանում ազատ գործունեություն ծավալում, այն դեպքում, երբ շիաների նկատմամբ բացահայտ բռնաճնշումներ են կիրառվում [174, MEHR 2015]:

Իրանը քարոզչության միջոցով Ադրբեջանի շիաներին, որպես բռնապետական ռեժիմների տապալման օրինակ, մատնացույց էր անում տարածաշրջանի այլ երկրներում (*Բահրեյն, Լիբիա, Եգիպտոս*) տեղի ունեցած գործընթացները՝ դրանով ակնարկելով Ադրբեջանում նմանատիպ իշխանափոխություն իրականացնելու հնարավորությունը:

Արևմտյան Ատրպատական նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Ղուլամոեզա Հասանին իր ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ, քաջալերելով իրենց իրա-

վունքների համար պայքարող ադրբեջանցի շիա հավատացյալներին, հայտարարել էր, որ «Ադրբեջանի ժողովրդի փրկության միակ ճանապարհն իսլամական սկզբունքներին վերադառնալն է»՝ միևնույն ժամանակ նրանց կոչ անելով Ադրբեջանի իշխանությունների իրականացրած բռնությունների դեմ պայքարում որպես օրինակ դիտարկել Իրանի իսլամական հեղափոխությունը [82, Arannews.com 2012]:

Բացի իր կողմից կիրառվող գործիքներից՝ Իրանն Ադրբեջանի վրա ազդեցությունը մեծացնելու նպատակով փորձում էր օգտագործել կրոնական դիվանագիտության հնարավորությունները՝ միջազգայնացնելով Ադրբեջանի՝ տեղի շիա ակտիվիստների դեմ իրականացվող քաղաքականությունը: Այդ նպատակով 2011 թ. Իրանն «Իսլամական զարթոնքն Ադրբեջանում» թեմայով միջազգային համաժողով էր կազմակերպել, որին մասնակցել էին իսլամական ավելի քան 40 երկրի հոգևորականներ ու գիտնականներ: Համաժողովի ավարտին մասնակիցներն ընդունել էին համատեղ հայտարարություն, որտեղ դատապարտում էին Ադրբեջանի վարած հակաիսլամական քաղաքականությունը [312, Arannews.com 2011]:

2010-ականների սկզբին Իրան-Ադրբեջան հարաբերությունների զգալի ազդեցություն ուներ կրոնական գործոնը: Ադրբեջանը շիա ակտիվիստների գործունեությունը սահմանափակող լայնամասշտաբ գործողություններ էր սկսել, որի համատեքստում բնականաբար սահմանափակվելու էին նաև Իրանի ազատ գործելու հնարավորությունները: Թեհրանը Բաքվի քաղաքականության նկատմամբ իր անհամաձայնությունը փորձում էր բարձրացնել Կովկասի մուսուլմանների վարչության ղեկավար Ալլահշուբուր Փաշազադեի մոտ՝ վերջինիցս ակնկալելով շիա հավատացյալների նկատմամբ կոշտ քաղաքականության վերանայում:

Ա. Փաշազադեի՝ տարբեր տարիների Իրանի նկատմամբ դիրքավորումը բավականին ուշագրավ է: Ասել, որ նա Իրանի հոգևոր դասի համար ընդունելի կրոնական առաջնորդ է, այդպես չէ: Հաշվի առնելով նրա ոչ կայուն դիրքավորումն Ադրբեջանի ներքաղաքական համակարգում՝ Իրանը, ամեն դեպքում յուրաքանչյուր առիթն օգտագործելով, փորձել է նրա հետ հարաբերությունների հաստատումով «մասնակցել» Ադրբեջանի հոգևոր կրոնական կյանքին: Իրանի նախագահ Հասան Ռոհանին 2020 թ. հունիսին Ադրբեջան կատարած այցի ընթացքում առանձին հանդիպում էր ունեցել նաև Փաշազադեի հետ [232, mfa.ir 2020]: Այն դեպքերում, երբ Իրանի ու Ադրբեջանի հարաբերություններում համեմատաբար կայուն իրադրություն է հաստատվում, Փաշազադեն Իրանի հարցում գործում է կառուցողական դիրքերից: Մինչ 2023 թ. սկիզբն Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում աննախադեպ լարվածության առաջացումը, Բաքվում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչը Փաշազադեի հետ աղոթում էր Շուշիի մզկիթում [304, Azertag.az 2021]:

Սակայն, երկու երկրների հարաբերություններում լարվածության առաջացման ժամանակ Փաշազադեն անմիջապես սկսեց գործել Ադրբեջանի քարոզչական համակարգի սահմանած օրակարգով: Օրինակ, 2023 թ. սկզբին, երբ հերթական անգամ Իրանի ու Ադրբեջանի հարաբերությունները լարվել էին, Թեհրանի և Երևանի միջև քույր քաղաքներ հոջակելու մասին համաձայնագրի ստորագրումից հետո Փաշազադեն շտապեց նախազգուշացնել Իրանին: «Իրանն իսլամի պատմության մեջ ամենամեծ սխալն է գործում, որն աններելի է», - հայտարարում էր Փաշազադեն [259, Media.az 2023]: Իրանական մամուլը, ի դեպ, Ադրբեջանի կրոնական գործիչների գործունեությունը մշտապես պահում է իր ուշադրության կենտրոնում և երկկողմ

հարաբերություններում առաջացող լարվածության ժամանակ քարոզչական դաշտում փորձում նրանց հակադարձել [261, *Panorama.am* 2011]:

2013 թ. իրանական «AranNews» կայքը մի լուսանկար էր հրապարակել, որտեղ նկարագրվում էր, թե Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալահշյուքուր Փաշազադեն Թուրքիա կատարած այցի ժամանակ սուննիական կանոնակարգով է «նամազ» կատարել [79, *Arannews.com* 2012]:

Ադրբեջանի իշխանությունների՝ տեղի իրանամետ շիա խմբավորումների դեմ գործողությունների պատճառով վերջիններիս մոտ ի հայտ եկած բողոքի ալիքն ավելի ուժեղացնելու և երկրում իսլամական շարժման ձևավորմանը նպաստելու նպատակով Իրանն իր կրոնական քաղաքականությունը քողարկված իրականացնում էր Ադրբեջանում հեռարձակվող «Սահար» հեռուստաընկերության, Բաքվում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցչության գրասենյակի, նրա ենթակայությամբ գործող կրոնական մշակութային հաստատության, Իրանի կողմից ձևավորված դիմադրության շարժման «Հոսեյնյուն» անունը կրող խմբավորման, Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնի, մշակութային և կրոնական այլ կառույցների միջոցով: 2010-ական թվականների սկզբին, երբ ինտերնետը դեռ լայն տարածում չուներ, Ադրբեջանի հարավային շրջանների բնակչությունը երկրում տիրող քաղաքական իրադրության, շիա հավատացյալների նկատմամբ բռնաճնշումների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում էր իրանական «Սահար» հեռուստաալիքի միջոցով:

Ադրբեջանը, մտահոգվելով Իրանում կրթություն ստացած ադրբեջանցի հոգևորականների իր համար անցանկալի գործողությունների հնարավոր սպառնալիքներից, օրենք ընդունեց,

համաձայն որի՝ «ստարերկրացի գիտնականներին, ինչպես նաև, արտերկրում կրթություն ստացած Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող հոգևորականներին, արգելվում էր Ադրբեջանի տարածքում կրոնական քարոզչություն իրականացնել [285, *Apa.az* 2022]:

Ավելին, Ադրբեջանի խորհրդարանականները հայտարարում էին, որ կրոնի ոլորտում ամենամեծ սպառնալիքն Իրանից է սպասվում՝ առաջարկելով Իրանի Ղոմ քաղաքում կրոնական ուսում ստացած ադրբեջանցի հոգևորականների գործողությունները խիստ վերահսկել:

Ադրբեջանի Կրոնական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների պետական կոմիտեի և Կովկասի մուսուլմանների վարչության կողմից 2001 թ. մշակվում է մի ծրագիր, համաձայն որի՝ Ադրբեջանում ուրբաթօրյա աղոթքների տեքստերն այսուհետ պետք է մշակվեին վերոնշյալ կառույցներում, և «իմամ ջոմեները» (ուրբաթօրյա աղոթք կարդացող հոգևորական) պետք է աղոթքի ժամանակ ընթերցեին միայն նախապես հաստատված տեքստը: Իսկ 2012 թ. Կովկասի մուսուլմանների վարչության ընդունած որոշմամբ՝ այն հոգևորականները, որոնք կրոնական կրթություն են ստացել Իրանում, կարող են ներկա գտնվել կրոնական արարողություններին, սակայն, իրավունք չունենին Ադրբեջանի մզկիթներում քարոզել:

Ադրբեջանի Կրոնական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների պետական կոմիտեի ղեկավար Մուբարիզ Գուրբանլին, ամփոփելով անցած տասնամյակի ընթացքում կատարված աշխատանքները, նշել է. «Երկրի մզկիթները համարվել են Ադրբեջանում կրոնական կրթություն ստացած հոգևորականներով: Երբ հոգևորականների նշանակումը Կովկասի մուսուլմանների վարչությունից անցավ Կոմիտեի իրավասության

ներքո, իրադրությունն արդեն սկսեց վերահսկվել, և իրանական ազդեցության ներքո գործող հոգևորականներն այլևս ծառայություն չէին իրականացնում: Մինչ օրս 118 կրոնական գործիչ հեռացվել է մզկիթներից, փոխարենը՝ 120 նոր հոգևորական է նշանակվել, որոնք ներկայացնում են Ադրբեջանի շահերը [274, *Turan.az* 2023]»:

Կրոնական քարոզչության ոլորտում կիրառված սահմանափակումներից մեկն էլ վերաբերում էր կրոնական բնույթի գրքերի վաճառքին: Ադրբեջանում կրոնական բովանդակությամբ գրքեր վաճառելու համար անհրաժեշտ էր ստանալ արդարադատության նախարարության թույլտվությունը [299, *Apa.az* 2010]: Արգելված հեղինակների շարքում էին իրանցի բարձրաստիճան հոգևորականներ այաթոլլահ Մաքարեմ Շիրազին, Շեյխ Աբբաս Ղոմին, այաթոլլահ Ֆազել Լանքարանին, Ջաաֆար Սաջանին, և այլն:

«Հեջաբ» կրելու արգելքին զուգահեռ Ադրբեջանի իշխանությունները սկսեցին սահմանափակել նաև շիայական մզկիթների գործունեությունը: 2010 թ. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հրամանով երկրի շիայական մզկիթներում արգելվեց «ազանը»՝ մուսուլմաններին աղոթքի հրավիրող կանչը: Ըստ այդ հրամանի՝ մզկիթների պատասխանատուների կողմից հրահանգը չկատարելու դեպքում վերջիններս խիստ պատասխանատվություն էր սպառնում [142, *Mashregnews.ir* 2010]:

Եթե «հեջաբի» դեպքում Իրանը սահմանափակվում էր սոսկ քննադատությամբ, ապա մզկիթների քանդման առնչությամբ Իրանը սկսեց արդեն սպառնալ Ադրբեջանին: «Հեջաբ» կրելու արգելքին զուգահեռ Ադրբեջանի իշխանությունները սահմանափակում էին շիայական մզկիթների գործունեությունը, որը բացատրվում էր 2009 թ. տեղի ունեցած օրենսդրական փոփոխու-

թյուններով [28, *Փաշայան* 2014, էջ 59-61]: 2010 թ. Ադրբեջանի կառավարությունը Բաքվում գտնվող «Ֆաթեմե Ջահրա» մզկիթը քանդելու որոշում կայացրեց [72, *khaboronline.ir* 2009]: Տեղի շիա հոգևորականների պայքարը որևէ արդյունք չտվեց. 2020 թ. այն վերջնականապես քանդվեց: 2022 թ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափոյի ժամանակ Ադրբեջանում քանդվեց Սեֆյանների շրջանում կառուցված իրանական պատմական «Շահ Սուլթանի» մզկիթը [184, *Etemad* 2022]: Ադրբեջանում ներկայումս շուրջ 2000 մզկիթ գոյություն ունի: Կովկասի մուսուլմանների վարչության հաղորդած տվյալների համաձայն՝ դրանց մեծ մասում «նամազ»²⁵ չի արվում, իսկ մեծ մասն օգտագործվում է այլ նպատակներով [124, *Mashregnews.ir* 2020]:

Իրանից հնչող սպառնալիքներին ի պատասխան՝ Ադրբեջանն էլ Իրանին էր մեղադրում կրոնի հարցում երկակի քաղաքականություն վարելու մեջ՝ ներկայացնելով Ադրբեջանի մզկիթի շուրջ ձևավորված կեղծ նարատիվը, ըստ որի՝ «Իրանը հայ օկուպանտների կողմից ադրբեջանական-շիայական մզկիթները գոմի վերածելու գործողությունները դատապարտելու փոխարեն, անտեղի շահարկում է Ադրբեջանի գործողությունները»:

Ադրբեջանում շիայական մզկիթները քանդելու կամ դրանց գործունեությունը սահմանափակելու Բաքվի քայլերին Իրանն արձագանքում էր սպառնալից աննախադեպ հայտարարություններով: Մասնավորապես իրանցի բարձրաստիճան ազդեցիկ հոգևորական այաթոլլահ Մաքարեմ Շիրազին, դիմելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին, սպառնացել էր. «Ադրբեջանում մզկիթների քանդելը շարունակելու դեպքում Իրանի բարձրաս-

²⁵ Մուսուլմանների աղոթքը:

2012 թ. մայիսին Ադրբեջանի իշխող կուսակցության (*Ենի Ադրբեջան*) ենթակայությամբ գործող ուժերն Ադրբեջանում Իրանի դեսպանության շենքի առջև կազմակերպված ցույցի ժամանակ Իրանի հոգևոր առաջնորդի հասցեին վիրավորական հայտարարություններ հնչեցրին՝ պարզելով նույնաբովանդակ պաստառներ [271, *1news.az* 2012]: Ի նշան բողոքի, Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհամմադ Բադեր Բահրամին խորհրդակցություններ անցկացնելու նպատակով վերադարձավ Իրան, իսկ Իրանի ԱԳՆ կանչվեց Իրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովը: Այի Խամենեյիի հասցեին վիրավորական հայտարարություններ հնչեցնելու փաստի առնչությամբ Իրանի արտգործնախարարությունը բողոքի նոտա հղեց Ադրբեջանին՝ պահանջելով «կրոնական սրբություններն անարգողներին պատժել և այդ գործի առնչությամբ մանրակրկիտ քննություն իրականացնել»:



Կրոնական ինստիտուտների գործունեությունը սահմանափակելուց հետո Ադրբեջանը սկսեց խիստ վերահսկողության տակ վերցնել կրոնական տեսանկյունից առավել ակտիվ գյուղերն ու ավանները: Շիա առաջնորդներին ու շիայական ծեսերին վերաբերող դրոշ, պաստառ և քարոզական բնույթի նյութ, որոնք տարածվում էին նշված շրջաններում, ոստիկանական ուժերի կողմից շատ արագ հեռացվում էին:

2015 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանի՝ հիմնականում շիաներով բնակեցված Նարդարան ավանում ոստիկանական ուժերի և տեղացիների միջև տեղի ունեցած բախումը, որի հետևանքով զոհվել էր 5 քաղաքացի և 2 ոստիկան, շրջադարձային էր այն

իմաստով, որ Նարդարանից հետո Ադրբեջանի իշխանություններին գրեթե հաջողվեց վերահսկել կրոնական կազմակերպությունների գործունեությունը: Ինստիտուցիոնալ մակարդակում կատարված փոփոխություններն իրենց ազդեցությունն արդեն տալիս էին: Նարդարանի դեպքն ուշագրավ էր ինչպես Ադրբեջանի նկատմամբ Իրանի կրոնական քաղաքականության, այնպես էլ ադրբեջանցի շիաների նկատմամբ Բաքվի քաղաքականության տեսանկյունից: Ինչպես 2010-2012 թթ. «հեջաբի» արգելքով պայմանավորված Ադրբեջանում տեղի ունեցած բողոքի ցույցերի ժամանակ, այնպես էլ Նարդարանում կատարվածը հայտնվեց Իրանի կրոնաքաղաքական իշխանության ուշադրության կենտրոնում: Իրանը, բնականաբար, ինչպես նախկինում տեղի ունեցած նմանատիպ միջադեպերի ժամանակ, բավականին կտրուկ արձագանքեց Նարդարանի դեպքերին: Իրանցի հոգևորականներն ու պահպանողական պատգամավորներն Ադրբեջանի իշխանություններին նախազգուշացնում էին տարածաշրջանի բռնապետերի ճակատագրից դասեր քաղել՝ միևնույն ժամանակ Նարդարանի բնակչությանը կոչ էին անում «արթնանալ և առկա խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտել» [125, *Arannnews.com* 2015]: Այս մոտեցումը կարելի է դիտարկել Ադրբեջանի շիա հավատացյալների ապստամբության միջոցով Ադրբեջանի իշխանություններին տապալելուն, կամ առնվազն նրանց հակաիրանական ծրագրերը խափանելուն միտված Իրանի նպատակադրության շրջանակում:

Ադրբեջանի ոստիկանության կողմից նարդարանցիների նկատմամբ կիրառված բռնությունը խիստ դատապարտեցին Իրանցի բարձրաստիճան հոգևորականներ այաթոլլահ Մաքարեմ Շիրազին, Արդաբիլ նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ այաթոլլահ Հասան Ամեյին, իսկ Արևելյան

Ատրպատական նահանգում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, Փորձագետների խորհրդի անդամ այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին, որը, վկայակոչելով իրանցի պաշտոնյաների՝ Նարդարանի շիաների նկատմամբ ունեցած պարտավորությունը, հայտարարել էր. «Պետք է դիվանագիտական մեթոդներն օգտագործել, որպեսզի Նարդարանում ստեղծված իրավիճակը կարգավորվի, և նարդարանցիների նկատմամբ կիրառվող բռնաճնշումներին վերջ տրվի, հակառակ պարագայում, եթե դա տեղի չունենա, ապա Իրանի Իսլամական Հանրապետության՝ Ադրբեջանական Հանրապետության հետ ունեցած փոխադարձ հարաբերությունները կվերանայվեն» [82, MEHR 2015]:

Նարդարանի միջադեպին բավականին կոշտ արձագանքեց Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհսեն Փաքայինը, որն իր պաշտոնավարման ողջ ընթացքում աչքի էր ընկել ադրբեջանցիներին հաճոյանալու, երկկողմ հարաբերություններում լարվածություն չստեղծելու նպատակով մշտապես փորձել է մեղմ արտահայտվել Ադրբեջանի հակաիրանական քայլերի նկատմամբ, Ադրբեջանի իշխանություններից պահանջում էր փոխել Նարդարանում շիայական դրոշների հանդեպ ցուցաբերված անհարգալից վերաբերմունքը [65, ISNA 2015]: Հատկապես ուշագրավ էր Ադրբեջանում Իրանի դեսպանության մշակութային հարցերով խորհրդական Էբրահիմ Էբրահիմիի խիստ քննադատությունը՝ ուղղված Ադրբեջանի իշխանություններին: Նա պաշտոնական Բաքվին մեղադրում էր ծայրահեղական խմբավորումներին ֆինանսական աջակցություն տրամադրելու մեջ՝ միևնույն ժամանակ դատապարտելով Նարդարանի շիա հավատացյալների հանդեպ կատարված բռնի գործողությունները:

Իրանցի դիվանագետը, կասկածի տակ դնելով Ադրբեջանի անվտանգության ուժերի՝ նարդարանցիների դեմ իրականաց-

րած գործողությունները, մասնավորապես նշել էր. «Եթե Ադրբեջանի անվտանգության ուժերը պնդում են, որ մի խումբ անձինք են հարձակվել ոստիկանների վրա, ապա ինչո՞ւ 10 հազար բնակչություն ունեցող ավանին առաջին անհրաժեշտության ապրանքից՝ գազից, ջրից և էլեկտրաէներգիայից զրկեցին: Եթե իրականում այդ դեպքի ժամանակ ոստիկան է զոհվել, ապա փորձաքննությունը կարող է պարզել, թե ի՞նչ զենքից, ի՞նչ տրամաչափի գնդակից, ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են նրանք սպանվել: Սակայն, առկա գործընթացները հուշում են, որ այս միջադեպը փորձում են օգտագործել Նարդարանի բնակչության դեմ՝ նրանց մեղադրելով ազգային անվտանգության դեմ իրականացրած գործողությունների մեջ» [59, Anaj.ir 2015]:

Միևնույն ժամանակ, Իրանի խորհրդարանի մի խումբ պատգամավորներ արագործնախարար Մոհամմադ Զավադ Զարիֆից պահանջում էին Թեհրանում Ադրբեջանի դեսպանին կանչել ԱԳՆ և Նարդարանում անվտանգության ուժերի մասնակցությամբ տեղի ունեցած զինված բախման ժամանակ 5 շիաների զոհվելու պատճառի առնչությամբ բացատրություններ պահանջել: Պնդել, որ իրանցի հոգևորականների՝ երկրից դուրս բնակվող շիաների իրավունքների պաշտպանության հայտարարությունները միայն հրապարակային դաշտում արվող գործողություններն էին, այդպես չէ: Ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Սաուդյան Արաբիայի կողմից այդ երկրներում շիաների նկատմամբ բռնաճնշումների առնչությամբ Իրանից հնչող դատապարտող հայտարարություններին հետևել են հատուկ գործողություններ²⁹:

²⁹ 2016 թ., երբ Սաուդյան Արաբիայի իշխանությունները մահապատժի ենթարկեցին շիա հոգևորական Նիմր Բադիր Ալ Նիմրին, ԻՀՊԿ-ի ենթակայությամբ գործող «Բասիջ» կազմակերպության անդամները ուսանողների անվան տակ հարձակվեցին Թեհրանում Սաուդյան Արաբիայի դեսպանության վրա, ինչից

Որպես ասվածի հիմնավորում, կարելի է նշել Իլիամ Ալիևին Իրանի ԶՈՒ ԳՇ պետի հղած նախազգուշացնող հայտարարությունը, կամ 2016 թ. Իրանում Սաուդյան Արաբիայի դեսպանության վրա կատարված հարձակումը [219, *Nyrimmes.com* 2016]:

Իրանից հնչող դատապարտող հայտարարություններին ի պատասխան՝ Ադրբեջանը հակադարձում էր, թե ադրբեջանցի շիաների գործողությունները հրահրվում են Իրանի կողմից [286, *Haqqin.az* 2015]: Ի պատասխան Բաքվի հայտարարության՝ Արևելյան Ատրպատական նահանգում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին, հերքելով Իրանի մասնակցությունը նարդարանյան դեպքերին, Նարդարանում կատարվածն ինքնաբուխ, հեղափոխական շարժում էր որակել [74, *Mehr* 2015]:

Ադրբեջանը երկրում գործող իրանական ներկայացուցչությունների գործունեությունը սահմանափակելու նպատակով տարբեր պատճառաբանություններով մերժում էր նաև Ադրբեջանում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի, ինչպես նաև Բաքվում ԻԻՀ հոգևոր առաջնորդի գրասենյակին կից գործող «Հոսեյնիե»-ի (*շիաների աղոթավայր, հավաքավերդ*) աշխատակիցների՝ մուտքի արտոնագրեր ստանալու համար ներկայացրած դիմումները: Միայն 2011 թ. Բաքվում գործող Իրանի ներկայացուցչությունների 8 աշխատակից է արտաքսվել երկրից: 2013 թ. Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ՝ դադարեցվեց Իմամ Խոմեյնիի անվան օգնության կոմիտեի գործունեությունը, որն Ադրբեջանի անկախացումից ի վեր այդ երկրում բարեգործական բազմաթիվ ծրագրեր էր իրականացրել: Իմամ Խոմեյնիի

հետո երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները խզվեցին: 2023 թ. Իրանի ու Սաուդյան Արաբիայի միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին:

անվան բարեգործական հիմնադրամը Ղարաբաղյան 1-ին պատերազմի ժամանակ զգալի աջակցություն է ցուցաբերել ադրբեջանցի փախստականներին:

Վերջին տարիներին Ադրբեջանին հաջողվել է, շիայական առանցքային գործիչների նկատմամբ տարբեր գործեր հարուցելով, մեկուսացնել Ադրբեջանում անցկացվող կրոնական բնույթի հավաքներն ընդդեմ իշխանությունների ուղղորդելու հնարավորությունից: Երկարաժամկետ հեռանկարի համար Ադրբեջանի իշխանությունների նպատակն է պատրաստել իրանական ազդեցությունից հեռու հոգևորականների մի սերունդ, որի միջոցով իշխանությունները կկարողանան կառավարել կրոնական գործընթացներն ու դրանք ծառայեցնել իրենց օրակարգին: Անցնող տարիներին Ադրբեջանում բացվել է աստվածաբանության ֆատարիներին Ադրբեջանում բացվել է աստվածաբանության ֆատարիներին Ադրբեջանում բացվել է աստվածաբանության ֆատարիներին [263, *Inews.az* 2022], կառուցվել ու վերակառուցվել են կուլտետ [263, *Inews.az* 2022], կառուցվել ու վերակառուցվել են մզկիթներ, բարելավվել է կրոնական տեսանկյունից խոցելի շրջանների բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը: Կրոնական գործիչների գործունեությունը վերահսկելու նպատակով Ադրբեջանի կրոնական կազմակերպությունների հարցերով պետական կոմիտեին Ադրբեջանի իշխանությունները սվեցին այն լիազորություններ: 2016 թ. օգոստոսի վերջինիս կայացրած որոշման համաձայն՝ արգելվում էր հասարակական վայրերում կազմակերպել կրոնական հավաքներ, իրականացնել շիայական ծիսակարգեր, օգտագործել կրոնական աքսեսուարներ և այլն: Փոփոխություններ կատարվեցին Ադրբեջանի «կրոնական ազատությունների մասին» օրենքում, համաձայն որի՝ կանոնակարգվելու են երեխաների կրոնական դաստիարակության գործընթացները:

Անցնող տարիների ընթացքում էլ Ադրբեջանն իր այդ քաղաքականության տրամաբանության շրջանակում յուրաքանչյուր

առիթ օգտագործել է՝ սահմանափակելու Ադրբեջանում Իրանի ներկայացուցչությունների գործունեությունը: 2020 թ. հերթական լարվածության շրջանում Ադրբեջանը կորոնավիրուսի տարածման պատրվակով կրկին սահմանափակեց իրանական ներկայացուցչությունների գործունեությունը [272, *1news.az* 2021]:

2013 թվականից հետո Ադրբեջանի նկատմամբ Իրանի կրոնական քաղաքականության մեջ վերափոխումներ էին տեղի ունեցել: Դրանք պայմանավորված էին ինչպես աշխարհաքաղաքական իրադրության՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա ազդեցությամբ, այնպես էլ Ադրբեջանի՝ երկրի կրոնական շարժումների գործունեությունը կանոնակարգելու աշխատանքների հետ:

2015 թ. Իրանի և «5+1 խմբի» միջև միջուկային պայմանագրի ստորագրումից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունը նպաստեց Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում ձևավորված լարվածության թուլացմանը: Ադրբեջանի հարցում Թեհրանն առաջնային հետևյալ նպատակներն էր հետապնդում.

- առևտրատնտեսական կապերի խորացման միջոցով քաղաքական ազդեցության մեծացում,
- այլընտրանքային տարանցիկ ճանապարհ ունենալու հնարավորություն,
- Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացմամբ փոխկապակցվածության ձևավորում,
- Իրանի ազդեցության մեծացմամբ Ադրբեջանում Թուրքիայի և Իսրայելի ազդեցության սահմանափակում:

Իրան-Ադրբեջան հարաբերություններում տեղի ունեցած վերափոխումները համընկան Ադրբեջանի կողմից սանձազերծած ապրիլյան պատերազմի ժամանակաշրջանի հետ: Այդ ընթաց-

քում Իրանի կրոնական քաղաքականության մեջ ևս նշանակալի վերափոխումներ էին տեղի ունեցել, որոնք դրսևորվում էին երկակի ուղերձներով:

Կրոնական գործոնով պայմանավորված՝ Ադրբեջանի հասցեին քննադատական հայտարարություններ հնչեցնելիս իրանցի հոգևորականներն ու հասարակական գործիչներն ադրբեջանցիներին հայտնելով իրենց համերաշխությունը, Լեռնային Ղաղաղի հարցն հոգուտ Ադրբեջանի լուծմանն աջակցություն հայտնելու նպատակով կրկին շահարկում էին կրոնական գործոնը: Իրանցի բարձրաստիճան հոգևորականները, պատգամաւորները, մտավորականները, փորձագետներն ու ՁԼՄ-ներն իրանամետ շիա հավատացյալների նկատմամբ բռնություն կիրառող Ադրբեջանի իշխանության հասցեին դատապարտող հայտարարություններ հնչեցնելիս շրջանառում էին այն թեզը, թե իբր «երիտասարդության շրջանում շիայական գաղափարների հարածման դեպքում միայն հնարավոր կլինի ազատագրել Ղաղաղի առաջնային ուղիներին ուրբաթօրյա աղթքներով ժամանակ մշտապես առաջ են քաշել Իրանի թյուրքալեզու ատրպատականցիներով բնակեցված նահանգների հոգևոր առաջնորդներն ու պատգամավորները: Այն ակտիվորեն շրջաառաջնորդներն ու պատգամավորները: Այն ակտիվորեն շրջանառում էր նաև 44-օրյա պատերազմի ընթացքում: Նույնիսկ իրանցի հոգևորականներն Ադրբեջանի իշխանություններին այդ ժամանակ մեղադրում էին՝ ընդգծելով, որ «Ադրբեջանը պատերազմում հաղթելու համար ոչ թե պետք է երախտապարտ լինի Թուրքիային ու Իսրայելին, այլ՝ շիայական ինքնագիտակցությամբ զինվորներին»:

Կրոնական դիվանագիտության շրջանակներում 2015 թ. սեպտեմբերին Ադրբեջան այցելած Իրանի հոգևոր դասի ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ այաթոլլահ Նուրի Համեդանին,

իրանցի առաջին բարձրաստիճան հոգևորականն էր, որը ԽՍՀՄ լուծարումից հետո երբևէ այցելել էր Ադրբեջան: Ինչպես իրանցի մյուս հոգևորականների ու պատգամավորների դեպքում էր, այաթոլլահ Համեդանին ևս շահարկեց Ղարաբաղի հարցը՝ փորձելով բավարարել ինչպես Ադրբեջանի իշխանությունների, այնպես էլ ադրբեջանցի շիա հավատացյալների ակնկալիքները: Այաթոլլահ Համեդանին Բաքվի մզկիթում աղոթել էր Ղարաբաղի ազատագրության համար [83, Mehr 2015]:

Իրանի Իսլամական Հանրապետության հեռուստառադիոընկերության աջակցությամբ ծագումով Թավրիզից՝ իրանցի ռեժիսոր Մոհսեն Հադին 2015 թ. նախաձեռնեց Ղարաբաղի վերաբերյալ «Ճանապարհ դեպի Ղարաբաղ» անվամբ վավերագրական ֆիլմի նկարահանումը: Այդ ժամանակ կրկին շահարկվել էր կրոնական գործոնը: Իրանցի ռեժիսորն իր հարցազրույցներից մեկում Ղարաբաղն իսլամական տարածք էր անվանել և նշել, թե ֆիլմի նպատակներից մեկն էլ այն է, որ «պեյրք է ջանքեր գործադրել, որպեսզի Ղարաբաղը երկրորդ Պաղեստինն չդառնա» [67, Anaj.ir 2015]:

2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ իրանական մամուլն առանձնահատուկ ոգևորությամբ էր լուսաբանում Ադրբեջանի իսլամական կուսակցության և իսլամական այլ կազմակերպությունների՝ զինված բախումների ժամանակ Ադրբեջանի բանակին հայտնած աջակցության մասին հայտարարությունները՝ համոզմունք հայտնելով, որ «եթե Ադրբեջանի իշխանությունները ճիշտ օգտագործեն իսլամական ուժերին, ապա նրանց միջոցով հնարավոր կլինի հասարակությանը միավորել և ազատագրել Լեռնային Ղարաբաղը» [75, Mashregnews.ir 2015]:

Այդ շրջանում Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Մանսուր Հադիդաբադիուն ու Իրանի Մեջլիսի նախագահության անդամ Ալի Ռեզա Մոնադին ընդգծում էին, որ «եթե ժամանակին Ադրբեջանը կարևորեր իսլամական աշխարհի դերը, ապա ներկայումս միանգամայն այլ պայմաններում կկարողանար ազատագրել Լեռնային Ղարաբաղը» [123, Mehr 2016]: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) նախկին բարձրաստիճան զինվորական Հադիդաբադիուն էլ հայտարարել էր, թե «Լեռնային Ղարաբաղը պատկանում է իսլամական աշխարհին» [56, Anaj.ir 2016]:

Ղարաբաղն իսլամական տարածք էին անվանել նաև Ադրբեջանում Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Օջաղնեժադը, Արևելյան Ատրպատական և Արդաբիլ նահանգներում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչներ այաթոլլահ Մոջթահեդ Շաբեսթարին և այաթոլլահ Սեյյեդ Հասան Ամեյին:

«Ոչ մի երկիր Լեռնային Ղարաբաղն ազատագրելու համար Ադրբեջանին այնքան օգնություն չի ցուցաբերել, որքան Իրանը», - հայտարարել էր ԻԻՀ Փորձագետների խորհրդի անդամ այաթոլլահ Ամեյին [101, ISNA 2016]:

Ադրբեջանում ԻԻՀ հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Օջաղնեժադն էլ նշել էր. «Այն, որ Ադրբեջանը 20 տարի տևած Օջաղնեժադ բանակցություններից հետո կարողացել է օկուպացիան հաղթահարել մի մասն ազատագրել, միանգամայն բնական է, և որևէ մեկի թույլտվության անհրաժեշտությունը չկար»: «Լեռնային Ղարաբաղը միևնույն ժամանակ հայտարարել էր, որ «Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի տարածք է, իսկ Ադրբեջանը՝ իսլամական աշխարհի անքակտելի մասը» [135, Qafqaz.ir 2016]:

ները դեսպանի այդ քայլն անպատվաբեր և չհաշվարկված քայլ համարեցին, իսկ սպանված ադրբեջանցի գեներալի մայրն այն հետ վերադարձրեց Իրանին:

Իսնդիրն այն է, որ Ադրբեջանի «Իսլամական կուսակցության» ղեկավարի դեմ իրականում քրեական գործ էր հարուցվել Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Ղոդս» ուժերի նախկին հրամանատար Ղասեմ Սուլեյմանիի սպանության առթիվ միջոցառում կազմակերպելու և ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի նախաձեռնած «դարի գործարքին» դեմ արտահայտվելու մեղադրանքով: Այսինքն, Իրանը կրոնական գործոնի շահարկմամբ մի կողմից փորձում էր արդարացնել Ադրբեջանի իշխանությունների կողմից դատապարտված իսլամական գործչին, իսկ մյուս կողմից մեծարել ադրբեջանցի զինվորականին և նրա ընտանիքին նվիրել իրանցի մի գեներալի անվան շքանշան, որին աջակցելու համար մեղադրվում էր Ադրբեջանի իսլամական կուսակցության ղեկավարը:

2020 թվականից հետո Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարվածության մի նոր շրջափուլ սկսվեց: Եթե 2010-ական թվականների լարվածությունն ավելի շատ ներքին, երկու երկրներին առնչվող տարատեսակ գործընթացների արդյունք էր, ապա 2020-ից սկսված զարգացումներն առավելապես արտաքին գործոններով էին պայմանավորված:

2020 թ. պատերազմից հետո Արցախ այցելած իրանցի վարորդների ձերբակալմամբ Իրան-Ադրբեջան հարաբերություններում լարվածության մեկնարկը տրվեց: Դրան հետևեց քարոզչական պատերազմը, տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխություն թույլ չտալու մասին Թեհրանի նախագգուշացում-հայտարարությունները, Ադրբեջանի սահմանին զորավարժու-

թյունների անցկացումը, և այլ գործողություններ: Իրանում Ադրբեջանի դեսպանությունում տեղի ունեցած զինված հարձակումն³⁰ այն սահմանագիծն էր, որից այն կողմ ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ ընթացող զարգացումները չկառավարելու դեպքում կմեծանար դիվանագիտական հարաբերությունների խզման ռիսկը:

Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափուլում զգալի էր կրոնական գործոնի ազդեցությունը: Բաքվում Ադրբեջանի դեսպանության 4 դիվանագետի արտաքսման³¹ մասին որոշմանը նախորդել էին Ադրբեջանի ուժային կառույցների կողմից երկրում գործող իրանական գործակալական հերթական ցանցի բացահայտման մասին հաղորդագրությունները: 2023 թ. ապրիլի 7-ին Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունը, ՆԳ նախարարությունը և գլխավոր դատախազությունը համատեղ հայտարարությունը և գլխավոր դատախազությունը համատեղ հայտարարություն էին տարածել, որում նշվում էր, թե Իրանում ձերբակալված խմբավորումների նպատակն Ադրբեջանում իսլամական կառավարմամբ պետություն ստեղծելն էր: Ըստ ադրբեջանական աղբյուրի՝ հայտնաբերված «գործակալական ցանցը» ղեկավարել են Իրանից՝ Ռուֆուլահ Ախունդզադեն և Բախթիար Բայրամովը:

³⁰ Իրանի թյուրքախոս ատրպատականցիներով բնակեցված քաղաքներից մեկի՝ Բնակիչը, զինված հարձակում իրականացնելով Իրանում Բաքվի դեսպանության վրա, սպանել էր դեսպանության 1-ին քարտուղարին: Այդ դեպքից հետո Ադրբեջանը դեսպանության աշխատանքները դադարեցնելու մասին որոշում կայացրեց:

³¹ Ադրբեջանը 2023 թ. ապրիլի 7-ին հրապարակել է արտաքսված դիվանագետների անունները: Նրանցից մեկն աշխատել է Իրանի իսլամական կապերի և մշակույթի կազմակերպությունում: Արտերկրում Իրանի դեսպանություններին և մշակույթի կենտրոնների խորհրդական-ղեկավարները նշանակից գործող մշակույթի կենտրոնների խորհրդական-ղեկավարները նշանակվում են այդ կազմակերպության կողմից: Ի դեպ, կարծես թե միայն Ադրբեջանում և Տաջիկստանն են, որոնք Իրանից պահանջել են դադարեցնել այդ կենտրոնների գործունեությունը:

գային փոփոխությունների արդյունքում Ադրբեջանում շիայական խմբերի գործունեությունը սահմանափակող ավելի քան 100 օրենք է ընդունվել, որոնք էականորեն նվազեցրել են Իրանի ազդեցությունը: Ինչպես տարիներ առաջ քարոզչական հատուկ գործողությունների միջոցով Իրանի Խուզիստան նահանգում անջատողականներն այն թեզն էին շրջանառության մեջ դրել, ըստ որի՝ «Շիիզմը՝ դա պարսիկների, ֆարսերի կրոնն է, դա մեզ հետ կապ չունի», ապա նույն օրինակով փորձ է արվում Ադրբեջանում փոխել կրոնական պատկերը: 2010 թվականից ի վեր Ադրբեջանին ոչ միայն հաջողվել էր ամբողջությամբ իր վերահսկողության տակ վերցնել Կովկասի մուսուլմանների վարչությունն ու դրա ենթակայությամբ գործող մզկիթների գործունեությունը, այլև Ադրբեջանում կրոնական պատկերը փոխելու հեռահար ծրագրի շրջանակում թույլատրվում էր վահաբիականության տարածումն ու սուննիների ազատ գործունեությունը:

Ադրբեջանին ոչ միայն հաջողվել է համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների միջոցով վերահսկել և սահմանափակել շիայական խմբերի գործունեությունը, այլև այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ Իրանի ցանկացած դիրքորոշում Բաքուն ընկալում է Ադրբեջանի օրենքներին և ներքին գործերին միջամտություն: Ավելին, Իրանի ազդեցությունը վերջնականապես չեզոքացնելու նպատակով Իրանին հեղինակագրկելու գործընթաց է նախաձեռնում:

Եթե մինչև 2020 թվականը Իրանն էր կրոնական ուղերձներով սպառնում Ադրբեջանին, ապա 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանն է նույն գործիքն օգտագործում ընդդեմ Իրանի: Այսօր Իրանի համար զգայուն մի վայրում՝ Խոդաֆարինի պատմական կամուրջի մոտ, որը թյուրքախոս-անջատողականների համար դարձել է «Հյուսիսային Ադրբեջանը» «Հարավային Ադրբե-

ջանին» միավորելու խորհրդանիշը, Ադրբեջանը, «Ֆաթաիի սուրահը» հնչեցնելով, փաստացի Իրանին պատերազմի կոչ է անում [168, Soltani 2023]:

Եթե մինչև 2020 թվականը Ադրբեջանը երկրում Իրանի կրոնական ազդեցության հարցն օգտագործում էր երկրի ներսում անցանկալի խմբավորումներին ու գործիչներին չեզոքացնելու համար, ապա ներկայումս, բացի նշված հանգամանքից, Ադրբեջանը կրոնական գործոնի շահարկմամբ փորձում է լեզիտիմացնել Իրանի դեմ իրականացվող տարատեսակ գործողությունները:

Եթե 2010-ական թվականներին կրոնական գործոնի պատճառով առաջացած լարվածությունն ավելի շատ ներքին, Իրանին և Ադրբեջանին առնչվող տարատեսակ գործընթացների արդյունք էր, ապա 2023 թ. սկսված զարգացումներն առավելապես արտաքին գործոններով էին պայմանավորված, որոնց նպատակը երկարաժամկետ հեռանկարում Իրանի կրոնական ազդեցությունն էապես թուլացնելն է:

ԳԼՈՒԽ 3

ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՆ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իրանը պատմության տարբեր շրջափուլերում Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի հետ մղած պատերազմներում առանձնահատուկ կարևորություն է տվել Կասպից ծովի տարածաշրջանում ներկայություն ունենալուն: Տարածաշրջանը հատկապես մեծ կարևորություն ձեռք բերեց, երբ Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան 18-րդ դարից սկսած՝ սկսեցին պայքարել Իրանում և Կենտրոնական Ասիայում իրենց ազդեցությունը մեծացնելու համար, որոնց պայքարը հանգուցալուծվեց 1907 թ. ստորագրված պայմանագրով, համաձայն որի որոշվում էր երկու գերտերությունների ազդեցության գոտին՝ Իրանում և ներկայիս Աֆղանստանի տարածքում: Կասպյան տարածաշրջանի երկրների խորհրդայնացմամբ՝ Իրանը վերջնականապես կորցրեց իր ազդեցությունն այդ տարածքների նկատմամբ, որի մի մասը պատմության տարբեր շրջափուլերում Իրանի ազդեցության գոտում է գտնվել:

Թեև ընդունված տեսակետի համաձայն՝ Կասպից ծովի իրավական կարգավիճակի հետ կապված տարածայնություններն առաջացել են Խորհրդային Միության լուծարումից հետո, սակայն ծովի նկատմամբ իրավունքները որոշելու հարցերին անդրադարձ է կատարվել ինչպես 19-րդ դարի սկզբին Ղաջարական Իրանի և Ցարական Ռուսաստանի միջև տեղի ունեցած պատերազմների ավարտին ստորագրված Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերում, համաձայն որոնց՝ Իրանը զրկվեց Կասպից ծովում ռազմական ներկայություն ունենալու հնարավորությունից: 1921 և 1940 թթ. Իրանի և ԽՍՀՄ-ի միջև

ստորագրված պայմանագրերով Իրանի նկատմամբ սահմանված արգելքը վերացվեց:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո, երբ սկսվեց Եվրոպայի սահմանների վերանայման և ընդլայնման գործընթացը, Կասպից ծովի տարածաշրջանի ռազմավարական նշանակությունն էլ ավելի մեծացավ: Բացի այն հանգամանքից, որ խորհրդային ավելին հանրապետություններում դեռ պահպանվում էր ռուսական ազդեցությունը, միևնույն ժամանակ Կասպյան տարածաշրջանի հետխորհրդային նորանկախ հանրապետությունների հետ Միացյալ Նահանգների ու Թուրքիայի սերտ հարաբերությունների հաստատումն Իրանի համար լուրջ մարտահրավեր էր: Եթե մինչ այդ Իրանի համար թեև ոչ բարենպաստ պայմաններով, այդուհանդերձ, հաջողվել էր Խորհրդային Միության հետ Կասպից ծովի հարցում կայուն պայմանավորվածություն ձեռք բերել, ապա աշխարհաքառաքական նոր իրադրությունում Իրանի տարածաշրջանային քաղաքականության առաջնահերթությունները փոխվում էին: Ադրբեջանի աշխարհագրական դիրքով և Կասպից ծովում ունեցած էներգետիկ պաշարներով պայմանավորված այդ երկրի նկատմամբ Արևմուտքի և Թուրքիայի հետաքրքրությունն ու ռազմավարական շահերը սահմանափակում էին Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում Ադրբեջանին ինչ-որ լուծում պարտադրելու Իրանի հնարավորությունները:

Իրան-իրաքյան պատերազմից հետո Իրանը որդեգրել էր հարևանների հետ հարաբերությունները կարգավորելու քաղաքականություն: Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի (1989-1997) կառավարության առաջնահերթությունն էր տնտեսական փոխշահավետ համագործակցությամբ հարևանների միջև փոխկապակցվածություն ձևավորել: Սակայն, ԽՍՀՄ-ի լու-

ծարումից հետո Կասպից ծովի էներգառեսուրսների նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով գերտերությունների միջև մրցակցությունը սրվեց, որն Իրանի համար լրջագույն մարտահրավերներ էր առաջացնում:

Կասպից ծովի շուրջ իրադրությունը համեմատաբար կայունացավ 1994 թվականին, երբ Հայաստանի և Ադրբեջանի միջև անժամկետ զինադադար հաստատվելուց հետո գերտերություններին հաջողվեց տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն սահմանելու հարցում պայմանավորվել: 1994 թ. մայիսի 5-ին ստորագրվեց հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրությունը, իսկ նույն թ-ի սեպտեմբերի 20-ին՝ Ադրբեջանի և աշխարհի 7 երկրի նավթային 12 ընկերության միջև ստորագրվեց Ազերի-Չիրադ-Գյունեշլի նավթային դաշտի շահագործման «դարի պայմանագիրը» [20, *Մարջանյան 2013*, էջ 13]:

Հետխորհրդային շրջանում Իրանը, որպես երկիր, որը Կասպից ծովի, այսպես կոչված, 50 տոկոսի նկատմամբ վերահսկողություն էր ունեցել, տարատեսակ նախաձեռնություններով Ադրբեջանի հետ բանակցություններում փորձում էր ընդգծել ծովի վերահսկողության նկատմամբ իր ունեցած գերակա դիրքը: Իրանի կողմից Կասպից ծովն իրանական՝ «Մազանդարանի ծով» տարբերակով շրջանառության մեջ դնելն այդ փորձերից մեկն էր: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը 2002 թ. Թեհրան կատարած պաշտոնական այցի ընթացքում Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամիի (1997-2005) հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ իր դժգոհությունն էր հայտնել իրանական կողմի պաշտոնական հայտարարությունում Կասպից ծովն իրանական՝ Մազանդարանի ծով անվանելու փաստի առնչությամբ [20, *aliyeveritage.org 2002*]:

Հետխորհրդային շրջանում տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրությունում Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն սահմանելու գերտերությունների ձգտումն իր հերթին Իրանի շահերի տեսանկյունից ստեղծում էր անվտանգային խնդիրներ՝ ավելի բարդացնելով ծովի շուրջը ձևավորված անվտանգային միջավայրը:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի շուրջ քննարկումներ սկսելու և կողմերի դիրքորոշումները մոտեցնելու նպատակով մերձկասպյան երկրների արտաքին գործերի նախարարների առաջին նիստն անցկացվել է Իրանի նախաձեռնությամբ, Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության առաջին տարում՝ 1996 թ. Թեհրանում:

Իսկ երկրների ղեկավարների առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2002 թ.՝ Թուրքմենստանի նախագահ Սափարմուրատ Նիյազովի նախաձեռնությամբ՝ Աշգաբադում: Մինչ օրս տեղի է ունեցել մերձկասպյան երկրների ղեկավարների վեց հանդիպում: Երկրորդ հանդիպումը նախատեսվում էր անցկացնել 2004 թ.՝ Թեհրանում: Սակայն, Հեյդար Ալիևի, այնուհետև Սափարմուրատ Նիյազովի մահվանից հետո թեհրանյան համաժողովը հետաձգվեց, այն կայացավ 2007 թ.³²: Երրորդ հանդիպումը տեղի է ունեցել 2010 թ.՝ Բաքվում, չորրորդը՝ 2014 թ.՝ Աստանայում, իսկ հինգերորդը՝ 2018 թ.՝ Ակտաուում: Մերձկասպյան երկրների 6-րդ համաժողովը կայացել է 2022 թ.՝ Աշգաբադում:

³² ԽՍՀՄ-ի լուծարումից ի վեր առաջին անգամ էր, որ Ռուսաստանի նախագահն այցելում էր Իրանը: Վերջին անգամ Թեհրան Ստալինն էր այցելել՝ Թեհրան 43 համաժողովի ժամանակ:

Բաքվում նախատեսված մերձկասպյան երկրների ղեկավարների հանդիպմանն ընդառաջ 2009 թ. Թեհրանը Կասպից ծովի հարցում կոշտ դիրքորոշում էր որդեգրել և պնդում էր, որ ինչպես ջրային տարածքը, այնպես էլ ծովի հատակը պետք է հավասարաչափ բաժանվի, և յուրաքանչյուր երկիր պետք է ստանա 20 տոկոս մասնաբաժին: Ավելին՝ պաշտոնական Թեհրանի պնդմամբ՝ քանի դեռ Կասպից ծովի իրավական կարգավիճակի՝ մասնավորապես սահմանազատման հարցի շուրջ բոլոր կողմերի միջև վերջնական համաձայնություն չի ձեռք բերվել, ապա Իրանը թույլ չի տա, որ իրեն հասանելիք 20 տոկոս մասնաբաժնում որևէ երկիր նավթի արդյունահանման նպատակով հետախուզական աշխատանքներ իրականացնի [73, *Tasnim 2018*]: Մերձկասպյան որևէ երկիր, բնականաբար, չէր ընդունելու Իրանի առաջարկը: Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, թե մինչև ԽՍՀՄ-ի լուծարումը Կասպից ծովը բաժանված էր երկու հավասար մասի, այնինչ՝ իրականում այն համատեղ օգտագործմամբ գտնվում էր Խորհրդային Միության և Իրանի ընդհանուր վերահսկողության ներքո: Աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ մերձկասպյան երկրներից ամենաքիչ մասնաբաժինն ունի Իրանը՝ ընդամենը 657 կմ:

Ղազախստանը ծովի հետ ունի 1900 կմ, Թուրքմենստանը՝ 1768, Ռուսաստանը՝ 1355, իսկ Ադրբեջանը՝ 820 կմ ընդհանուր սահման: Ըստ Կասպից ծովից արդյունահանվող նավթի ծավալների ցուցանիշների՝ Ադրբեջանը զբաղեցնում է առաջին հորիզոնականը, այնուհետև շարքը լրացվում է հետևյալ հերթականությամբ՝ Ղազախստան, Թուրքմենստան, Ռուսաստան: Իրանցի փորձագետների պնդմամբ՝ Իրանը նավթի հետախուզման ոլորտում նշանակալի ներդրումներ է կատարել, սակայն, դեռ Կասպից ծովից նավթ չի արդյունահանել [118, *Mehr 2018*]:

Կասպից ծովի 20 տոկոս մասնաբաժնով բաժանելու Իրանի ներկայացրած պահանջներն ավելի էին բարդացնում ծովի իրավական կարգավիճակի շուրջ բանակցությունները: Թուրքմենստանի, Ռուսաստանի, Ղազախստանի մոտ ձևավորվել էր այն ընկալումը, որ 20 տոկոս մասնաբաժնի վերաբերյալ Իրանի պնդումների պատճառով բանակցությունները կարող էին մտնել փակուղի: Այդ տարիներին, այն մոտեցումը, որով Իրանն էր առաջնորդվում, մասնակից պետությունների համար անընդունելի էր:

1921 և 1940 թթ. պայմանագրերով Իրանն ու ԽՍՀՄ-ը Կասպից ծովում հավասար իրավունքներ են ունեցել, հետևաբար, ըստ այդ տրամաբանության՝ եթե բանակցություններում Իրանը բանակցի ոչ թե 50, այլ 20 տոկոս մասնաբաժնի շուրջ, ապա դա Իրանի համար կընկալվի որպես պարտություն: Ի դեպ, իրանական կողմի՝ «20 տոկոս մասնաբաժնի» մասին ձևակերպումը շրջանառության մեջ է դրվել 1996 թ. Թեհրանում տեղի ունեցած մերձկասպյան երկրների ԱԳ նախարարների առաջին հանդիպման ընթացքում: Հաշտմի Ռասֆանջանիին հաջորդած Իրանի երկու նախագահների՝ Մոհամմադ Խաթամիի և Մահմուդ Ահեդինեժադի կառավարման շրջաններում մեծ հաշվով 20 տոկոսի պահանջն անփոփոխ է մնացել [103, *tehrantimes.com 2010*]: Սակայն, ինչպես Հասան Ռոհանիի, այնպես էլ Էբրահիմ Ռայիսիի նախագահության շրջանում մերձկասպյան երկրների ղեկավարների և ԱԳ նախարարների հանդիպումների ընթացքում ծովի բաժանման տոկոսային հարաբերակցությանն անդրադարձ չի կատարվել: Իրանի այդպիսի կոշտ դիրքորոշում որդեգրելը կապված էր նաև երկրի ներքին օրենսդրության հետ, որն արգելում է ստորագրել այնպիսի պայմանագրեր, որոնք կարող են սպառնալ Իրանի ինքնիշխանությանը, տնտեսական կամ

քաղաքական անկախությանը: Սահմանադրության այդ դրույթն այսօր էլ է ուժի մեջ, սակայն, վերջին տարիներին Իրանը միջազգային պայմանագրեր ստորագրելիս փորձում է ավելի ճկուն գործել: Կառավարությունն արտաքին քաղաքական նպատակահարմարություններից ելնելով կարող է միջազգային որևէ պայմանագիր ստորագրել, սակայն, դրանք կամ խորհրդարանի կողմից չեն հաստատվում, կամ էլ հաստատվելուց հետո սահմանադրության պահանջով պետք է ուսումնասիրվեն Սահմանադրության պահպան խորհրդում: Եթե այդ կառույցը համարի, որ այն չի համապատասխանում ԻԻՀ սահմանադրությանը, ապա վերադարձվում է խորհրդարան՝ կրկնակի քննության:

Իրանը հետագա տարիներին աստիճանաբար օրակարգից հանեց 20 տոկոս մասնաբաժնի մասին պնդումը, փոխարենը, որպես առաջնահերթություն հայտարարվեց Կասպից ծովում ապառազմականացում թույլ չտալը: Իրանը գիտակցում էր, որ մյուս մասնակիցների սկզբունքային անհամաձայնությունների պարագայում հնարավոր չէր լինելու իրավական կարգավիճակի հարցում հասնել համաձայնության, հետևաբար Իրանի համար առաջնահերթություն համարվող ապառազմականացման խնդիրն աստիճանաբար սրվելու էր: Իրանը նաև հաշտվել էր այն իրողության հետ, որ մերձկասպյան առանձին երկրներ երկկողմ և եռակողմ ձևաչափերով սահմանային հարցերի շուրջ արդեն իսկ ձեռք են բերում համաձայնություններ: Առկա իրողության պայմաններում Իրանը, չկարողանալով լիարժեք արդյունահանել Կասպից ծովի գազն ու նավթը, մասնակցություն չունենալով էներգակիրների տարանցման ճանապարհների նկատմամբ վերահսկողությանը, աստիճանաբար նրա տնտեսական ներուժը թուլացավ և ինչ որ պահի Իրանի ծայնը ոչ միայն լսելի չեղավ, այլև մեծացավ հավանականությունը, որ կարող է այն-

պիսի իրադրություն ստեղծվել, որ խնդիրը լուծվի առանց Իրանի կարծիքը հաշվի առնելու:

2014 թ. սեպտեմբերի 29-ին Ռուսաստանի Աստրախան քաղաքում կայացած Կասպից ծովի երկրների նախագահների չորրորդ համաժողովի ընթացքում Իրանի նախագահ Հասան Ռոհանին (2013-2021) իր ելույթում նշել էր, որ ծովում կայունություն և անվտանգություն հաստատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ սկզբունքները.

- Հեռու մնալ սպառազինությունների մրցավազքից,
- արգելել օտար ռազմական ուժերի ներկայությունը,
- ձեռնպահ մնալ ռազմական ուժեր կիրառելուց,
- ձեռնպահ մնալ միակողմանի գործողություններ կատարելուց,
- նպաստել ազատ նավարկությանը,
- իրականացնել համակարգված գործողություններ [170, *President.ir 2018*]:

Վերլուծելով Իրանի նախագահի ելույթում հնչեցված կետերը՝ նկատելի է, որ Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունն արդեն արձանագրել էր այն միտումները, որոնք մեծացնում էին Կասպից ծովի ռազմականացման ռիսկերը:

Ինչպես Իրան-Ադրբեջան համագործակցության մյուս ոլորտներում, այնպես էլ Կասպից ծովի հարցում համագործակցության արդյունավետությունը կապված է աշխարհաքաղաքական տվյալ իրադրությունում էրկկողմ հարաբերությունների բնույթի հետ: Եթե գլոբալ, տարածաշրջանային և երկկողմ նշանակության գործոններով պայմանավորված հարաբերություններում առկա է լարվածություն, ապա տվյալ հարցը դիտարկվում է՝ ըստ ձևավորված փոխվստահության մթնոլորտի:

Օրինակ, եթե 2012 թ., երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունների հերթական լարված շրջափուլի ընթացքում Ադրբեջանն Իսրայելից ռազմաճովային նշանակության սպառազինություն էր ձեռք բերում, Կասպից ծովի հարցում կողմերի մոտեցումներն այդ տեսանկյունից էին արտահայտվում: Այդ շրջանի մամուլն ուսումնասիրելիս հրապարակումների մեծ մասը ծովի ռազմականացման ռիսկերի համատեքստում է ներկայացված:

Իրանի ռազմական հիմնական կարողությունները գտնվում են Պարսից ծոցում, սակայն, 2010-ական թվականներից սկսած, երբ գնալով մեծանում էր Իրանի վրա ռազմական հարձակման վտանգը, Իրանը սկսեց ավելացնել Կասպից ծովում զորավարժություններ անելու պարբերականությունը: Զորավարժությունների անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ադրբեջանը Իսրայելից այնպիսի զինատեսակներ էր ձեռք բերել, որոնք կարող էին կիրառվել միայն Կասպից ծովում՝ ամենայն հավանականությամբ Իրանի դեմ:

Այդ առնչությամբ 2010 թ. Իրանի պաշտպանության նախարար Ահմադ Վահիդին հայտարարում էր, որ Իրանի զինված ուժերն ամբողջությամբ վերահսկում են Կասպից ծովի իրանական հատվածը: Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավարն ընդգծել էր, որ Իրանը Կասպից ծովն ընդունում է որպես խաղաղության և համերաշխության ծով:

«Մենք դեմ ենք ծովում որևէ ռազմական սպառազինության փոխակայմանը: Դա Կասպից ծովի հետ կապված Իրանի քաղաքականությունն է: Բայց, ափսոս, որ առափնյա երկրները փորձաշրջանում խառնաշփոթ սփռեղծելու համար Կասպից ծովում ռազմական մասնակցության վերաբերյալ նախագծեր են ծրագրում: Նրանք կրակի հետ են խաղում: Մենք ամբողջությամբ վերահսկում ենք Կասպից ծովի իրանական հատվածի անվտանգությունը: Դա իրագործվում է Կասպից ծովի առափնյա երկրների հետ համաձայնեցված կերպով»,- ասել է Ա. Վահիդին:

Իսկ արդեն հինգ տարի անց Իրանի պաշտպանության նախարարն Ադրբեջանին նախազգուշացնում էր Ադրբեջանի տարածքից Իրանին սպառնացող վտանգների մասին:

2015 թ. Իրանի պաշտպանության և ԶՈՒ աջակցման նախարար Հոսեյն Դեհլանը Բաքու կատարած այցի ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպմանը, անդրադառնալով Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում Իրանի և Ադրբեջանի միջև առկա տարաձայնություններին, մասնավորապես նշել էր. *«Կասպից ծովը պետք է զերծ մնա սպառազինությունների մրցավազքից: Ծովի հետ կապված բոլոր խնդիրները պետք է բացառապես քննարկվեն մերձկասպյան երկրների կողմից, և առկա խնդիրները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով»:*

Ադրբեջանից Իրանի տարածք անցած իսրայելական ԱԹՍ-ի հարցով Դեհլանը հետևյալ մեկնաբանությունն էր արել. *«Իլհամ Ալիևի հետ անձամբ եմ խոսել: Մենք ադրբեջանական կողմին նախազգուշացրել ենք և հայտնել մեր մտահոգությունը, սակայն, Ադրբեջանի նախագահը դժվարությամբ էր ուզում դա ընդունել»* [154, Mashregnews 2015]:

2000-ական թվականների սկզբին տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում Իրանը ևս ներքաշվեց սպառազինությունների մրցավազքում:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Իրանի միջուկային հարցը ռազմական ճանապարհով լուծելու մասին Միացյալ Նահանգներից ու Իսրայելից հնչած հայտարարությունների ֆոնին Ադրբեջանն Իսրայելից ձեռք էր բերել նաև ռազմաճովային ուժե-

րի համար կիրառելի սպառազինություն, հնարավոր ռազմական հարձակմանը հակազդելու նպատակով 2012 թ. Իրանի բանակի ծովային ուժերի հրամանատարի տեղակալ, ծովակալ Աբբաս Ջամինին հայտարարել էր, որ Իրանը պատրաստվում է բանակի ռազմածովային ուժերի սուզանավերը տեղակայել Կասպից ծովում: Նկատենք, որ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի մարտունակ ստորաբաժանումները տեղակայված են Պարսից ծոցի ջրերում, Իրանն այնտեղ երեք միավոր գերծանր սուզանավ է տեղակայել [251, *Tabnak.ir* 2012]: Կասպից ծովում Իրանի ռազմական ներկայությունը Պարսից ծոցի հետ անհամեմատելի է: Բանակի ծովային ուժերը պաշտպանում են երկրի ջրային սահմանները Օմանի ծովում և Կասպից ծովում, իսկ Պարսից ծոցի պաշտպանությունն իրականացնում են ԻՀՊԿ ռազմածովային ուժերը:

Կասպից ծովում տեղակայված իրանական ստորաբաժանումները հիմնականում մասնակցում են մերձկասպյան երկրների կողմից պարբերաբար կազմակերպվող զորավարություններին: Վերջին տարիներին Իրանը մեծ ուշադրություն է դարձրել Կասպյան նավատորմին:

2013 թ. Կասպից ծովում տեղակայել է «Jamaran-2», իսկ 2017 թ. «Separ» ռազմանավերը [107, *yjc.ir* 2016]: Կասպից ծովի հարավային հատվածում Իրանի զինված ուժերը երեք ռազմակայան ունեն, որոնց հրամանատարական շտաբը գտնվում է Էնգելի նավահանգստում:

Իրանը Կասպից ծով նավ իջեցրել է 1989 թ.: Իրանի և ԽՍՀՄ-ի միջև ստորագրված պայմանագրում նավարկության համար սահմանված կարգավորումներից գործնականում օգտվել է միայն ԽՍՀՄ-ը: Ինչ վերաբերում է ձկնորսությանը՝ ապա դրա համար սահմանված տարածքը որոշվել է ըստ ափա-

մերձ տարածքների երկարության. այսինքն՝ ԽՍՀՄ-ը ձկնորսության համար նախատեսված 7 անգամ ավելի մեծ տարածք է ունեցել, քան Իրանը:

Ադրբեջանը մերձկասպյան երկրներից թերևս միակն է, որը 2010 թ. ռազմական դոկտրինն ընդունելուց հետո նպատակաուղղված շեշտակի ավելացրել է ռազմական բյուջեն: Անցնող տարիների ընթացքում Ադրբեջանն արտատարածաշրջանային երկրների հետ համագործակցությամբ նպաստել է Կասպից ծովի ռազմականացմանը: Իրանում Ադրբեջանի հնարավոր գործողությունների վերաբերյալ մշակված սցենարներից մեկում դիտարկվում է Ադրբեջանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հնարավորությունը [171, *Simbar* 2020, p. 79]: 2020 թ. տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո Թուրքիայի հետ համատեղ զորավարությունների անցկացումն աննախադեպ իրողություն էր: Թերևս առաջին անգամն էր, որ ՆԱՏՕ-ի անդամ երկիրը Կասպից ծովում զորավարություն էր անցկացնում:

Իրանի և Ադրբեջանի լարված հարաբերությունների հերթական շրջափուլում, երբ կողմերը լուրջ տարածայնություններ ունեին պատմական, մշակութային և կրոնական հարցերի շուրջ, 2011 թ. Իրանը հայտարարեց, որ Կասպից ծովում գազի նոր հանքավայր է հայտնաբերել, որտեղից նախատեսվում է ավելի հանքավայր է հայտնաբերել, որտեղից նախատեսվում է ավելի քան 50 տրիլիոն խորանարդ ֆուտ գազ արդյունահանել: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը (2009-2015) այդ ժամանակ հայտարարում էր, որ գազի նոր հանքավայրն Իրանի աշխարհաքաղաքական դերն էականորեն կմեծացնի և կփոխի տարածաշրջանի քաղաքական և էներգետիկ հավասարակշռությունը:

Իրանի նավթի նախարար Ռոսթամ Ղասեմին պնդել էր, որ նոր հայտնաբերված գազի հանքավայրի գազի պաշարն Ադրբե-

ջանի Շահ Դենիզ հանքավայրի գազի պաշարներից տասն անգամ մեծ է [103, *Radiofarda.com* 2023]: Իրանը հայտարարում էր, որ Կասպից ծովում հայտնաբերված գազի նոր հանքավայրը գտնվում է Իրանի տիրապետության տակ գտնվող ջրերում և Ադրբեջանի Հանրապետությունը ոչ մի մասնաբաժին չունի դրանից: Ադրբեջանը, շահարկելով ծովի իրավական կարգավիճակի դեռևս լուծված չլինելու հանգամանքը, պնդում էր, թե Իրանի կողմից հայտնաբերված և շահագործման փուլում գտնվող «Սարդար Զանգյալ» նավթահանքը ոչ թե պատկանում է Իրանին, այլ գտնվում է Ադրբեջանին ու Թուրքմենստանին հարող ընդհանուր ջրերի տիրույթում:

Կասպից ծովում Ադրբեջանի նավթի հաստատված պաշարները կազմում են 8.5 միլիարդ բարել, իսկ Իրանինը՝ 0,5: Ադրբեջանի գազի պաշարները կազմում են 58 տրիլիոն խմ ֆուտ, իսկ Իրանինը՝ 2:

Բացի իրավական կարգավիճակի ու հանքավայրերի շուրջ տարածայնություններից, Իրանն Ադրբեջանին մեղադրում է նաև Կասպից ծովի էկոհամակարգը վնասելու մեջ: Իրանի Շրջակա միջավայրի պահպանության կազմակերպության նախագահ Մոհամմադ Զավադ Մոհամմադզադեն նշել էր, որ ամենաշատն Ադրբեջանն է նավթի արդյունահանման հետևանքով աղտոտում Կասպից ծովն ու անուշադրության մատնում շրջակա միջավայրի պահպանության խնդիրները: ԻԻՀ Շրջակա միջավայրի պահպանության կազմակերպության փոխնախագահ Աբդուլեզա Բարբասին նշել է, որ Կասպից ծովի առափնյա Գիլան նահանգի արևելյան հատվածում մասնագետների կողմից կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ Ադրբեջանին պատկանող նավթային աշտարակներից նավթի մացորդներ են հայտնվել ծովում, որոնք վտանգում են Կասպից ծովի էկոհամա-

կարգը: Ըստ մասնագետի՝ նավթային մացորդների հետևանքով ջրի թթվածնային պաշարները կարող են խիստ նվազել, որն էլ կհանգեցնի Կասպից ծովի կենդանական աշխարհի ոչնչացմանը: Իրանցի մասնագետների պնդմամբ՝ Ադրբեջանը պետք է հատուցի ծովի էկոհամակարգին հասցրած վնասները:

2015 թ. միջուկային համաձայնության ստորագրումից հետո տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական բարենպաստ իրադրության պայմաններում Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում տևական լարված շրջափուլին հաջորդեց ռազմավարական ոլորտներում համագործակցությունը: Որքան էլ հակասական կարող է թվալ, սակայն, երկու կողմերի համար սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի շուրջ լուրջ տարածայնությունների պայմաններում, աշխարհաքաղաքական հարաբերական հանդարտ իրադրության պայմաններում հաջողվում է կարճ ժամանակում փոխշահավետ համագործակցություն ծավալել: Այդ համագործակցությունը հատկապես դրսևորվում է էներգետիկայի և տարանցման ոլորտներում: Էներգետիկայի ոլորտում ձեռք բերված համաձայնություններից մեկը վերաբերում է Խոդաֆարանի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների կառուցմանը:

Իրանի և Ադրբեջանի միջև Խոդաֆարանի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների և հէկերի կառուցման շուրջ առարկայական բանակցությունները տեղի են ունեցել 2014 թ. նոյեմբերի 13-ին ԻԻՀ նախագահ Հ. Ռոհանիի՝ Ադրբեջան կատարած այցի ընթացքում, որի ավարտին Ադրբեջանի և Իրանի միջև համագործակցության և բարեկամության մասին տարածված համատեղ հայտարարության տեքստում հետևյալ կետն է առանձնացվել. «Կողմերը պայմանավորվեցին էներգետիկայի ոլորտում փոխշահավետ և իրավահավասար համագործակցություն ծավալելու

ուղղությամբ ջանքեր գործադրել: Այդ առումով կողմերը պայմանավորվեցին Իրանի և Ադրբեջանի կառավարությունների միջև Խոդաֆարինի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների և հէկերի կառուցման մասին համաձայնագրի նախագիծը հնարավորինս շուտ ստորագրելու շուրջ» [210, President.ir 2014]:

Համաձայնագիրը ստորագրվել է 2016 թ. փետրվարի 23-ին Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի՝ Թեհրան կատարած պաշտոնական այցի ընթացքում, սակայն, Իրանի նախագահի պաշտոնական կայքը ստորագրված փաստաթղթերի [233, Report.az 2016] վերաբերյալ հաղորդագրության մեջ Խոդաֆարինի վերաբերյալ չէր նշել:

Իրանի Սահմանադրության պահապան խորհուրդը սույն համաձայնագիրը վավերացնելու օրինագծին հավանություն է տվել 2016 թ. դեկտեմբերի 28-ին, իսկ ԻԻՀ խորհրդարանը 2017 թ. հունվարի 3-ին [17, Dotic.ir 2016] ընդունել է «Իրանի և Ադրբեջանի միջև Խոդաֆարինի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների և հէկերի կառուցումը շարունակելու, շահագործելու, ինչպես նաև դրանց ջրային և էներգետիկ ռեսուրսներն օգտագործելու գործում համագործակցության մասին համաձայնագիրը» վավերացնելու մասին օրենքը, որում նշվում են հետևյալ դրույթները՝

- Կողմերը, ընդգծելով և հարգելով երկու երկրների ինքնիշխանությունը, ՄԱԿ-ի բանաձևերի համաձայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը, Արաքս գետի երկու կողմերում ջրամբարների և հէկերի կառուցման նպատակով համատեղ գործունեություն են ծավալելու,
- իրանական կողմն ըստ համաձայնագրի՝ շարունակելու է ջրամբարի և հէկերի կառուցման աշխատանքները,

- շահագործումը, պահպանումը, ինչպես նաև ջրամբարների և հէկերի էներգետիկ ռեսուրսների օգտագործումն իրականացվելու է ըստ համաձայնագրի՝ կողմերի իրավազրույթային ներքո,
- համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարման նպատակով ստեղծվելու է համատեղ տեխնիկական հանձնաժողով,
- ջրամբարների և հէկերի շահագործումը սկսելուց հետո, քանի դեռ Ադրբեջանի մասնակցությունը շահագործման գործընթացին անհնար կլինի, այն չափաբաժնով, որքան որ Իրանը ջուր կվերցնի Ղիզ-Ղալասիից, այդ քանակով ջուր էլ Ադրբեջանը կվերցնի «Միլ Մուղան» և «Բահրամ թեփե» ջրամբարներից,
- Խոդաֆարինի և Ղիզ-Ղալասիի հէկերում արտադրված էլեկտրաէներգիան պատկանում է Ադրբեջանին, սակայն, մինչև ՄԱԿ-ի բանաձևերի համաձայն ԱՀ տարածքային ամբողջականության վերականգնումը՝ այն փոխադարձ համաձայնությամբ կօգտագործվի Իրանի Իսլամական Հանրապետության իրավազրույթային ներքո,
- Ադրբեջանը նշված հէկերում արտադրված էլեկտրաէներգիան տարանցելու իրավունք ունի,
- յուրաքանչյուր տարվա ավարտին համատեղ տեխնիկական հանձնաժողովը կհաշվարկի Ադրբեջանի հասանելի էլեկտրաէներգիայի չափը,
- ներկայիս պայմաններում, քանի դեռ ՄԱԿ-ի բանաձևերի համաձայն Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը չի վերականգնվել, Իրանի Իսլամական Հանրապետությունը պատասխանատվություն է ստանձնում՝ ապահովելու ադրբեջանցի մասնագետների վերահսկո-

իսկ 1.5 կմ-ը՝ Իրանի տարածքում: 2018 թ-ի մարտին տեղի է ունեցել երկաթգծի բացման պաշտոնական արարողությունը: 2019 թ. մարտին գործարկվել է Ղազվին-Ռաշտ հատվածը: Այս պահին անավարտ է մնացել Ռաշտ-Աստարա 170 կմ հատվածը, որի շինարարության համար Ադրբեջանը պարտավորվել էր 500 մլն դոլարի վարկ տրամադրել, սակայն, չի տրամադրել: 2021 թ-ի սկզբին կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Աստարաչայ գետի վրա կառուցվում է 2-րդ կամուրջ, որը Բաքվից սկիզբ առնող մայրուղին կապելու է Իրանի Արդաբիլ նահանգին:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի, հատկապես հատակի բաժանման հարցում կողմերի տարաձայնություններն ավելի քան 20 տարի թույլ չէին տալիս հասնել բոլորի համար ընդունելի համաձայնության: 2018 թ. օգոստոսի 12-ին Ղազախստանի Ակտաու քաղաքում Իրանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան ավելի շատ հասցեագրում էր անվտանգության հետ կապված մերձկասպյան երկրների մտահոգությունները, քան կարգավորում՝ իրավական կարգավիճակի շուրջ առկա տարաձայնությունները:

Հատկապես Իրանի և Ռուսաստանի կողմից կոնվենցիան ստորագրելու շարժառիթը կապված էր ԱՄՆ-ում ձևավորված նոր վարչակազմի որդեգրած արտաքին քաղաքականության³⁴ ազդեցությամբ տարածաշրջանում ձևավորված անվտանգության միջավայրով:

³⁴ 2018 թ. մայիսին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ընտրվելուց հետո միակողմանի դուրս եկավ 2015-ին Իրանի և «5+1 խմբի» միջև ստորագրված միջուկային համաձայնությունից:

Բացի Կասպից ծովի իրավական կարգավիճակին և սահմանազատմանն առնչվող խնդիրներից (*դրանցից բխող նաև ծովի էներգառեսուրսներից օգտվելու հետ խնդիրներ*)՝ անվտանգության և բնապահպանական հարցերի շուրջ ևս մերձկասպյան երկրների միջև առկա են լուրջ տարաձայնություններ: Մասնավորապես Իրանը և Ռուսաստանը մշտապես պայքարել են, որպեսզի բացառեն Կասպից ծովում երրորդ ուժի ռազմական ներկայությունը: 2018 թ. Կոնվենցիան ստորագրելիս Իրանն առաջնահերթությունը տալիս էր անվտանգության գործոնին: Իրանի ԱԳՆ Միջազգային հարաբերությունների և քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ Սեյյեդ Ռասուլ Մուսավին այդ ժամանակ համոզմունք էր հայտնել, որ կոնվենցիայի ստորագրմամբ Ռուսաստանն ապահովելու է ծովի հյուսիսային հատվածի անվտանգությունը, իսկ Իրանը՝ հարավային [129, Mousavi 2018]:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան բաղկացած է 24 կետից: Ըստ Իրանի նախագահի պաշտոնական կայքում հրապարակած տարբերակի՝ կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել համագործակցել անվտանգության, նավթի և գազի տարանցման ուղղությունների կանոնակարգման, շրջակա միջավայրի պահպանության, արտակարգ իրավիճակների, ձկնորսության ոլորտներում, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու գործում, թմրանյութերի և տրաֆիքինգի դեմ պայքարում, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում:

Ակտաուի հանդիպումից հետո կոնվենցիան ստորագրած երկրներից ու միջազգային կառույցներից տարատեսակ մեկնաբանություններ էին հնչում: Հիմնական հարցն այն էր, հաջողվե՞ց մեկ տասնամյակից ավելի տևած բանակցություններից հետո

կարևորագույն խնդրի՝ Կասպից ծովի սահմանազատման շուրջ հասնել համաձայնության: Կոնվենցիան իրավական կարգավիճակի, թե՛ սահմանազատման մասին էր: Երկրները կարող էին այսուհետ արդյունահանել նախկինում վիճելի համարվող տեղանքներում գտնվող նավթի և գազի հանքավայրերը:

Ինչպես նշված է կոնվենցիայում, սահմանազատման հարցի շուրջ մերձկասպյան երկրները պետք է առանձին բանակցություններ վարեն, այսինքն՝ ստորագրված կոնվենցիան չի կարգավորում սահմանազատման հարցերը, որի շուրջ ամենաշատ տարածայնություններն ունեն կողմերը:

Քանի որ նախկինում Իրանը պնդում էր, որ ծովը պետք է բաժանվի հինգ հավասար մասի, սակայն, Ակտաուում առանց Իրանի նվազագույն պահանջների բավարարմանը, ստորագրվել է իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան, Իրանի քաղաքական շատ ուժեր կոնվենցիայի ստորագրումը համարում էին Իրանի ինքնիշխանությունը թուլացնող քայլ: Իրանի ներքին օրենսդրությամբ արգելվում է ստորագրել միջազգային պայմանագիր, որը կվտանգի Իրանի պետական շահերը: Այնինչ, ինչպես վկայում են կոնվենցիայի դրույթները և դրանց վերաբերյալ Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների մեկնաբանությունները, կոնվենցիան սահմանազատման հետ կապված խնդիրները չի լուծում:

Կոնվենցիայի հրապարակումից անմիջապես հետո Իրանի ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆը (2013-2021) մերձկասպյան երկրների իր գործընկերներին հղած նամակում, հղում անելով 1921 և 1940 թթ. ստորագրված պայմանագրերին, մեջբերել է կոնվենցիայում առկա այն դրույթները, որոնք նախատեսում են սահմանազատման հարցում առանձին բանակցությունների անցկացում:

Կոնվենցիայի ստորագրմանը դեմ արտահայտվող իրանցի քաղաքական գործիչները, փորձագետներն իրենց տեսակետները հիմնավորելիս հղում էին կատարում 1921 թ. Իրանի և Ռուսաստանի և 1940 թ. Իրանի և ԽՍՀՄ-ի միջև ստորագրված պայմանագրերին՝ համոզմունք հայտնելով, թե վերոնշյալ պայմանագրերում Իրանն ու ԽՍՀՄ-ն ունեցել են հավասար իրավունքներ, և նրանց համոզմամբ՝ այդ կոնվենցիայով Իրանը զրկվում է իր պատմական իրավունքներից:

Կասպից ծովի իրավական կարգավիճակին անդրադառնալիս գրեթե բոլոր փորձագետները նշում են, թե 1921 թ. և 1940 թ. պայմանագրերի համաձայն՝ Կասպից ծովը բաժանվել է հավասար մասի: Քանի որ նոր ստորագրված կոնվենցիան ծովի իրավական կարգավիճակին և սահմանազատմանն առնչվող հարցերի լուծման ուղղությամբ առանձին բանակցությունների անցկացում է նախատեսում, ԻԻՀ ԱԳՆ-ն Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշման վերաբերյալ սպասվող բանակցություններին ընդառաջ Իրանի հասարակական-քաղաքական շրջանների մոտ առկա մտահոգությունները փարատելու և նոր քննադատություններից խուսափելու նպատակով հավելյալ պարզաբանում էր ներկայացրել, ըստ որի՝ ԻԻՀ ԱԳՆ 1921 և 1940 թվականների պայմանագրերը ծովը հավասար բաժանելու որևէ իրավական կարգավորում չեն տվել, ավելին, պայմանագրի մի շարք կետերում ձևակերպումները տրված են հօգուտ ԽՍՀՄ-ի [143, *Ir diplomacy.ir* 2018]:

Իրանի արտաքին գործերի նախարարության պարզաբանման համաձայն՝ 1940 թ. պայմանագրում հավասար իրավունքների մասին ձևակերպումները վերաբերել են առևտրային հարաբերություններին, ոչ թե սահմանային խնդիրներին: Ինչ վերաբերում է նավագնացությանը, ապա այնպիսի տպավորություն

կարող է ստեղծվել, որ Իրանն այդ հարցում առավելություն է ստացել, սակայն, պայմանագիրը ստորագրելու ժամանակ Իրանը Կասպից ծովում նավ ընդհանրապես չուներ, այնտեղ միայն Խորհրդային նավերն էին նավարկում:

Վերլուծելով իրանցի պաշտոնյաների ակնարկներն ու իրանցի փորձագետների գնահատականները՝ Իրանը Կասպից ծովի իրավական կարգավիճակի շուրջ կոնվենցիան ստորագրելու նպատակով տեղի ունեցած բանակցություններին մասնակցել է այն նպատակադրությամբ, որ դեռևս տևական ժամանակ ձեռնպահ է մնալու այն վավերացնելուց: Իրանի ԱԳ նախարարի՝ Ասիայի և ԱՊՀ երկրների հարցերով նախկին տեղակալ Էբրահիմ Ռահիմ Փուրը, որը մշտապես ներգրավված է եղել Կասպից ծովի շուրջ տեղի ունեցած բանակցություններում, Կոնվենցիայի ստորագրումից հետո իրանական «Khorasan» օրաթերթին տված հարցազրույցում, անդրադառնալով Կասպից ծովի հատակի սահմանազատման հարցին, ուշագրավ մեկնաբանություն է տվել՝ նշելով, թե՛ «Այդ հարցի շուրջ բանակցությունները գուցե 50 տարի տևեն, և երբեք էլ կողմերը չկարողանան հասնել վերջնական համաձայնության» [119, Khorasan 2018, p. 2]:

Այդ համատեքստում Իրանի փորձագիտական շրջանակների մոտ շրջանառվում է այն թեզը, որ Իրանը պետք է այնպիսի քաղաքականություն վարի, ըստ որի՝ ծովի սահմանազատման հարցի վերջնական լուծումը հնարավորինս երկարաձգի: Սակայն այլ է Իրանի պաշտոնական տեսակետը, ըստ որի՝ քանի որ մերձկասպյան 4 երկրները պահանջում են, որ յուրաքանչյուր կողմի մասնաբաժինը հստակեցվի, ապա Իրանը չի կարող այդ պահանջը չընդունել: Ավելին՝ ըստ ԻԻՀ ԱԳ նախարարության՝ 1921 թ. պայմանագրի ստորագրման ժամանակ ԽՍՀՄ-ը դեռ պաշտոնապես չէր ձևավորվել: Ադրբեջանը և Թուրքմենստանը

համապատասխանաբար մեկ և երկու տարի անց միացան Խորհրդային Միությանը, հետևաբար, ինչպես վերը նշվել էր, այդ պայմանագիրը ստորագրվել էր Իրանի և Ռուսաստանի միջև: Ըստ իրանական կողմի՝ Ռուսաստանը ևս կարող է խոսել 50 տոկոս մասնաբաժնի մասին, սակայն դրա մասին չի բարձրաձայնել և չի բարձրաձայնում, ավելին, ռուսական կողմի համար 19 տոկոսից էլ պակաս մասնաբաժինն ընդունելի է: Այդ առնչությամբ ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին կոնվենցիայի ստորագրումից հետո կառավարության հերթական նիստերից մեկի ընթացքում, անդրադառնալով Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշմանը, նշել է. «Մերձկասպյան երկրների մի մասը կարգավիճակի հարցում համաձայնության է եկել, Ռուսաստանը, որը ժամանակին Կասպից ծովի մեծ մասը համարում էր իրենը, այսօր բավարարվում է 17 տոկոս մասնաբաժնով»: Ինչ էր իրենը, Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև ավերաբերում է Իրանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև առկա տարաձայնություններին, ապա Հասան Ռոհանին նշել է, որ, թեև որոշ հարցերի շուրջ Թեհրանն ու Բաքուն համաձայնության են եկել, սակայն մի շարք հարցեր դեռ չեն ստացել իրենց պատասխանները [167, Shahrvand 2018, p. 3]:

Իրանցի վերլուծաբան, Ռասաթերսի համալսարանի դասախոս Հուշանգ Ամիր Ահմադիի կարծիքով՝ Մոսկվայի պայմանագրի համաձայն՝ Կասպից ծովը ոչ թե բաժանվել է երկու մասի, այլ պարզապես Իրանը և Խորհրդային Միությունը իրավունք ունեին ծովն օգտագործելու նավարկության (ըստ՝ առևտրական և ռազմական նշանակության) և ձկնորսության նպատակով: Սկզբնական շրջանում ծովի հատակի բաժանման հարց դրված չի եղել: 1929 թ., երբ Ադրբեջանի հատվածում նավթ հայտնաբերվեց, Կասպից ծովի նշանակությունն էլ ավելի մեծացավ [169, ILNA 2018]:

Իրանի ԱԳՆ Կասպից ծովի հարցերով քարտուղարության ղեկավար Մաջիդ Սաբերիի գնահատմամբ էլ՝ կոնվենցիան ծովի հատակի և մակերևույթի բաժանման որևէ մեթոդ և չափորոշիչ չի նախատեսում: Ավելին, ըստ նրա՝ մերձկասպյան երկրներից մի քանիսը, այդ թվում՝ Ադրբեջանը, ծովի բաժանման տարբերակներ է առաջարկել, սակայն, Իրանը դրանց բոլորին դեմ է արտահայտվել՝ այդ հարցի քննարկումը թողնելով ապագային: Այսպիսով ինչպես Իրանը, այնպես էլ Ռուսաստանը, Կասպից ծովի որևէ հատվածի նկատմամբ պատկանելիության իրավունքով օժտված չի եղել, 1940 թ. պայմանագրով վերականգնվել է ծովում Իրանի նավարկություն իրականացնելու իրավունքը, որը խախտվել էր Թուրքմենստանի պայմանագրով, այնուհետև Կասպից ծովը հայտարարվել է որպես «ԽՍՀՄ-ի և Իրանի միջև ընդհանուր ծով» [85, INSA 2018]:

Ինչ վերաբերում է քարտեզներին, ապա ըստ Իրանի արտաքին քաղաքական գերատեսչության՝ ինչպես Փահլավիների կառավարման տարիներին, այնպես էլ Իսլամական հեղափոխությունից հետո տպագրվել են քարտեզներ, որտեղ Կասպից ծովի հիսուն տոկոսը պատկերված է եղել Իրանի տարածքում, սակայն, դա որևէ իրավական հիմք չի տալիս ներկա բանակցություններում խոսել 50 տոկոս մասնաբաժնի մասին: «Նույն հաջողությամբ իրանական քարտեզներում Իրանը պատկերելիս Պարսից ծոցը ևս ներկայացվում է որպես իրանական տարածք, սակայն, դա չի նշանակում, թե ողջ ծոցը պատկանում է Իրանին», - նշվել է ԻԻՀ ԱԳՆ պարզաբանման մեջ:

Իրանը, երբ ստորագրում էր 2018 թ. Ակտաուի համաձայնագիրը, հավանաբար, չէր էլ կանխատեսում, որ Կասպից ծովում կարևոր դերակատարում ունեցող Ռուսաստանը ոչ միայն հաշտվելու է Հարավային Կովկասում Թուրքիայի ներկայության հետ,

այլև չի կարողանալու, կամ չի ցանկանալու կանխել Կասպից ծովում Թուրքիայի և Ադրբեջանի համատեղ զորավարժության անցկացումը: Այդ իրողությունն Իրանն ընկալում է որպես ՆԱՏՕ-ի ներկայություն Կասպից ծովում:

2020 թ. Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմից հետո Կասպից ծովի դերը զգալիորեն մեծացավ: Պատերազմից հետո, տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությամբ պայմանավորված, ինչպես տարածաշրջանի առաջատար պետությունները, այնպես էլ գերտերությունները մրցակցում են Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների, տարանցման հնարավորությունների նկատմամբ վերահսկություն ունենալու համար, և որպեսզի հնարավոր լինի դրանք իրականացնել, ապա անհրաժեշտ է վերջնականապես լուծել ծովի իրավական կարգավիճակի հարցը:

Պատահական չէ, որ 44-օրյա պատերազմի ավարտից ընդամենը երեք ամիս անց՝ 2021 թ. փետրվարին, Ադրբեջանն ու Թուրքմենստանը Կասպից ծովի «Սարդար Քափազ» նավթահանքի համատեղ շահագործման վերաբերյալ համաձայնագիր ստորագրեցին [303, Turkmenportal.com 2021]: Հետպատերազմական իրողությունը նման էր 1990-ական թվականների սկզբին տեղի ունեցած գործընթացների հետ, երբ գերտերությունները մրցակցում էին էներգակիրների տարանցման երթուղիների նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար: Հետպատերազմական շրջափուլում ինչպես Թուրքիան, այնպես էլ Ռուսաստանը, առաջնորդվելով նույն տրամաբանությամբ, փորձում էին մասնակցություն ունենալ Թուրքմենստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցությանը:

2020 թ. պատերազմից հետո Ռուսաստանն Իրանին մի քանի անգամ ակնարկել է, որ կոնվենցիան անհրաժեշտ է վավե-

րացնել [284, *Ria.ru* 2021]: Ռուսաստանն առաջին անգամ այդ հարցը բարձրացրել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի՝ 2021 թ. ապրիլին Իրան կատարած այցից առաջ: Կոնվենցիան ստորագրելիս Իրանն առաջնորդվել է այն սկզբունքով, որ խնդրահարույց հարցերը, մասնավորապես տարածքային ջրերի ելակետային գիծը որոշելու, ինչպես նաև ծովի հատակի և ընդերքի սահմանազատման ու սահմանագծման աշխատանքները միաժամանակ պետք է առկախվեն, և որքան հնարավոր է՝ պետք է վավերացնելու գործընթացը հետաձգել: Կարծես թե այդ հարցում Իրանն ու Ռուսաստանը ներքին պայմանավորվածություն են ունեցել:

Մոսկվայի կողմից Իրանին կոնվենցիան վավերացնելու պահանջ ներկայացնելուց հետո Իրանում հարցը կրկին սկսվեց ակտիվ քննարկվել: Իրանի պաշտոնական դիրքորոշումն [253, *ISNA* 2018] այն է, որ չնայած գերիշխող կարծիքի, կոնվենցիան ծովի հատակի և ընդերքի բաժանման հետ կապված խնդիրները չի լուծում: Թեհրանի պնդմամբ՝ միայն ելակետային գծի որոշումից հետո հնարավոր կլինի առարկայական բանակցություններ սկսել ծովի հատակի և ընդերքի սահմանազատման և սահմանագծման շուրջ:

Մինչ Իրանը փորձում էր գնահատել կոնվենցիան վավերացնելու հարցով Իրանին ներկայացված Ռուսաստանի պահանջներից բխող ռիսկերը, Ադրբեջանն ու Թուրքիան Իրանին նոր մարտահրավերի առջև կանգնեցրին: 2021 թ. հոկտեմբերին երկու երկրները Կասպից ծովում համատեղ զորավարություն էին անցկացրել, ինչն Ադրբեջանի կողմից, այսպես կոչված, «Ձանգեզուրի միջանցքը» բացելու հարցում Իրանի վրա ճնշում գործադրելու միջոցներից էր: Ինչպես վերը նշվեց, Իրանը Թուրքիայի ներկայությունը Կասպից ծովում ընկալում էր որպես

ՆԱՏՕ-ի ներկայություն՝ Կասպից ծովի տարածաշրջանում: Այդ տրամաբանությամբ է, որ «Ձանգեզուրի միջանցքն» Իրանում անվանում են «ՆԱՏՕ-ի թուրանական միջանցք»: Ակնհայտ էր, որ Ադրբեջանն ու Թուրքիան իրենց գործողություններով Կասպից ծովն ու հարակից շրջանները ռազմականացնելուն միտված գործողություններ էին իրականացնում: Միայն 2021 թ. երկու երկրները համատեղ 8 զորավարություն էին անցկացրել, որին մասնակցել էր նաև Պակիստանը:

Տարիներ շարունակ Մերձկասպյան երկրների նախագահների և ԱԳ նախարարների հանդիպումների ժամանակ մշտապես ընդգծվել է այն հանգամանքը, որ Կասպից ծովը խաղաղության և համագործակցության ծով է: Սակայն, Կասպից ծովում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից համատեղ զորավարության անցկացումը [262, *Mod.gov.az* 2022] աշխարհաքաղաքական իրադրության փոփոխության վկայություն էր, որը խախտեց մինչ այդ ձեռք բերված համատեղ պայմանավորվածությունները, որոնք ամրագրված էին նաև Ակտաուի հռչակագրում:

Իրանի ԱԳՆ մամուլի քարտուղար Սայիդ Խաթիբզադեն, անդրադառնալով Կասպից ծովում Ադրբեջանի և Թուրքիայի անցկացրած համատեղ զորավարությանը, նշել էր. «2018 թ. ստորագրված Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան հստակ նշում է, որ, բացի մերձկասպյան 5 երկրների զորամիավորումներից, այլ երկրի ռազմական ներկայությունը Կասպից ծովում անօրինական է: Իրանի արտաքին քաղաքական գերատեսչությունում թուրք-ադրբեջանական զորավարության վերաբերյալ քննարկումներ են ընթանում»:

2022 թ. հունվարի 2-ին Իրանի Բնապահպանական կազմակերպության ղեկավարի տեղակալ Ահմադոեզա Լահիջանզադեն հայտարարել էր, որ Կասպից ծովում Ադրբեջանի իրականաց-

րած նավթի արդյունահանումը բնապահպանական լուրջ խնդիրներ է առաջացնում Կասպից ծովի էկոհամակարգի համար: Հունվարի 2-ին իրանական «IRNA» լրատվական գործակալությունը տեղեկատվություն էր հրապարակել, որում նշվում էր, որ իրանական բնապահպանական կազմակերպությունները դիմել են ԱԳ նախարարությանը՝ պահանջելով պարզել Կասպյան փոկերի ոչ սովորական անկումների պատճառը: Իրանական աղբյուրի համաձայն՝ անկումներն արձանագրվել են Կասպից ծովում Ադրբեջանի անցկացրած զորավարժությունից հետո:

2022 թ. հունիսի 28-ին Թուրքմենստանի մայրաքաղաք Աշգաբադում տեղի ունեցավ մերձկասպյան երկրների ԱԳ նախարարների, իսկ հաջորդ օրը՝ նախագահների 6-րդ հանդիպումը³⁵: Մերձկասպյան երկրների ղեկավարների 6-րդ հանդիպումն առանձնահատուկ էր մի քանի տեսանկյունից: Այն տեղի էր ունենում 2018 թ. ստորագրված Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայի ստորագրումից, 2020 թ. տեղի ունեցած 44-օրյա պատերազմից ու Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ պատերազմ սկսելուց հետո: Մինչ հանդիպումը Իրանի և Ադրբեջանի միջև Կասպից ծովի ածխաջրածինների հանքավայրերի ընդլայնման հարցում համագործակցելու և «Հյուսիս-հարավ» միջանցքի գործարկմանը խոչընդոտող հանգամանքների գնահատման շուրջ առարկայական քննարկումներ էին տեղի ունեցել: 2021 թ-ի նոյեմբերի 21-ին Ադրբեջանի փոխվարչապետ, Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆանն այցելել էր Իրան:

Մուստաֆանի և Իրանի նավթի նախարարի միջև կայացած հանդիպման ժամանակ Իրանի տարածքով Նախիջևան գազ տեղափոխելու, ինչպես նաև Կասպից ծովի նավթի հանքավայրերի շուրջ քննարկումներ էին տեղի ունեցել:

Մերձկասպյան երկրների ԱԳ նախարարների և նախագահների 6-րդ նիստի ավարտին բանակցությունների արդյունքներով համատեղ հայտարարություն էր հրապարակվել:

Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանն իր ելույթում հետևյալ շեշտադրումներն էր կատարել.

- Կասպից ծովի հատակի, ինչպես նաև ընդերքի սահմանագատման հարցը դեռևս չի լուծվել, ծովի ափագիծը որոշելու նպատակով ձևավորված աշխատանքային խմբի նպատակը համաձայնագրի նախագծի պատրաստումն է, եթե ծովի ափագծերի շուրջ պայմանավորվածություն ձեռք բերվի, ապա 2018 թ. Ակտաուում ստորագրված Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան արդեն կսկսի գործել,
- Թեհրանը ողջունում է Մոսկվայի նախաձեռնությունը, ըստ որի՝ առաջարկվում է մերձկասպյան երկրների միջև համագործակցության կառուցակարգ ձևավորել,
- Իրանը ողջունում է «Կասպյան տնտեսական 2-րդ համաժողովը» Մոսկվայում անցկացնելու Ռուսաստանի առաջարկը:

Իրանի նախագահ Էբրահիմ Ռայիսին իր ելույթում հետևյալ շեշտադրումներն էր արել.

- Մերձկասպյան երկրների համագործակցությունը պետք է բացառի ոչ սահմանային երկրների ներկայությունը ծովում,

³⁵ Առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2002 թ.՝ Աշգաբադում, 2-րդը՝ 2007 թ.՝ Թեհրանում, 3-րդը՝ 2010 թ.՝ Բաքվում, 4-րդը՝ 2014 թ.՝ Աստրախանում, 5-րդը՝ 2018 թ.՝ Ակտաուում:

- պետք է խուսափել միակողմանի քայլեր անելուց, որոնք կսպառնան Կասպից ծովի տարածաշրջանի անվտանգությանը,
- Կասպից ծովի կենսամիջոցները պետք է խելամիտ օգտագործել՝ չվնասելով շրջակա միջավայրը,
- Կոնվենցիան լիարժեք կգործի, եթե՝ ա) որոշվեն ծովի հատակի և ընդերքի, բ) ջրային սյան և մակերևույթի, գ) ծովի օդային սահմանները,
- անհրաժեշտ է ստորագրել «Կասպից ծովի սահմանազատման և սահմանագծման սկզբունքների» վերաբերյալ համաձայնագիր,
- անհրաժեշտ է նավթի, գազի, էլեկտրաէներգիայի, գյուղատնտեսական մթերքների տարանցման ոլորտում առկա համագործակցությունն ընդլայնել:

Մերձկասպյան երկրների ղեկավարների 6-րդ նիստի արդյունքներով հրապարակված համատեղ հայտարարությունում առանցքային հետևյալ կետերն էին նշվել.

- Կասպից ծովում ափամերձ երկրների գործողությունները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.
- հարգել միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, չմիջամտել ներքին գործերին, հրաժարվել ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից,
- աշխատել Կասպից ծովը խաղաղության, կայունության, համագործակցության և բարիդրացիության տարածաշրջան դարձնելու ուղղությամբ,
- ապահովել Կասպից ծովի տարածաշրջանում անվտանգությունն ու կայունությունը,
- ապահովել Կասպից ծովում ափամերձ երկրների սպառազինությունների կայուն հավասարակշռությունը,

- ռազմական կարողությունների զարգացումն ապահովել ողջամիտ սահմաններում՝ հաշվի առնելով ափամերձ բոլոր երկրների շահերն ու չսպառնալով միմյանց անվտանգությանը,
- ափամերձ պետություններից որևէ մեկի կողմից իր տարածքը հասանելի չդարձնել այլ պետություններին սպառնալու և ափամերձ երկրներից որևէ մեկի դեմ այլ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով,
- ջրային ռեսուրսների օգտագործման, վերարտադրության, շրջակա միջավայրին հասցված վնասները վերացնելու նպատակով համաձայնեցված ստանդարտներ կիրառել,
- ուղիղ ափագծերի սահմանները որոշելու նպատակով արագացնել համաձայնագրի նախագծի ստորագրման նախապատրաստական աշխատանքները,
- որոշում է կայացվում մերձկասպյան երկրների ղեկավարների 7-րդ հանդիպումն անցկացնել Իրանում:

Վերլուծելով Ակտաուից հետո Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարություններն ու Կասպից ծովի շուրջ տեղի ունեցող զարգացումներից բխող ռիսկերի վերաբերյալ իրանցի փորձագետների գնահատականները՝ Իրանը համարում է, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակը վերջնական կարգավորված չէ, ավելին, դեռ մերձկասպյան երկրները սահմանազատման սկզբունքների շուրջ չեն եկել ընդհանուր համաձայնության:

Իրանը Կասպից ծովի հանքավայրերի օգտագործումը չի կապում սահմանազատման ավարտի հետ և բաց է թողնում բանակցելու և համագործակցելու դուռը:

Իրանն իր ուշադրությունը ոչ թե կենտրոնացնում է Կասպից ծովի իրավական հարցերի վրա, այլ՝ անվտանգային: Կասպից ծովում ոչ ավիամերձ երկրների ներկայությունն Իրանը «կարմիր գիծ» է համարում:

Մերձկասպյան երկրներից Իրանը միակն է, որի խորհրդարանը մինչ օրս չի վավերացրել 2018 թ. Ակտաուում ստորագրված «Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանազատման արդյունքում Իրանն ամենաքիչ մասնաբաժինն է ստանալու, Թեհրանը փորձում է տարբեր պատրվակներով ձգձգել այդ գործընթացը՝ մինչև իր համար բարենպաստ պայմաններ կծեկվեն:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ ստորագրված կոնվենցիան ընդհանուր գծերով նման է միջուկային համաձայնությանը, երբ բոլոր կողմերը, անկախ իրենց տարածայնություններից, տվյալ իրավիճակում բավարարված էին: Գրեթե նույն իրավիճակն էլ Կասպից ծովի կոնվենցիային է վերաբերում, այսինքն՝ կոնվենցիայի անվանումը ենթադրում է, որ առաջին հերթին պետք է կարգավորվեր ծովի իրավական կարգավիճակը, սակայն, ամենակարևոր հարցի՝ սահմանազատման շուրջ, փաստացի համաձայնություն չի ձեռք բերվել:

Կոնվենցիայի ստորագրումից հետո մերձկասպյան երկրներից եկող ազդակները վկայում են, որ սահմանազատման հարցում դեռևս որևէ կողմ պատրաստ չէ զիջել իր դիրքերը: Իրականում, հիմնական խնդիրն այն չէ, որ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ավելի մեծ մասնաբաժին ստանալ, այլ այն, որ կողմերը պայքարում են՝ ձեռք բերելու նավթով և գազով հարուստ տարածքները:

Նկատի ունենալով կոնվենցիայի վերաբերյալ Իրանի լուրջ վերապահումները՝ աշխարհաքաղաքական տվյալ իրավիճակում Թեհրանի շահերից էր բխում դրա ստորագրումը, սակայն, դա դեռ Իրանի վերջնական որոշումը չէ. կախված իրավիճակից՝ ցանկացած պահի այն կարող է չեղարկվել:

Իրանի սահմանադրությունը նման խնդրահարույց պայմանագրերի համար այնպիսի լուծումներ է տալիս, որոնք թույլ կտան խուսափել դրա վավերացումից: ԻԻՀ սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը պետք է վավերացվեն խորհրդարանի կողմից: Սակայն միևնույն ժամանակ սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ Իրանի Սահմանադրության պահապանների խորհուրդը քննության է առնում Մեջլիսի ընդունած որոշումները և որոշում դրանց համապատասխանությունը սահմանադրությանը: Հակասություն նկատելու դեպքում Պահապան խորհուրդն այն վերադարձնում է Մեջլիսի վերանայմանը: Հաշվի առնելով ԻԻՀ սահմանադրության վերոնշյալ դրույթները՝ Իրանը կոնվենցիայի վավերացման հարցը կարող է երկար խաղարկել՝ խուսափելով իր շահերին հակասող պայմանագրերի ստորագրումից:

ԳԼՈՒԽ 4

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԴԵՐՆ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նախիջևանի հնքնավար Հանրապետությունը (ՆԻՀ), սահմանակից լինելով Թուրքիային և Հայաստանին, չունենալով ընդհանուր սահման Ադրբեջանական Հանրապետության հետ, Իրանի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունի թե՛ կրոնաքաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ անվտանգության տեսանկյունից:

Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապ հաստատվելու պատմական հանգամանքները, Թուրքիայի ռազմական, տնտեսական ներկայությունը Նախիջևանում, երկարաժամկետ հեռանկարում թուրք-նախիջևանյան սահմանին քրդերի հնարավոր գործողություններով պայմանավորված Նախիջևանի և Թուրքիայի միջև ցամաքային կապն ընդհատվելու հավանականությունը, ապաշրջափակման արդյունքում Հայաստանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև հաղորդակցության հաստատման հնարավորությունը, Նախիջևանի՝ «Միջին միջանցքի»³⁶ կարևոր հանգույց դառնալու հնարավորությունը, Նախիջևանի՝ Բաքվից անջատվելու հավանականությունը, կամ ընդհակառակը՝ Նախիջևանի ինքնավարության կարգավիճակի վերացումն ու Ադրբեջանի մարզ դառնալու հավանականությունը՝ դրանք արտաքին այն հիմնական գործոններն են, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում Իրանի ռազմաքա-

³⁶ Թուրքիայի նախաձեռնությամբ գործարկվող միջանցք, որով հնարավոր կլինի Չինաստանից, ապա նաև Կասպից ծովի տարածաշրջանից Իրանը շրջանցող տարանցում կազմակերպել:

ղաքական ղեկավարության՝ Նախիջևանի հարցում որոշումների կայացման վրա:

Իրանի պատմագիտության մեջ տարածված է այն տեսակետը, թե 20-րդ դարի սկզբին Փահլավիների դինաստիայի հիմնադիր Ռեզա Շահի և Թուրքիայի առաջնորդ Քեմալ Աթաթուրքի միջև 1931 թ. ստորագրված տարածքային փոխանակումների մասին պայմանագրի համաձայն՝ Թուրքիան Իրանին է զիջել մասին պայմանագրի համաձայն՝ Թուրքիան Իրանին է զիջել Արևմտյան Ատրպատական նահանգում գտնվող Ղաթուրի անկլավը, փոխարենը՝ Իրանից ստացել Փոքր Մասիսն ու նրա հարակից շրջանները՝ այդպիսով ցամաքային կապ հաստատելով Նախիջևանի հետ:

Սակայն, պրոֆ. Հակոբ Փափազյանը «*Ինչպես գոյացավ Թուրքիա-Նախիջևան տասը կիլոմետրանոց սահմանը*» հոդվածում ներկայացված պատմական փաստերով հերքում է այդ տեսակետը, նշելով, որ Թուրքիան 1931 թ. Իրանի հետ կատարված սահմանագծի փոփոխությունից տասը տարի առաջ արդեն սահմանակից էր Նախիջևանին [26, Փափազյան 2000, էջ 6]:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ Իրանը կանգնեց աշխարհաքաղաքական մեկուսացման վտանգի առջև, Նախիջևանի հարցն ակտիվ սկսեց քննարկվել Իրանի հասարակական-քաղաքական շրջանակների կողմից: Այն դարձավ Իրանի կան-քաղաքական շրջանակների օրակարգի մաս: Իրատարածաշրջանային քաղաքականության օրակարգի մաս: Իրանական պատմագիտությունը Ռեզա շահի և Աթաթուրքի միջև կայացած գործարքը ռազմավարական կոպիտ սխալ է համակայացած գործարքը ռազմավարական կոպիտ սխալ է համարում [87, Faraji 2011. 37], որի պատճառով Թուրքիան և Ադրբեջանը կարևոր այդ խաղաքարտն օգտագործելով փորձում են գերակա դիրք զբաղեցնել տարածաշրջանում:

Իրանի նորագույն պատմության մասնագետ Սալիմի Նեմինն այն համոզմանն է, որ իրավական ճանապարհով Ղարա-

Սուի հատվածը կրկին հնարավոր է միացնել Իրանին, քանի որ ըստ նրա՝ Ռեզա շահն իրավունք չուներ Իրանին պատկանող տարածքները զիջելու Թուրքիային [44, *Tasnim* 2021]:

Ադրբեջանի և Իրանի հարաբերություններում առաջացող յուրաքանչյուր լարվածության ընթացքում պատմական այդ դրվագն Իրանի հասարակական-քաղաքական խմբերի շրջանում դառնում է քննարկման առարկա: Կազմակերպվում են փորձագիտական քննարկումներ, խորհրդարանում ելույթներ են ունենում պատգամավորները, գործող և նախկին դիվանագետները: Այդ քննարկումների ու մեկնաբանությունների հիմնական շեշտադրումն այն է, որ «Նախիջևանը պատմականորեն Իրանի մաս է կազմել, այն ժամանակին Ղաջարների անհետապես քաղաքականության պատճառով է անջատվել Իրանից, իսկ Ռեզա շահի դավաճանական քայլի արդյունքում Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապ է հաստատվել: Հերևաբար, պատմական արդարությունը պետք է վերականգնվի»:

Նախիջևանն Իրանին միացնելու անհրաժեշտության վերաբերյալ բարձրաձայնվել է և՛ 1990-ականներին, և՛ 2000-ական թվականների սկզբին, և 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Դա նշանակում է, որ Իրանը թեկուզ երկարաժամկետ հեռանկարում դիտարկում է Նախիջևանն Իրանին միացնելու հնարավորությունը: Եթե «Իրանշահրի»³⁷ մաս կազմող տարածքների

³⁷ Եփրատի արևելյան շրջաններից մինչև Ամուդարյա ընկած տարածքները, որոնք ընդգրկում են ժամանակակից Իրաքի, Իրանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, ինչպես նաև Աֆղանստանի տարածքի մի հատվածը, պարսկական աղբյուրներում հիշատակվում են «Իրանշահր» կամ «Իրանզամին» աշխարհագրական տեղանուններով: Դաշթ-է Քավիր և Դաշթ-է Լուֆ անապատային գոտիներն «Իրանշահրը» բաժանում էին արևմտյան և արևելյան հատվածների: Արևելյան հատվածում էին գտնվում Բակտրիան, Խորեզմը, Սողդը (վերջինիս տարածքում է կազմավորվել ժամանակակից Տաջիկստանը), իսկ արևմտյան հատվածի մի զգալի մասը զբաղեցնում է ժամանակակից Իրա-

նկատմամբ Իրանի նկրտումներն ավելի զուսպ են, ապա Նախիջևանի հարցում Իրանն այլ մոտեցում ունի:

Օրինակ, 2007 թ. «Իսլամի նվիրյալներ» կուսակցության գլխավոր քարտուղար Մոհամմադ Մեհդի Աբախոդային Իրանի կառավարությանը հորդորել էր Նախիջևանն Իրանին բռնակցելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկել [180, *Aftabnews.ir* 2007]: Իտալիայում Իրանի նախկին դեսպան Աբու-Ֆազլ Զոհրեվանդը, գնահատելով 44-օրյա պետերազմից հետո տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական իրադրությունից բխող սպառնալիքները, համոզմունք է հայտնել, որ «Իրանը պետք է կոչվի արձագանքի Թուրքիայի և Ադրբեջանի նկրտումներին: Նա ասել է, որ Նախիջևանն ու Ադրբեջանը հեզդունվում են իրանական քաղաքակրթական փարածքում, հեզդարար պետք է Իրանը դրանք բռնակցի իրեն» [255, *Zohrevand* 2021]:

Իրանի խորհրդարանի պատգամավոր Մոհամմադ Ռեզա Միրթաջեդդին 2022 թ. Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած հերթական լարվածության ընթացքում խորհրդարանում ունեցած ելույթում հայտարարել էր, որ եթե Բաքվի կողմից շահարկվում է այս կամ այն տարածքի պատկանելիության հարցը, ապա առաջին հերթին Նախիջևանը պետք է միանա Իրանին [136, *Entekhab* 2022]:

ԻՍՍՀՄ-ի գոյության վերջին տարիներին Նախիջևան-Իրան սահմանին տեղի ունեցած զարգացումները մի կողմից Իրանի համար անջատողականության սպառնալիք էին ստեղծել, իսկ

նի տարածքը: Արաբական, իսկ այնուհետև մոնղոլական արշավանքների հետևանքով խաթարվում է «Իրանշահրի» միատարրությունը, իսկ հետագա դարերի ընթացքում ժամանակակից Կենտրոնական Ասիայի տարածքում ուզբեկական խանությունների կազմավորմամբ իրանական պատմամշակութային ազդեցությունը զգալիորեն նվազում է:

մյուս կողմից հակառակը՝ Նախիջևանն Իրանին միանալու հնարավորություն էր ստեղծվել:

«Իզվեստիա» օրաթերթի 1990 թ. հունվարի 4-ի համարում Իրանի և Նախիջևանի սահմանում տեղի ունեցած ուշագրավ իրադարձության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունն է հրապարակվել. «Խորհրդային Ադրբեջանում իշխանության ձգտող «ժողովակապի» գլխավորությամբ ադրբեջանցիները քանդում էին Նախիջևան-Իրան սահմանի փշալարերն ու ինժեներական այլ կառույցներ: Դեկտեմբերի 31-ի առավոտյան մարդկանց մեծ խմբեր մոտենում են սահմանին և սկսում քանդել պահպանության շինություններն ու անվտանգության համակարգերը: Որոշ հատվածներում ամբոխը մոտենում է Արաքսի ափին: Նրանք հարավային և հյուսիսային Ադրբեջանների միավորման կոչ էին անում» [27, Յալանուզյան 2015]:

Իրանական աղբյուրներում, սակայն, այլ կերպ է մեկնաբանվում Իրան-Նախիջևան սահմանին տեղի ունեցած իրադարձությունները: Իրանցի պատմաբան, Կովկասի հարցերով փորձագետ Ահմադ Քազեմին «Պանթյուրքիզմ և պանազարիզմ» գրքում, մեկնաբանելով 1989 թ. դեկտեմբերի վերջին Իրան-Նախիջևան սահմանին տեղի ունեցած իրադարձությունները, գրում է, որ «Նախիջևանի հարյուրավոր քաղաքացիներ, կոմունիստական իշխանության փրփիներին զրկված լինելով արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հնարավորությունից, ուրբի ելան և շարժվեցին դեպի Իրանի սահման: Նրանք, քանդելով Ադրբեջանի ժողովրդին Իրանից բաժանող փշալարերը, փորձում էին Արաքս գետն անցնելով միանալ Իրանին: Սակայն, ինչպես Ցարական Ռուսաստանն է 1813 և 1828 թթ. ռուս-պարսական պատերազմների արդյունքներով ստորագրված պայմանագրերով Ադրբեջանի տարածքը բռնակցել, այնպես էլ Խորհրդային Միու-

թյունը ուրբի ելած ադրբեջանցիների բռնի ճնշման միջոցով նրանց հետ է պահել Իրանի տարածք անցնելու և Իրանին միանալու փորձերից» [112, Kazemi 2007, p. 65]:

Իրանական «Սահար» հեռուստաընկերության 1989 թ. արխիվային տեսանյութերում երևում է, թե ադրբեջանցիներն ինչպես են Իմամ Խոմեյնիի և Ալի Խամենեյի նկարները ձեռքերին պարզած Արաքս գետն անցնելով մուտք գործում Իրանի տարածք:

Ահմադ Քազեմիի դիտարկմամբ՝ Նախիջևան-Իրան սահմանին խորհրդային զորքերի՝ Արաքս գետն անցնող ադրբեջանցիներին հետ պահելու նպատակով ուժի գործադրումն աջակցության լուրջ պիք է առաջացնում աշխարհի տարբեր երկրներում բնակվող ադրբեջանցիների շրջանում:

Նախիջևանի Գերագույն Մեջլիսի նախագահ Հեյդար Ալիևի նախաձեռնությամբ 1990 թ. դեկտեմբերի 16-ին խորհրդարանը դեկտեմբերի 31-ը աշխարհի ազարիների միանության տոն հռչակելու մասին որոշում է ընդունում: Հետագա տարիներին հռչակելու մասին որոշում է ընդունում են «աշխարհի պանազարիականության հետևորդները փորձում են «աշխարհի ազարիների օրը» ծառայեցնել իրենց օրակարգին: Եթե համեմատում ենք վերոնշյալ իրադարձության վերաբերյալ խորհրդային և իրանական աղբյուրների մեկնաբանությունները, խորհրդային և իրանական աղբյուրները մեկնաբանությունները, ապա առաջինում այն ներկայացվում է որպես «Հարավային Ադրբեջանի» և «Հյուսիսային Ադրբեջանի» միավորման ձգտում, նպատակ: Սակայն, իրանական աղբյուրները հակառակն են պնդում. բողոքի դուրս եկած ադրբեջանցիները ցանկություն էին հայտնել միանալու Իրանին:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Ադրբեջանում Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ ձևավորված իշխանության որդեգրած քաղաքականությամբ [45, Ahmadi 2015, p. 141], ինչպես նաև Ղա-

րաբաղի հարցում Հայաստանի ու Ադրբեջանի միջև սկսված հակամարտությամբ պայմանավորված՝ Նախիջևանի ուղղությամբ իր հեռահար նպատակներն իրագործելու Իրանի Իսլամական Հանրապետության հնարավորությունները խիստ սահմանափակվել էին [35, Azemi 2017, p. 108]:

Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականության մշակման գործում կարևոր ազդեցություն ունի Թուրքիայի գործոնը. մասնավորապես Թեհրանի ուշադրության կենտրոնում է գտնվում Նախիջևանում Թուրքիայի տնտեսական և ռազմական ներկայությունը, ինչպես նաև թուրք-նախիջևանյան սահմանի հարակից շրջաններում քրդերի մասնակցությամբ հնարավոր զարգացումները:

Թեև Իրանը Նախիջևանում Թուրքիայի ռազմական ներկայությունը դիտում է որպես Անկարայի և Բաքվի միջև հետխորհրդային շրջանում ձևավորված համագործակցության դրսևորում [207, Elik 2012, pp. 108-111], բայց և այնպես Թուրքիայի և Ադրբեջանի՝ Նախիջևանը ռազմականացնելու վերջին տարիներին նկատվող միտումներն անհանգստացնում են Թեհրանին [273, Regnum.ru 2019]՝ հատկապես եթե այդ գործողությունները զուգորդվում են հարակից շրջաններում ընթացող զարգացումներով, որոնք կարող են բացասաբար ազդել Իրանի շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի վրա [76, IRIB 2018]:

Սահմանային անվտանգության նկատմամբ Իրանը բավական զգայուն է: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ թուրք-նախիջևանյան սահմանում տեղի ունեցող ցանկացած զարգացմանը Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունն անմիջապես արձագանքում է՝ փորձելով չեզոքացնել հնարավոր սպառնալիքները [132, Tasnim 2016]: 2016 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման փորձի ժամանակ Իրանի զինված ուժերը բեր-

վել էին բարձր պատրաստվածության վիճակի: Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Հասան Ֆիրուզաբադիի (1989-2016) գնահատմամբ՝ հնարավոր էր Թուրքիայի տարածքում այնպիսի զարգացումներ տեղի ունենային, որոնք կարող էին անցնել և ծավալվել Իրանի տարածում: Ապրիլյան պատերազմի ժամանակ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Աշուրա» ստորաբաժանումը տեղակայվել էր Իրան-Նախիջևան սահմանին: 2022 թ. սեպտեմբերի 15-ին Հայաստանի վրա հերթական ագրեսիայից հետո ԻՀՊԿ ցամաքային ուժերի հրամանատար Մոհամմադ Փաքիուրը կորպուսի «Աշուրա» ստորաբաժանման հրամանատար Էլյաս Գոլմոհամմադ Ջադեի ուղեկցությամբ այցելել էր Ադրբեջանի, Հայաստանի և Նախիջևանի սահմանին մոտ գտնվող Իրանի զինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման վայրեր: Թուրք-նախիջևանյան հատվածում քրդական խմբավորումների ակտիվությունը, Թուրքիայի անվտանգության ուժերի կողմից քրդերի դեմ իրականացվող գործողությունները մշտապես գտնվում են Իրանի ուշադրության կենտրոնում: Անկախ՝ քրդերի հարցում Թուրքիայի ու Իրանի հնարավոր համագործակցությունից, Իրանին մտահոգում է այն փաստը, որ սահմանակից շրջաններում ինչպես թուրք-նախիջևանյան, այնպես էլ Իրաքյան Քրդստանի ուղղություններում հնարավոր է Անկարայի ու Բաղդադի վերահսկողությունից դուրս այնպիսի զարգացումներ տեղի ունենան, որոնք Իրանի տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգներ կարող են առաջացնել:

Քրդական խնդրի շուրջ Թուրքիան և Իրանը համագործակցել են 20-րդ դարի սկզբին Փոքր Մասիսի շրջանում, 1937 թ. «Սաադաբյան պակտը» ստորագրելիս, Մահաբադի քրդական հանրապետության ձևավորման ընթացքում, Իսլամական հեղափոխությունից հետո, 1990-ական թվականներին քրդական

շարժման ակտիվացման փուլում, 2017 թ., երբ Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվե էր կազմակերպվում, և այլն: Չնայած նշված համագործակցային փուլերին, Իրանն ու Թուրքիան միևնույն ժամանակ միմյանց մեղադրում են քրդական այս կամ խմբավորմանն աջակցելու մեջ [229, Olson 2004, p. 51-55]: Տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական իրադրությամբ պայմանավորված փոխադարձ մեղադրանքները կարող են հանգեցնել լարվածության, ընդհուպ մինչև ռազմագործողության³⁸ իրականացման [318, Aa.com.tr 2020]:

Այն, որ քրդական գործոնն Իրան-Թուրքիա հարաբերությունների վրա բացասաբար ազդելու միտում ունի, վկայում է Թուրքիայի կողմից PKK-ի հարցն Իրան-Թուրքիա հարաբերությունների օրակարգում պահելու նպատակադրությունը: 2023 թ. մայիսին Թուրքիայի ՆԳ նախարարն Իրանի հասցեին հերթական մեղադրանքն է հնչեցրել՝ պնդելով, որ Իրանի Մակու քա-

³⁸ Թուրքիայի ՆԳ նախարար Սոլեյման Սոյլուն 2020 թ. հունիսի 6-ին հայտարարել էր, թե «Իրանի Արևմտյան Ատրպատական նահանգում 100-ից ավելի «Քրդական աշխարավորական կուսակցության» (PKK) անդամ ահաբեկիչներ կան»: Սոյլուն ակնարկել էր, որ Թուրքիան կարող է ռազմագործողություններ անել Իրանի տարածքում, եթե իրանական կողմը չվնասազերծի դրանց 2020 թ. հունիսի 24-ին Արևմտյան Ատրպատականից արձակված կրակից սպանվել էր թուրք զինծառայող Ռեջեփ Դուրաքը: Թուրք զինվորները PKK-ի զինյալներին ոչնչացնելու նպատակով անցել էին Իրանի սահման, ինչից հետո էլ իրանցի սահմանապահների կողմից կրակ էր բացվել: 2020 թ. հոկտեմբերի 10-ին և 2021 թ. նոյեմբերի 13-ին քրդական PKK-ի հետ փոխկապակցված «Քրդստանի ազատ կյանք» կուսակցության (PJAK) խմբավորման (Իրանը համարում է ահաբեկչական) դեմ պայքարում Արևմտյան Ատրպատական նահանգի Իրանի սահմանապահ ծառայության հինգ զինվոր է սպանվել: 2021 թ. փետրվարին 16-ին Թուրքիայի ՆԳ նախարար Սոլեյման Սոյլուն Թուրքիայի խորհրդարանում ունեցած ելույթում հայտարարել էր, որ Իրանում և Իրաքում PKK-ի 5000 անդամ կա, 2021 թ. փետրվարի 28-ին «Անկարայի Իրանի ուսումնասիրությունների կենտրոնի» (iRAM)-ի փոխտնօրեն Հաքքի Ուլդուրը հայտարարել էր, որ Թուրքիան պատրաստ է Իրանի տարածքում PKK-ի զինյալների դեմ ռազմագործողություններ իրականացնել:

ղաքում PKK-ն նոր ռազմական շտաբ է հիմնել [313, CNN TÜRK 2023]:

Արդի փուլում Իրանն ուշադրությամբ հետևում է թուրք-նախիջևանյան սահմանի՝ Թուրքիան Նախիջևանին կապող, այսպես կոչված, քրդական միջանցքի շուրջ ընթացող զարգացումներին: Իրանի փորձագիտական շրջանակները որպես հեռանկարային զարգացում դիտարկում են այն սցենարը, ըստ որի՝ քրդերի ազդեցության մեծացման պարագայում հնարավոր է այնպիսի իրադրություն ստեղծվի, երբ Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապը կարող է կտրվել, արդյունքում տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը կփոխվի հոգուտ Իրանի [153, Azariha.org 2015]: Երկարաժամկետ հեռանկարի համար սցենարային իրավիճակներ դիտարկելիս Իրանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Թուրքիայի և Իրանի միջև գտնվող տարածքները բացառապես քրդաբնակ են, և տեսականորեն Նախիջևանն Ադրբեջանին կարող է կապվել միայն Իրանի և Հայաստանի տարածքներով [172, Soltani 2015, p. 68]:

«Ադրբեջանը Ղարաբաղի համար պայքարում է հանուն Նախիջևանի», - այս միտքը առնվազն մի քանի անգամ շրջանառվել է Կովկասի հարցերով իրանցի փորձագետների մասնակցությամբ Իրանում կազմակերպված քննարկումների ժամանակ:

Եթե Ադրբեջանը Նախիջևանի նկատմամբ կորցնում է իր վերահսկողությունը, ապա Բաքվի աշխարհաքաղաքական նշավերակությունն Իրանի և Թուրքիայի համար էականորեն կնվազի: Նախիջևանի շուրջն արձանագրվող ցանկացած լարվածության Նախիջևանի շուրջն արձանագրվող ցանկացած լարվածության դեպքում (հայ-ադրբեջանական բախումներ, թուրք-ադրբեջանական զորավարժություններ, Միացյալ Նահանգների և Իսրայելի ներկայություն Նախիջևանում) Իրանը ռիսկերի գնահատում է

իրականացնում: Թե՛ Արցախյան պատերազմի տարիներին [61, Bayat 1993, pp. 103-108], թե՛ Ապրիլյան պատերազմի [137, BBC Persian 2016], թե՛ 2018 թ. Նախիջևան-Հայաստան սահմանին տեղի ունեցած դիրքային փոփոխությունների համար մղված պայքարի [46, Ahmadi 2011] և թե՛ 2020 թ. պատերազմի ընթացքում և դրանից հետո Նախիջևանի շուրջը տեղի ունեցած զարգացումները մշտապես գտնվել են Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության ուշադրության ներքո:

Ադրբեջանի՝ Իրանի պատմությունն աղավաղելու, իրանական մշակութային արժեքները յուրացնելու, Իրանի թյուրքախոս բնակչության խնդիրները շահարկելու գործողություններով [10, Իսրայելյան 2018, էջ 149-159], ինչպես նաև շիա հոգևոր գործիչների նկատմամբ բռնաճշումներով պայմանավորված՝ Իրանը հատկապես Մահմուդ Ահմադինեժադի նախագահության շրջանում (2005-2013) Բաքվի վրա ճնշում գործադրելու որպես ազդեցիկ գործիք էր օգտագործում նաև Նախիջևանի հարցը՝ սպառնալով փակել սահմանը և հումանիտար աղետի ենթարկել Նախիջևանի բնակչությանը [209, Deutsche Welle 2012]:

Թեհրանի այդ քաղաքականությունը ոչ միայն Նախիջևանի բնակչության շրջանում Իրանի նկատմամբ բացասական տրամադրություններ առաջացրեց, այլև բարենպաստ պայմաններ ստեղծեց Թուրքիայի համար՝ մեծացնելու իր ազդեցությունը Նախիջևանում: Այդ շրջանում Իրանի և Ադրբեջանի միջև առաջացած լարվածության պատճառներից մեկն էլ այն էր, որ Իրանն Ադրբեջանի քաղաքացիների համար վերացրել էր վիզային ռեժիմը և նույնն ակնկալում էր Ադրբեջանից: Սակայն, Բաքուն ամեն կերպ խուսափում էր փոխադարձության սկզբունքով Իրանի քաղաքացիների համար վերացնել վիզային ռեժիմը: Տևական դիմադրությունից հետո 2019 դեկտեմբերի 1-ից Նախի-

ջևանն Իրանի քաղաքացիների համար ևս վերացրեց վիզային ռեժիմը: Իրանի քաղաքացիները 2019 թ. դեկտեմբերի 1-ից Փոլ-դաշտ-Շահթախթի, Ջուլֆայի և Սադարակի անցակետերում առանց վիզայի մուտք են գործում Նախիջևան: Կեցության ժամկետը 15 օր է [106, Mfa.gov.ir 2022]:

Հասան Ռոհանիի նախագահության շրջանում Իրանը վերանայեց իր տարածաշրջանային քաղաքականությունը՝ ընդգծելով բոլոր հարևանների, այդ թվում՝ Ադրբեջանի հետ հարաբերությունները կարգավորելու և արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչն ուժեղացնելու նպատակադրությունը [32, Akbarzadeh 2016, pp. 67-69]:

Նախիջևանցիներին Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի բնակչությանն ինտեգրելու և փոխադարձ ակտիվ շփումների արդյունքում Նախիջևանում Իրանի տնտեսական ազդեցության մեծացման միջոցով նաև կրոնական ազդեցությունը մեծացնելու նպատակով վերջին տարիներին Իրանի նախաձեռնությամբ մի շարք խոշորամասշտաբ նախագծեր են իրականացվել. մասնավորապես Իրանի Արևելյան Ատրպատական նահանգում գործող «Արաս» ազատ տնտեսական գոտում բարենպաստ պայմաններ են ստեղծվել, արդիականացվել են Նախիջևանի սահմանին գտնվող ենթակառուցվածքները, Ադրբեջանը Նախիջևանին կապող ավտոմայրուղին [14, Իսրայելյան 2019]:

Բացի այդ՝ Իրանը պատրաստակամություն է հայտնել մասնակցելու Բաքու-Նախիջևան ուղևորատար գնացքի կառուցմանը, որի շուրջ համաձայնությունը ձեռք էր բերվել ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի՝ 2018 թ. ապրիլին Բաքու կատարած այցի ընթացքում [160, IRIB 2018]:

Իրանը կրոնական քաղաքականության հեռահար նպատակներն իրագործելու նպատակով դեռ 2000-ական թվական-

կերպված արշավի ընթացքում՝ ի թիվս այլ մեղադրանքների, որպես վերջինիս պաշտոնանկ անելու հիմնավորում [323, Talibov 2022] էր նշվում Թախիբուլի՝ Իրանի հետ ջերմ հարաբերություններ ունենալու հանգամանքը [182, Qafqaz.ir 2022]: Ավելին, նա մեղադրվում էր Իրանի հետ գաղտնի գործարք կնքելու մեջ, որի արդյունքում Նախիջևանի Շարուրի շրջանի Արաբենգիջա շրջանում Արաքս գետի հունը փոխվել է, ինչի արդյունքում շուրջ 21 հա տարածք հայտնվել է Իրանի տարածքում [320, Azpolitika.info]:

Հայ-ադրբեջանական պատերազմից հետո ստեղծված նոր իրադրության պայմաններում Ադրբեջանի նկատմամբ Իրանի քաղաքականության մեջ վերափոխումներ տեղի ունեցան: Տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակումն Ադրբեջանն ու Թուրքիան Նախիջևանի միջոցով միմյանց կապվելու այլընտրանքային ճանապարհ ունենալու հնարավորություն են ստանում: Հետպատերազմական շրջանում Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերված համակողմանի աջակցությամբ պայմանավորված նշանակալիորեն մեծացավ Թուրքիայի քաղաքական և տնտեսական ազդեցությունը:

Տնտեսական մրցակցության տեսանկյունից վերջին երկու տասնամյակի ընթացքում Նախիջևանում Թուրքիան բավական լավ արդյունքներ է արձանագրել: Արդյունավետ տնտեսական քաղաքականությամբ Թուրքիային հաջողվել է Նախիջևանում Իրանի ազդեցությունը հասցնել նվազագույնի: Կառուցվել է Իգդիր-Սադարակ 82 կմ մայրուղին, նախատեսվում է կառուցել Նախիջևան-Իգդիր-Կարս երկաթգիծն ու գործարկել Նախիջևան-Ստամբուլ չվերթը:

Կարս-Իգդիր-Նախիջևան երկաթգծի գործարկմամբ՝ Թուրքիան հնարավորություն է ստանալու կապվել Ադրբեջանի երկա-

թուղային համակարգին՝ դուրս գալով Կենտրոնական Ասիա: Ինչպես այդ փաստը, այնպես էլ Ադրբեջանի ու Իսրայելի հարաբերությունների առավել խորացումն Իրանին հնարավոր է վերջնականապես դուրս թողնեն տարածաշրջանային նախագծերին մասնակցությունից:

Իհարկե, բացի օբյեկտիվ գործոններից՝ (իրանական ոչ մրցունակ ապրանքներ, պատժամիջոցներ, բարձր մաքսապորտքեր, և այլն) Նախիջևանի հարցում Ադրբեջանի նկատմամբ Իրանի կոշտ քաղաքականությամբ էր նաև պայմանավորված Իրանի նկատմամբ Թուրքիայի արձանագրած տնտեսական հաջողությունը:

Գազի հարցում Իրանից Ադրբեջանի կախվածությունը թուլացնելու նպատակով Թուրքիայի նախաձեռնությամբ դեռ 2010 թ. Ադրբեջանի և Թուրքիայի միջև նախնական համաձայնություն էր ձեռք բերվել, ըստ որի՝ նախատեսվում էր կառուցել Նախիջևան-Իգդիր գազատարը: 2021 թ. փետրվարին Ադրբեջանի և Թուրքիայի նախագահները վերահաստատել էին նախագիծն իրականացնելու իրենց հանձնառությունը [68, ILNA 2021]:

2004 թ. Իրանի և Ադրբեջանի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Ադրբեջանը գազ է մատակարարում Իրանի Աստարա քաղաքին, դրա փոխարեն Իրանը ստացված գազի 85 տոկոսի չափով գազ է մատակարարում Նախիջևան: 15 տոկոսն Իրանը գանձում է տարանցման համար [244, Sabah 2022]: 2022 թ. դեկտեմբերի 29-ին Նախիջևանում Իրանի գլխավոր հյուպատոս Ահմադ Հոսեյնին Նախիջևանի Գերագույն Մեջլիսի նախագահի տեղակալ Ազար Ջեյնալովի հետ հանդիպմանը՝ ի թիվ այլ հարցերի, քննարկել էր Իրանի տարածքով սվոպային եղանակով Նախիջևան գազ առաքելու հարցը:

միջև երկաթուղային հաղորդակցությունը վերականգնվելուց հետո Նախիջևանի տարածքով Հայաստանին ու Վրաստանին կապվելու Իրանի հնարավորություններն ավելի կմեծանային:

2022 թ. հունվարի 25-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը ԻԻՀ ՁՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերիի հրավերով երկօրյա այցով մեկնել էր Իրան: Ադրբեջանի պաշտպանության նախարարի այցն Իրան տեղի ունեցավ երկկողմ հարաբերություններում ընթացող վերափոխումների³⁹ և աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային լարված իրադրության համատեքստում: Հանդիպման օրակարգում նաև Նախիջևանի հարցն էր: Ոչ պակաս ուշագրավ է նաև այն փաստը, որ Զաքիր Հասանովի այցի նախօրեին կայացել էր Իրանի և Թուրքիայի նախագահների հեռախոսազրույցը⁴⁰: Ուշագրավ է, որ Զաքիր Հասանովի՝ Իրան կատարած այցից երկու օր առաջ

³⁹ 2021 թ. հոկտեմբերին Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած աննախադեպ լարվածությունը թուլացավ, երբ Իրանը պաշտոնապես հայտարարեց, որ Իրանական բեռնատարներն այլևս մուտք չեն գործի Ղարաբաղ: Թուրքիայի ԱԳ նախարարը նոյեմբերի 15-ին Թեհրան կատարած այցի ընթացքում կարևորեց Իրան-Ադրբեջան-Թուրքիա եռակողմ համագործակցությունը: Նոյեմբերի 21-ին Իրան այցելեց Ադրբեջանի փոխվարչապետը, որի ընթացքում էներգետիկայի ոլորտին առնչվող պայմանավորվածություններ ձեռք բերվեցին: Նոյեմբերի 27-ին Իրանի նախագահ Էբրահիմ Ռայիսին Ազգաբաղում կայացած Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO) անդամ երկրների ղեկավարների 15-րդ համաժողովի շրջանակում առանձին հանդիպումներ է ունեցել Ադրբեջանի և Թուրքիայի նախագահների հետ: Նոյեմբերի 28-ին Ազգաբաղում Իրանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև եռակողմ պայմանագիր է ստորագրվել, ըստ որի՝ Թուրքմենստանն Իրանի տարածքով սկոպային եղանակով գազ կարտահանի Ադրբեջան: Դեկտեմբերի 7-ին Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև «Պարսից ծոց-սև ծով» միջանցքի գործարկման շուրջ պայմանավորվածություն էր ձեռք բերվել: Դեկտեմբերի 8-ին Իրանն ու Ադրբեջանը պայմանավորվել էին տրանսպորտային հաղորդակցության նոր երթուղի ձևավորել, դեկտեմբերի 22-ին Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանը պաշտոնական այցով մեկնել էր Ադրբեջան:

⁴⁰ Ըստ թուրքական մամուլի՝ Էրդողանը խոսել է Թուրքիայում «3+3» ձևաչափով հանդիպում կազմակերպելու իր մտադրության մասին:

Իրանի քաղաքաշինության և ճանապարհների նախարար, Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ռոսթամ Ղասեմին, ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետ Աբեդին Խորամը, Արդաբիլի նահանգապետ Համեդ Ամելին, ԱԳ նախարարի՝ տնտեսական հարցերով տեղակալ Մեհդի Սաֆարին հատուկ չվերթով մեկնել էին Ադրբեջան՝ վայրէջք կատարելով Ֆիզուլիի օդանավակայանում: Իլիամ Ալինն էլ Ռոսթամ Ղասեմիի հետ հանդիպմանը ևս կարևորել էր Իրանի տարածքով Ադրբեջանի արևմտյան սահմանների և Նախիջևանի միջև կապի հնարավորությունը: Տեական դադարից հետո 2022 թ. ապրիլին Թեհրանում անցկացվեց Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստը՝ Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆակի և Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ռոսթամ Ղասեմիի նախագահությամբ: Նիստի ավարտին Իրանի և Ադրբեջանի միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր ստորագրելու և Բաքու-Աստարա ավտոմայրուղին Արդաբիլ-Ռաշտ ավտոմայրուղուն կապելու շուրջ պայմանավորվածություն ձեռք բերվեց:

Ադրբեջանի փոխվարչապետ, Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆակի՝ 2021 թ. նոյեմբերի 21-ին Իրան կատարած այցի⁴¹, Մուստաֆակի՝ 2021 թ. նոյեմբերի 21-ին Իրան կատարած այցի⁴¹, Մուստաֆակի՝ 2021 թ. նոյեմբերի 21-ին Իրան կատարած այցի⁴¹, ինչպես նաև Ազգաբաղում Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO) անդամ երկրների ղեկավարների 15-րդ համաժողովում ընթացքում Թեհրանն ու Բաքուն պայմանավորվել

⁴¹ Ադրբեջանի փոխվարչապետի և ԻԻՀ քաղաքաշինության և ճանապարհների նախարարի միջև հանդիպման ժամանակ քննարկվել են Ռաշտ-Աստարա երկաթգծի կառուցման, ինչպես նաև Պարսից ծոց-Սև ծով միջանցքի շրջանակում փոխգործակցություն սկսելու հարցերը:

էին տնտեսության, տարանցման և էներգետիկ⁴² ոլորտներում համատեղ ծրագրեր իրականացնել: Մասնավորապես 2021 թ. դեկտեմբերի 7-ին Իրանի և Ադրբեջանի ճանապարհների փոխ-նախարարների գլխավորած պատվիրակությունների միջև իրանական Աստարայում կայացած հանդիպման ժամանակ Աստարայի գետի վրա 3-րդ կամուրջը⁴³ կառուցելու շուրջ պայմանավորվածություն էր ձեռք բերվել: Իրանի և Ադրբեջանի միջև տեղի ունեցած բանակցություններին զուգահեռ իրանական կողմի նախաձեռնությամբ տեղի էր ունեցել Իրան-Ադրբեջան-Վրաստան եռակողմ բանակցություններ: Նպատակը՝ Պարսից ծոց-Իրան-Ադրբեջան (*Աստարայի հատվածով*)-Վրաստան-Սև ծով տրանսպորտային միջանցքի ձևավորումն է:

Իրանի միջազգային բեռնափոխադրումների և տարանցման կազմակերպության գործադիր տնօրեն Ջավադ Հեյայաթին իրանական «ISNA» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում նշել էր, որ և՛ վրացական, և՛ ադրբեջանական կողմը ողջունել է Իրանի առաջարկը: Ըստ նրա՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել մինչև 2022 թ. վերջը փորձնական բեռնափոխադրում իրականացնել:

Ուշագրավ է, որ մինչ այդ իրանական կողմը Պարսից ծոց-Սև ծով միջանցքի շրջանակում դիտարկում էր միայն Իրան-Հա-

⁴² Թուրքմենստանն Իրանի տարածքով սվոպային եղանակով գազ կարտահանի Ադրբեջան: Տարեկան նախատեսում է 1.5-2 մլրդ խմ գազ արտահանել Ադրբեջան: Երկարաժամկետ հեռանկարում Իրանը նպատակ ունի կասկածի տակ դնել Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան գազատարի (TAPI) տնտեսական գրավչությունն ու շահութաբերությունը: Իրանը կփորձի սվոպային եղանակով թուրքմենական գազն առաքել Պակիստան:

⁴³ Կամրջի երկարությունը 97.5 մետր է, լայնությունը՝ 37 մետր: Կամրջի շինարարությունից հետո օրական Աստարայով անցնող բեռնատարների թիվը կհասնի 1000-ի, 500 բեռնատար Ադրբեջանից մուտք կգործի Իրան, 500 բեռնատար Իրանից կանցնի Ադրբեջան:

յաստան-Վրաստան համագործակցությունը, իսկ ներկայումս թերևս տարածաշրջանային նախագծերից դուրս չմնալու և Ադրբեջանին շահագրգռելու նպատակով նմանատիպ նախաձեռնություններով է հանդես գալիս:

Արդյոք զուգահիսություն էր, թե ոչ, սակայն, 2021 թ. մայիսին և 2022 թ. սեպտեմբերին, այսպես կոչված, «Զանգեզուրյան միջանցքը» բացելու նպատակով Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացված ագրեսիայից հետո, Բաքուն, չկարողանալով հասնել իր հիմնական նպատակին, արձագանքեց տնտեսական համագործակցությունն ընդլայնելու Իրանի առաջարկին:

Ապաշրջափակման շուրջ տեղի ունեցող զարգացումների համատեքստում Ադրբեջանն առաջին անգամ Իրանի տարածքով Նախիջևանին միանալու նպատակադրության մասին հայտարարեց 2022 թ. մարտին: Ադրբեջանն այս հարցում երկակի քաղաքականություն է վարում: Մի կողմից ապաշրջափակման անվան տակ փորձում է Նախիջևանին կապվելու նպատակով «արտատարածքային միջանցք» ստանալ, սակայն, միաժամանակ հանդիպելով Հայաստան-Իրան ցամաքային սահմանի անխախտելիության վերաբերյալ Իրանի կոշտ դիրքորոշմանը, ընդգծում է Իրանի տարածքով Նախիջևանին կապվելու նոր երթուղի կառուցելու անհրաժեշտությունը:

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերի դեպարտամենտի ղեկավար, նախագահի օգնական Հիքմետ Հաջիևը Թուրքիայում տեղի ունեցած «Անթալիայի դիվանագիտական ֆորումի» շրջանակում թուրքական ՋԼՄ-ներին տված հարցազրույցում էր խոսել այդ մասին [315, Azertag.az 2022]: Դրանից հետո Իրանի և Ադրբեջանի կառավարությունների միջև «Արևելյան Զանգեզուրի և Նախիջևանի միջև Իրանի տարածքով

հաղորդակցության նոր ճանապարհ կառուցելու մասին» փոխընթացային հուշագիր⁴⁴ ստորագրվեց, իսկ ապրիլին այն հաստատվեց Ադրբեջանի նախագահի կողմից [260, *Interfax.az* 2022]:

Հետպատերազմական շրջանում Ադրբեջանը Նախիջևանին փորձում է միանալ ոչ թե Արդաբիլ նահանգից՝ երկար ճանապարհ անցնելով Իրանի տարածքով, այլ անմիջապես Ադրբեջանի մոտից Արաքսն անցնելով՝ մուտք գործել Նախիջևան: Նոր ձևավորվող ենթակառուցվածքները սպասարկելու նպատակով Իրանն ու Ադրբեջանը պայմանավորվել են նաև նոր անցակետ կառուցել Խոդաֆարինի շրջանում [139, *Tasnim* 2021]:

2022 թ. մարտի 7-ին Իրանի Արևելյան Ատրպատականի նահանգապետ Աբեդին Խորամի և Նախիջևանում Իրանի գլխավոր հյուպատոս Ահմադ Հոսեյնիի մասնակցությամբ կայացած հանդիպմանը քննարկվել էին Իրանի և Նախիջևանի միջև համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր: Մասնավորապես ընդգծվել էր «Ջուլֆա-Նախիջևան» երկաթգծի վերագործարկման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում ընդգծենք, որ Ադրբեջանը կառուցում է նաև Հորադիզ-Ադրբեջան երկաթգիծը⁴⁵, որի հայտարարված նպատակը Նախիջևանին կապվելն է:

⁴⁴ Համաձայն այդ հուշագրի՝ Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել 4 կամուրջ (Իրան-Ադրբեջան սահմանին)՝ 2 կամուրջը ավտոմեքենաների (նաև նախատեսված հետիոտների անցման համար) և 2-ը՝ երկաթգծի համար: Այդ ուղղության վրա նաև նախատեսվում է էլեկտրահաղորդման գծեր անցկացնել: Նախատեսվում է սահմանային երկու անցակետ կառուցել, 1000 բեռնատարի թողունակություն ապահովելով:

⁴⁵ Երկարությունը կազմում է 110 կմ: Նախապես հայտարարվել է, որ այն երեք փուլով է կառուցվելու: Առաջին փուլի 30 կմ հատվածի 80 տոկոսն է արված, 2-րդում 17 տոկոս է արված, իսկ երրորդ հատվածում Մնջավանից Ադրբեջանի ականագերծում է իրականացվում: Երկաթգծի կառուցումը կավարտվի 2023 թ.:

2022 թ. հուլիսին Թեհրանում Աստանայի ձևաչափով տեղի էր ունեցել Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների եռակողմ հանդիպումը, որի շրջանակում Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպումների ընթացքում ընդգծել էր Հայաստան-Իրան ցամաքային սահմանի անխախտելիությունը: «Իրանը դեմ կլինի և չի հանդուրժի այն քաղաքականությունն ու ծրագրերը, որոնց նպատակը կլինի Հայաստանի և Իրանի միջև հազարամյա սահմանի կտրվելը», - հայտարարում էր Իրանի հոգևոր առաջնորդը [212, *Khamenei* 2022]: Այդ հանդիպումից օրեր առաջ Ադրբեջանի ԱԽ քարտուղար Ռամիլ Ուսուբովը, ընդգծելով Իրանի տարածքով Նախիջևանին միանալու նպատակով ճանապարհի կառուցման հարցում Բաքվի հետաքրքրվածությունը, մասնավորապես նշել էր. «Ադրբեջանը սահմանագաման և սահմանագծման աշխատանքներից հետո ցանկանում է բացել Ջանգեզուրի միջանցքը: Ադրբեջանն արդեն կարողացել է համաձայնության գալ մյուս հարևանի՝ Իրանի հետ: Իլհամ Ալիևի նախաձեռնությամբ Իրանի հետ ստորագրված փոխընթացային հուշագրի համաձայն՝ Իրան-Հայաստան սահմանից 5 կմ հարավ կկառուցվի Արևելյան Ջանգեզուրն ու Նախիջևանն իրար կապող նոր տրանսպորտային հանգույց: Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ այդ նոր տրանսպորտային հանգույցը շահագործման է հանձնվելու ընդամենը 5 կմ աշխարհագրական տարբերությամբ: Հայաստանը հերթական անգամ սխալվել է իր հաշվարկներում: Մենք հերթական անգամ կարող ենք մեկուսացնել Հայաստանին՝ զրկելով զլորալ նախագծերին մասնակցելու հնարավորությունից» [3 *Usubov* 2022]: Ադրբեջանի ԱԽ քարտուղարի հայտարարությունից կարճ ժամանակ անց կրկին Նախիջևանի հարցում Իրանի

Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը 2022 թ. հունվարի 25-ին Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերիի հրավերով երկօրյա այցով մեկնել էր Իրան, [200, *Turan.az* 2022] որտեղ գեներալ Բաղերիի հետ, բացի անվտանգային հարցերից, քննարկել էր նաև երկկողմ համատեղ նախագծերի իրականացմանն առնչվող հարցեր:

Այցի ընթացքում կողմերն առարկայական բանակցություններ էին վարել հետևյալ հարցերի շուրջ.

- ռազմական համագործակցության ակտիվացում
- Իրանի և Ադրբեջանի միջև նոր ձևավորվող սահմանին անվտանգության ապահովման աշխատանքների կազմակերպում,
- Իրանի սահմանին Իսրայելի ներկայության շուրջ քննարկում: Իրանի ԶՈՒ ԳՇ պետը հայտարարել է, որ Իսրայելի ներկայությունը սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանի երկրներին,
- Խողաֆարինի սահմանային անցակետի բացման հետ կապված սահմանապահ ծառայությունների աշխատանքի համակարգում,
- Խողաֆարինի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների շահագործում և անվտանգության ապահովում,
- Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում կատարվող վերակառուցման աշխատանքներում Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ենթակայությամբ գործող շինարարական կազմակերպությունների ներգրավում,
- Կասպից ծովում զորավարություններ անցկացնելու պարագայում երկկողմ խորհրդակցությունների անցկացում:

2022 թ. մայիսի 18-ին երկօրյա աշխատանքային այցով Իրան էր այցելել Ադրբեջանի փոխվարչապետ, Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆաևը: Նա առանձին հանդիպումներ էր ունեցել Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանի, քաղաքաշինության և ճանապարհների նախարար Ռոսթամ Ղասեմիի, ինչպես նաև ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Հոսեյն Բաղերիի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել էին հետևյալ ոլորտներում երկկողմ համագործակցության հարցերը.

- Իրանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև տրանսպորտային կապի ապահովում,
- Իրանի տարածքով Թուրքմենստանից դեպի Ադրբեջան սվոպային եղանակով գազի մատակարարում,
- տարանցիկ նշանակության ենթակառուցվածքների ձևավորում,
- անվտանգային հարցերի քննարկում:

Ուսումնասիրելով Ադրբեջանի կողմից Իրանի տարածքով Նախիջևանի հետ կապվելու մասին հայտարարությունների ժամանակագրությունը, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարամանակագրությունը, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցող զարգացումները, Ադրբեջանի գործողությունների հետ կապված կարելի է դիտարկել հետևյալ սցենարները.

- Ադրբեջանը, «Նախիջևանի միջանցքի» գործարկմանն ուղղված գործողություններով փորձում է Իրանի և Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանմամբ շահագրգռված այլ դերակատարների ուշադրությունը շեղել «Ձանգեզուրի միջանցքը» բռնի ուժով բացելու իր նախաձեռնություններից: Մյուս կողմից էլ, Իրանի հետ համատեղ նախագծեր իրականացնելով, Ադրբեջա-

նը փորձում է իր դերակատարությունը մեծացնել Արևմուտքի և Իսրայելի մոտ, այդ նախագծերին մասնակցությունից հրաժարվելու դիմաց կարևոր այդ դերակատարներից ակնկալելով քաղաքական և ֆինանսական աջակցություն:

- Ադրբեջանը, փորձելով խեղաթյուրել «Զանգեզուրի միջանցքը» բռնի ուժով բացելու հարցում միջազգային հանրության ընկալումները, հաճախ «Զանգեզուրի միջանցք» ասելով նկատի է ունենում Իրանի տարածքով Նախիջևանի հետ կապվող ճանապարհը: Այսինքն, երբ անհրաժեշտություն է լինում ընդգծելու, թե իբր խաղաղ նպատակներ է հետապնդում, մատնացույց է անում Իրանի հետ համագործակցությունը, սակայն, հարմար պահին շարունակում է Հայաստանի նկատմամբ ագրեսիվ գործողությունները:
- Բաքուն «Նախիջևանի միջանցքի» շուրջ Իրանի հետ փոխգործակցությունը փորձում է ծառայեցնել «Զանգեզուրի միջանցքի» բացման ուղղությամբ իր նպատակների իրագործմանը: Մասնավորապես Ռուսաստանի միջոցով փորձում է ճնշումներ գործադրել Հայաստանի վրա՝ բռնի ուժով բացելու, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքը: Բաքվի տրամաբանությամբ, եթե Ռուսաստանը չբավարարի «Զանգեզուրի միջանցքի» բացման հարցում Ադրբեջանի պահանջները, ապա Ադրբեջանը Նախիջևանի հետ կկապվի Իրանի տարածքով՝ Ռուսաստանին զրկելով տարանցիկ ճանապարհի նկատմամբ վերահսկողություն ունենալու հնարավորությունից: Արդյունքում՝ զգալիորեն կմեծանա տարածաշրջանում Ռուսաստանի մրցակից Իրանի դերը:

- Ի. Ալիևի և Հ. Հաջիևի կողմից Իրանի տարածքով Նախիջևանին միանալու մասին հրապարակային հայտարարությունները կարող էին կապված լինել Հայաստան-Թուրքիա հարաբերություններում տեղի ունեցող վերափոխումների, ինչպես նաև Ռուսաստանի գործոնի հետ: Երբ Հաջիևն Անթալիայում հայտարարում էր, որ «քանի որ Հայաստանը հրաժարվում է բացել «Զանգեզուրի միջանցքը» ապա Ադրբեջանը Նախիջևանին կկապվի Իրանի տարածքով», Անկարային ակնարկում էր, որ Ադրբեջանն ու Թուրքիան միմյանց հետ Հայաստանի փոխադրեն կարող են կապվել Իրանի տարածքով: Ըստ ամենայնի՝ Ադրբեջանն այդ կերպ փորձում էր խափանել հայթորքական երկխոսությունը՝ ընդգծելով, որ Իրանի տարածքն ավելի նախընտրելի է, քան Հայաստանի: Ըստ Ադրբեջանի, եթե Հայաստանի տարածքով Նախիջևանին կապվելու իր ցանկությունը չի իրագործվում, ապա ավելի լավ է կապվել Իրանի տարածքով, քան Ռուսաստանի վերահսկողությամբ բացվող ճանապարհի: Այստեղ Իրանը ևս շահագրգիռ կողմ կարող էր լինել և բնականաբար կձգտեր, որպեսզի Թուրքիան և Ադրբեջանը միմյանց կապվեն ոչ թե Հայաստանի, այլ իր տարածքով:
- Ադրբեջանը ցանկանում է Իրանի ուշադրությունը շեղել Հայաստանի և Իրանի միջև ընթացող բանակցություններից, որոնք վերաբերում են Հայաստանի տարածքում տարանցիկ նշանակության ավտոմայրուղու շինարարական աշխատանքներին Իրանի մասնակցությանը:

Եթե 2021 թվականը Նախիջևանի հարցով կարելի է համարել Իրանի և Ադրբեջանի միջև ինտենսիվ բանակցությունների և ռազմավարական բնույթի համաձայնությունների ձեռք բերման

տարի, ապա 2022 թ. երկրորդ կիսամյակում Ադրբեջանի ագրեսիվ գործողություններով, Իրանի և Իսրայելի միջև անուղղակի պայքարի մեկնարկով պայմանավորված իրադրությունը կրկին լարվեց՝ տնտեսական օրակարգերին եկան փոխարինելու անվտանգային և ռազմական օրակարգերը:

2022 թ. հուլիսին Իրան-Ադրբեջան հարաբերություններում ի հայտ եկած հերթական լարվածության ընթացքում Իտալիայում Իրանի նախկին դեսպան Աբուլֆազլ Ջոհրեվանդը հայտարարել էր, որ Իրանը պետք է բռնակցի Նախիջևանը, որովհետև այդ տարածքը պատմականորեն պատկանել է Իրանին:

Իրանի և Ադրբեջանի միջև վերսկսված «տեղեկատվական պատերազմի» ընթացքում ի պատասխան Իլհամ Ալիևի՝ «Իրանի 40 միլիոն ադրբեջանցիների» իրավունքների հարցի շահարկման, Իրանի խորհրդարանի պատգամավոր Մոհամմադ Ռեզա Միրթաջեդդինին մասնավորապես հայտարարել էր. «*Եթե խոսվում է ազարիների՝ միմյանցից բաժանվելու մասին, ապա այդ Բաքուն և Նախիջևանն են, որոնք պետք է միանան Իրանին*»:

2023 թ. փետրվարի 6-ին Ադրբեջանի ԱԳՆ մամուլի քարտուղար Այխան Գաջիզադեն, անդրադառնալով «Նախիջևանի միջանցքի» գործարկմանը, նշել էր, որ Թեհրանում Ադրբեջանի դեսպանության վրա կատարված հարձակումը բացասաբար է ազդել այլ ոլորտներում կատարվող աշխատանքների, մասնավորապես տրանսպորտային նախագծերի վրա: Նա Իրանի հետ իրականացվող համատեղ նախագիծը ներկայացրել էր որպես «Չանգեզուրի միջանցքի» շրջանակում իրականացվող գործողություն [288, *Apa.az* 2023]:

Իրան-Ադրբեջան հարաբերություններում Նախիջևանի գործոնի քննարկման համատեքստում նաև կարևոր է դիտարկել Նախիջևանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները,

որոնք 2022-ին հանգեցրին Նախիջևանի Գերագույն Մեջլիսի նախագահ Վասիֆ Թալիբովի (1995-2022) պաշտոնանկությանը: Ուշագրավ է, որ ադրբեջանական կողմը Թալիբովին պաշտոնանկ անելիս զգալիորեն շահարկում էր նաև Իրանի հարցը: Կովկասի հարցերով իրանցի փորձագետ Ահմադ Քազեմին, անդրադառնալով վերոնշյալ գործընթացներին, համոզմունք էր հայտնել, որ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների կողմից վարվող շովինիստական քաղաքականությունը բացասաբար է ազդում Նախիջևանի բնակչության վրա: Իրանցի փորձագետը չէր բացառել, որ կարող է Նախիջևանի անկախության հարց առաջանալ:

Ադրբեջանի նախագահը, միտումնավոր թեժացնելով Նախիջևանի հարցը, նաև փորձում էր շահարկել երկրամասի նկատմամբ Իրանում հնչող մեկնաբանությունները⁴⁶ [155], ցան-

⁴⁶ 2022 թ. հոկտեմբերի 22-ին պարսկալեզու «Azariha» թելեգրամյան ալիքը տեղեկատվություն էր հրապարակել, ըստ որի՝ իրանական «Sahar» հեռուստաալիքը տեղեկացրել է, որ Նախիջևանում մի շարժում է ձևավորվել, որի նպատակը Նախիջևանի՝ Իրանին միանալն է: 2022 թ. հոկտեմբերի 30-ին Իրանի տակը Նախիջևանի՝ Իրանին միանալն է: 2022 թ. հոկտեմբերի 30-ին Իրանի պետական հեռուստաընկերության 3-րդ ալիքն էլ մերձարաքսյան շրջանում պետական հեռուստաընկերության վերաբերյալ տեսանյութ էր հրա- Իրանի կողմից անցկացված զորավարժության վերաբերյալ պարակել, որում զորավարժության անցկացման վայրերի և դրա հետապնդած նպատակների վերաբերյալ նոր մանրամասներ էին ներկայացվել: Մասնավորապես նշվում էր, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածք- րապես նշվում էր, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածք- ներում Իսրայելը ռազմակայաններ հիմնելու նպատակ ունի: Մեկ այլ հատվածում էլ նշվում էր, որ Միացյալ Նահանգներն ու ՆԱՏՕ-ն, Հայաստանի տարած- ծում էլ նշվում էր, որ Միացյալ Նահանգներն ու ՆԱՏՕ-ն, Հայաստանի և Իրանի թով միջանցք բացելով, նպատակ ունեն մոտենալու Ռուսաստանի և Իրանի սահմաններին: Ըստ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ցամաքային զորքերի հրամանատարի ներկայացրած տվյալ- ների՝ զորավարժությունն անցկացվել է Ղափուղ (Նախիջևանի սահման), Խար- վանա (Հայաստանի սահման) և Փարսաբադի (Ադրբեջանի սահման) շրջան- ներում: 2022 թ. նոյեմբերի 12-13-ը ԻԻՀ Մեջլիսի մի խումբ պատգամավորներ իրենց հարցազրույցներում և խորհրդարանում ունեցած ելույթներում դատա- պարտել էին Ադրբեջանի նախագահի՝ Իրանի հասցեին արած հայտարարու- թյունները: Մասնավորապես թյուրբախոս պատգամավորներ Մոհամմադ Ռեզա Միրթաջեդդինին և Ալի Նիքզադը, դիմելով Ալիևին, ասել են. «*Եթե խոսվում է*

կանում առիթն օգտագործելով Թալիբովին հեռացնել իշխանությունից, լուծարել ինքնավարությունն ու այն դարձնել Ադրբեջանի մարզերից մեկը: Տևական ժամանակ ադրբեջանցի տարբեր փորձագետները, ադրբեջանական ՁԼՄ-ները շրջանառում էին այն թեզը, թե «Թալիբովն Իրանի հետ սերտ համագործակցություն է ունեցել՝ ընդդեմ Ադրբեջանի շահերի»⁴⁷ [315, Azpolitika.az 2022]:

ազարիների՝ միմյանցից բաժանվելու մասին, ապա այդ Բաքուն և Նախիջևանն են, որոնք պետք է միանան Իրանին»:

⁴⁷ Ադրբեջանական «Azpolitika.info» կայքը 2023 թ. հունվարի 24-ին լրագրողական մի հետաքննության վերաբերյալ տեղեկություն էր հաղորդել, ըստ որի՝ Նախիջևանի Գերագույն Մեջլիսի նախկին նախագահ Վասիֆ Թալիբովի և Իրանի իշխանությունների միջև ձեռք բերված գաղտնի պայմանավորվածության արդյունքում Նախիջևանի Շարուրի շրջանի Արաբենգիջա շրջանում Արաքս գետի հունը փոխվել է, ինչի արդյունքում շուրջ 21 հա տարածք հայտնվել էր Իրանի Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունը, սակայն, մի քանի ամիս անց հերքեց այդ տեղեկատվության մեջ արված պնդումները: Վերոնշյալի համատեքստում 2022 թ. նոյեմբերի 17-ին «Իսլամական հեղափոխություն» Ադրբեջանում» պարսկալեզու թելեգրամյան ալիքը գրել էր, որ Բաքուն Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը լուծարելու գործընթաց է սկսել: Նշված թելեգրամյան ալիքը հրապարակել էր ադրբեջանցի փորձագետ Թուրալ Սաֆարովի՝ ադրբեջանական LAF TV հեռուստաընկերությանը տված հարցազրույցը, որում վերջինս Նախիջևանի վերաբերյալ ստորև նշված ուշագրավ պնդումներն էր արել, որոնք առնչվում էին նաև Իրանին:

- Ինչ տրամաբանությամբ Նախիջևանը պետք է կառավարություն ունենա, մի՞թե Ադրբեջանի մյուս շրջանները կառավարություն ունեն,
- «Չանգեզուրի միջանցքը» բացվելուց հետո Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը պետք է ամբողջությամբ լուծարվի:
- Հաշվի առնելով Նախիջևանի ներկայիս ղեկավարության՝ Իրանի հետ հարաբերությունները սերտացնելու ձգտումները՝ նաև այդ հանգամանքից ելնելով պետք է ինքնավարությունը վերացվի,
- արդյոք Բաքուն տեղյա՞կ է, որ վերջերս Նախիջևան է այցելել Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հրամանատար Հոսեյն Սալամին և հանդիպել Նախիջևանի Գերագույն Մեջլիսի նախագահ Վասիֆ Թալիբովի հետ,
- Ինչո՞ւ Նախիջևանի Մեջլիսի 45 պատգամավորներից և ոչ մեկը չի արձագանքել Թեհրանի ձևավորած այն շարժմանը, ըստ որի նպատակն է Նախիջևանը միացնել Իրանին,

Ադրբեջանի կողմից Նախիջևանում իրականացված փոփոխությունների պատճառներից մեկն էլ այն էր, որ Բաքուն մտավախություն ուներ, որ Թուրքիան աշխարհաքաղաքական հարմար իրադրությունում հնարավոր է Նախիջևանը բռնակցի իրեն: Այդ նպատակով Անկարայի կողմից առաջ է մղվում այսպես կոչված Թուրք-Չանգեզուրյան հանրապետության հոչակման գործընթացը: Այդ նախաձեռնության հեղինակներն իրենց գործունեությունը ծավալում են Թուրքիայում՝ տարածքային անհիմն պահանջներ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ: «Թուրք-Չանգեզուրյան հանրապետության» հոչակումն ինչ-որ առումով Ադրբեջանի իշխանություններին կարծես թե հիշեցնում է 1918 թ. Նախիջևանում Օսմանյան կայսրության կողմից ձևավորված «Թուրք-Արաքսյան» հանրապետությունը: Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունը նպատակ ուներ կանխելու Նախիջևանի նկատմամբ Իրանի նկրտումները: Ուշագրավ է, որ Ադրբեջանում «Թուրք-Չանգեզուրյան» հանրապետության հոչակմանն առանձնապես մեծ խանդավառությամբ չեն վերաբերում: Փոխարենը, Ադրբեջանը օրակարգ բերելով այսպես կոչված «Արևմտյան Չանգեզուրի» հարցը, այդ կերպ ըստ ամենայնի փորձում է հակազդել Թուրքիայի՝ Նախիջևանի նկատմամբ նկրտումներին [122, Kazemi].

- Վասիֆ Թալիբովի իշխանությանը պետք է վերջ տրվի: Ինչո՞ւ պետք է Նախիջևանի գինվորները շտրիակալություն հայտնեն ոչ թե Ադրբեջանի նախագահին, այլ՝ Թալիբովին,
- Ադրբեջանում Փաշալենի կլանը ամրապնդել է իր դիրքերը: Նախիջևանյան կլանը թուլացել է, այդ առումով Թալիբովին պաշտոնանկ անելու լավ նախադրյալներ են ստեղծվել,
- Նախիջևանում չլինելով էթնիկ փոքրամասնություն, ինքնավարության կարգավիճակը Ադրբեջանի մյուս էթնիկական խմբերին՝ թալիշներին, լեզգիներին ու հայերին դրդում է ինքնավարություններ ունենալ:

Վերլուծելով Նախիջևանի գործոնի՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա ունեցած ազդեցությունը և գնահատելով երկկողմ հարաբերություններում նրա ունեցած դերակատարությունը, հետևյալ եզրակացությունները կարելի է ներկայացնել:

Անցնող տարիներին Իրանին հաջողվել է ոչ շատ մեծ, սակայն, Իրանի շահերը սպասարկելու տեսանկյունից բավարար տնտեսական ազդեցություն ունենալ Նախիջևանում: Իրանի տարածքով Ադրբեջանը սվոպային եղանակով գազ է մատակարարում Նախիջևան: Նախիջևանի բնակչության մի զգալի մասը տնտեսական առումով ինտեգրված է Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի հետ:

Իրանը փորձել է Նախիջևանում կրոնական ազդեցությունը մեծացնելուն ուղղված քայլեր ձեռնարկել, մասնավորապես Իրանի նախաձեռնությամբ գործարկվել է Նախիջևան-Մաշհադ երկաթգիծը, Իրանը միակողմանիորեն Ադրբեջանի քաղաքացիների համար չեղարկել է վիզային ռեժիմը, սակայն, Ադրբեջանը ոչ: Փոխարենը Նախիջևանն է Իրանի քաղաքացիների համար չեղարկել վիզային ռեժիմը:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ Իրանը հայտնվեց աշխարհաքաղաքական մեկուսացման վտանգի առջև, իրադրությունը փոխվեց: Տարածաշրջանում հնարավոր ապաշրջափակման դեպքում Իրան-Ադրբեջան հարաբերություններում Նախիջևանի գործոնը կարող է փոխել իր նշանակությունը: Այն իր հետ հնարավոր է՝ բերի ինչպես մարտահրավերներ, այնպես էլ հնարավորություններ:

Շտապատերազմական շրջանում Նախիջևանի նկատմամբ փոխվել են Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի մոտեցումները: Եթե Իրանն ու Ռուսաստանը Նախիջևանն ավելի շատ դիտարկում են «Հյուսիս-հարավ միջազգային տրանսպորտային մի-

ջանցքի» կարևոր օղակի մի մաս, ապա Թուրքիայի համար Նախիջևանն առաջին հերթին «Արևելք-Արևմուտք», կամ «Միջին միջանցքի» շրջանակում է Նախիջևանի դերակատարությունը կարևորում:

Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության հիմնումից հետո հյուպատոսարանի և Նախիջևանում Իրանի գլխավոր հյուպատոսարանի միջև ակտիվ փոխգործակցություն է ձևավորվել: Թավրիզում Հայաստանի գլխավոր հյուպատոսության բացումից հետո երեք գլխավոր հյուպատոսությունների միջև փոխշահավետ համագործակցություն կարող է ձևավորվել:

Նախիջևանում տեղի ունեցած իշխանափոխությունը և սպասվող քաղաքական գործընթացներով պայմանավորված կարող է վերափոխվել Նախիջևանի աշխարհաքաղաքական նշանակությունը: Կախված այն հանգամանքից, թե երկրամասի ինքնավարությունը կլուծարվի և այն կդառնա Ադրբեջանի շրջաններից մեկը, թե կպահպանի ներկայիս ինքնավարությունն առկա մեթոդությամբ կենթարկվի Բաքվին, կուրվագծեն Նախիջևանի նկատմամբ տարածաշրջանային երկրների մոտեցումները: Նախիջևանի իրավական կարգավիճակի հարցը կարող է ազդել Արցախի շուրջ զարգացումների վրա, և հակառակը, Արցախի շուրջ զարգացումները կարող են ազդել Նախիջևանի կարգավիճակի հարցում Բաքվի որոշումների կայացման վրա:

ԳԼՈՒԽ 5
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իլիամ Ալիևի նախագահության շրջանում Ադրբեջանի իշխանությունների ներքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը եղել է ի դեմս՝ հայերի, իրանցիների և ռուսների, արտաքին թշնամու կերպար ձևավորելու միջոցով ազդել հասարակական կարծիքի վրա՝ այն ծառայեցնելով իր քաղաքական օրակարգին:

Ադրբեջանը հայկական գործոնն օգտագործում է նաև իր արտաքին քաղաքական օրակարգը սպասարկելու նպատակով: Այդ նպատակով ստեղծվում և տարածվում են տարատեսակ նարատիվներ: Դրանք առնչվում են ինչպես Հայաստան-Իրան հարաբերություններին, այնպես էլ իրանահայությանը: Ադրբեջանը, Իրանի հետ հարաբերություններում շահարկելով հայկական գործոնը, երկարաժամկետ և կարճաժամկետ հեռանկարի համար հետևյալ նպատակներն է հետապնդում.

- Պանազարիական գաղափարախոսության հիման վրա Իրանի թյուրքախոս ատրպատականցիների նկատմամբ քաղաքականության անխոչընդոտ իրականացում,
- Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Իրանի դիրքորոշման ձևավորման վրա ազդեցություն,
- Հայաստանի և Իրանի միջև անվտանգության մթնոլորտի ձևավորում,
- Հայաստանի և Իրանի միջև ռազմավարական նշանակության նախագծերի իրականացմանը խոչընդոտում,

- Իրանի թյուրքախոս բնակչության շրջանում հայերի, մասնավորապես իրանահայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքի ձևավորում,
- Իրանի իշխանությունների հետ անուղղակի կերպով այլ հարցերի վերաբերյալ սակարկելու հնարավորություն:

Հաշվի առնելով Իրանի Ատրպատական նահանգում անջատողականության վտանգը՝ Ադրբեջանի կողմից հայկական գործոնի շահարկումն Իրանի համար բավական խոցելի է: Տարիներ շարունակ Ադրբեջանի հաշվարկը եղել է հայկական գործոնի շահարկմամբ ազդել Հայաստանի և Արցախի հարցում Իրանի դիրքորոշման վրա: Ընդ որում՝ Ադրբեջանին հաջողվել է Իրանի թյուրքախոս ատրպատականցիների շրջանում իր ազդեցության գործակալների ցանցը ձևավորել և նրանց միջոցով հայկականության հարցը մշտապես պահել օրակարգում:

Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա հայկական գործոնի ազդեցությունն օբյեկտիվ գնահատելու նպատակով խնդիրն անհրաժեշտ է դիտարկել երեք շրջափուլում:

Առաջին շրջափուլն առնչվում է Ղարաբաղյան 1-ին պատերազմից մինչև Հեյդար Ալիևի նախագահության ավարտն ընկած ժամանահատվածին: Երկրորդ փուլն ընդգրկում է 2003-ից մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմն ընկած ժամանակաշրջանը, իսկ երրորդը՝ հետպատերազմական շրջանին:

Ղարաբաղյան 1-ին պատերազմի ժամանակ Ադրբեջանն օգտագործում էր այն նարատիվը, թե «հայերն Իրանի աջակցությամբ են օկուպացրել Ադրբեջանի տարածքը»: Որպես հիմնավորում բերվում էր այն իրողությունը, որ Շուշիի ազատագրումը համընկել էր Թեհրանում կայացած Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի նախագահների եռակողմ հանդիպման հետ: Հետպատերազմական շրջափուլում Ադրբեջանի հիմնական շահարկումն

այն էր, թե իբր «շիայական Իրանը, որը ներկայանում է մուսուլմանական ժողովուրդների պաշտպան, իր երկակի քաղաքականությամբ փարիներ շարունակ աջակցել է հայերին, որոնք օկուպացրել են Լեռնային Ղարաբաղը, որն Իրանի Իսլամական Հանրապետությունը փարիներ շարունակ իսլամական փարածք է անվանել»:

Այդ թեմային առնչվող թերևս ամենահայտնի նարատիվը վերաբերում է Ադդամի մզկիթն անասնագոմի վերածված լինելու մասին հրապարակումներին: Ադրբեջանական քարոզչությունը տարիներ շարունակ մի լուսանկար է տարածում, որը ենթադրաբար արվել է Ադդամի մզկիթում, որտեղ իբր հայերն անասուններ են պահել:

Ադրբեջանը Արցախի մուսուլմանական հուշարձանների պահպանության հարցը մշտապես բարձրացրել է Իրանի պաշտոնյաների՝ Բաքու կատարած այցերի ընթացքում: Շատ հաճախ իրանցի պաշտոնյաների ոչ հասցեական մեկնաբանություններն աղավաղվել և օգտագործվել են քարոզչական նպատակով:

Հետպատերազմական շրջափուլում տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության փոփոխություն թույլ չտալու և Իսրայել-Ադրբեջան ռազմական համագործակցությունից բխող սպառնալիքների առնչությամբ Իրանի նախագգուշացումներին ի պատասխան Ադրբեջանը հայկական գործոնի շահարկմամբ Հայաստանի դեմ իր ագրեսիվ գործողությունները փորձում է ներկայացնել որպես «հայ-իրանական եղբայրությանը» դիմագրավելուն ուղղված քայլեր: Բաքուն այդ հարցի շահարկմամբ փորձում է դիրքավորվել որպես երկիր, որը միայնակ պայքարում է Իրանի «անկայունացնող» քաղաքականության դեմ: Ադրբեջանի այդ վարքագիծն էլ ընդունվում է Միացյալ Նահանգ-

ների կողմից: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը 2023 թ. Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում հայտարարել էր, թե Վաշինգտոնի՝ Ադրբեջանին տրվող ֆինանսական աջակցությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Ադրբեջանն Իրանի հետ ունի ընդարձակ սահման և որ Իրանի գործողությունները սպառնում են տարածաշրջանի անվտանգությանը [205, Blinken 2023]:

Անկախ այն հանգամանքից, թե Իրանը ԼՂ առաջին պատերազմի ընթացքում ինչ աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին (դրա վերաբերյալ փաստավավերագրական բազմաթիվ նյութեր են պահպանվել և իրանական կողմից անհրաժեշտ պահին դրանք փարածվում են [96, Haqiqatpour 2023], միևնույն է, ադրբեջանական քարոզչությունը չի հրաժարվում այդ նարատիվից:

Կախված այն հանգամանքից, թե տվյալ շրջափուլում որոնք են Ադրբեջանի իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, Բաքուն հայկական գործոնն օգտագործում է ըստ սահմանված առաջնահերթության⁴⁸ [283, Haqqin.az 2021]:

Եթե մինչև 2000-ական թվականներն Իրանի հետ հարաբերություններում հայկական գործոնը հիմնականում շահարկվում էր Բաքվի կողմից՝ պաշտոնական հայտարարությունների տեսքով, ապա Իլհամ Ալիևի նախագահության շրջանում պանազա-

⁴⁸ Մինչև 2020 թ. պատերազմն Ադրբեջանը պարբերաբար հայտարարում էր, թե Իրանը, փոխանակ ԼՂ հարցում իր լիակատար աջակցությունը հայտնի շիայական Ադրբեջանին, համագործակցում է քրիստոնյա Հայաստանի հետ, որն օկուպացրել է իսլամական տարածք Լեռնային Ղարաբաղը: Ավելին, 44-որդա պատերազմի օրերին Հայաստանին ամբողջությամբ մեկուսացնելու նպատակով Իրանին մեղադրում էր Հայաստանին սպառազինություն տրամադրելու, լոգիստիկ աջակցություն ցուցաբերելու և հետախուզական տվյալներ տրամադրելու մեջ:

րիականության գաղափարախոսության տարածմամբ Ադրբեջանին հաջողվեց Իրանի տարածքում ազդեցության գործակալների մի մեծ ցանց ձևավորել:

Հայաստանի և Իրանի միջև տեղի ունեցող ցանկացած զարգացում, որը քիչ թե շատ կարող է նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանն ու տարածաշրջանում ՀՀ դիրքերի ամրապնդմանը, Ադրբեջանն իր վարքագծով կարծես թե Իրանի թյուրքախոս բնակչության շրջանում իր նախաձեռնությամբ ձևավորված խմբերին ուղերձ է հղում առ այն, թե իրենց հրապարակային գործունեության մեջ ինչ շեշտադրումներով է անհրաժեշտ շահարկել հայկական գործոնը: Այդ դրսևորումն առավել արտահայտիչ նկատվեց 2016 թ. Ապրիլյան պատերազմի ժամանակ: Երբ Հարավային Կովկասի հարցերով մասնագիտացած իրանական մի քանի կայք, որոնք անկողմնակալ լրատվամիջոցի համբավ ունեին, ռազմական գործողությունների առաջին իսկ օրվանից ինտենսիվորեն սկսեցին ադրբեջանական քարոզչական թեզերը տարածել:

2020 թ. 44-օրյա պատերազմի օրերին Ադրբեջանն օգտագործում էր նույն գործիքակազմը, այս անգամ էլ օգտագործելով սոցիալական ցանցերի հնարավորությունները: Պատերազմի օրերին Telegram-ի մի շարք ալիքներ և Twitter-ի օգտահաշիվներ վայրկյանի տարբերությամբ պարսկերենով տարածում էին Ադրբեջանի պաշտպանության նախարարության հայտարարություններն ու ադրբեջանական քարոզչության թեզերը:

Անցնող տարիների ընթացքում հայ և իրանցի փորձագետների միջև ընթացող բանավեճերի առարկան, ի թիվս այլ հարցերի՝ վերաբերել է հայ-իրանական հարաբերությունների առնչությամբ Ադրբեջանի շահարկումներին Իրանի կողմից չարձագանքելուն և դրանց տուրք տալուն: Իրանական կողմից հիմ-

նականում ներկայացվել է այն հիմնավորումը, որ «Իրանը չի կարող հաշվի չառնել երկրի թյուրքախոս բնակչության պահանջներն ու Ադրբեջանի հետ հարաբերություններում իսլամական-շիայական համերաշխության գործոնը, և այլն»:

Եթե Իրան-Ադրբեջան հարաբերություններում զարգացման դրական դինամիկա էր արձանագրվում, ապա չնվազեցնելով Հայաստանի նշանակությունը, այնուամենայնիվ, Թեհրանն առաջնահերթություն էր տալիս Ադրբեջանի հետ հարաբերություններին [241, Mfa.gov.ir 2020]:

Խոսքն ամենևին այն պնդման մասին չէ, որ Իրանը պետք է թույլ տար, որպեսզի իր տարածքը հայերի և ադրբեջանցիների բախման հարթակի վերածվեր: Պարզապես, երբ Իրանի թյուրքախոսների առավելապաշտական պահանջներին տուրք տալով՝ Իրանն անտեսում էր հայկական գործոնը, նախադեպ էր դառնում և Իրանի թյուրքախոս-անջատողականների շրջանում վստահություն էր առաջանում, որ հնարավոր է հայկական գործոնի շահարկմամբ ազդել Իրանի որոշումների կայացման վրա և թուլացնել պետության դիմադրողականությունը:

Վերոնշյալ իրողությանն առնչվող օրինակներից մեկը վերաբերում է Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստ Վարազդատ Հարոյանի հետ Թավրիզի ֆուտբոլային ակումբի կնքված պայմանագրի չեղյալ հայտարարմանը: 2016 թ. հունիսին Թավրիզի «Tractor Sazi» ֆուտբոլային ակումբը Վարազդատ Հարոյանի հետ երկու տարվա պայմանագիր էր կնքել, սակայն, կարճ ժամանակ անց ակումբի ղեկավար Մոսթաֆա Աջորլուն, տեղի տալով Իրանի թյուրքախոս որոշ խմբերի շահարկումներին, հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ հրաժարվում է հայազգի ֆուտբոլիստի հետ գործարքից: Նա իր որոշումը բացատրել էր նրանով, թե «եկել է Թավրիզ, որպեսզի միավորի թյուրքախոս

ազարհներին, իսկ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստի հեպ գործարքը կարող է սպառնալ Իրանի թյուրքախոս բնակչության միասնությանը [133, ISNA 2016]»: Այն դեպքում, որ Աջորլուն մինչև Թավրիզի ֆուտբոլային ակումբի ղեկավարումը ծառայել է Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսում և որպես բարձրաստիճան գինվորական քաջատեղյակ է եղել Իրանի անվտանգության ճարտարապետությանը:

Իրանական «ISNA» լրատվական գործակալությունը վերոնշյալի առնչությամբ հետևյալն էր գրել. «Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմն ի՞նչ կապ ունի Թավրիզի հայրենասեր ժողովրդի հեպ: Եթե մեր ընկերները պնդում են, թե սպորտի նկատմամբ չպետք է քաղաքական և ռասիստական մոտեցում ցուցաբերել, ապա ինչո՞ւ իրենց կառուցում այդպես չեն վարվում: Արդյո՞ք այս մոտեցումը ոչ այլ ինչ է, քան ռասիզմ, ինչո՞ւ պետք է նման որոշումներով իրանական ֆուտբոլը հարցականի տակ դնենք: Նախկինում իրանահայ հայրնի ֆուտբոլիստ Անդրանիկ Թեյմուրյանը ևս խաղացել է «Թրաքթորսազիում», մի՞թե Անդոն աֆղան էր»:

Տարիներ շարունակ իրանցի բարձրաստիճան հոգևորականները, թյուրքախոս պատգամավորներից շատերը, գուցե ընտրողների շրջանում իրենց վարկանիշը բարձրացնելու, կամ թյուրքականության գործոնի ազդեցությամբ պայմանավորված հայերին «օկուպանտ» [177, Arannews.ir 2015] են անվանել, մեղադրել քուրդ ահաբեկիչներին աջակցելու, Իսրայելի հետ ընդդեմ Իրանի գործակցելու և այլ անհիմն մեղադրանքների մեջ, այնինչ, Հայաստանը թերևս Իրանի միակ հարևանն է, որի հասարակության զգալի հատվածը Իրանի նկատմամբ դրական վերաբերմունք ունի, որը, սակայն, 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Հայաստանում իրականացված սոցիալ-

ցումների համաձայն՝ իրանցի որոշ պաշտոնյաների վարքագծով պայմանավորված փոխվել է [7, Իսկանդարյան 2022, էջ 106]:

Հիշատակման արժանի է այն փաստը, որ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին 44-օրյա պատերազմի օրերին ունեցած հավասարակշռված ելույթում կարևոր արձանագրում էր արել՝ ընդգծելով Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը [159, Khamenei 2020]:

Իրանական կողմը հայկական գործոնի դերը սկսեց կարևորել միայն այն ժամանակ, երբ 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում բախվեց Իսրայել-Ադրբեջան տանդեմի հարուցած մարտահրավերներին:

Շեղանակաբանական շրջանում իրանցի փորձագետներից շատերն Իրանի նախկին և ներկա իշխանություններին քննադատում էին Կովկասյան տարածաշրջանի հարցում սխալ քաղաքականություն վարելու մեջ, ինչն ըստ նրանց՝ հանգեցրել է տարածաշրջանային տնտեսական նախագծերից Իրանի դուրս մնալուն: Մասնավորապես նրանք հարց են բարձրացնում, թե Իրանում ո՞ր խմբավորմանն էր ձեռնադրում, որ Թավրիզ-Հայաստան մայրուղին, որը Հայաստանն Իրանին կապող կարևորագույն ճանապարհը կարող էր դառնալ, տարիներ շարունակ չի կառուցվում: Տևական ժամանակ է, ինչ Իրանում խոսվում, քննարկվում է Թավրիզ-Հայաստան մայրուղու կառուցման⁴⁹ ռազմավարական նշանակության մասին, որը զգալիորեն կկրճատի դեպի

⁴⁹ Թավրիզ-Հայաստան ավտոմայրուղու հիմնարկերի արարողությունը տեղի է ունեցել 2010 թ.: Ըստ նախագծի՝ առաջին փուլում նախատեսվում է կառուցել 12 կմ հատված, որի կառուցումը պետք է ֆինանսավորվի Իրանի ճանապարհների կմ հատված, որի կառուցումը պետք է ֆինանսավորվի կողմից, իսկ մյուս 10 կմ հատվածի շինարարության նախարարության կողմից, իսկ մյուս 10 կմ հատվածի շինարարության համար պետք է ֆինանսական միջոցներ հատկացնի Թավրիզի քաղաքապետարանը: Ավտոմայրուղու գործարկումից հետո Թավրիզից մինչև Հայաստանի սահման հնարավոր կլինի հասնել ընդամենը մեկ ժամում:

Հայաստան ցամաքային ճանապարհը, սակայն, քանի տարի է, ինչ որևէ առաջընթաց չի գրանցվում այդ հարցում:

Այդ նախագիծը մեկ տասնամյակից ավելի է, ինչ պարբերաբար ընդգրկվում է Իրանի կառավարության օրակարգում, սակայն, ինչ-որ պահի, ըստ երևույթին նահանգային իշխանությունների կողմից հետևողականություն չի ցուցաբերվում, որպեսզի այդ նախագիծն ավարտական փուլին հասնի:

2019 թ. Թավրիզ-Հայաստան ավտոմայրուղու կառուցման հարցը կրկին հայտնվել էր Իրանի խորհրդարանի պատգամավորների ուշադրության կենտրոնում: Հարցին պարբերաբար անդրադառնում էին հատկապես ԻԻՀ Ատրպատական նահանգից ընտրված պատգամավորները: Նրանք գործադիր իշխանությանը հորդորում էին արագացնել դրա շինարարությունը՝ ընդգծելով նախագծի՝ Արևելյան Ատրպատական նահանգի համար ռազմավարական կարևոր նշանակությունը:

2019 թ. սեպտեմբերին էլ խնդրին անդրադարձել էր Թավրիզի ընտրատարածքից ընտրված պատգամավոր Ջահրա Սային, որն Իրանի պետական «IRNA» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում նշել էր, որ պատգամավորներն Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարարությանը հղած նամակում խնդրել են, որ Թավրիզ-Հայաստան ավտոմայրուղու կառուցման երկրորդ հատվածի ֆինանսավորումը ևս իր վրա վերցնի նախարարությունը, քանի որ Թավրիզի քաղաքապետարանը ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող ֆինանսավորել:

2019 թ. հոկտեմբերի 24-ին Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ենթակայությամբ գործող «Tasnim» լրատվական գործակալությունը տեղեկատվություն էր հրապարակել, համաձայն որի՝ Իրանի Արևելյան

Ատրպատական նահանգի և Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարարության միջև համաձայնություն է ձեռք բերվել, որ նահանգում պղնձի արդյունահանմամբ զբաղվող «Mes Sungun» ընկերության հարկերի մի մասը (120-130 մլրդ թուման) ուղղվի Թավրիզ-Հայաստան ավտոմայրուղու կառուցմանը:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Իրանում կրկին ընդգծվեց այդ նախագծի կարևորությունը: 2023 թ. փետրվարի 24-ին Իրանի «Արաս» ազատ տնտեսական գոտու գլխավոր տնօրենի և Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահի մասնակցությամբ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների վերաբերյալ հանդիպում-քննարկում էր տեղի ունեցել: Մասնավորապես ընդգծվել էր Թավրիզ-Հայաստան ավտոմայրուղու կառուցումն ու Հայաստան-Իրան սահմանային անցակետի արդիականացման և թողունակության բարձրացման անհրաժեշտությունը:

«Mes Sungun» ընկերության գործադիր տնօրեն Մաաբուդ Աբասզադեի հավաստիացմամբ՝ 2025 թ. ճանապարհը կառուցված կլինի [80, *Tabnakazarsharghi.ir* 2022]:

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում Ադրբեջանը և Թուրքիան սկսեցին ավելի բացահայտ շահարկել իրանցի թյուրքախոսների հարցերը: Մասնավորապես 2020 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում Ադրբեջանի ու Թուրքիայի նախագահների մասնակցությամբ կազմակերպված զորահանդեսի ժամանակ Թուրքիայի նախագահն ադրբեջանցի բանաստեղծներից մեկի՝ «Մեծ Ադրբեջանի» պարտադրված մասնատեղծներից մեկին բանաստեղծությունն էր արտասանել [314, *Aa.com.tr* 2020], որը հարուցել էր պաշտոնական Թեհրանի դժգոհություն:

նր: Իրանում Թուրքիայի դեսպանը կանչվեց ԱԳՆ [78, Mfa.gov.ir 2020]:

Էրդոհանի այդ հայտարարությունից հետո Իրանի թյուրքախոսների հետ կապված խնդիրների շահարկումն ավելի պարբերական բնույթ սկսեց կրել: Էլչիբեյից հետո թերևս առաջին անգամն էր, որ Ադրբեջանի նախագահը բացահայտ շահարկում էր իրանցի թյուրքախոսների հարցը՝ այն փոխկապակցելով հայկական գործոնի հետ:

Ադրբեջանի նախագահը, անդրադառնալով Ադրբեջանի սահմաններին Իրանի զինված ուժերի անցկացրած զորավարժություններին, մասնավորապես նշել էր. «Իրանը 30 տարի զորավարժություն չէր անում, երբ հայերը օկուպացրել էին Ադրբեջանի հողերը» [294, Armeniasputnik.am 2021]:

Ադրբեջանի նախագահը, շահարկելով իրանահայերի հարցը [279, Haqqin.az 2022], մասնավորապես նշել է. «Իրանում փոքրաթիվ հայ համայնքը հայկական դպրոցներ ունի, սակայն, միլիոնավոր ադրբեջանցիներ զրկված են ադրբեջանական դպրոց ունենալու հնարավորությունից: Հայերն ինչո՞ւ են Իրանի դպրոցներում հայերեն սովորում, իսկ ադրբեջանցիներն իրենց մայրենի լեզվով ուսում ստանալու հնարավորություն չունեն» [227, Apa.az 2022]:

Անցնող տարիներին Ադրբեջանի ղեկավարությունն այն աստիճանի է գեներացրել հայերի նկատմամբ թշնամանքն ու հայկական գործոնը դարձրել ներքաղաքական օրակարգի մաս, որ նույնիսկ քաղաքային իշխանությունների սովորական համագործակցությանն արձագանքում է Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալահշուքուր Փաշազադեն: Վերջինս, արձագանքելով Թեհրանի և Երևանի միջև քույր քաղաքների հռչակմանը, հետևյալ ուշագրավ մեկնաբանությունն էր արել. «Իրանը

իսլամի պարմության մեջ ամենամեծ սխալն է գործում, որն աններելի է» [259, Media.az 2023]:

Շտապատերազմական իրադրությունում Իրանի իշխանությունները վերանայեցին հայկական գործոնի նկատմամբ մինչ այդ որդեգրած քաղաքականությունը: Եթե նախկինում Իրանի իշխանությունները թյուրքախոսների շրջապատում կաշկանդվում էին հայերի հետ համագործակցության մասին հրապարակային խոսելուց, ապա ներկայումս, ընդհակառակը, իրենց գործողություններով ընդգծում են հայկական գործոնի կարևորությունը:

Մինչև պատերազմը բացառվում էր, որ հայաստանցի որևէ փորձագետ կկարողանա Իրանի պետական հեռուստաընկերությանը ելույթ ունենալ: Փաստացի, 2021-2023 թթ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած աննախադեպ լարվածության ֆոնին իրանական ԶԼՄ-ներն ինստենսիվ համագործակցում են հայաստանցի փորձագետների հետ՝ նրանց տեսակետները ներկայացնելով Իրանի 80 միլիոնանոց հասարակությանը:

Նկատելի է նաև իրանցի փորձագետների աննախադեպ հետաքրքրությունը Հայաստանի շուրջ զարգացումներին: Եթե մինչև պատերազմն իրանական առաջատար լրատվամիջոցները Հայաստանին անդրադառնում էին հիմնական երկու երկրների պաշտոնյաների այցերի ընթացքում, ապա ներկայումս գրեթե ամենօրյա ռեժիմով անդրադարձ է կատարվում հայաստանյան զարգացումներին:

2021 թ. դեկտեմբերի 29-ին Իրանի կառավարությունը հավանություն տվեց Կապանում գլխավոր հյուպատոսություն հիմնելու ԱԳՆ առաջարկին ու բավականին կարճ ժամկետում Կապանում բացվեց Իրանի գլխավոր հյուպատոսությունը: Կապա-

նում գլխավոր հյուպատոսության հիմնելու մասին որոշումը Հայաստանի հարցում Իրանի կայացրած կարևորագույն որոշումներից մեկն էր: Այդ որոշումը, բացի աշխարհաքաղաքական նշանակություն ունենալուց, նաև ճանապարհ է բացում փոխադարձության սկզբունքով Թավրիզում Հայաստանի գլխավոր հյուպատոսության բացման համար:

Հայաստանն ու Իրանը փոխադարձության սկզբունքով գլխավոր հյուպատոսություններ հիմնելու շուրջ առարկայական բանակցությունները սկսել են 1990-ական թվականներին, դրա շուրջ քննարկումները կրկին ակտիվացել են 2000-ականներին: 2005 թ. հունիսի 6-ին Իրանում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանն Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի նահանգապետ Մոհամմադ Ալի Սոբհանօլլահիի հետ հանդիպմանը նշել էր, որ Երևանը նպատակ ունի Թավրիզում հյուպատոսություն հիմնել: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ 2007 թ. հոկտեմբերին Երևան կատարած այցի ընթացքում ՀՀ և ԻԻՀ ԱԳՆ-ների միջև գլխավոր հյուպատոսություններ հիմնելու մասին փոխըմբռնման հուշագիր էր ստորագրվել:

Նկատենք, որ ներկայումս Թավրիզում գլխավոր հյուպատոսություններ ունեն Թուրքիան և Ադրբեջանը: Չնայած դեռևս առկա են մի շարք ռիսկեր, սակայն, հետպատերազմական շրջանում ի հայտ եկած նոր իրողություններով պայմանավորված՝ Թավրիզում Հայաստանի հյուպատոսության հիմնումն իրատեսական է: ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի տեղեկացմամբ՝ Հայաստանը 2023 թ. նախատեսում է Թավրիզում գլխավոր հյուպատոսություն բացել [29, *Parliament.am* 2020]:

Մեկ այլ ուշագրավ իրողություն էլ առնչվում է 2022 թ. Իրանի Ատրպատական նահանգի ղեկավարության կայացրած որոշմանը, ըստ որի՝ թյուրքախոս ատրպատականցիներով բնակեց-

ված Թավրիզում հայերի թանգարան կհիմնվի [162, *ISNA* 2022]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերի հետ կապված ցանկացած հարցին անդրադառնալիս Իրանը մշտապես մեծ զգուշավորությամբ է գործել, ապա ներկայումս, ըստ ամենայնի, գործ ունենք հայկական գործոնի միջոցով Ադրբեջանի և Թուրքիայի՝ Իրանի ներքին գործերին միջամտելու փորձերին հակադրելու մեխանիզմի գործարկման հետ: Ըստ ամենայնի՝ Իրանի իշխանությունները փորձում են շոշափել տեղի թյուրքախոսների տրամադրությունները՝ կապված փոխադարձության սկզբունքով Թավրիզում ՀՀ գլխավոր հյուպատոսություն բացելու Երևանի մտադրության հետ [22, *Միրզոյան* 2022]:

2023 թ. Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում առաջացած աննախադեպ լարվածության ֆոնին հայկական գործոնն Ադրբեջանի կողմից շահարկման յուրօրինակ դրսևորում է ստանում: Այն, որ Բաքուն Ադրբեջան-Իսրայել համագործակցության առնչությամբ Թեհրանի մտահոգություններին արձագանքել է՝ մատնացույց անելով Հայաստան-Իրան հարաբերությունները, հայտնի գործելաոճ է: Ներկայումս Բաքվի կողմից կրկին շրջանառության մեջ է դրվել՝ «հայ-իրանական բարեկամության և եղբայրության» մասին նարատիվը: 2023 թ. մարտի 29-ին, Իսրայելում Ադրբեջանի դեսպանության պաշտոնական բացման արարողության ժամանակ երբ Իսրայելի ԱԳ նախարարն ադրբեջանցի իր գործընկերոջ հետ հանդիպմանը հայտարարեց, թե Իսրայելն Ադրբեջանի հետ ընդդեմ Իրանի համատեղ գործելու նպատակ է դրել [199, *Gov.il* 2023], դրան հետևեց Իրանի կոշտ պատասխանը [190, *Mfa.gov.ir* 2023]: Ադրբեջանի ԱԳՆ-ն ու ՊՆ-ն, արձագանքելով Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության նախազգուշացումներին, սկսեցին շահարկել հայկական գործոնը՝ ընդգծելով, որ «Այսօր հայ-իրանական եղ-

բայրությունը շարունակում է սպառնալիք մնալ ողջ փարածաշրջանի համար: Վերջին 30 փարվա ընթացքում Իրանը գործնականում աչք է փակել Հայաստանի կողմից ադրբեջանական փարածքների օկուպացիայի վրա» [287, Report.az 2023]:

Ադրբեջանը՝ կախված իրադրությունից, կամ Իսրայելի գործոնն է հակադրում հայկական գործոնին, կամ թյուրքականության գործոնը: Երկու դեպքում էլ Իրանի շահերի դեմ իր գործողությունները հիմնավորում է Հայաստան-Իրան հարաբերություններով, թե իբր նրանք ուղղված են Ադրբեջանի դեմ: Ըստ Ադրբեջանի ընկալման, եթե Իրանը չի սատարում և դեմ է արտահայտվում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ գործողություններին, կանխարգելիչ նպատակով զորավարժություններ անցկացնում Ադրբեջանի սահմաններին, ապա Թեհրանի այդ մոտեցումն Ադրբեջանը մեկնաբանում է որպես հակաադրբեջանական քայլ:

Ադրբեջանը Իրան-Հայաստան հարաբերություններում լարվածություն առաջացնելու, իր կողմից մշակված քարոզչական կեղծ նարատիվները տարածելու, դրանք հայ-իրանական օրակարգի հարց դարձնելու նպատակով հաճախ օգտվում է այն հանգամանքից, որ Հայաստանի ու Իրանի միջև տեղեկատվության ոլորտում առկա է ոչ արդյունավետ համագործակցություն:

Չհամակարգված համագործակցության պայմաններում հայ և իրանցի լրագրողները տեղեկատվության իսկությունը ճշտելու հնարավորություն չեն ունենում և երբեմն ոչ դիտավորությամբ այնպիսի նյութեր են հրապարակում, որոնք երկու երկրների հասարակությունների շրջանում անվստահության մթնոլորտ են ձևավորում: Նմանատիպ նյութերը խիստ սուբյեկտիվ մեկնաբանությամբ հայտնվում են ադրբեջանական մամուլում, դառնում՝ տվյալ երկրի փորձագետների շահարկման առարկա՝ վնասելով

ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի շահերը: Բացի Հայաստանի և Իրանի հասարակությունների շրջանում անվստահության մթնոլորտի ձևավորումից՝ ապատեղեկատվությունների տարածման արդյունքում ձևավորվում է կեղծ օրակարգ, որի շուրջ երկու երկրների հասարակական-քաղաքական շրջանակները սկսում են դիսկուրս ծավալել: Այնուհետև լրատվամիջոցները լուսաբանում են այդ կեղծ օրակարգի շուրջ ծավալվող քննարկումները՝ ակամա նպաստելով ապատեղեկատվության տարածմանը: Հայաստանի և Իրանի հարաբերությունների դեմ պարբերաբար կազմակերպվող «տեղեկատվական գրոհների» արդյունքում այնպիսի ընկալում է ձևավորվում, կարծես Հայաստանի և Իրանի միջև լուրջ խնդիրներ կան: Այդ հանգամանքը վտանգավոր է այն առումով, որ նման ընկալումները կարող են բացասական ազդեցություն թողնել որոշումների կայացման վրա: Ժամանակակից տեխնոլոգիաները մի կողմից հայկական և իրանական լրատվամիջոցներին լայն հնարավորություն են տալիս նպաստելու պետությունների հարաբերությունների զարգացմանը, մյուս կողմից՝ էլեկտրոնային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի բազմազանությունը մի շարք խնդիրներ է առաջացնում: Այդ խնդիրները լուծելու և առկա մարտահրավերներից բխող սպառնալիքները կառավարելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանի և Իրանի լրատվամիջոցների միջև փոխգործակցության դաշտ ձևավորել: Այն կարող է ենթադրել համագործակցության մասին հուշագրերի ստորագրում, համատեղ կոնֆերանսների, ցուցահանդեսների անցկացում, համագործակցության հարթակների ձևավորում, և այլն: Սոցիալական գործակցության հարթակների ձևավորում, և այլն: Սոցիալական ցանցերն արդի շրջանում լրատվության տարածման ամենարդյունավետ հարթակն են: Սակայն, դրանք միևնույն ժամանակ լուրջ խնդիրներ են առաջացնում: Սոցցանցերի առանձնահատ-

կությամբ պայմանավորված ոլորտում իրավիճակը կառավարելն անհնար է: Եթե էլեկտրոնային լրատվամիջոցների դեպքում հնարավոր է խմբագրության հետ ծագած խնդիրները հարթել, ապա սոցցանցերի դեպքում այն անհնար է: Որովհետև պարզ չէ, թե տվյալ ռեսուրսը որ երկրից, որ ուժի կողմից և ինչ նպատակով է օգտագործվում: Խնդիրն այն է, որ երբեմն հեղինակավոր լրատվամիջոցներն ու փորձագետներն են ընկնում սոցցանցերի լարած ծուղակում և վերաթողարկում՝ այնպիսի հրապարակումներ, որոնք մեղմ ասած չեն համապատասխանում իրականությանը՝ կրկին անվստահության մթնոլորտ ձևավորելով հասարակությունների շրջանում:

Վերջին մեկ տասնամյակում հայկական և իրանական լրատվամիջոցներում մեր կողմից կատարված մշտադիտարկումը, տեղեկատվության մշակումն ու վերլուծությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ տեղեկատվական դաշտում սոցիալական ցանցերի դերակատարության մեծացմամբ ապատեղեկատվության տարածման ռիսկը գնալով մեծանում է: Այսպիսի իրողության պայմաններում պետական լրատվական գործակալությունների դերն ավելի է արժևորվում: Սակայն, այնուամենայնիվ, թեև պետական գործիքների կիրառմամբ տեղեկատվական դաշտում կարելի է հաստատել կողմերի համար ընդունելի խաղի կանոններ, բայց, միևնույն է, տեղեկատվական ոլորտում խնդիրների լուծման որպես արդյունավետ միջոց կարելի է դիտարկել մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը, համագործակցության հարթակների ձևավորումն ու լրատվամիջոցների միջև համակարգված շարունակական համագործակցությունը:

Ամփոփելով գլուխը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում լարվածության առաջացումը և դրա ժամանակագրությունը գնահատելիս նկատելի է, որ Թեհրանի նկատմամբ Բաքվի նախաձեռնած քարոզչական պատերազմում շահարկվող նարատիվներից առանցքայինը հայկական գործոնն է:

Ադրբեջանին, որն արհեստականորեն հավասարության նշան է դրել Հայաստան-Իրան և Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների միջև, հայկական գործոնի շահարկմամբ վերջին երկու տասնամյակի ընթացքում հաջողվել է ազդել Հայաստանի հարցում Իրանի որոշումների կայացման վրա:

Հաշվի առնելով Ատրպատական նահանգի անվտանգության նկատմամբ Իրանի զգայունությունը՝ Ադրբեջանը հայկական գործոնի շահարկմամբ՝ նահանգի թյուրքախոս ակտիվիստների և կենտրոնական իշխանությունների միջև լարվածություն է առաջացնում, որի երկարաժամկետ նպատակն Ատրպատական նահանգն անկայունության օջախի վերածելն է:

Իրանը 44-օրյա պատերազմից հետո կարծես թե վերարժևորել է հայկական գործոնի դերը և դրա միջոցով փորձում է կառավարել Ադրբեջանի ու Թուրքիայի գործողություններից բխող ռիսկերը:

ԳԼՈՒԽ 6
ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾՈՆՆ ԻՐԱՆ-ԱՂՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իրանի և Աղրբեջանի հարաբերությունների վրա Իսրայելի գործոնի ազդեցությունը կարելի է գնահատել առնվազն երեք շրջափուլի համատեքստում:

Ա. 2005-2015 թթ., երբ Իրանի և Աղրբեջանի հարաբերությունները տարբեր գործոններով պայմանավորված չափազանց լարված էին, և բավականին մեծ էր Իրանի վրա Իսրայելի և Միացյալ Նահանգների կողմից ռազմական հարձակման ռիսկը: Աղրբեջանի տարածքը դիտարկվում էր որպես հնարավոր հարձակման ամենահարմար հարթակներից մեկը, Բաքվի և Թեհրանի հարաբերություններում փոխադարձ անվստահության մթնոլորտ էր ձևավորվել: Այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ Իրանն իշխանության ամենաբարձր մակարդակով դատապարտում էր Իսրայելի և Աղրբեջանի համագործակցությունը, իսկ Բաքուն ամեն կերպ փորձում էր Թել Ավիվի հետ համագործակցությունն իրականացնել ստվերում: Նաև Իրանի կոշտ դիրքորոշմամբ էր պայմանավորված, որ Աղրբեջանը խուսափում էր Իսրայելում դեսպանություն բացել:

Բ. 2015-2020 թթ. ընթացքում Իսրայելի գործոնի ազդեցությունն Իրան-Աղրբեջան հարաբերությունների վրա զգալիորեն նվազում է: Միջուկային համաձայնությամբ պայմանավորված Իրան-Արևմուտք հարաբերություններում արձանագրված դրական դինամիկան, ինչպես նաև Իրանի նախագահ Հասան Ռոհանիի կառավարության հարևանության քաղաքականությունը դրական ազդեցություն էին ունեցել նաև Իրան-Աղրբեջան հարաբերությունների վրա: Իրանի միջուկային ծրագրի շուրջ դրա-

կան զարգացումներն ու Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկումը զգալիորեն նվազեցրել էին Իրանի նկատմամբ ռազմական հարձակում գործելու ռիսկերը: Չնայած այն հանգամանքին, որ Իսրայելն ու Սաուդյան Արաբիան խիստ դժգոհ էին միջուկային գործարքից, ԱՄՆ-ի նոր մերձավորարևելյան քաղաքականությունն Իսրայելին զսպում էր Իրանի դեմ գործողություններ իրականացնել: Այդպիսի իրադրությունում Աղրբեջանի տարածքում Իսրայել-Իրան դիմակայությունը էականորեն թուլացել էր:

Գ. Իսրայելի գործոնի շոշափելի ակտիվացում է տեղի ունենում 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Պատերազմի արդյունքներով պայմանավորված Աղրբեջանը ոչ միայն նախկինի պես չէր կաշկանդվում Իսրայելի հետ իր ռազմական համագործակցությամբ, այլև, միտումնավոր Իրանի հետ հարաբերությունները սրելով, Իսրայելում դեսպանություն բացելու որոշում կայացրեց: Լեռնային Ղարաբաղի՝ Իրանին սահմանակից տարածքներն Աղրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո Իսրայելը հնարավորություն ստացավ տեղակայվելու անմիջական Իրանի սահմաններին և «Octopus» դոկտրինով նախատեսված Իրանի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու բավարար պայմաններ ձևավորվեցին:⁵⁰

Աղրբեջանի և Իսրայելի հարաբերությունների վերաբերյալ Իրանի առաջատար ուղեղային կենտրոնների կողմից վերջին երկու տասնամյակի ընթացքում հրապարակված հետազոտություններում Աղրբեջան-Իսրայել հարաբերությունները հիմնականում դիտարկվում և դրանց գնահատական է տրվում Իրան-Իսրայել և Իրան-Աղրբեջան հարաբերությունների վրա ազդող գործոնների համատեքստում:

⁵⁰ Դոկտրինի համաձայն՝ Մերձավոր Արևելքում Իրանի կողմից հովանավորյալ խմբավորումների դեմ պայքարելու փոխարեն Իսրայելը պետք է ուղղակիորեն թիրախավորի Թեհրանը, որտեղից կառավարվում են այդ խմբերը:

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված՝ Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների վերաբերյալ Իրանի հասարակական-քաղաքական շրջանակների ընկալումները փոխվել են: Եթե 2010-ական թվականների սկզբին Ադրբեջանի և Իսրայելի միջև օրեցօր խորացող ռազմական համագործակցությունն Իրանը համարում էր իր շահերին ուղղված սպառնալիք, և դրա վերաբերյալ Թեհրանից բարձր մակարդակով հրապարակային մտահոգություններ էին հնչում, ապա 2015 թվականից հետո Ադրբեջան-Իրան հարաբերություններում տեղի ունեցած դրական փոփոխությունների արդյունքում փոխվեցին Իսրայել-Ադրբեջան համագործակցության վերաբերյալ Իրանի մոտեցումները:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա Իսրայելի գործոնի ունեցած ազդեցությունը գնահատելիս առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել Ադրբեջանի հարցում Իսրայելի արտաքին քաղաքական առաջնահերթությունները,
- գնահատել Ադրբեջան-Իսրայել համագործակցության վերաբերյալ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումն ու այդ համատեքստում՝ վերլուծել Իրանի քաղաքականությունը,
- վերլուծել Իսրայելի հետ համագործակցությունը խորացնելու Ադրբեջանի շարժառիթները:

Բեն Գուրիոնի դոկտրինի գաղափարախոսության համաձայն [249, Zielinska 2020, p. 236]՝ Իսրայելի արտաքին քաղաքականությունում ոչ արաբական մուսուլմանական երկրներին կարևոր դեր է վերապահված: Իսրայելի՝ Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացումը թերևս արժե դիտարկել այդ տեսանկյունից: Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում լար-

վածության առաջացման պատճառներից մեկը ոչ այնքան Ադրբեջան-Իսրայել հարաբերություններն են, որքան այն իրողությունը, որ Ադրբեջանը, Թեհրանի և Բաքվի հարաբերություններում առկա տարածայնությունները նկատի ունենալով [236, Saidel 2014, p. 26], ուղղակի և անուղղակի նպաստում է Իրանի հարցում Իսրայելի քաղաքականության իրականացմանը: Անկախ Ադրբեջանի պարզաբանումներից, Իրանի իշխող վերնախավն ու հասարակական-քաղաքական շրջանակներն այն համոզմանն են, որ Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների առանցքային թիրախն Իրանն է: Երկկողմ հարաբերությունների յուրաքանչյուր շրջափուլում Ադրբեջանի նկատմամբ Իսրայելի քաղաքականությունը կարող է փոխվել: Մի դեպքում Իսրայելի առաջնահերթ նպատակ է հայտարարվում Ադրբեջանի վրա առաջնահերթ նպատակ է հայտարարվում Ադրբեջանի վրա Իրանի կրոնական-մշակութային ազդեցության թուլացումը [97, Qafqaz.ir 2020], մի դեպքում՝ Իրանի անմիջական սահմաններին տեղակայվելով՝ սպառնալ այդ երկրի անվտանգությանը:

Միջուկային ծրագիրը, Իրանի հրթիռային համակարգերը, շիայականության գործոնը, Ադրբեջանի իրանախոս բնակչությունը (*թաթեր, թալիշներ*), Ադրբեջանի ընդդիմադիր շիայական գործիչների գործունեությունը, Ադրբեջանի և Իրանի 765 կիլոգործիչների գործունեությունը, Ադրբեջանի և Իրանի մետրանոց սահմանը՝ դրանք այն հիմնական գործոններն են, մետրանոց սահմանը՝ դրանք այն հիմնական գործոններն են, որոնք ընկած են Ադրբեջանի նկատմամբ Իսրայելի քաղաքականության հիմքում [163, Rezazadeh 2013, p. 15]:

Իսրայելի համար Իրանի սահմանին ներկայությունը հատկապես կարևոր է այն տեսանկյունից, որ Մերձավոր Արևելքում Իրանի կողմից հովանավորվող խմբավորումներն էլ փաստացի ներկա են Իսրայելի սահմանին՝ մշտական լարվածության մեջ պահելով այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը [210, Harel 2017]:

Մյուս կարևոր գործոնը, որը գտնվում է Իսրայելի ուշադրության կենտրոնում, դա Ադրբեջանի ընդդիմադիր շիա գործիչների՝ երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցությունն է [108, *Arannews.com* 2022]: Իրանի հասարակական-քաղաքական շրջանակներում առկա է այն համոզումը [235, *Rajabi* 2022, p. 53], որ Ադրբեջանի՝ շիա ակտիվիստների գործունեությունը սահմանափակող քաղաքականությունը, ինչպես նաև Իրանում անջատողականության դրսևորումներում Բաքվի մասնակցությունը խրախուսվում են Իսրայելի կողմից [105, *Anaj.ir* 2020]: Պատճառն այն է, որ Ադրբեջանի ընդդիմադիր շիայական գործիչների մի մասը կրոնական կրթություն է ստացել Իրանում և սկզբունքորեն դեմ է Իսրայելի և Ադրբեջանի հարաբերությունների խորացմանը:

Իսրայելի հարցով Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների լարվածության առաջացման պատճառներից մեկը կապված է Ադրբեջանի տարածքում իրանցի միջուկային ոլորտի մասնագետների վրա կատարված հարձակումների հետ: Ուշագրավն այն է, որ եթե 2000-ական թվականների սկզբներին Իսրայելն իրանցի գիտնականների դեմ գործողություններն իրականացնում էր Ադրբեջանի տարածքում, ապա 2018-ից հետո դրանք արդեն իրականացվում էին Իրանի տարածքում:

Իրանցի գիտնական Մասուդ Ալի Մոհամմադիի սպանությունն իրականացրած Ջամալի Ֆաշին 2012 թ. հարցաքննության ժամանակ խոստովանել էր, որ մի քանի անգամ այցելել է Բաքու, հանդիպում ունեցել Իսրայելի հետախուզական ծառայության՝ «Մոսադի» ներկայացուցիչների հետ [39, *ISNA* 2012]:

Ադրբեջանի իշխանությունները, երկրի ընդդիմադիր շիայական գործիչներին մեղադրելով Իրանի օգտին լրտեսություն կատարելու մեջ [165, *Qafqaz.ir* 2021], սահմանափակում են նրանց

գործունեությունը [203, *Cornell* 2011, pp. 279-280]: Դրանց մեծ մասը ներկայումս ազատազրկված է: Իրանն էլ, իր հերթին, շիայական գործիչների նկատմամբ անհիմն մեղադրանքներ ներկայացնելու մեջ է մեղադրում Ադրբեջանի իշխանություններին [289, *Cameժov* 2016]:

Միջազգային հարթակներում, մասնավորապես ԱՄՆ-ում, Ադրբեջանին նշանակալի աջակցություն են ցուցաբերում հրեա լրբեխտները, որոնք տնտեսական շահեր ունեն Բաքվում [69, *Mashregnews.ir* 2021]: Իրանի պնդմամբ՝ Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու նպատակով միջազգային իրավապաշտպան կառույցներն Ադրբեջանում մարդու իրավունքների իրավիճակի հարցում երկակի քաղաքականություն են վարում: Նրանք, բարձրաձայնելով ադրբեջանցի քաղբանտարկյալների խնդիրներին մասին, իրենց զեկույցներում չեն անդրադառնում Իրանի հետ համագործակցելու մեղադրանքով ադրբեջանցի ընդդիմադիր շիա գործիչների դեմ հարուցված քրեական գործերին [254, *Arannews.ir* 2013]:

Իսրայելի և շիայական Ադրբեջանի ռազմավարական համագործակցության առնչությամբ Իրանի մտահոգություններին էլ մատասխան՝ Ադրբեջանը մատնացույց է անում Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի սերտ հարաբերությունները [278, *Haqqin.az* 2018]:

Ընդհանուր առմամբ, Իսրայելին մշտապես մտահոգել է նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանում շիայական ուժերի՝ իշխանության գալուց հետո կվտանգվի տարածաշրջանում իր ներկայությունը:

Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների վրա ազդող թերևս ամենակարևոր գործոնն Իսրայելի և Ադրբեջանի ռազմական համագործակցությունն է: Այդ հարցում Իրանի դիրքորոշ-

ման ձևավորման վրա ազդում են Իրանի շուրջ անվտանգության միջավայրն ու Իրան-Ադրբեջան հարաբերություններում ընթացող զարգացումները: Երբ բարելավում են Բաքվի և Թեհրանի հարաբերությունները, Իսրայելի գործոնն անվտանգության սպառնալիքից վերափոխվում է քաղաքական շահարկման առարկայի:

Ի պատասխան Իրանի մեղադրանքների՝ Ադրբեջանն Իսրայելի հետ ռազմավարական բնույթի հարաբերություններ հաստատելու առնչությամբ Թեհրանին տարաբնույթ հիմնավորումներ է ներկայացրել [42, *Asadi 2012, p. 8*]: Կախված Իրան-Ադրբեջան հարաբերությունների մակարդակից՝ Թեհրանը առարկել, կամ ի գիտություն է ընդունել դրանք:

Ադրբեջանն Իսրայելի հետ հարաբերությունների հաստատումն առաջին հերթին հիմնավորել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման գործում Իսրայելից ռազմաքաղաքական աջակցություն ստանալու ակնկալիքով [138, *Omidi 2016, p. 142*]: Իլիամ Ալիևի՝ իշխանության գալուց հետո Իսրայելի և Ադրբեջանի միջև ռազմական խորը համագործակցության հիմք է դրվել [114, *Kamran 2011, p. 73*]:

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի նախագահության տարիներին (2005-2013), երբ իրանական միջուկային ծրագիրը կասեցնելու սցենարներից մեկը համարվում էր ռազմական հարձակումը, Ադրբեջանի տարածքը դիտարկվում էր որպես Իրանի վրա հարձակման հարթակ [90, *Frenkel 2012*]: Հաշվի առնելով այդ շրջանում Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած լարվածությունն ու Իսրայելի և «Հեզբոլ-լահի» միջև 2006 թ. տեղի ունեցած 33-օրյա պատերազմը՝ Բաքուն և Թել Ավիվն Իրանին դիտում էին որպես ընդհանուր սպառնալիք: Մերձավոր Արևելքում Իրանին զսպելու նպատա-

կով Իսրայելն Ադրբեջանի հարավային շրջաններում տեղադրել է հետախուզական նշանակության սարքեր, իսկ Բաքվից 50 կմ հեռավորության վրա՝ Սիթալայում, տեղադրվել են բալիստիկ հրթիռներ ու ԱԹՍ-ներ որսացող ռադարային համակարգեր [163, *Rezazadeh 2013, p. 17*]: Այդ համատեքստում հատկապես ուշագրավ է Ադրբեջանի հարավային շրջանների նկատմամբ Իսրայելի ուշադրությունը: Այնտեղ պարբերաբար այցելում է Իսրայելի դեսպանը՝ ծանոթանում այդ շրջաններում իրականացվող ծրագրերին [36, *Alireza 2015, p. 67*]:

2012 թ. Ադրբեջանի և Իսրայելի միջև ստորագրված 1.6 միլիարդ դոլար արժողությամբ ռազմական համագործակցության մասին պայմանագրի համաձայն՝ Ադրբեջանը տարբեր տեսակի մանոդաչու թռչող սարքեր, հականավային հրթիռային համակարաններ, ծովային տարատեսակ սպառազինություն է ձեռք է բերել գեր, ծովային տարատեսակ սպառազինություն է ձեռք է բերել [42, *Asadi 2016, p. 13*]: Գործարքի առնչությամբ Իրանի ԱԳՆ-ի հղած բողոքի նոտային ի պատասխան՝ Իրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովը հավաստիացրել էր, թե՛ «Իսրայելից ձեռք բերած սպառազինությունն ուղղված չէ Իրանի դեմ, այլ այն կիրառվելու է Ղարաբաղի դեմ պայտերազմում» [104, *BBC Persian 2012*]: 2012 թ. մարտին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևն Իրան կատարած այցի ընթացքում էլ իրանական կողմին հավաստիացրել էր, որ Ադրբեջանն Իրանի դեմ որևէ «թշնամական» քայլ չի ձեռնարկի [57, *Deutsche Welle 2012*]:

Ուշագրավ է, որ Ս. Աբիևի՝ Թեհրան կատարած այցից որոշ ժամանակ անց Իսրայելի պաշտպանության նախարար Ավիգ-դոր Լիբերմանը Բաքու կատարած այցի ավարտին հայտարարել էր, որ Ադրբեջանի նախագահի հետ հանդիպմանը քննարկվել է նաև Իրանի հարցը: Ի հավելումն դրա՝ «Foreign Policy» պարբե-

րականը տեղեկատվություն էր հրապարակել, ըստ որի՝ Իսրայելն Իրանի վրա հարձակման նպատակով Ադրբեջանի օդանավակայաններից օգտվելու թույլտվություն է ստացել [216, *Foreignpolicy.com* 2012]:

Թեև Բաքուն ամեն կերպ փորձում էր Ադրբեջան-Իսրայել ռազմական համագործակցության մեջ բացառել Իրանի գործունը, Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը մշտապես կասկածանքով է վերաբերել Բաքվի հավաստիացումներին՝ պնդելով, որ Իսրայելական անօդաչու թռչող սարքերը հեշտությամբ կարող են հետախուզության նպատակով օգտագործվել Իրանի դեմ [201, *Barry* 2016, p. 64]: Իրանի պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար Հոսեյն Դեհղանն (2013-2017 թթ.) էլ նշել էր, որ Ադրբեջանից Իրանի տարածք անցած Իսրայելական անօդաչուի հարցով անձամբ Իլիամ Ալիևի հետ է խոսել:

«Մենք ադրբեջանական կողմին նախազգուշացրել ենք և հայտնել մեր մտահոգությունը, սակայն, Ադրբեջանի նախագահը դժվարությամբ էր ուզում դա ընդունել», - ընդգծել էր Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավարը [71, *Mashreghnews.ir* 2017]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանն իր բնութեով Իրանի համար անվտանգային սպառնալիք է, Թեհրանն Ադրբեջան-Իսրայել ռազմավարական հարաբերությունների հարցում երկու մոտեցում է ցուցաբերել: Բաքվի հետ տնտեսական համագործակցության միջոցով թուլացնել Ադրբեջանում Իսրայելի ազդեցությունը, կամ առնվազն կառավարել այդ երկու երկրների փոխգործակցությունից բխող սպառնալիքները:

2015 թ. Իրանի և «5+1 խմբի» միջև միջուկային համաձայնագրի ստորագրումից հետո տարածաշրջանում անվտանգու-

թյան միջավայրը բարելավեց: Եթե մինչ այդ Ադրբեջանական Հանրապետությունը դիտարկվում էր որպես Իրանի վրա հնարավոր ռազմական հարձակման լարթակ, ապա միջուկային համաձայնությունից, Իրանի և Միացյալ Նահանգների միջև մեկնարկած ուղիղ երկխոսությունը դրական ազդեցություն ունեցավ տարածաշրջանում: Հասան Բոհանիի նախագահության առաջին շրջանում՝ 2013-2017 թթ, Իսրայելի նկատմամբ Իրանի հոե-տորաբանությունն անհամեմատ մեղմացավ: Ադրբեջանում Իսրայելի ազդեցությունը թուլացնելու նպատակով Իրանն Ադրբեջանի նկատմամբ կոշտ հակազդեցության քաղաքականությունը փոխարինեց տնտեսական համագործակցությամբ: Իրանին ապելի շատ մտահոգել է Ադրբեջանում տարբեր ոլորտներում Իսրայելի ազդեցության մեծացման փաստը, քան Ադրբեջանի տարածքից Իրանի դեմ Իսրայելի կողմից հնարավոր սպառնալիքի կիրառումը, ինչի մասին մշտապես բարձրաձայնվել է նախկինում:

Ինչպես նշվեց, միջուկային համաձայնությամբ պայմանավորված՝ Միացյալ Նահանգների և Իսրայելի օրակարգից ժամանակավորապես դուրս եկավ Ադրբեջանի տարածքից Իրանի վրա ռազմական հարձակումը: Դրանով էլ պայմանավորված՝ Ադրբեջանը Միացյալ Նահանգների և Իսրայելի համար որոշ չափով կորցրեց իր նախկին ռազմավարական կարևորությունը: Իրանն Ադրբեջանի հետ հարաբերությունները կառուցում է՝ հաշվի առնելով իր պետական շահերը: Հետևաբար, Իրանի ներկայիս ղեկավարության համար Իլիամ Ալիևի իշխանությունն այլևս չէր ներկայացնում այն սպառնալիքը, ինչը նկատելի էր 2009-2013 թթ.:

Այդ պատմափոփում էր, որ Իրանի և Ադրբեջանի միջև ռազմավարական նշանակության ծրագրերի շուրջ պայմանավորվա-

ծություններ ձեռք բերվեցին և, ըստ սահմանված ժամանակացույցի՝ դրանք գրեթե անշեղորեն իրագործվեցին: Խոսքը վերաբերում է Աստարա (Իրան) -Աստարա (Ադրբեջան) երկաթգծին, Խոդաֆարինի և Ղիզ-Ղալասիի հէկերի և ջրամբարների կառուցմանը, մաքսակետերի բարդիականացմանը, Նախիջևան-Մաշհադ երկաթգծի գործարկմանը, համատեղ ավտոմեքենաների և դեղերի արտադրությանը, Իրան-Ադրբեջան-Թուրքիա, Իրան-Ադրբեջան-Ռուսաստան եռակողմ ձևաչափերով հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին, Կասպից ծովում նավթի և գազի հանքերի համատեղ շահագործմանը և այլն:

Օրինակ, եթե 2016-2020 թթ. Իրանի և Ադրբեջանի միջև իրագործված ռազմավարական բնույթի նախագծերը համեմատենք նույն ժամանակաշրջանում Իրանի և Հայաստանի միջև իրականացված նախագծերի հետ, ապա առաջինն էականորեն առաջատար դիրքում է:

2018 թ., երբ Դոնալդ Թրամփն ընտրվեց Միացյալ Նահանգների նախագահ, ԱՄՆ նոր վարչակարգի մերձավորարևելյան քաղաքականությունում կրկին առանձնահատուկ տեղ վերապահվեց Իսրայելին: Աշխարհում թերևս միակ պետությունն էր Իսրայելն էր, որը դեմ էր միջուկային համաձայնությանը և համարում էր, որ դա մեծացնելու է Իրանի միջուկային կարողությունները: Տարածաշրջանում Իրանի ազդեցությունը թուլացնելու նպատակով աստիճանաբար մեծացան Իրանի նկատմամբ ճնշումները: 2018 թ. մայիսին, ԱՄՆ նախագահի՝ միջուկային համաձայնությունից Վաշինգտոնի միակողմանի դուրս գալու մասին որոշումից հետո տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրադրություն ձևավորվեց: Նոր իրողության պայմաններում, բնականաբար, Իսրայելի կողմից պետք է վերարժևոր-

վեր Ադրբեջանի դերակատարությունը, երկիր, որտեղ վերջին տասնամյակների ընթացքում Իսրայելին հաջողվել էր ամուր դիրքեր հաստատել՝ ինչպես քաղաքական դաշտում, այնպես էլ անվտանգային կառույցներում, տնտեսության մեջ և լրատվական դաշտում:

2018 թ. սեպտեմբերին Իսրայելի պաշտպանության նախարար Ավիգդոր Լիբերմանի Բաբու կատարած այցով Իսրայել-Ադրբեջան ռազմավարական հարաբերությունների հաջորդաշրջափուլի մեկնարկը տրվեց [223, *lpost.com* 2018]: Ադրբեջանում կրկին սկսեցին հակաիրանական բնույթի հայտարարություններ հնչել: Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ ևս Ադրբեջանն Իրանի հետ քարոզչական պատերազմում Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների առնչությամբ Թեհրանից հնչող գնահատականներին արձագանքելիս մատնանշում էր Հայաստան-Իրան հարաբերությունները:

2020 թ. հունվարին ԻՀՊԿ «Ղոդս» ուժերի հրամանատար Ղասեմ Սոլեյմանիի սպանությունից հետո Իրանի դիրքերը տարածաշրջանում զգալիորեն թուլացան: Սոլեյմանիի սպանությունը լուրջ հարված էր տարիներ շարունակ Մերձավոր Արևելքում Իրանի կողմից ձևավորված «Դիմադրության ճակատի» կենսունակությանը: Մինչ այդ Իրանին հաջողվում էր իր հետ փոխկանալությանը:
Տարածաշրջանում Իսրայելի գործոնի ազդեցությունն ու դրա շահարկումը գնահատելու տեսանկյունից կարևոր է դիտարկել 2020 թ. սկզբին տեղի ունեցած մեկ այլ զարգացում: Դրա վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ադրբեջանը մինչև պատերազմը սկսելը Հայաստան-Իսրայել հարաբե-

րությունների շահարկմամբ առնվազն փորձել է Իրանի զգայունությունը հաշվի առնելով վերջինիս ուշադրությունից շեղել Իսրայել-Ադրբեջան ռազմական համագործակցությունից:

2020 թ. սկզբին, ճգնաժամային այդ շրջափուլում, երբ ողջ աշխարհն իր էներգիան օգտագործում էր կորոնավիրուսի տարածումը կանխելուն, լիովին անսպասելի Իրանի կողմից Հայաստանի դեմ համակարգված քարոզչական հարձակում տեղի ունեցավ, որի շարժառիթներն անհասկանալի են: Վստահաբար կարելի է պնդել, որ այդ փուլում Հայաստանի դիմադրողականության թուլացումը չէր բխում Իրանի շահերից: Իսնդիրն այն է, որ այդ շրջանում Հայաստան-Իսրայել հարաբերությունները շահարկելու համատեքստ չկար, քանի որ Իսրայելում ՀՀ դեսպանություն բացելու հարցը Երևանի օրակարգում ընդգրկվել է դեռ 1990-ական թվականներից, սուկայն, Իրանի հետ հարաբերությունների առանձնահատկությամբ պայմանավորված՝ Իսրայելում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն չի բացվել: Սակայն, 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո ստեղծված իրադրությունը Երևանին ստիպեց վերանայել այդ որոշումը: 2017 թ. ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի՝ Իսրայել կատարած պաշտոնական այցի ընթացքում քննարկված հարցերից մեկն էլ առնչվում էր Իսրայելում Հայաստանի դեսպանություն բացելու Երևանի մտադրությանը [9, Նալբանդյան 2017]: ՀՀ կառավարությունը Իսրայելում դեսպանություն ստեղծելու մասին որոշումն ընդունել էր 2019 թ. սեպտեմբերի 19-ին [13, ՀՀ կառավարության որոշումը]: Ի դեպ, Է. Նալբանդյանը անկախությունից հետո ՀՀ միակ արտգործնախարարն է եղել, որը 2017 թ. պաշտոնական այց է կատարել Իսրայել: ՀՀ նախագահների ու մյուս ԱԳ նախարարների այցերն Իսրայել աշխատանքային բնույթ են կրել [8, Mfa.am]:

2020 թ. մարտի 15-ին Իրանի խորհրդարանի նախագահի՝ միջազգային հարցերով հատուկ օգնական, Իրանի գործող (2021 թվականից) ԱԳ նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանը, դատապարտելով Իսրայելում դեսպանություն բացելու Հայաստանի որոշումը, նշել էր, որ այն հակասում է Պաղեստինի ժողովրդի շահերին: Իրանցի պաշտոնյան համոզմունք էր հայտնել, որ Իսրայելում ՀՀ դեսպանության բացումը բացասաբար կազդի տարածաշրջանի անվտանգության վրա:

«Երևանի և Թեհրանի բարեկամական հարաբերությունները փարածաշրջանում կայունություն ապահովելու հարցում կարևոր գործոն են, հուսով ենք՝ Հայաստանը կվերանայի իր դիրքորոշումը և Պաղեստինի տեղահանված և ճնշված ժողովրդին օգնելու ուղղությամբ համապատասխան քայլեր կձեռնարկի», - նշել էր Իրանցի պաշտոնյան [81, Mehr 2020]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Աբդոլլահիանի վերոնշյալ մեկնաբանությանն ավելի մեծ եռանդով արձագանքեցին Իրանի թյուրքախոս ատրպատականցիներով բնակեցված նահանգներից ընտրված պատգամավորներն [129, Motafaker Āzād հանգներից ընտրված պատգամավորներն [66, Arannnews.ir 2020]: ու հասարակական գործիչները [66, Arannnews.ir 2020]: Վերջիններս Իսրայել-Հայաստան հարաբերությունների հարցը ոչ միայն անտեղի շահարկել, սուբյեկտիվ, կանխակալ մեկնաբանություններ են արել: Ավելին, իրանական մամուլը երբեմն այնպիսի մեկնաբանություններ էր տարածում, որոնցում արված անհիմն պնդումները որևէ աղբյուր չունեին իրականության հետ:

Մասնավորապես Թավրիզի համալսարանի դասախոս Մոհամմադ Ալի Փարզուն «Arannnews» լրատվակայքին տված հարցազրույցում համոզմունք էր հայտնել, թե իբր «Իսրայելը զենք է ցածրույցում համոզմունք էր հայտնել, թե իբր «Իսրայելը զենք է վաճառելու Հայաստանին, որն օգտագործվելու է ընդդեմ Ադրբեջանի և իսլամական սուրբ հողի՝ Ղարաբաղի պաշտպանների

ինչպես նաև Աշգաբադում Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO) կազմակերպության անդամ երկրների ղեկավարների 15-րդ հանդիպման ընթացքում Թեհրանի և Բաքվի միջև տնտեսության, տարանցման և էներգետիկ⁵² ոլորտներում համատեղ ծրագրեր իրականացնելու շուրջ պայմանավորվածություններ էին ձեռք բերվել:

Այդ ընթացքում, սակայն, Ադրբեջանը հրապարակային չմերժելով Իրանի համագործակցության առաջարկները, այսպես կոչված, Ջանգեզուրի միջանցքի բացման սպառնալիքով Իրանին դրդեց քայլերի, որոնք գրեթե ամբողջությամբ ձախողեցին Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Իրանի մասնակցության հնարավորությունը:

Աշխարհաքաղաքական նոր իրադրությունում Ադրբեջանի նշանակությունն Իսրայելի համար էլ ավելի մեծացավ: Ադրբեջանի տարածքը փաստացի Իրանի և Իսրայելի միջև անուղղակի պատերազմի նոր հարթակի վերածվեց: Եթե մինչև 2020 թ. պատերազմն Իսրայելն Ադրբեջանում ավելի զգուշավոր էր գործում, ապա հետպատերազմական շրջանում ինչպես Բաքուն, այնպես էլ Թեյ Ավիվը, անկաշկանդ համագործակցում և նոր նախագծեր էին մշակում: Հատկապես ուշագրավ է Ադրբեջանում Իսրայելի և

պայմանավորվածություն է ձեռք բերվել: Այն կառուցվելու է 15 ամսվա ընթացքում՝ իրանական և ադրբեջանական ընկերությունների կողմից: Կամրջի երկարությունը 97.5 մետր է, լայնությունը՝ 37 մետր: Կամրջի շինարարությունից հետո օրական Աստարայով անցնող բեռնատարների թիվը կհասնի 1000-ի, 500 բեռնատար Ադրբեջանից մուտք կգործի Իրան, 500 բեռնատար Իրանից կանցնի Ադրբեջան:

⁵² Թուրքմենստանն Իրանի տարածքով սվոպային եղանակով գազ կարտահանի Ադրբեջան: Տարեկան նախատեսում է 1.5-2 մլրդ խմ գազ արտահանել Ադրբեջան: Երկարաժամկետ հեռանկարում Իրանը նպատակ ունի կասկածի տակ դնել Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան գազատարի (TAPI) տնտեսական գրավչությունն ու շահութաբերությունը: Իրանը կփորձի սվոպային եղանակով թուրքմենական գազն առաքել Պակիստան:

Իրանի դեսպանների հռետորաբանությունը: Ադրբեջանում Իսրայելի դեսպան Ջորջ Դիկը նպատակաուղղված այնպիսի հայտարարություններ էր անում, որոնք նպատակ ունեին լարվածություն առաջացնելու Բաքվի և Թեհրանի հարաբերություններում: Փաստացի, վերջին երկու տարվա ընթացքում Ադրբեջանում Իրանի դեսպանն ավելի շատ զբաղված էր Ադրբեջանում Իսրայելի դեսպանի գործողություններին արձագանքելով ու Իրան-Ադրբեջան հարաբերություններին սպառնացող ռիսկերի վերացմամբ, քան Իրան-Ադրբեջան հարաբերություններով:

Դժվար է պնդել, թե Ադրբեջանում Իրանի դեսպանն իր գործունեության որ դրվագներն է համաձայնեցնում մայրաքաղաքի հետ, սակայն, 44-օրյա պատերազմից հետո նրա գործունեությունը լուրջ տարակուսանքի տեղիք է տվել՝ հարուցելով նույնիսկ Իրանի փորձագիտական շրջանակների խիստ դժգոհությունը, փորձագետների, որոնք ոգևորված էին նրա նշանակմամբ: Բավական է հիշել 2020 թ. հուլիսյան մարտերի ժամանակ սպանված Փուլադ Հաշիմովի ընտանիքին իրանցի գեներալ Ղասեմ Սոլեյմանիի անվան մրցանակի շնորհման հետ կապված խայտառակ միջադեպը, երբ Հաշիմովի մայրն անպատվաբեր վերաբերմունքի արժանացրեց Իրանի դեսպանին՝ հետ վերադարձնելով մրցանակը: Մեկ այլ դրվագում էլ, Իրանի դեսպանը, ռազմական կցորդի հետ մասնակցելով Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիևի՝ Շուշի կազմակերպած այցին, հավասակայն, մի որոշ ժամանակ անց Ադրբեջանի նախագահը հայտարարեց, թե Իրանը Շուշիի մզկիթների՝ իրանական լինելու հարցում որևէ հավակնություն չպետք է ունենա:

Իրանի և Ադրբեջանի միջև տեղեկատվական դաշտում հերթական լարվածությունն առաջացավ այն ժամանակ, երբ Իրանի

հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին 2022 թ. հուլիսին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպմանը խոսեց Հայաստան-Իրան ցամաքային սահմանի խաթարման անթույլատրելիության մասին: Դրանից կարճ ժամանակ անց Իլիամ Ալիևը երկրի ներսում իր հերթական այցերից մեկի ժամանակ Ադրբեջանի դրոշով մի քարտեզ ցուցադրեց, որտեղ ՀՀ Սյունիքի մարզն ու Իրանի հյուսիս-արևմտյան նահանգներն ընդգրկված էին Ադրբեջանի կազմում:

2020 թվականից հետո Թուրքիայի և Ադրբեջանի կողմից պարբերաբար անցկացվող համատեղ զորավարություններից, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների նկատմամբ Իսրայելի աճող հետաքրքրությունից բխող սպառնալիքները կառավարելու նպատակով Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը սահմանային անվտանգության հարցերին սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել:

Այն, որ Հայաստանի նկատմամբ ագրեսիա նախապատրաստելիս Ադրբեջանը զուգահեռաբար նաև աշխատել է իրանական ուղղությամբ, վկայում են 2021 թ. երկրորդ կիսամյակում տեղի ունեցած զարգացումները, որոնք, ի վերջո, հանգեցրին Ադրբեջանի սահմանին Իրանի կողմից լայնամասշտաբ զորավարությունների անցկացմանը՝ համապատասխանաբար 2021 թ. հոկտեմբերին և 2022 թ. սեպտեմբերին:

2021 թ. օգոստոսի 10-ին իրանական բեռնատարների՝ Արցախ մուտք գործելու առնչությամբ Ադրբեջանի կողմից Բաքվում Իրանի դեսպան Աբբաս Մուսավիին բողոքի նոտա հղելուց մեկ օր առաջ Իրանի դեսպանն Ադրբեջանի սահմանապահ ծառայության հրամանատար Էլչին Ղուլիևի հետ հանդիպմանը քննարկել էր սահմանային անվտանգությանն առնչվող հարցեր:

Օգոստոսի 13-ին՝ Ադրբեջանում Իսրայելի դեսպան Ջորջ Դիկի և օգոստոսի 17-ին Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպան Լի Լիցենբերգերի Նախիջևան կատարած այցերից [248, Deek 2021] օրեր անց՝ օգոստոսի 23-ին, Ադրբեջանում Իրանի դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Ջավադ Ֆորուջանին հանդիպել էր Նախիջևանի հատուկ բանակի հրամանատար Քարամ Մուստաֆաևի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել էին Նախիջևանի սահմանին, ինչպես նաև տարածաշրջանում տեղի ունեցած զարգացումները: Օգոստոսի 24-ին և սեպտեմբերի 1-ին Իրան-Ադրբեջան սահմանի Բիլե Սավարի (ԻԻՀ Արդաբիլ նահանգ) հատված էին այցելել ԻԻՀ սահմանապահ ծառայության հրամանատար Ահմադ Ալի Գուդարզին և ԻԻՀ ոստիկանական ուժերի հրամանատար Հոսեյն Աշթարին: Բիլե Սավարն այն հատվածն է, որտեղով անցնում է Ադրբեջանը Նախիջևանին կապող ճանապարհը:

2021-2022 թթ. Իսրայելը մասնակցելով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում տարատեսակ նախագծերին⁵³ իր ներկայությունն ապահովելուն զուգահեռ նոր մարտավարություն էր մշակել, որի նպատակն Իրանի միջին խավի շրջանում հուսահատության մթնոլորտ ձևավորելն էր: Ըստ արևմտյան աղբյուրների՝ Իսրայելն այդ նպատակով 1.5 միլիարդ դոլար է հատկացրել: Երկու տարվա ընթացքում Իսրայելին հաջողվել է Իրանում տարատեսակ խափանարար գործողություններ իրականացնել: Մասնավորապես Իսրայելին հաջողվել է կազմակերպել միջուկային էներգիայի ոլորտի առաջատար գիտնական Մոհսեն Ֆախրիզադեի և մի քանի բարձրաստիճան

⁵³ Հետպատերազմական շրջանում Ադրբեջանում Իսրայելի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Իրանի սահմանակից շրջաններում ներդրումներ կատարելով, այլև Իսրայելն ու Ադրբեջանը պայմանավորվել են համատեղ ռազմական մոտորանավակներ և ԱԹՄ-ներ արտադրել:

զինվորականի սպանությունը, կիբերհարձակումների միջոցով խափանել Նաթանգի միջուկային հաստատության աշխատանքը, Իրանի բանկային համակարգերը, բենզալցակայանների էլեկտրոնային համակարգերը, փոքր ԱԹՍ-ների միջոցով հարձակում իրականացնել Իրանի Սպահան քաղաքում գտնվող ԻԻՀ պաշտպանության և ՁՈՒ աջակցման նախարարությանը պատկանող ռազմարդյունաբերական գործարանի վրա և այլն [121, *Tabnak.ir* 2023]:

Իրանը մի քանի անգամ հայտարարել է, թե Սուլեյմանիի, ինչպես նաև միջուկային ոլորտի իրանցի գիտնականների սպանության համար վրեժ կլուծի, սակայն, դա չի արել: 2021 թ. Իրանի նոր իշխանությունները հայտարարում էին, թե Միացյալ Նահանգների հետ ոչ մի բանակցություն չեն վարի, սակայն, ներկայումս ավելի վատ պայմաններով են բանակցում, քան Հասան Ռոհանիի թիմը: Իրանը կարծես թե վերջնականապես համակերպվել է իր սահմաններին Իսրայելի ներկայության հետ և Հարավային Կովկասի նկատմամբ քաղաքականությունը մշակելիս հիմք է ընդունում այդ իրողությունը:

Ըստ իրանցի փորձագետների գնահատականների՝ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանն Իսրայելի առջև պարտավորվել է Իրանի սահմաններին ապահովել Իսրայելի ռազմական ներկայությունը [215, *IRIB* 2017], վարձկանների տեղակայմամբ փոխել Ղարաբաղի օկուպացված տարածքներում բնակչության պատկերը:

Եթե մինչև 2020 թ-ի պատերազմն Ադրբեջանը փորձում էր հնարավորինս քողարկել Իսրայելի հետ ռազմական համագործակցությունը, ապա 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի նախագահն Իրանի հետ լարված հարաբերությունների ժամանակ ցուցադրելով իսրայելական ԱԹՍ-ները՝ «շոյում» էր նրանց

«գլուխները»՝ ընդգծելով պատերազմի ժամանակ իսրայելական զինատեսակների կատարած կարևոր առաքելությունը [130, *Azariha* 2021]:

Իրանի Իսլամական Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության գնահատականները վերլուծելիս ակնհայտ էր դառնում, որ Իսրայելի համակողմանի գործողություններին համապատասխան արձագանք չտալու պարագայում Իսրայելի սպառնալիքը կմեծանար: Հատկանշական է, որ Իսրայելն այդ ընթացքում բացի Ադրբեջանից՝ նպատակ ուներ երկրորդ ճակատ բացելու՝ Իրաքյան Քրդստանի ուղղությամբ: 2020-2023 թթ. Իրանը մի քանի անգամ հրետակոծել է Իրաքյան Քրդստանում տեղակայված ահաբեկիչ-անջատողականների դիրքերը, որոնք, ըստ Իրանի պաշտոնական աղբյուրների պնդման՝ հովանավորվում էին Իսրայելի կողմից:

Իրանը այն համոզմունքն ուներ, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Իսրայելը ռազմակայաններ հիմնելու նպատակ ունի: Հաշվի առնելով 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջան-Իսրայել համագործակցության նկատմամբ պասիվ քաղաքականության բացասական հետևանքները՝ Իրանն Ադրբեջանի տարածքից Իսրայելի հնարավոր գործողությունները կանխելուն միտված գործողություններ նախաձեռնեց: Իրանի փորձագիտական շրջանակների մոտ տարածված է այն տեսակետը, որ 44-օրյա պատերազմում Իսրայելի ցուցաբերած աջակցությունն Ադրբեջանը պարտավորվել է փոխհատուցել Իրանի դեմ գործողություններով [240, *Shargh* 2021, p. 2]:

2021 թ. հոկտեմբերի 1-ին Իրանն առաջին անգամ Ադրբեջանի սահմանին լայնամասշտաբ զորավարժություն անցկացրեց: Զորավարժությունը կրում էր «Խայբարի նվաճողները» խո-

թյան առաջացումից, որը կարող էր Իսրայելի հետ բախման աղիթ տալ:

ԻՀՊԿ-ի «Աշուրա» ստորաբաժանման հրամանատարի տեղակալ Ասղար Աբբաս Ղոլիզադեն թերևս իրանցի առաջին բարձրաստիճան զինվորականն էր, որը պատերազմի օրերին խոսում էր Իսրայելի գործողությունների մասին: Գեներալ Ղոլիզադեն, անդրադառնալով Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող պատերազմին, հայտարարել էր, որ դա Միացյալ Նահանգների ու Իսրայելի նոր սադրանքն է:

Նրա հայտարարությունից ժամեր անց՝ հոկտեմբերի 13-ի առավոտյան, իրանական ՋԼՄ-ները հաղորդեցին, որ Ադրբեջանին սահմանակից ԻԻՀ Փարսաբադ-Մուղան շրջանում (*Իրան-Ադրբեջան սահմանից 1 կմ հեռավորության վրա*) ԱԹՍ է ընկել: Ուշագրավ է, որ թեև իրանցի հայտնի ռազմական փորձագետ Հոսեյն Դալիրիանը նշում էր, որ Իրանի տարածքում ընկած ԱԹՍ-ն իսրայելական արտադրության է («Harop» մոդելի) [141, Dalirian 2020], սակայն, Իրանի պաշտոնական աղբյուրները ո՛չ ԱԹՍ-ի խոցվելու, ո՛չ դրա պատկանելիության և ո՛չ էլ արտադրության վերաբերյալ տեղեկատվություն չէին հաղորդում: Պարզապես նշվում էր, որ այդ առնչությամբ հետաքննություն է ընթանում [150, Qolizadeh 2020]:

Իրանական քարոզչության տրամաբանությունը հուշում է, որ խաղաղ պայմաններում այսպիսի միջադեպն իրանցիները լավագույնս կօգտագործեին՝ ցույց տալու երկրի ՀՕՊ համակարգերի կարողություններն ու ինչպես նաև Ադրբեջանին կմեղադրեին Իսրայելի հետ համագործակցությամբ Իրանի տարածքային ամբողջականության դեմ գործողություններ իրականացնելու մեջ: Սակայն, այդ փուլում Իրանի զգուշավորությունը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ Իրանը եթե

հայտարարեր, որ խոցել է Ադրբեջանի տարածքից Իրանի տարածք անցած իսրայելական արտադրության ԱԹՍ, ապա անուղղակիորեն հայտարարում է հակամարտությանը ներքաշվելու մասին, և նման դեպքերի կրկնության դեպքում Իրանը պետք է խոցեր դրանք: Ավելին, Իսրայելի կողմից Սիրիայի ենթակառուցվածքների շարունակական հրթիռակոծության հետևանքով Մերձավոր Արևելքում Իրանի դիրքերը զգալիորեն թուլացել էին: Իրաքում ստեղծված անկայուն վիճակն էլ «Դիմադրության ճակատին»⁵⁴ լիարժեք գործելու հնարավորություն չէր տալիս: Ըստ այդմ՝ Իրանը, Իսրայելի հետ համագործակցող երկրներին նախազգուշացնելով, պարզապես փորձում էր կանխել, որ Իսրայել-Իրան դիմակայությունը Մերձավոր Արևելքից չտեղափոխվի Իրանի սահմաններին: 2023 թ. Իսրայելի և Ադրբեջանի հարաբերություններում տեղի ունեցած զարգացումները, սակայն, ցույց տվեցին, որ Իրանին չհաջողվեց դա կանխել և ներկայումս Իսրայելի դեմ փաստացի պայքարում է իր անմիջական սահմաններին:

2021 թ. Իրանի կողմից Ադրբեջանի սահմաններին զորավարժության անցկացումից և կողմերի միջև մի քանի շաբաթ տևած տեղեկատվական պատերազմից հետո Բաքվի և Թեհրանի պաշտոնյաները հայտարարեցին, թե թյուրմբռնումները հարթվել են, և երկու երկրները շարժվում են հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: Ջորավարժության անցկացումից որոշ ժամանակ անց՝ 2022 հունվարի 25-26-ը, Իրան էր այցելել Ադրբեջանի պաշտպանության նախարար Ջաբիր Հասանովը: Նա առանձին հանդիպումներ էր ունեցել Իրանի նախագահ Էր-

⁵⁴ Մերձավոր Արևելքում Իրանի հովանավորությամբ շիաներից կազմված ռազմական խմբավորումներ, որոնց հիմնական առաքելությունն Իսրայելին հակազդելն է:

րահիմ Ռայխսիի, ՋՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերիի և պաշտպանության և ՋՈՒ աջակցման նախարար Մոհամմադ Ռեզա Ղարայի Աշթիանիի հետ: Հանդիպումներին անդրադարձ էր կատարվել երկկողմ տնտեսական և ռազմական օրակարգերին, ինչպես նաև տարածաշրջանում Իսրայելի ու ահաբեկիչների ներկայությանը:

Հետպատերազմական շրջափուլում ուշագրավ զուգահեյությունը Բաքուն Հայաստան-Ադրբեջան վճռորոշ հանդիպումներից, կամ որևէ սադրանք նախաձեռնելուց առաջ Իրանի ուշադրությունը «Չանգեզուրի միջանցքի» շուրջ զարգացումներից շեղելու նպատակով Իրանի դեմ քարոզչական պատերազմ է հրահրում՝ ակնկալելով, որ Ուկրաինայի ու միջուկային ծրագրի հարցերով զբաղվող իրանական դիվանագիտությունն անհրաժեշտ ներուժ չի ունենա՝ զբաղվելու Ադրբեջանի ագրեսիայի կանխմամբ, և Իրանի դիվանագիտական ջանքերը կուղղվեն Թեհրանի և Բաքվի հարաբերություններում առաջացած լարվածության հաղթահարմանը:

Վերլուծելով հետպատերազմական շրջանում իրանցի պատգամավորների, հոգևորականների, Ադրբեջանի հասցեին ուղղված քննադատական հայտարարությունները և դրանք համադրելով Իրանի շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի վերաբերյալ Իրանի ռազմական ղեկավարության արած հայտարարությունների հետ, կարելի է եզրակացնել, որ Իրանը Նախիջևանում և Կասպից ծովում անցկացված թուրք-ադրբեջանական զորավարություններից բխած սպառնալիքները կառավարելու և Ադրբեջանի ու Թուրքիայի հետ ուղիղ դիմակայության մեջ մտնելուց խուսափելու նպատակով հրապարակային հայտարարություններում որպես իր մտահոգությունների պատճառ հատկապես ընդգծում է Իսրայելի գործոնը: Այսինքն՝ թե՛ իրանցի

պատգամավորներն ու հոգևորականները, և թե՛ Իրանի դեսպանն ուղղակի և անուղղակի ասում են, որ Ադրբեջանի կողմից ընդդեմ Իրանի գործողությունների արշավի նախաձեռնողն Իսրայելն է:

Այդ համատեքստում իրանցի բարձրաստիճան գինվորականները սկսեցին Իսրայել-Ադրբեջան համագործակցության վերաբերյալ ավելի հասցեական խոսել՝ հստակ հասցեագրելով Իսրայելից բխող վտանգները:

Այդ ընթացքում Ադրբեջանը կրկին սկսեց շրջանառության մեջ դնել իրանցի թյուրքախոս ատրպատականցիների և Հարավային Ադրբեջանի վերաբերյալ մշակված նարատիվները, և գրեթե ամենօրյա ռեժիմով ադրբեջանական մամուլը տարածում էր դրանք, իսկ ադրբեջանցի պաշտոնյաներն իրենց հայտարարություններում մշտապես ակտիվ էին պահում թեման: Ադրբեջանի քարոզչական հարձակումներին սատարում էր նաև Իսրայելը՝ Ադրբեջանում գործող իր ներկայացուցիչների միջոցով: 2022 թ. օգոստոսին Իսրայել-Ադրբեջան բարեկամության միության նախագահ Արիե Գուլը Gunaz.tv-ին տված հարցազրույցում նշել էր, որ ժամանակն է զբաղվել «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդրի լուծմամբ [52, Gut 2022]:

Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանին 2022 թ. երկրորդ կեսին Բաքու կատարած այցի ընթացքում ադրբեջանցի իր գործընկերոջ՝ Ռամիլ Յուսուբովի հետ հանդիպմանն ընդգծել էր «ներմուծված անվտանգության» անկենսունակությունը՝ նշելով, որ տարածաշրջանում անկայունության առաջացման բնօրրանն Իսրայելն է [176, Shamkhani 2022]: Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանասանին էլ, գնահատելով Ադրբեջանի տարածքում Իսրայելի ներկայությունից բխող ռիսկերը, համոզմունք

դիտավորյալ էր այդպիսի մարտավարություն ընտրել, շեղելու Իրանի ուշադրությունն Իրան-Ադրբեջան հարաբերություններից:

2022 հուլիսի 23-ին Ադրբեջանում Իսրայելի դեսպանը, շատ լավ իմանալով Թավրիզի նկատմամբ իրանցիների զգայունությունը, Իրան-Ադրբեջան հարաբերությունների հերթական լարվածության շրջանում Twitter-ի իր միկրոբլոկում Ադրբեջանի պատմության վերաբերյալ հերթական կեղծ նարատիվներով գրված «*Թավրիզի առեղծվածային հեքիաթները*» վերնագրով գիրքը հրապարակելով հետևյալ նախադասությունն էր գրել. «*Գիրքն ընթերցելով՝ Ադրբեջանի պատմությունն ու մշակույթը սովորեցի*»: Իսրայելի դեսպանի այդ գրառմանը նախորդել էր Իրանում Ադրբեջանի դեսպանի գրառումը, որտեղ նա գիշերային Թավրիզի վերաբերյալ մի լուսանկար էր հրապարակել՝ վերնագրելով՝ «*Թավրիզի գիշերներն էլ են սիրուն*» [194, Alizada 2022]:

Ադրբեջանում Իրանի դեսպան Աբբաս Մուսավին էլ, արծազանքելով Իսրայելի դեսպանին, գրել էր. «*Իսրայելի դեսպանը կարծես երեխա լինի, նա մանկական քայլեր է անում: Սակայն, նա պետք է իմանա, որ Ադրբեջանի տարածքն Իրանի դեմ դավադրություններ կազմակերպելու տեղ չէ*»: Իրանի դեսպանը մեկ այլ գրառմամբ էլ, արծազանքելով Ադրբեջանի դեսպանի՝ Թավրիզի վերաբերյալ արած գրառմանը, Ադրբեջանի Լահիջ շրջանի վերաբերյալ մի տեսանյութ էր հրապարակել՝ վերնագրելով՝ «*Երբ Լահիջում, Կովկասի լեռների սրբում ծերունին թաթերեն է խոսում*» 147, Mousavi 2022]:

Դատելով Բաքվում Իրանի դեսպանի գործողություններից՝ պաշտոնական Թեհրանը փորձում էր կառավարել Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած լարվածությունից բխող ռիսկերը: Ադրբեջանում Իրանի դեսպանի այցը Շուշի, նրա հար-

ցազրույցներն իրանական և ադրբեջանական ՋԼՄ-ներին⁵⁵, դրա մասին էին վկայում:

2022 թ. Իրանի կողմից մերձարաքսյան շրջաններում երկրորդ լայնամասշտաբ զորավարությունից առաջ Իրանի նկատմամբ ավելի կոշտ դիրքորոշման որդեգրումն ու Իրանի սահմաններին Իսրայելի ներկայության ամրապնդումը Իրանի շուրջն անվտանգային բարդ իրադրություն էին ստեղծել՝ մեծացնելով Իսրայելի ու Իրանի միջև ռազմական բախման ռիսկը:

Իրանի շուրջ ձևավորվող անբարենպաստ անվտանգային միջավայրի ֆոնին ուշագրավ հայտարարություններ են արել Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերին և Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Խաթամ օլ Անբիա» ռազմակայանի հրամանատար Ղուլամ Ալի Ռաշիդը:

2022 թ. սեպտեմբերի 7-ին Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերին, ուղերձով դիմելով ԻԻՀ հարևան այն երկրներին, որտեղ Միացյալ Նահանգները ռազմական ներկայություն ունի, ընդգծել էր, որ ԱՄՆ-ի հետ համագործակցության արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը փոխանցվում է Իսրայելին, ինչն ավելի է մեծացնում Իրանի ազգային անվտանգության դեմ սպառնալիքների ռիսկը: ԻԻՀ ԶՈՒ ԳՇ պետը տարածաշրջանում

⁵⁵ Ադրբեջանում Իրանի դեսպան Աբբաս Մուսավին ադրբեջանական «Trend» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է, թե Իրանը դեմ չէ «Չանգեզուրի միջանցքին»: Նա մասնավորապես ասել է. «30 տարի է, ինչ Ադրբեջանն Իրանի տարածքով է կապվում Նախիջևանին: Բնական է, որ այլընտրանքային ուղիներ ձևավորելու անհրաժեշտություն կարող է լինել: Այն նոր միջանցքը, որը կառուցվում է, դա վերաբերում է Ադրբեջանին ու Հայաստանին: Այն միջազգային հարց է»: Իրանի դեսպանն այդ համատեքստում հավելել է, որ Իրանի սկզբունքային դիրքորոշումն այն է, որ մի երկիր չի կարող այնպիսի գործողություններ անել, որոնք կվտանգեն այլ երկրի, մասնավորապես հարևանների, ազգային ու պետական շահերը:

անվտանգություն հաստատելու գործում հարևան երկրներին հորդորել էր օտարների հետ հույս չկապել:

Նույն օրն ԻՀՊԿ «Խաթամ օլ Անբիա» ռազմակայանի հրամանատար Ղուլամ Ալի Ռաշիդն էլ հայտարարել է, որ Իրանի զինված ուժերի թիվ մեկ սպառնալիքն Իսրայելն է: Այդ համատեքստում իրանցի բարձրաստիճան զինվորականը սպառնացել էր կոշտ պատասխան տալ այն երկրներին, որոնք համագործակցում են Իսրայելի հետ:

Ուշագրավն այն է, որ երկու հայտարարություններում էլ շեշտվում է Իսրայելի հետ համագործակցող երկրների հանգամանքը:

Թեև իրանցի բարձրաստիճան զինվորականների հայտարարությունները միայն ուղղված չեն Ադրբեջանին ու Թուրքիային, սակայն, Հայաստանի շահերի տեսանկյունից այդ հայտարարություններն արժե դիտարկել Իրան-Ադրբեջան և Իրան-Թուրքիա հարաբերությունների տեսանկյունից: Թուրքիայի և Իսրայելի հարաբերություններն արդեն պաշտոնապես լիարժեք վերականգնվել են, իսկ Ադրբեջանն ու Իսրայելն ավելի են խորացնում երկկողմ ռազմական համագործակցությունը:⁵⁶

2022 թ. հոկտեմբերի 22-ին Իրանի ԶՈՒ գլխավոր շտաբը հայտարարություն տարածեց, ըստ որի՝ Իսրայելի սպառնալիքները չեզոքացնելու նպատակով Իրանի զինված ուժերը մերձարաքսյան շրջաններում Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ցամաքային ուժերի զորավարժություններ են անցկացնում, որոնց անմիջական ներգրավածություն ունի նաև ԻՀՊԿ «Աշուրա» ստորաբաժանումը, որը

⁵⁶ Ադրբեջանի պաշտպանության նախարարը Բաքվում անցկացված «ADEX» միջազգային ռազմատեխնիկական ցուցահանդեսի շրջանակում Իսրայելի ռազմարդյունաբերական «Ռաֆայել» ընկերության գործադիր տնօրենի հետ հանդիպմանը քննարկել է Իսրայելից նոր սպառազինություն ձեռք բերելու հարցը:

տեղակայված է Նախիջևանի, Հայաստանի և Ադրբեջանի սահմանին⁵⁷:

ԻՀՊԿ ցամաքային ուժերի գործողությունները համակարգող հրամանատարի տեղակալ Ալի Աքբարփուր Ջամշիդիանը, անդրադառնալով զորավարժությունների անցկացման նպատակներին, նշել էր. «Հայաստանն ու Ադրբեջանն Իրանի պետական շահերի համար սպառնալիք չեն ներկայացնում, սակայն, այն, ինչը տեղի է ունենում փարածաշրջանում, դա Իրանի համար մտահոգիչ է: Իրանը չի կարող անփարբեր մնալ զարգացումների նկատմամբ, որոնք տեղի են ունենում իր սահմաններին: Կովկասյան փարածաշրջանում Իսրայելի ներկայությունը ոչ միայն սպառնալիք է Իրանի, այլև ողջ փարածաշրջանի համար: Վարձկան ահաբեկիչների ներկայությունը փարածաշրջանում առաջին հերթին սպառնում է Ադրբեջանի ժողովրդին: Հարց է առաջանում, թե վարձկան ահաբեկիչներն ինչո՞ւ են գալիս փարածաշրջան, փարածաշրջանի անվտանգության հարցում ո՞րն է նրանց դերակատարությունը: Մենք համարում ենք, որ փարածաշրջանում խնդիրներն առաջանում էին կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Այն արդեն լուծվել է, Իրանը նույնիսկ իր աջակցությունն է հայտնել այդ փարածքների ազատագրմանը: Սակայն, ներկայումս փարածաշրջանում կատարվող նոր ագրեսիաները դադարապարտելի են: Տարածաշրջանի աշխարհագրությունը և երկրների սահմանները չպետք է փոխվեն: Դրա մասին Իրանը բազմիցս հայտարարել է: Կովկասյան փարածաշրջանն Իրանի համար մեծ կարևորություն ունի: Տն-

⁵⁷ Սեպտեմբերի 15-ի ԻՀՊԿ ցամաքային ուժերի հրամանատար Մոհամմադ Փաքփուրը «Աշուրա» ստորաբաժանման հրամանատար Էյաս Գոլմոհամադ Զադեի ուղեկցությամբ այցելել է Ադրբեջանի, Հայաստանի և Նախիջևանի սահմանին մոտ գտնվող ԻՀՂ զինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման վայրեր:

տեսական նշանակության կարևոր միջազգային անցնում են այդ փարածաշրջանով, որոնց միջոցով Իրանը կապվում է հարևանների: Իրանը թեև ոչ ամբողջությամբ, սակայն, իր տնտեսական գործունեության մի զգալի հատվածն իրականացնում է այդ միջանցքով: Դրա դեմ ուղղված սպառնալիքի հարցում Իրանը չի կարող անփարբեր մնալ: Տարածաշրջանում օտարների ներկայությունը և նրանց շարունակվող ազդեցության մեծացումը մեզ համար անընդունելի է: Յուրաքանչյուր զորավարժություն ունի իր բացահայտ և քողարկված ուղերձները: Մեր ուղերձն այն է, որ Իրանը բախումների նպատակ չունի, Իրանի նպատակը խաղաղությունն ու կայունությունն են: Չորավարժության քողարկված ուղերձն այն է, որ այն ուժերը, որոնք կփորձեն փարածաշրջանում խնդիրներ ստեղծել, կհանդիպեն Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի ուժեղ բռունցքին»:

Երկրորդ զորավարժությունից հետո Ադրբեջանի և Իրանի հարաբերություններում ոչ միայն տևական ժամանակ արձանագրված լարվածությունը չթուլացավ, այլև զուգահեռ Իրանում և Ադրբեջանում տեղի ունեցած զարգացումները, մասնավորապես Իրանում Ադրբեջանի դեսպանությունում տեղի ունեցած զինված միջադեպի հետևանքով Թեհրանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեության կասեցումը, Ադրբեջանի անվտանգության ուժերի կողմից Իրանի օգտին լրտեսություն անելու մեղադրանքով ձերբակալումների շարքը, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆայի նկատմամբ տեղի ունեցած մահափորձը, դրանում Իրանի մասնակցության մասին Բաքվից հնչած մեղադրանքն ավելի խորացրին հաստատված ճգնաժամը:

Թեհրանի և Բաքվի հարաբերություններում ձևավորված ճգնաժամի ֆոնին Ադրբեջանը Իսրայելում դեսպանություն բա-

ցելու որոշում կայացրեց: Զարմանալիորեն այդ ժամանակ Իրանից առանձնապես որևէ արձագանք չեղավ Բաքվի այդ որոշմանը: Ավելին, 2020 թ. սկզբին Իրանի խորհրդարանի թյուրքախոս պատգամավորները, որոնք անտեղի ու անհիմն մեղադրանքներն էին հղում Հայաստանի հասցեին, այս անգամ առանձնապես չէին շտապում իրենց կարծիքը հայտնել Ադրբեջանի որոշման վերաբերյալ: Թե որքանով էր վերոնշյալ իրողությունների վրա ազդեցություն ունեցել Իսրայելի գործոնը, կարելի է գնահատել Իրանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության և այլ պաշտոնյաների հայտարարությունները վերլուծելիս: Սակայն, այն որ Իսրայելում Ադրբեջանի նորանշանակ դեսպան Մուխթար Մամադովն արդեն առանց կաշկանդվելու հայտարարում էր, որ Ղարաբաղյան պատերազմում Իսրայելն Ադրբեջանին նշանակալի աջակցություն էր ցուցաբերել [293, Haqqin.az 2023], հիմնավորում է Իսրայելի տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակների վերաբերյալ տրված գնահատականների հիմնավորված լինելու մասին: Ադրբեջանի դեսպանը համոզմունք էր հայտնել, որ Ադրբեջանն Իսրայելի հետ հարաբերություններում ավելի համարձակ կլինի: Ադրբեջանի դեսպանն իսրայելական Jerusalem Post-ին տված հարցազրույցում նշել էր, որ 44-օրյա պատերազմում հաղթանակից հետո Ադրբեջանը կարող է ավելի վճռական քայլեր ձեռնարկել իր դաշնակիցների հետ հարաբերություններում [292, Mamdov 2023]:

Թեև Ադրբեջանը ոչ պաշտոնական հարթակներից Իսրայելում Ադրբեջանի դեսպանության բացումը պայմանավորում է Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության բացման հետ, այնուհանդերձ, որ որոշումն ընդունվել էր 44-օրյա պատերազմից հետո: Ինչպես Կովկասի հարցերով իրանցի փորձագետ Ահմադ

Քազեմին է համոզմունք հայտնել՝ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանն Իսրայելի առջև պարտավորություն է ստանձնել ավելի սաստկացնել շիաների նկատմամբ ճնշումները [185, Kazemi 2022]:

2023 թ. մարտի 29-ին Իսրայելում Ադրբեջանի դեսպանության բացման արարողության ժամանակ Իսրայելի ԱԳ նախարար Էլի Կոնենն ընդգծելով, որ Թել Ավիվի և Բաքվի միջև Իրանի դեմ մեկ ընդհանուր ճակատով պայքարելու շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերվել, մասնավորապես հայտարարել էր. «Իսրայելն ու Ադրբեջանը համակարծիք են Իրանից եկող վտանգների հարցում: Իրանական ռեժիմը սպառնում է մեր երկու տարածաշրջաններին: Ֆինանսավորում է ահաբեկչությունն ու ապակայունացնում ողջ Մերձավոր Արևելքը: Մենք պետք է համատեղ գործենք, որպեսզի թույլ չտանք Իրանին զարգացնել միջուկային հնարավորությունները: Դա պետք է անել քաղաքական ու տնտեսական միջոցներով՝ միաժամանակ ձևավորելով վստահելի և վճռական զինված ուժեր: Ես և Բայրամովը պայմանավորվեցինք Իրանի դեմ միասնական ճակատ ձևավորել և ամրապնդել երկկողմ համագործակցությունը տնտեսության, անվտանգության, էներգետիկայի և նորարարության ոլորտներում» [199, Gov.il 2023]:

Ուշագրավ զուգադիպությամբ դրանից մի քանի օր առաջ՝ մարտի 22-ին, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը Կոնգրեսի Սենատի արտաքին հարաբերությունների հարցերով հանձնաժողովում կայացած լսումների ժամանակ, Ադրբեջանին տրամադրվող 700.000 ԱՄՆ դոլար աջակցությունը հիմնավորել էր Ադրբեջանի՝ Իրանի սահմանակից լինելու հանգամանքով և ընդգծել՝ Ադրբեջանին Իրանից պաշտպանելու անհրաժեշտությունը [205, Blinken 2023]:

2023 թ.ն Իսրայելում Ադրբեջանի դեսպանության բացումը խորհրդանշական էր այն իմաստով, որ այն տեղի ունեցավ Իլ-համ Ալիևի նախագահության 20-ամյակի և Հեյդար Ալիևի 100-ամյակի տարում: Խորհրդանշական էր նաև այն իմաստով, որ Իսրայելում Ադրբեջանի դեսպանության բացումից շաբաթներ առաջ իր գործունեությունը դադարեցրեց Իրանում Ադրբեջանի դեսպանությունը:

Ուսումնասիրելով Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա Իսրայելի գործոնի ունեցած ազդեցությունը գնահատող հանգամանքները և դրանք վերլուծելով՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

Իրանի փորձագիտական շրջանակների գնահատմամբ՝ Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմավարական բնույթի հարաբերությունները հաստատվել են Հարավային Կովկասի, մասնավորապես Ադրբեջանի, նկատմամբ Իրանի վարած սխալ քաղաքականության պատճառով: Ըստ այդ գնահատականների՝ Իրանի կառավարության պասիվ քաղաքականության հետևանքով Իրանի տարածաշրջանային մրցակիցներ Թուրքիային ու Իսրայելին հաջողվել է հաստատվել հյուսիս-արևմտյան նահանգներին սահմանակից տարածքներում ու Կասպից ծովի տարածաշրջանում:

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հարավային Կովկասի նկատմամբ քաղաքականությունը մշակելիս հիմք է ընդունում այն իրողությունը, որ Իսրայելն ու Ադրբեջանը բացահայտ ընդգծում են Իրանի դեմ համատեղ գործելու իրենց նպատակադրության վերաբերյալ:

Եթե մինչև 2020 թ. պատերազմը Մերձավոր Արևելքում Իրանին քիչ թե շատ հաջողվում էր կառավարել Իսրայելի հետ միջնորդավորված պատերազմից բխող սպառնալիքներն ու

Հայերեն աղբյուրներ

ամեն կերպ փորձում էր խուսափել Իսրայելի հետ ուղիղ բախումից, ներկայումս օբյեկտիվորեն նաև Ադրբեջանի գործողությունների հետևանքով 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում այնպիսի իրադրություն է ձևավորվել, որը զգալիորեն մեծացրել է ուղիղ բախման հավանականությունն Իրան-Ադրբեջան սահմանին:

2020 թ. հունվարին ԻՀՊԿ գեներալ Ղասեմ Սոլեյմանիի սպանությունից հետո Իսրայելին հաջողվել է թուլացնել Մերձավոր Արևելքում Իրանի կողմից ձևավորված «Դիմադրության ճակատը» և տարատեսակ խափանարար գործողություններ իրականացնել Իրանի տարածքում:

Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների մրցակցության ֆոնին Թուրքմենստանում Իսրայելի դեսպանության հիմնումն իր ազդեցությունը կունենա նաև Ադրբեջան-Իրան հարաբերությունների վրա: Առաջիկա տարիներին Իրանի դիվանագիտական ջանքերի զգալի մասը կուղղվի Թուրքմենստան-Իսրայել նոր ձևավորվող համագործակցությունից բխող ռիսկերի կառավարմանը, որը Թեհրանից հավելյալ ռեսուրսներ կպահանջի՝ ուշադրության կենտրոնում պահելու Իրանի հյուսիսարևմտյան սահմաններում Իսրայելի ներկայությունը:

1. Ասատրյան Գ., Առաքելովա Վ., Ատրպատականի թյուրքերենի ու տարածքի իրանական բարբառների փոխհարաբերությունների ներկա վիճակը՝ հարզանդաթի օրինակի վրա, 2015, «Օրիններալիա» հոդվածների ժողովածու, հ. 16, էջ 19-23:
2. Ասատրյան Գ., 1989, Ադրբեջան տեղանվան, ազարի լեզվի և հարակից այլ հարցերի մասին, «Գրական թերթ», հ. 40, էջ 4:
3. Ադրբեջանի ԱԽ քարտուղարի հարցազրույցը, 2022, <https://www.youtube.com/watch?v=dNbpEYi6uAg&list=PLMQcwD-eh6VjbE-9QQPDdenmOqNIKlCBC&index=7>, 16.06.2023:
4. Բայբուրդյան Վ., 2006, Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 25, էջ 26-54:
5. Բայբուրդյան Վ., 2003, Իրան-Ադրբեջան. հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախտյաններ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ.22, էջ 7-38:
6. Էնայթոլլահ Ռ., 2003, Առանը հնագույն ժամանակներից մինչև մոնղոլները, էջ 230:
7. Իսկանդարյան Գ., 2022, Իրանի նկատմամբ Հայաստանի հասարակության վերաբերմունքի դինամիկան, «Հայաստան-Իրան, պատմական անցյալը և ներկան», միջազգային գիտա-ժողովի նյութեր, էջ 95-114:
8. Հայաստան-Իսրայել երկկողմ հարաբերությունների վերաբերյալ ՀՀ ԱԳՆ տեղեկանք:
9. ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցն Իսրայելի հանրային հեռուստատեսությանը, 2017,

<https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2017/11/10/fm-interview-public/7668>, 29.05.2023:

10. Իսրայելյան Ա., 2018, «Թյուրքականության» գործոնը Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում (1991-2016 թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», էջ 149-158:
11. Իսրայելյան Ա., 2020, Ադրբեջանի մասնակցությունն Իրանի Ատրպատական նահանգում անջատողականության դրսևորումներին (Իլիամ Ալիևի նախագահության առաջին տասնամյակում), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», էջ 357-374:
12. Իսրայելյան Ա., 2019, Էթնոկրոնական գործոնը Իրան-Տաջիկստան հարաբերություններում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ.32 (1), 268-283 էջ:
13. Իսրայելում դեսպանություն ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշումը, <https://e-gov.am/gov-decrees/item/32549/>, 29.05.2023:
14. Իրանի «Արաս» ազատ տնտեսական գոտու հնարավորությունները, 2019, <https://bit.ly/36ntTkr>, 17.07.2023:
15. Իրանի խորհրդարանի պաշտոնական կայք, 2013, Gozāreš: Ravābet-e Irān va Āzērbāijān: Čaleshha va forsatha, [Ձեկույց՝ Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները. Մարտահրավերներ և հնարավորություններ], <http://rc.majlis.ir/fa/news/show/84-7265>, 21.04.2023:
16. Իրան Նամե, 1995, հ. 2, էջ 20-24:
17. Իրանի և Ադրբեջանի միջև Խոդաֆարինի և Ղիզ-Ղալասիի ջրամբարների կառուցումը շարունակելու մասին ԻԻՀ օրենքը, <https://dotic.ir/news/327>, 26.05.2023:
18. Կիրակոսյան Հ., 2004, Ազարին Իրանի Ատրպատականի հին լեզուն, էջ 138:
19. Հովհաննիսյան Ն., 2004, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դաշտը, էջ 111:

20. Մարջանյան Ա., 2013, Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, էջ 329:
21. Նահապետյան Հ., 2014, Քանի՞ տարեկան է ադրբեջանցի ժողովուրդը. կրկին ավիշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ, «21-րդ դար», թիվ 6 (58), էջ 66:
22. Միրզոյան. նախատեսում ենք դեսպանություն բացել Ուրուգվայում և գլխավոր հյուպատոսություն՝ Թավրիզում, 2022, <https://www.youtube.com/watch?v=vAbzOMPAMZQ>, 28.05.2023:
23. Ոսկանյան Վ., 2014, Բայախիմքերը Քալասուրի նոր ազարիական բարբառում, «Արևելագիտության հարցեր», հ. 8, էջ 274-281:
24. Վարդան Ոսկանյան. Իրանի ազգային և կրոնական փոքրամասնությունները, 2014, <https://www.youtube.com/watch?v=kLm-S5yPGGic&t=265s>, 14.06.2023:
25. Տոնոյան Ա., 2022, Պարսկաստանի կողմից Հայաստանի առաջին հանրապետության ճանաչման հարցի շուրջ, «Հայաստան-Իրան, պարմական անցյալը և ներկան», միջազգային գիտա-ժողովի նյութեր, էջ 270:
26. Փափազյան Հ., 2000, Ինչպե՞ս գոյացավ Թուրքիա-Նախիջևան տասը կիլոմետրանոց սահմանը, «Իրան-Նամե», հ. 35, էջ 6:
27. Յալանուզյան Մ., 2015, Ինչպե՞ս և ինչո՞ւ էին ադրբեջանցիները քանդում Իրանի սահմանը, <https://www.aniarc.am/2015/12/30/how-adnwhy-azerbaijanis-destroy-border-with-iran/>, 28.05.2023:
28. Փաշայան Ա., 2014, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, էջ 59-61:
29. 2023 թ. նախատեսվում է մի շարք երկրներում բացել դիվանագիտական ներկայացուցչություններ, 2022, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=17590&year=2022&month=11&day=03&lang=arm, 01.07.2023:

ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

30. Adesnik D., Ben Taleblu B., 2019: Burning Bridge. The Iranian Land Corridor to the Mediterranean, Center on Militar and Political Power, 31.
31. Alizada A., 2022, Evenings of Tabriz is also beautiful, https://twitter.com/Ali_F_Alizada/status/1588964454146150400, 15.05.2023.
32. Akbarzadeh Љ., 2016: Irān in the World. President Rouhani's Foreign Policy, pp. 67-69.
33. A'nsāri: Režim-e sehyoniti va barkhi kešvarhāye mantaq̄e be donbāl-e tašt̄did-e ekhtelāfāt: 2015, [Անսարի. Միոնիստական ռեժիմը և փարածաշրջանի այլ երկրները զբաղված են առկա լարվածության թեժացմամբ], <http://www.irna.ir/fa/News/819-54375/>, 20.05.2023.
34. Atəbbəki T., 2002: Bzerbbijbn va nbsionvlism-e irəni, "Goftegu", pom̄bre 33, s. 17-35, [Աթաբաքի 2002, Ադրբեջանը և իրանական ազգայնականությունը, «Գոֆթեգու», հ. 33, էջ 17-35]:
35. A'zemi H., 2017: Pərvometr̄həye sibsi-amniati mōvser bar afzayep-e v̄bastegi ioeopolitiki-e Jomhuri-e Bzebbijbn be Irəni. Bv taakid bar Nakhjavəni, "Pərvohēphəye rəhbordi", pom̄bre 23, s. 107-131, [Ազեմի Հ. 2017, Իրանից Ադրբեջանի Հանրապետության աշխարհաքաղաքական կախվածության մեծացման վրա ազդող քաղաքական-անվտանգային պարամետրերը. Նախիջևանի օրինակով, «Ռազմավարական հետազոտություններ» գիտական հոդվածների ժողովածու, հ. 23, էջ 107-131].
36. A'lirezv P. 2015: Tə'asirbt-e hozur-e Esrbyil dar Jomhuri-e Bzerbbijbn bar amniat-e melli-e Irəni, "Pərvohēphəye sibsi", pom̄bre 13, s. 30-62, [Ալիրեզվա Փ. 2015, Ադրբեջանում Իսրայելի ներկայության ազդեցությունն Իրանի ազգային անվտանգության վրա, «Քաղաքական հետազոտություններ», հ. 13, էջ 30-62].
37. Āyāz-e ehdās-e pol-e moštarak-e marzi Irān va Āzerbāijān: 2021, [Իրանի ու Ադրբեջանի միջև սահմանային կամուրջ է կառուցվում], <http://news.mrud.ir/news/117264/>, 28.07.2023.
38. Amniat-e hākem bar marzhāye Irān va Āzerbāijān be naf'-e har do kešvar ast: 2018, [Իրանի և Նախիջևանի սահմանին անվտանգության հաստատումը բխում է երկու երկրների շահերից], <https://www.irna.ir/news/82864372/>, 28.05.2023.
39. Āmel-e terror-e šahid 'Ali Mohammadi be dār-e mojāzāt āvikhte šod: 2012, [Ալի Մոհամմադիին ահաբեկած անձը մահապատժի է ենթարկվել], <https://www.isna.ir/news/91022615326/>, 29.05.2023.
40. Afsāye naqš-e Bāku dar tajzieye Irān: 2013, [Ադրբեջանի աջակցությունն Իրանի անջատողականներին], <https://www.tabnak.ir/fa/news/314619/>, 14.05.2023.
41. Afsar-e sāzmān-e siā dar nazdikie pol-e Khodāfarin: 2022, [ԿՎՀ-ի սպան' Խոդաֆարինի կամուրջի մոտ], <https://www.mashreg-hnews.ir/news/1438594/>, 14.05.2023.
42. Asadi K. 2016: Avāmel-e gostareš-e ravābet-e Jomhuri-e Āzerbāijān va Esrāyil, "Tahqiqāt-e beynolmelali", šomāre 29, s 1-30, [Ասադի Կ., 2016, Իսրայելի և Ադրբեջանի հարաբերությունների զարգացմանը նպաստող գործոնները, «Թահիգիթ-դաթ-է բեյնոլմելալի», հ. 29, էջ 1-30].
43. Āzerbāijān bedun-e eyrāy be khatar-e amniati barāye Irān tabdil šode ast: 2013, [Ադրբեջանն առանց չափազանցության' Իրանի համար վերածվել է անվտանգության սպառնալիքի], <http://www.irdiplomacy.ir/fa/page/1916649/>, 07.05.2023.
44. Āyā mantaqeye Qarāsu mitavānad dobāre be Irān bargardad? 2021. [Ադրյոք հնարավոր է Ղարա Սուն կրկին միացնել Իրանին], <https://www.tasnimnews.com/fa/news/1400/07/11/2583294/>, 27.05.2023.
45. Ahmadi H., 2015: Jomhuri-e Bzerbbijbn: 23 sbl takəpu barbye dolat va melatsbzi, s. 378, [Ահմադի 2015, Ադրբեջանական

- Հանրապետություն. Ազգ և պետություն սրտեղծելու 23-ամյա փնտրություններ, էջ 378].
46. Ahmadi H., 2011: Barresi ketab-e darsi Jomhuri-e Bzerbvijsn, "Moasaseye motblest-e tbrikh-e Irbn-e movser", pomvre 12/2, s. 212, [Ահմադի Հ., 2011, Ադրբեջանի Հանրապետության դպրոցական դասագրքերի ուսումնասիրությունը, Իրանի ժամանակակից պարմության ուսումնասիրությունների կենտրոն], հ. 12/2, էջ 212.
 47. Bmeri J., 2011: Vaziat-piəvəbn-e Jomhuri-e Bzerbvijsn qabl va baad az pouravi, pomvre 104, s. 63, [Ամերի Ջավադ Ա. 2011, Ադրբեջանի շիաների վիճակը ԽՍՀՄ-ից առաջ և հետո, հ. 104, էջ 63].
 48. Amiri M., 2006: Arzyvbi-e ravəbet-e Irbn va Bzerbvijsn dar qarn-e bistom, "Majles va parəuher", pomvre 53, s. 239-279. [Ամիրի Մ., 2006 Իրան-Ադրբեջան հարաբերությունների գնահատումը 20-րդ դ., «Մաջլես վա Փաժուհեշ», պրակ 53, էջ 239-279].
 49. Amir-Ahmadibn B., 2005: Ravabet-e Irbn va Jomhuri-e Azerbvijsn: Negəh-e vzbrihv be Irbn, s. 499. [Ամիր-Ահմադիան 2005, Իրան-Ադրբեջան հարաբերությունները. Ազարիների կարծիքն Իրանի մասին, էջ 499].
 50. A'liyvri Q. 2000: Yəddəpəthəye safar-e Nakhjavan, "Kousar", pomvre 41, s. 66-69, [Ալիյարի Ղ. 2000, Գրառումներ՝ Նախիջևանյան այցի վերաբերյալ, «Քոուսար» գիտական հոդվածների ժողովածու, հ. 41. էջ 66-69].
 51. Arjmand J., 2012: Jəvgəh-e diplomsi-e omumi dar ravəbet-e Irbn va keshvarhəye fərsi zabbn, "Sibsat", pomvre 3, s. 97-113. [Արջմանդ Ջ., 2012, Հանրային դիվանագիտության դերն Իրանի և պարսկալեզու երկրների հարաբերություններում, «Քաղաքականություն», հ. 3, էջ 97-113].
 52. Brie Gut: Zaməbn-e tarh-e masaleye Bzerbvijsn-e Jonubi farə reside ast: 2022, [Արիե Գութ. Հարավային Ադրբեջանի նախագծի իրականացման ժամանակը եկել է], <https://twitter.com/qishqiraq/status/1559742732712779776>, 31.05.2023.
 53. A'tāye jāyezey jahāni isār-e Soleymāni be khānevādeye ženerāl Pulād Hāšimov: 2022, [Սոլեյմանիի անվան մրցանակի հանձնումը Փոլադ Հաշիմովի ընդանիքին], <https://bit.ly/3L1bu47>, 23.05.2023.
 54. Āzerbāijān va ruykard-e khoruj-e āheste Nakhjavān az vābastegi be Irān: 2014, [Ադրբեջանը և Իրանի ազդեցությունից Նախիջևանի հանդարտ դուրս գալը], <https://bit.ly/2qHSdhP>, 28.05.2023.
 55. Āyātollāh Šāhrudi: Be donbāl-e ān nistim, ke jomhuri-e eslāmi faqat dar Irān bemānad: 2011, [Այաթոլլահ Շահրուդի. Թուրքիան պարածաշրջանային զարգացումներում գործում է հոգուր ազատական իսլամի], <https://www.farsnews.ir/printnews/13900-602182517>, 19.05.2023.
 56. Āzerbāijānihā bā etkā be erādeye melli mitavānand Qarehbāq rā āzād konand: 2016, [Ադրբեջանցիներն ազգային ինքնության վրա հիմնվելով կարող են արագ ազատագրել Ղարաբաղը], <http://anaj.ir/News/41415/>, 23.05.2023.
 57. Āzerbāijān: Ejāzeye hamle be Irān az harim-e khod rā nemidahim: 2012, [Ադրբեջան. Թույլ չենք տա մեր տարածքից հարձակվել Իրանի վրա], <https://bit.ly/3uPHOMk>, 29.05.2023.
 58. Ali Jamali Fashi be dar mojazat avikhte shod: 2012, [Ալի Ջամալի Ֆաշին մահապատժի է ենթարկվել], <https://www.isna.ir/news/-91022615326/>, 08.05.2023.
 59. Arman Meli newspaper, 2020, Oct 6: № 839, 6.
 60. Bayət K., 2022: Bzerbvijsn dar moujekhiz-e tbrikh, s. 172, [Բայթ Կ., 2022, «Ազարբայջանը պարմության փոթորիկներում», էջ 172].
 61. Bayət K., 1993: Bohrbn-e Qarəbbəq, s. 150, [Բայթ Կ. 1993, Ղարաբաղյան հակամարտությունը, էջ 150].
 62. Bāzdāšt-e tarāh kārikātur-e janjāli va tavāqof ruznāmeje Irān, 2006, [«Իրան» օրաթերթի գործունեության կասեցումն ու ծաղրանկարի հեղինակների ձերբակալումը], <http://www.bbc.com/>

- persian/iran/story/2006/05/060523_mf_cartoon.shtml, 10.05.2023.
63. Bāzgošāyi-e harim-e Šeikh Sāfieddin Ardebili be yek motālebeye o 'mumi tabdil šode ast: 2016, [Շեյխ Սաֆի Էդդին Արդաբիլիի դամբարանի բացումը պետք է դառնա հասարակական պահանջ], <http://isna.ir/news/95072312985/>, 20.05.2023.
 64. Bāyrāmōv: Be Nakhjavān az tariq-e Irān motasel mi avim: 2022. [-Նախիջևանի հետ Իրանի փարածքով կկապվենք], <https://nasrnews.ir/detail/71012/>, 16.06.2023.
 65. Barresi-e havādes-e Nārdārān-e Āzerbāijān dar gofteguye Isnā ba safir-e Irān dar Bāku: 2015, [Հարցազրույց՝ Բաքվում Իրանի դեսպանի հետ Նարդարանի իրադարձությունների շուրջ], <http://isna.ir/fa/news/94092312691/>, 22.05.2022.
 66. Bayvniye asbtid-e dōnepgbh-e Bzvd-e Ardabil: 2020, [Արդաբիլի համալսարանի դասախոսների համադեղ հայտարարությունը], <http://fa.arannews.com/News/66208/>, 29.05.2023.
 67. Bāyad talāš konim ke Qarebāq Felestin-e dovom našavad: 2015, [Պետք է ջանքեր գործադրենք, որ Ղարաբաղը Պաղեստին չդառնա], <http://anaj.ir/p/News.aspx?searchId=3329&id=39124>, 23.05.2023.
 68. Bargozāri-e monāqese barāye enteqāl-e gāz tabi 'i be jomhuri-e Nakhjavān: 2021, [Նախիջևանի Հանրապետություն բնական գազի տեղափոխման մրցույթի անցկացում], <https://bit.ly/3YVb-6IC>, 28.05.2023.
 69. Brendā Šāfer māmur-e Esrāil barāye tajzie Irān kist?: 2021, [Իրանը մասնատվելու համար Իսրայելի կողմից գործուղված Բրենդա Շաֆերն ո՞վ է], <https://bit.ly/39zyNyE>, 29.05.2023.
 70. Čerā nemāyandeye sedā o simaye Irān az Āzerbāijān ekhrāj šod: 2011, [Ինչո՞ւ Իրանի հեռուստառադիոընկերության ներկայացուցիչն Ադրբեջանից արտաքսվեց], <http://www.tabnak.ir/fa/news/209615/>, 21.05.2023.
 71. Davāzdah rāhbord-e zedeirāni-e sehysthā dar Āzerbāijān: 2017, [Ադրբեջանում սիոնիստների հակաիրանական 12 առաջնահերթությունները], <https://www.mashreghnews.ir/news/802200/>, 19.05.2023.
 72. Dar Āzerbāijān masājed kharāb mi konand, be jāyesh varzešgāh mi sāzand: 2009, [Ադրբեջանում մզկիթները քանդում են, փոխում՝ մարզադահլիճ կառուցում], <http://www.khabaronline.ir/detail/-29467/politics/government>, 21.05.2023.
 73. Dar konvension-e Khazar hič etefāqi barāye saham-e Irān nayāfte ast: 2018, [Կասպից ծովի կոնվենցիան Իրանի մասնաբաժնի վերաբերյալ որևէ դրույթ չի նախատեսում], <https://www.tasnim-news.com/fa/news/1397/05/22/1801161/>, 23.05.2023.
 74. Doulat-e Āzerbāijān sarkub-e ši 'ayān-e Nārdārān rā motvaghef konad: 2015, [Ադրբեջանի կառավարությունը պետք է դադարեցնի Նարդարանի շիաների նկատմամբ բռնաճնշումները], <http://mehrnews.com/news/2991043/>, 23.05.2023.
 75. Doulat-e Āzerbāijān az a 'zādārān Hosseini entqām gereft: 2015, [Ադրբեջանի կառավարությունը հոսեյնիական սպառողներից վրեժ է լուծել], <https://www.mashreghnews.ir/news/782923/>, 23.05.2023.
 76. Didār-e vābasteye nezāmi-e Irān dar Bāku bā maqāmāt nezāmi-e Nakhjavān: 2018, [Բաքվում Իրանի ռազմական կցորդի հանդիպումը Նախիջևանի ռազմական ղեկավարության հետ], <http://www.iribnews.ir/fa/news/2071709/>, 28.05.2023.
 77. Elhām Aliev dar marāsem-e eftetāhiyeye sevomin hamāyesh-e be estelāh āzerbāijānihāye jahān sokhanrāni kard, 2011, [Իլհամ Ալիևն, այսպես կոչված, աշխարհի ադրբեջանցիների 3-րդ հա-

- մածոդովում ելույթ է ունեցել], <http://fa.arannews.com/News/-23878/>, 08.05.2023.
78. Ehzār-e safir-e Torkiye dar Irān ve vezārat-e khāreje: 2020, [Իրանում Թուրքիայի դեսպանը կանչվել է ԱԳՆ], <https://mfa.gov.ir/-portal/newsview/620321/>, 28.05.2023.
79. Eqāme ye namāz be sabk-e ahl-e tasanon tavasot rayis-e edārye mosalmanān-e Qafqāz, [Կովկասի մուսուլմանների վարչության նախագահի աղոթքը սուննիական ծիսակարգով], <http://fa.arannews.com/News/40079/>, 20.05.2023.
80. Eftetāh-e bozorgrah-e Tabriz-Varzaqān-Norduz teye do sāl-e āyande: 2022, [Թավրիզ-Վարզաղան-Նորդուզ ավտոմայրուղու կառուցումն առաջիկա երկու տարիների ընթացքում], <http://www.tabnakazarsharghi.ir/fa/news/1091816/>, 28.08.2023.
81. Eftetāh-e sefārat-e Armanestān dat Tel Āviv dar tazād beā manāfe ' melat-e Felestin ast: 2020, [Իսրայելում դեսպանություն բացելու Հայաստանի որոշումը հակասում է Պաղեստինի շահերին], <https://www.mehrnews.com/news/4879435/>, 29.05.2023.
82. Emām jom 'eye Tabriz: Doulat-e Āzerbāijān sarkub-e ši 'ayān Nārdārān rā motvaqef konad: 2015, [Ադրբեջանի կառավարությունը Նարդարանի շիաների նկատմամբ բռնաճնշումները պեպք է դադարեցնել], <http://www.mehrnews.com/news/-2991043/>, 22.05.2023.
83. Esteqbāl-e pošur-e šiayān va ahl-e sonnat Āzerbāijān az ayatollah Nouri Hamedāni: 2015, [Այաթոլլահ Նուրի Համեդանին մեծ ընդունելության է արժանանում Ադրբեջանի շիաների և սուննիների կողմից], <http://mehrnews.com/news/2909620/>, 23.05.2023.
